

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1898

Մ Ս Յ Ի Ս

1898 № 5

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Խ. Գ. ՌՕՏԻՆԵՐՆՈՎ

Типография М. Д. Ротивіанца, Гол. пр. д. № 41.

1898

В. П. М.

В. П. М.

В. П. М.

Доволено цензурою. Тифлисъ, 14-го Мая 1898 г.

ԽՕՍԷՔԻ ԱՅՆՊԼԵՍ, ԻՆԶՊԼԵՍ ԳՐՈՒՄ ԷՔ

II

Հետեւանքները գրական լեզւի զարգացման համար

Մեր նախորդ յօդւածում (Աօսէք այնպէս, ինչպէս գրում էք) մենք պահանջ դրինք մեր ժամանակակից հայ ինտելիգէնտ սերնդին փոխել մի աւանդական սովորութիւն, որը խոչնդոտ է հանդիսանում գրական լեզւի ծաւալմանը, հետեւապէս և մեր հայկական գրականութեան կեանքին: Գաւառաբարբառների միակ տիրապետութիւնը կատարելապէս խեղդւած է պահում ժողովրդի մէջ գրական լեզուն: Հայը մանկութիւնից սովորում է մի բարբառ, ուր թուրք ու թաթարական և այլ անհարազատ բառերը կատարելապէս ընտանի են, բայց ուր խորթ են գրականութեան մէջ ընդունւած բազմաթիւ բառերն ու դարձւածները: Մենք մեր զաւակներին մեծացնում ենք այնպէս, որ նոքա գրական լեզուն չհասկանան, մինչև որ աւելի ուշ հասակում առանձնապէս չսովորեն, մօտաւորապէս ինչպէս մի օտար լեզու: Դա անթոյլատրելի է. դա հակառակ է մեր գրական յառաջդիմութեան շահերին: Եթէ գաւառաբարբառների տիրապետութիւնը նաև այսուհետև շարունակւի՝ մինչև ամենաուշը մի քառորդ դար այլ ևս չի լինիլ մեզնում հայերէն ընթերցող հասարակութիւն, այլ կը լինեն միայն հայերէնը «սիրող» անհատներ, որոնցով չի կարող գրականութիւն գոյութիւն ունենալ: Իսկ բարբառները երբէք չպիտի կարողանան բարձր մտքերի գործիք դառնալ:

Մեր պահանջը ուրեմն ժամանակի պահանջ է, և որպէս այդպիսին՝ նորան արհամարանքի տալը կը նշանակէ արհամարել և ոտի տակ տալ մի ազգի տմբողջ գրական ստպգան: Ներկայիս սերունդը,

այդ նկատմամբ, զրաժ է մեծ պատասխանատու թեան առաջ. և յոչս ունինք որ մեր խօսքը լսելի եղաւ ամբողջ հայ ինտելիգէնցիայի մօտ:

Բայց այս անգամ խնդրին վերադառնալու համար այլ պատճառ ունինք: Գրական լեզուն մայրենի լեզու դարձնելով մենք ոչ միայն փրկում ենք գրականութեան ապագան, այլ և հնարաւորութիւն ենք ստեղծում որ այդ գրական լեզուն մշակուի և զարգանայ աջնպէս, ինչպէս այդ ցանկալի է և որքան միայն ընդունակ է նա զարգանալու:

Եւ արդարեւ, մինչև այժմ մեր գրական լեզուի մշակութիւնը զրաժ է եղել ոչ շատ նպաստաւոր հանգամանքների մէջ: Ովքեր են եղել մինչև այժմ մեր գրական լեզուն զարգացնողները: Նոքա, որոնց համար մեր գրական լեզուն եղել է զըջընդից սավորած լեզու: Մի Քամառ-Քաթիպա գրել է մի այնպիսի լեզուով, որը նա իւր տանը չէր սովորել: Քամառ-Քաթիպան, իբրև Նոր-Նախիջևեանցի, նախ սովորել է Նոր-Նախիջևանի աղաւաղած հայերէն բարբառը, որով նա գրել է հիանալի պատմածքներ: Նոյնն էր և Նալբանդեանը: Սո. Նազարեանը Կիլերոն էր թարգմանում հայերէն, մինչդեռ նորա մայրենի լեզուն Թիֆլիսի բարբառն էր: Բաֆֆիի մանկական և պատանեկական լեզուն Սալմաստի բարբառն էր, և հայերէն գրական բառերն ու դարձածները նա սովորեց միայն գրքերից: Քսանուհօթ տարի «Մեզու» հրատարակեց — և այդքան տարիների ընթացքում հազիւ լի է նորան պատահած լինի մի աշխատակից, որի մայրենի լեզուն հայերէն գրական լեզուն եղած լինէր և ոչ մի որ և է գաւառաբարբառ: Արծրունին սկսեց «Մշակ» հրատարակել հայերէն գրական լեզուով, քայց սա ֆակտ է, որ լեզուն զօրեղապէս տարածող այդ թերթի հիմնադիրը տարիների ընթացքում դեռ ևս հայերէն սովորելու կարօտութիւն քաշեց: Սո. Պալատանեանը — մի ռումանացի հայ — միայն զպրոցում ուսեց արեւմտեան հայոց գրական լեզուն և միայն երիտասարդ հասակում ծանօթացաւ մեր արեւելեան հայերէնին, որի ներկայացուցիչներին մինը դառաւ ինքը, շնորհիւ իւր գրական հոտառութեան:

Եւ այլն և այլն:

Անք մեղադրում, այլ բացատրում ենք: Գրական լեզուի դեռևս կազմակերպող շրջաններ էին այդ ժամանակները: Եւ խնչպէս կարող էր այդ լեզուն տնային կամ մայրենի լեզու լինել, քանի որ նորան մշակողների ծնողները մեր այժմեան գրական լեզուն չունէին: Պէտք էր ընտրել՝ կամ գաւառաբարբառը և կամ, հասարակական աւելի բարձր պահանջների համար մեզնում՝ միակ մատչելի և կատարելագործւած գրական լեզուն — ռուսացը:

Շնորհիւ այդ հանգամանքի կրթւած հասարակութիւնը մեզնում բաժանեց այլ և այլ խմբերի. մի խմբի մայրենի լեզուն եղաւ այս ու այն տեղային բարբառը. այդ խմբի համար ժամանակակից գրական լեզուն միմիայն ընթերցանութեան լեզու էր. գրականապէս մի այլ՝ աւելի կիրթ խմբի համար մայրենի լեզուն նոյնպէս տեղական բարբառն էր. բաց գրական հայերէնը նաեւ խօսակցութեան լեզու եղաւ որոշ բաց և նեղ սահմաններում՝ զըսորոցում և գրական շրջաններում: մի երրորդ խմբի համար մայրենի լեզուն եղաւ մասամբ տեղական բարբառը և մասամբ ռուսերէնը. այդ խմբին պատկանողների մեծամասնութեան համար գրական հայերէնը անմատչելի մնաց, և նոցա համար գրականը միայն ռուսերէնը եղաւ: Այդ վերջին կարգի անձերը ապա կազմեցին ընտանիքներ, ուր մայրենի լեզուն եղաւ միմիայն և եթ ռուսաց լեզուն: Վարելի էր առանձին յիշատակել նաեւ նոցա, որոնց մայրենի լեզուն եղած է ոչ թէ որ և իցէ հայերէն գաւառաբարբառ, այլ կովկասեան ոչ-հայկական լեզուներից մէկը — մանաւանդ վրացերէնը Թիֆլիսի որոշ շրջաններում և Վրաստանի այլ հայաբնակ քաղաքներում ու գիւղերում, և որոնց (չառ սակաւների!) ծանօթութիւնը հաջոց գրական լեզուի հետ կատարւել է միմիայն հաջոց զարոցներում, առանց հայերէն բարբառներից մէկն ու մէկով նախապատրաստւած լինելու:

Առանց կամենալու բոլոր կատեգորիաները թւելով սպառել, աւելացնենք միայն որ հայերի ահադին մեծամասնութեան համար մեզնում, այսինքն զխաւորապէս թրքահայկական նահանգներում, դեռ ևս նախկին տիրապետութիւնից, թուրք լեզուն մնացել է, հայկական բարբառներից չկառնող երկրորդ լեզուն, որին գաւառական հայը փոքրութիւնից ընտելանում է, որպէս հաղորդակցութեան լեզու ամեն քաջափոխում պատահող թուրք տարրի հետ, թէև,

բացառութեամբ մի քանի զիւղերի, նա ոչ մի տեղ մեղնում չկարողացաւ ոչ ընտանիքի և ոչ գրական լեզու դառնալ:

Այսպիսով՝ հայերի որ խաւն էլ որ վերցնելու լինէք՝ չէք հանդիպիլ նոցանից մէկին՝ որը հայերէն գրական լեզուն ընդունած լինի իբր իւր մայրենի, ընտանիքի լեզու, չխօսած արդէն անգրագէտ մեծ ամբողջի մասին, որը գրական լեզուն, ամենաշատը, առիթ է ունենում միայն լսել աչս ու աչն զրազէտ «վարձապետի» բերանից, առանց երբէք համարձակելու այսպիսի «գրավառ» նախ իւր համար ստեղծւած համարելու:

Այդ հանգամանքը ունեցել է նաև հետեանքներ մեր արդի գրական լեզուի զարգացման և նորա աջմեան դրութեան համար: Լինելով մեծ մասամբ գրքերից և կամ դպրոցում իւրացրած՝ մեր գրական լեզուն մշակել է միմիայն այնպիսի մարդոց ձեռքով, որոնց համար այդ լեզուն երբէք չի եղել մայրենի: Այդ մշակութեան մէջ մասնակից չի եղել՝ չենք ասում ժողովուրդը, բայց գոնէ մի լայնածաւալ հասարակութիւն, բաղկացած թէկուզ միայն գրական լեզւին ընտելացած անհատների ընտանիքներից: Արոմհետև ոչ մի խաւի համար նա չի եղել զուտ մայրենի լեզու:

Մեր գրական լեզուն առաջ տանելու գործը այդ իսկ պատճառով թողնւած է միմիայն նոցա, որոնք նւիրում են հայոց գրականութեան: Մանկութիւնից գրական լեզուով մեծացած մի հասարակութիւն, սակայն, շատ աւելի արագ կը վճռէր մի որ և է տարակուսական լեզական խնդիր, քան այդ կարող են անել մեկուսացած գրական անձերը, այն պարզ պատճառով, որ գործածութիւնը նւիրագործում է լեզուն: Շնորհիւ այդ հանգամանքի, մեր գրական լեզուն՝ գոյութիւն ունին մի քանի հարիւր լեզական անորոշ ձևեր, մինչդեռ հասարակութեան բերանում՝ դոքա արագ կը գտնէին իրենց վերջնական լուծումը: Բացի այդ, գրական լեզուով մեծացած մի հասարակութիւն կեանքի մղումով կը լրացնէր մեր գրական լեզւի մէջ եղած պակասները՝ ճաշակով փոխառութիւն անելով իրեն շրջապատող ժողովրդի հիւթալի բարբառներից, սոցանից դուրս քամելով բոլորը, ինչ կենսական է. այսինքն՝ հասարակութիւնը ինքը

կ'անէր այն, ինչ այժմ շատ թէ քիչ անվտանգ կերպով կատարում են մեր գրողներին նոքա, որոնք աշխատում են իրենց դրամաքննութեամբ ժողովրդականին մօտենալ: Բայց հասարակութեան կատարածը կը լինէր աւելի վտանգ, աւելի հատուտ, աւելի բեղմնաւոր նաեւ գրականութեան լեզուի համար, որովհետեւ նա կը լինէր աւելի ընդանրացած: Մինչդեռ այժմեան փորձեր անողները հէնց այնպէս էլ մնում են շատ քիչ ճանաչւած ընթերցողների ընդհանրութեան կողմից: Չկայ գրականը իբր մայրենի լեզու ընդունած հասարակութիւն—կը նշանակի չկայ նաեւ գրական լեզուն կեանքի փորձաքարին ննթարկող զլիսաւոր մարմինը:

Երբ որ մեր այժմեան պահանջը ընդունւած և գործադրւած կը լինի՝ ապա մինչև մի-երկու տասնեակ տարի վերջնականապէս կը ձևակերպուի այն գրական լեզուն, որը կ'ունենայ նաեւ ժողովրդականի հիւթալիութիւնը. և այդ սերնդից դուրս եկած գրողները իրենց լեզւին կը տան կլասիկականութեան այն գրոշմը, որ վաղուց արդէն կրում են ներկայիս եւրոպական լեզուները, իսկ մեզնում ոսկեդարեան գրաբարը և ներկայիս գաւառաբարբառները: Եւ հէնց այդ պատճառով է, որ բարբառներով (մայրենի լեզուով!) գրած Սայեաթ-Նովայի, Աբովեանի, Սունդուկեանի երկերը լեզական կողմից կլասիկական են. մինչդեռ լեզուի պլաստիկացով վերը յիշածներին հաւասար կլասիկական գրածքներ չի արտադրել մեր նորագոյն գրականութիւնը՝ գրական լեզուով. — Եւ զարմանալի չէ. ոչ ոք մեր գրողներից մօր կաթի հետ չի սնւել գրական հայերէնով. և նոցա գրած հայերէնը արդիւնք է միայն շատ թէ քիչ քրտնաջան աշխատութեան:

Գրական լեզուն, մայրենի լեզու դառնալով, ինչ ասել կ'ուզի որ՝ բոլորովին բնական ճանապարհով հարստանալու է բարբառների բոլոր լաւ և ընդունելի ոճերով ու բառերով. և ինքն ըստ ինքեան հասկանալի չէ՞ արդեօք որ այդ նոր սերնդից յառաջացած գրողները իրենց հետ բերելու են նաեւ լեզական մի կատարելութիւն, որին զուր կը լինէր ձգտել, եթէ մերոնք յամառելու լինին իրենց այժմեան անքուլտուրական սովորութեան մէջ: Այո, չենք ժխտում, որ կարելի է նաեւ այժման նըսնակով լեզու կատարելագործել. բայց այդ կը լինի այն կերպ, որ մինչև մի քառորդ դար այդ ձևով կա-

տարեւադործած լեզուն հասկացողները կը լինեն հէնց միայն գրողները իրենք ու մի քանի ախրողներն. բայց ընթերցող հասարակութիւնն ապահովապէս այլ ևս չենք ունենալ, ինչպէս որ ընթերցող հասարակութիւնն այլ ևս չունեցան, երբ Վենետիկի Մխիթարեանները իրենց կէտ նպատակին հասած կարծեցին՝ վերջին ծայր կատարելութեան հասցնելով գրաբար գրելու արհեստը...

Մեր յորդորը, որ մենք ուղղում ենք առաջ՝ միայն ընթերցող հասարակութեան և ոչ անգրագէտ ժողովրդին — ընտանեկան գործածութեան համար բարբառների տեղ դնել մաքուր գրական լեզուն — այդ յորդորը, ուրեմն, ոչ միայն միակ միջոցն է մեր գրականութեան ապագան փրկելու, այլ և միակ իսկական միջոցն է մեր գրական լեզուն ժողովրդական ոգով զարգացնելու:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

❧❧❧

❧❧❧

ԵՒ

ՔԵՐԹԻԱԾՆԵՐ

ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷԻ: Թարգմանութիւն Աստու՜ Շահէնի

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ

(ԸՆՏՐԱՆՔՈՎ)

Պ Ս Ա Կ Ո Ւ Մ

Երգեր, բարի՛ երգերս, ելէք, ելէք, և առէք ձեր զէնքերը:
Փողերը հնչեցուցէք ու մեծ պատիւ ըրէք այս դեռատի աղւորին,
որ ասկից ետքը իբրև տէր պիտի իշխէ սրտիս:

Բարև՛, դեռատի՛ թագուհի:

Վերը շողացող արևէն փաղփուռն և ճաճանչագեղ ոսկին պիտի
կորզեմ և անով սուրբ ճակտիդ թագ մը պիտի շինեմ: Կապոյտ
անդուսէն որ կը ծփայ երկնքի կամարին վրայ, ուր գիշերւան աղա-
մանդները կը շողշղան, կ'ուզեմ՝ շքեղ կտոր մը կորզել և արքայա-
կան ուսերուդ ցուցագեղ վերարկու մը շինել անով: Զարդարուն
հնչեակներու ²⁾, հպարտ եռայանգերու ³⁾ և վայելուչ տուներու ⁴⁾

¹⁾ ՏՏՍ Մուրճ 1898 թ. № 1, 2—3, 4:

²⁾ Sonnet, ³⁾ Terzines, ⁴⁾ Stance.

արքունիք մը պիտի տամ քեզի. միայն իբրև սուրհանդա՝ պիտի ծառայէ. քմայքա՝ ծաղրածու, և երգիծանքս խժբժող պատգամաւորդ պիտի լինին: Ես ինքս ալ պիտի ոտքերդ իյնամ, թագուհի, և կարմիր թաւիշէ բարձի մը վրայ ծունկի եկած, խեղքիս մնացորդը պիտի մեծարեմ քեզի, որ հաճեցաւ ինձի թողուլ վսեմափառ թագուհին, որ սրտիս մէջ քեզ կանխած է:

Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս Ը

Տժգոյն ծովեզրին վրայ նստայ, երազուն ու միայնակ: Արևը մարը կը մոնէր և ջուրին վրայ այրող ճառագայթներ կը նետէր, ու սպիտակ, լայն ալիքները, տեղատուութենէն քշւած կը յաւաջանային փրփրոտ ու կարկաշուն: Տարօրինակ շաշիւն մըն էր աս. հծծիւն մը և սուլում մը, ժպիտներ ու մրմունջներ. հառաջանքներ ու հռնգիւններ, օրօրի երգերու պէս զգուշ ձայներու խառնւած ու Ինձի կը թւէր թէ կը լսէի հին ժամանակներու պատմութիւններ, կախարգութեան սքանչելի հէքեաթներ, որոնց շատ պզտիկ եղած ատենս պատմելիլ կը լսէի դրացի տղաներու, երբ, ամառ իրիկունով մը, դուռին քարէ աստիճաններուն վրայ կիզած, սուս ու փուս՝ պատմողը մօտիկ կ'ընէինք մեր ուշադիր մատաղ սրտերովը և հետաքրքրութենէն բոլորովին բացւած մեր աչքներովը. մինչդեռ մեծ աղջիկները, մեր վերեւի պատուհանը նստած, անուշաբոյր ծաղկամաններու քով, և նման վարդերու, կը ժպտէին լուսնակ լոյսով:

ԽՅԻԿԻՆ ՄԷՋ, ԳԻՇԵՐ ԱՏԵՆ

Ծովն իր մարգարիտներն ունի, երկինքն իր աստղերն ունի, բայց սիրտս, սիրտս, սիրտս իր սէրն ունի:

Ծովը մեծ է, ու մեծ է երկինքն ալ, բայց աւելի մեծ է սիրտս, և մարգարիտներէն ու աստղերէն աւելի աղւոր կը շողայ սէրս:

Քնկդ է, անշիկ, քնկդ է այս սիրտը ամբողջովին. սիրտս ու ծովը, ու երկինքը կը միանան միակ սիրոյս մէջ:

*
* *

Արկնքի կապոյտ կամարին վրայ, ուր կը շողան աղւոր աստղերը, կ'ուզէի տաք համբոյրով մը ու շրթներս փակցնել և արցունքի հեղեղներ թափել:

Այս աստղերը սիրելիիս աչքերն են. կը շողշղան և հազար շնորհալի բարեւներ կը զրկեն ինձի՝ երկնքի կապոյտ կամարէն:

Դէպի կապոյտ կամարն երկնքին, դէպի սիրելիիս աչւըները կը բարձրացնեմ ջերմեռանդօրէն բազուկներս, և կ'աղօթեմ ու կը սպաղատիմ:

Անուշ աչքեր, շնորհալի լոյսեր, հոգիիս երջանկութիւն տւէք. թող մեռնիմ ես, և թող վայելեմ ձեզ ու բոլոր երկինքը:

*
* *

Ալիքներէն ու երազանքներէս օրօրւած, հանգիստ մը երկըն-
ցած եմ նաւի խցիկին պզտիկ անկողնիս վրայ:

Բաց լուսանցոյցէն կը նայիմ վերը պայծառ աստղերուն, սիրե-
լիիս անուշ աչքերուն:

Սիրելիիս անուշ աչքերը կը հսկեն զլսուս վրայ և կը փայլին
ու աչքերնին կը քթթեն երկնքի կապոյտ կամարէն:

Երկնքի կապոյտ կամարին կը նայէի երջանիկ, երկար ժամեր,
մինչև որ ճերմակ մառախուղի քօղ մը ծածկեց ինձմէ սիրելի և
անուշ աչքերը:

*
* *

Միջնորմին դէմ, որու կրթնցուցած եմ երազկոտ զլուխս, կու-
զան բաղնիկ ալիքները, կատաղի ալիքները. կը շաչեն ու կը մրմնջեն
ականջիս. լսեղձ յիմար, բազուկդ կարճ է, ու երկինքն ալ հեռու
է, և աստղերը ամուր մը հաստատուած են վերը ոսկի գամերով:—
Սի՛ն բաղձանքներ, սի՛ն աղաչանքներ, աւելի լաւ է որ քնանաս:

*
* *

Երազիս մէջ տեսայ ամացի երէզ մը, համր ու սպիտակ ձիւ-
նով մը ամբողջովին ծածկւած, ու սպիտակ ձիւնին տակ թաղւած
էի ես և կը քնանայի մահւան պաղ քունովը:

Սակայն վերը, երկնքի տխուր կամարէն, աստղերը, սիրելիիս
անուշ աչքերը, զերեզմանիս կը նայէին. ու այդ աչքերը կը փայ-
լէին յաղթական և հանդարտ պայծառութեամբ մը, բայց սիրով
լեցուն:

Պառկած էի նաւուն կողեզրին վրայ և երազկոտ աչքերով ջուրի ջինջ հաչելիին մէջ կը նայէի, ու հետզհետէ աւելի առաջ կը սուղէի նայւածքս, երբ ծովին խորը նշմարեցի, նախ վերջալոյսի մառախուղի մը պէս, յետոյ քիչ-քիչ աւելի յստակ գոցներով, զմբեթներ ու աշտարակներ և վերջապէս արեւէն լուսաւորւած հոլանդական հին քաղաք մը՝ կեանքով և շարժումով լեցուն։ Տարիքոտ մարդիկ սև վերարկուներով փաթթւած, ձերմակ օձիքներով և պատիւի շղթաներով, երկար սուրերով և երկար դէմքերով, հրապարակին վրայ կը պտըտէին՝ ժանեկաքանդակներով ու իրենց գաւազանով և երկար սուրերով՝ պարզութեամբ քանդակւած քարէ կայսրերով զարդարուն քաղաքին պանդոկին քով։ Անկից ոչ շատ հեռու, փափլուն ապակիներով տուներու շարքի մը առջև, բրգաձև կտրւած թմբիներու տակ, կը պտըտին, մետաքսեայ խշրտուքով, նրբօրէն գեղանի երիտասարդ կիներ, որոնց վարդ դէմքը շնորհալից գուրս կ'ելլէր իրենց սև քողերէն և որոնց խարտեաշ մազերը կը հոսին ոսկի ոլրածքներով։ Սպանիական տարազով խումբ մը գեղեցիկ ասպետներ կը սիգան անոնց մօտը և նայւածքներ կը ձգեն անոնց վրայ։ Գեղին կրկնոցակ հագած տիկիներ, ժամագիրք մը և վարդարան մը ձեռքերնին, մանրիկ քայլերով դէպի մայր-նկեղեցի կ'երթան, զանգակներու ձայնէն և երգիոնի դափիւնէն հրապուրւած։

Այս հեռաւոր ձայներուն, զաղտնի սարսուռ մը անցաւ վրայէս։ Տարտամ բաղձանքներ, խոր տխրութիւն մը կը տիրեն սրտիս, դեռ նոր բուժւած սրտիս։ Ինձի կը թւի որ վէրքերս՝ սիրիլի շրթունքներէ սեղմւած՝ նորէն կ'արիւնոտին. անոնց տաք և կարմիր կաթիլները, ծանր ծանր, մէկիկ մէկիկ, կ'իջնան ծովը, կ'իջնան հին տան մը վրայ, որ կարծես իր բոլոր բնակիչներէն հաջրի է, և ուր նստած է, ցած պատուհանի մը առջև, աղջիկ մը որ գլուխը պատուհանին կրթնցուցած է։—Քեզ կը ճաննամ, խեղճ աղջիկ։ Այդքան հեռուն, նոցն իսկ ծովին խորը, մանկական յուզումնալի բարկութեամբ մը պահեցար ինձմէ և չկրցար զուրս ելլել, ու օտարներուն մէջ օտար մնացիր դար մը, մինչդեռ ես, հոգիս կսկիծով լեցուն, քեզ կը փնտռէի, քեզ սիրւած միշտ, սիրւած այնքան ստունէ

ի վեր, քեզ, որ վերջապէս գտայ: Գտայ քեզ ու կը տեսնեմ՝ նորէն անուշ դէմքդ: Խեղացի ու հանդարտ աչքերդ, նուրբ ժպիտդ: Ու այլ ևս երբեք քեզ չպիտի թողում, և կուգամ քեզի, բազուկներս երկարած սրտիդ վրայ կը նետուիմ...

Բայց նաւապետը ճիշտ ժամանակին ոտքէս բռնեց իս, և նաւուն եզրը քաշելով, կոշտ ձայնով մը ըսաւ. «Դոքտէօր, զոքտէօր, խենթեցա՛ք»:

Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեւը երկնքի բարձրութեան վրայ շրջապատած էր ճերմակ ամպերով, ծովը հանդարտ էր. դեկին մօտ պառկած էի ես, և կը խորհէի ու կ'երազէի: Եւ կէս-արթուն, կէս-քուն, տեսայ Քրիստոսը, աշխարհին Փրկիչը: Ծփուն սպիտակ պատմունճան մը հագած, և հսկայի պէս բարձրահասակ, կը քալէր ան երկրին ու ծովին վրայ. գլուխը երկնքին կը դպէր, և տարածած ձեռքերովը կ'օրհնէր ծովն ու երկիրը, և իր կուրծքին մէջ, սրտի մը տեղ, արեւը կը կրէր, կարմիր և հրալառ արեւը. ու այս լուսաճաճանչ և բոցացացտ սիրտը, սիրոյ և լոյսի վառարան, իր շնորհալի ճառագայթները և իր չաւիտենական լոյսը կը սփռէր երկրին ու ծովին վրայ:

Դէս ու դէն ճնշող զանգակի ձայները, կարապներու պէս, կը հրապուրէին մեր նաւը, որ դէպի կանաչագեղ եզերք մը սահեցաւ, ուր մարդիկ շքեղ քաղաք մը կը բնակէին:

Ո՛վ խաղաղութեան հրաշալիք. քաղաքը ինչպէս հանդարտ է: Փուճ և շաղփաղփ գործերու խուլ շշուշը, արհեստներու դռնշիւնը, ամէն բան կը լռէ, և մաքուր ու փողփողուն փողոցներու մէջէն սպիտակ հագուստով և ձեռքերնին արմաւենիներ բռնած մարդիկ կը պտըտին, ու երբ երկու կ'ին իրարու հանդիպին, խեղացիօրէն իրարու կը նային և, սիրոյ ու քաղցր հրաժեշտի սարսուռի մը մէջ, իրարու ձակատ կը համբուրեն և աչքերնին դէպի Փրկչին լուսաճաճանչ սիրտը կը վերցնեն, դէպի այն սիրտը, որ արեւն է և որ զարթօրէն կը թափէ աշխարհի վրայ իր հաշտատար արիւնի ծիրանին, ու երեք անգամ կ'ըսեն իրարու՝ երանագին չափշտակութեամբ մը. Յրհնած եղի՛ր Քրիստոս:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

Ծովին եպերքը, ամացի և գիշերական ծովին եզերքը, երիտասարդ մը կեցած է՝ տարակուստ կուրծքով, և տրտմարար կ'ըսէ ալիքներուն.

«Ո՛հ, բացատրեցէք ինծի կեանքին առեղծաածը, տխուր և հին առեղծաածը, որ այնքան գլուխներ չարչրկած է. մեհենադրոշմակուն թագակիր գլուխներ, և հազար ուրիշ խեղճ ու եռուն գլուխներ: Ըսէք ինծի, ի՞նչ կը նշանակէ մարդը, ուսկից կուգայ, ուր կ'երթայ. ո՞վ կը ընակի հոն բարձրը՝ ոսկի աստղերէն վեր:

Ալիքները կը մրմնջեն իրենց յաւիտենական մրմունջը. հովը կը փչէ. ամպերը կը փախչին, աստղերը կը շողշողան՝ ցոլաւ և անտարբեր. — և յիմար մը պատասխանի կը սպասէ:

Գ Ի Հ Ե Ր Ե Ր Գ Ե Ր

(Ընտրանքով)

Դ Ժ Ն Դ Ա Կ Ե Ր Ա Ձ

Երազ մը, արդարեւ շատ տարօրինակ, իս բոլորովին հմայեց և սարսափով լեցուց: Շատ մը տխուր պատկերներ կը ծփան տակաւին աչքերուս առջև և սիրտս թունդ կը հաննու:

Հիանալի գեղեցկութեամբ պարտէզ մըն էր, ուր կ'ուզէի պտուղ ուրախ զւարթ: Շատ մը գեղեցիկ ծաղիկներ ինծի կը նայէին, ես ալ անոնց կը նայէի հրճանքով:

Հոն թռչուններ ալ կային որ անուշ-անուշ կը գեղգեղէին: Կարմիր արեւ մը կը ճառագայթէր ոսկի յատակի մը վրայ, և խաչտաբղետ մարմանդը կը գունաւորէր:

Խոտերէն անուշ բուրուփներ կը բարձրանային: Օդը մեղմ էր և գգուող. ու ամէն բան կը փայլէր, ամէն բան կը ժպտէր, ամէն բան կը հրաւիրէր իս վայելելու այս շքեղութիւնը:

Ծաղկոցի մը մէջտեղ, մարմարիոնէ յտակ աղբիւր մը կար: — Հոն աղւոր աղջիկ մը տեսայ որ սպիտակ հագուստ մը կը լւար:

Կարմիր աչտերով, կապուտակ աչքերով, գանգուր մազերով

խարտեաշ սուրբի պատկեր մը. ու երբ զինքը կը դիտէի, օտար կը զտնէի, և միանգամայն շատ ծանօթ:

Աղւոր աղջիկը արտորանքով կ'աշխատէր, շատ տարօրինակ յանկերգ մը երգելով. «Հոսէ, հոսէ, աղբիւրի ջուր, լւա, լւա ինծի այս կտաւը»:

Մօտեցայ անոր և շատ կամաց ըսի. «Գեղեցիկ և անուշ աղջիկ, ըսէ ինծի, որո՞ւ համար է այդ սպիտակ զգեստը»:

Իսկոյն պատասխանեց ան. «Պատրաստէ, մահւան պատանքդ կը լւամս: Եւ այս բառերը լմնցնելուն պէս, ամբողջ այս պատկերը, ամէն բան շուրջս փարատեցաւ»:

Ու ինքզինքս, կարծես կախարչանքով, մութ անտառի մը ծոցը փոխադրւած գտայ: Մռուրը մինչև երկինք կը բարձրանային, իսկ ես բոլորովին զարմացած կը խորհէի ու կը խորհէի:

Բայց մտիկ ըրէք. ինչ խուլ ձայն. կարծես կացնի մը հեռալուր արձագանգն է սա. և մացառներէն ու մացառուտներէն ¹⁾ վազելով, ընդարձակ ցանցառուտ ²⁾ մը հասայ:

Ընդարձակ ցանցառուտին մէջտեղ ահագին կաղնի մը կար, և տեսէք, ինծի երևցող այն հրաշալի աղջիկն էր նորէն որ կացինի հարւածներով կաղնիին բռնը կը զարնէր:

Ու հարւած հարւածի վրայ, վեր առնելով կացինը և զարնելով, տարօրինակ յանկերգ մը կ'երգէր ան. «Պայծան կացին, փայլուն սողպատ, ինծի փայտ կտրէ՝ հաստատուն տախտակներու համար»:

Մօտեցայ անոր և շատ կամաց ըսի. «Անուշ և գեղեցիկ աղջիկ, ըսէ ինծի, ինչո՞ւ կը կտրես կաղնիի այս փայտը»:

Իսկոյն ըսաւ ան. «Ժամանակ չկայ. դադանդդ է որ կը շինեմ. ու հազիւ թէ խօսած էր, երբ ամբողջ այս պատկերը, ամէն բան շուրջս փարատեցաւ»:

Եւ հեռուն ու բացը՝ ամայի դաշտավայր մը կը տարածւի, տփգոյն և ալևոր. ալ չգիտեմ թէ ինչ պատահեցաւ ինծի. կը կենամ հոն, անշարժ ու դողահար:

Ու երբ աննպատակ կը թափառէի, սպիտակ կերպարանք մը նշմարեցի. վազեցի այն կողմը և ահա նորէն ծանցաց աղւոր աղջիկը:

¹⁾ Hallier. ²⁾ Clairière, առանց ծառի տեղ:

Ծռած էր աչն տժգոյն, ամայի դաշտավայրին վրայ և բրիչով մը երկիրը փորելով զբաղած էր: Կամաց կամաց առաջ դնացի՝ կրկին դիտելու համար. գեղեցկուհի մը և միանգամայն արհաւիրք մըն էր ան:

Աղւոր աղջիկը, արտորանքով փորելով, տարօրինակ յանկերգ մը կ'երգէր. «Բրիչ, սուր երկաթով բրիչ, լացն ու խորունկ փոս մը փորէ»:

Մօտեցայ անոր և շատ կամաց ըսի. «Անուշ և գեղեցիկ աղջիկ, ըսէ ինծի թէ ինչ է այդ փոսը»:

Շատ շուտ պատասխանեց ան. «Հանդարուէ, այս փորած փոսս գերեզմանդ է»: Ու երբ այսպէս կը խօսէր աղւոր աղջիկը, տեսայ որ փոսը բոլորովին կը բացւէր:

Եւ երբ անոր վրայ նայւածք մը նետեցի, սարսափի սարսուռ մը բռնեց իս և ինքզինքս մղւած զգացի գերեզմանի թանձր խաւարին մէջ:

Մ Ե Ծ Ա Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Անցած գիշեր, երազի մը մէջ ինքզինքս տեսայ սև հագուստով, սնդուսէ բաճկոնակով, թւնոցներով՝ հարսանեկան պարահանդէս գնացող մարդու մը պէս. ու յանկարծ առջևս կը կենայ անուշ և անձկալի սիրուհիս: Կը խոնարհիմ ու կ'ըսեմ. «Հարսը դժւք էք. եթէ այդպէս է, ընդունեցէք ձեր ամենախոնարհ ծառային անկեղծ մեծարանքները»:

Իայց ցուրտ քաղաքավարութեան այս ձայնը կը խեղդէր իս: Սիրելիիս աչքերէն արցունքներու հեղեղ մը խուսափեցաւ, և շնորհալից պատկերը արցունքի ալիքներ կը թափէր: Ո՛վ անուշ աստղեր, որ ցերեկ ու գիշեր խաբեցիք իս, թէ արթնութեանս և թէ երազիս մէջ. պիտի հաւտամ ձեզի, երբ ձեր արտասուելը տեսնեմ:

Հ Ա Ր Ս Ն Ի Ք Ը

Ի՞նչ է որ կը յուզէ և կը զրգռէ արիւնս: Ի՞նչ է որ սրտիս մէջ կը վառէ մոլեգին տաքութիւն մը: Արիւնս կ'եռայ, կը փրփրի և կը բորբոքի. մոլեգին տաքութիւն մը կը խանձէ սիրտս:

Արիւնս կ'եռայ, կը փրփրի և կը բորբոքի. որովհետեւ սարսա-

գինլի երազ մը տեսայ. գիշերւան չարաշուք զաւակը եկաւ. ու շըն-
չասպառ տարաւ իս:

Շնչասպառ տարաւ իս ջուլթակներու և փողերու աղմուկով
թնդացող գեղեցիկ տուն մը, ջահերու և մոմերու լոյսով բոլորովին
շողշողուն: Սրահը մտայ:

Հարսնիքի շքեղ ընթրիք մը կար. հրաւիրւածները ուրախ
զւարթ նստած էին սեղանին շուրջը: Ու երբ նայեցայ հարսին, օ
դժբախտութիւն, հարսն իմ սիրելիս էր:

Նոյն ինքն էր ան, իր հարսանեկան պսակովը. փեսան անծա-
նօթ մէկն էր: Հարսին պատւի աթոռին ետեւը տեղաւորւեցայ, և
ինքզինքս շատ հանդարտ կը պահէի:

Փողի երգերը կը հնչէին.—ինքզինքս շատ հանդարտ կը պահէի:
Ուրախութեան այս աղմուկը կը տխրեցնէր և կ'ընկճէր իս: Հարսն
իր աչքերուն մէջ երջանկութիւնն ունէր. փեսան կը սեղմէր անոր
ձեռքը:

Փեսան լեցուց իր գաւաթը, անով թրջեց շուրթները և կնա-
հաճոյութեամբ հարսին հրամցուց. ժպտով մը շնորհակալ եղաւ ան,
և խմեց.—օ դժբախտութիւն, այն կարմիր դինին, արիւնս էր որ
խմեց:

Հարսը սիրուն պզտիկ խնձոր մը առաւ և տաւ փեսային: Փե-
սան առաւ իր դանակը, խոթեց խնձորին մէջ.—օ դժբախտութիւն,
սիրտս էր որ դանակը կը ծակէր:

Անուշ և նւաղուն աչքերով իրարու կը նայէին անոնք. փեսան
համարձակ գրկեց հարսը, և անոր կարմիր այտը համբուրեց.—օ
դժբախտութիւն, ցուրտ մահը համբոյր մը տաւ ինծի:

Լեզուս բերնիս մէջ կարծես կապարի կտորի մը պէս ծանրա-
ցաւ. չէի կարող բառ մը արտասանել: Զուլթակներն ու փողերը նո-
րէն հնչեցին, և սկսաւ պարը. շողշողուն զոյգը յառաջացաւ պարող-
ներու մէջէն:

Եւ մինչ հոն էի, անշարժ ու համր, ու պարողները կը դառ-
նային շուրջս,—փեսան հարսին ականջէն բառ մը փսփսաց. հարսը
կարմրեցաւ, բայց չբարկացաւ:

Բաղմութենէն դադտուկ բաժնւեցան անոնք և դիմեցին դէպի
սրահին ելքը. ուղեցի անոնց հետեւիլ, բայց ոտքերս մարմարինէն էին:

Վիշորը կը քարացնէր իս: Ինքզինքս կը քաշկռտէի սակայն մինչեւ առագաստի սենեակը: Երկու ծերուկ կին հոն դուռին առջեւ կկգած էին:

Մահն էր մէկը, միւսն ալ յիմարութիւնը: Միսերը թափած մատ մը կը դնէին իրենց առանց շրթունքի բերնին վրայ. — կը հռնդայի, կը խղզէի, ետքէն կը խնդայի, և այս խնդալս արթընցուց իս:

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ն Ո Յ Ը

Սիրուհիիս քովէն կուգայի, սիրտս այն երազանքներովն ու ահուզողովը լեցուն, որ ձեզ կը պաշարեն զիշեր ատեն: Ու գերեզմաննոցէն անցնելու ատենս, գերեզմանները ինծի կը նայէին, ծանր ու լռիկ:

Զուլթակահարին գերեզմանին մօտեցայ: Պայծառ լուսնակ մը կար: Փոսին վրայ մթագին կերպարանք մը կեցած՝ կը փսփսար: «Սիրելի եղբայր, ձեզի կը սպասեմ»:

Զուլթակահարն ելաւ իր գերեզմանէն, որ ամենէն բարձրն էր: Նստաւ ան գերեզմանաքարին վրայ և ուժգին թրթռացուց կիթառի մը լարերը, զողողացող ձայնով մը երգելով.

«Հին երգը կը չիշէք տակաւին, իսու և չարաշուք լարեր, այն երգը որ երբեմն ձեր սիրտերը այնքան սաստիկ այրեց: Հրեշտակները կը կոչեն ան երկնային ուրախութիւն, սատանաները կը կոչեն դժոխային աղէտք, մարդիկ կը կոչեն սէր»:

Այս վերջին բառը ըսելուն պէս, բոլոր գերեզմանները բացւեցան. ոգիներու բազմութիւն մը դուրս ելաւ անոնցմէ. շրջապատեցին ջուլթակահարը և խմբովին պոռացին.

«Աէր, սէր, քու զօրութիւնդ մեզ հոս պառկեցուց և փակեց մեր աչքերը: Ինչո՞ւ կ'արթնցնես մեզ զիշեր ատեն»:

«Մէկը առաջ եկաւ, չւանը վիզը, և խօսեցաւ.

«Կոմսին հետ կոնծած ատենս, ան գոռողութեամբ միշտ իր ընտիր մարգարիտներն ու աղջիկը կը գովէր: Ի՜նչ ընեմ ընտիր մարգարիտներդ, սիրելի կոմս, աղջիկդ աւելի շատ կը վայլէ ինծի»:

«Նիգիրու և կղպանքներու ետեւ անոնք երկուքն ալ աղէկ մը պահւած էին. ու կոմսը բազմութիւ ծառաներ ունէր: Բայց որո՞ւ հոգ ծառաները, նիգերը, կղպանքները:

«Ելնարանով վեր բարձրացայ համարձակ, և սիրելիիս պատուհանէն ներս մտայ... ծառաներու խումբը շրջապատեց իս: Երբեք զող մը չեմ ես, կը պողամ, սիրելիս միայն զողնալ կ'ուզէի:

Պատճառաբանութիւններս ու ապացոյցներս ապարդիւն մնացին. չւանը շուտ մը սեղմեց վիզս, և երբ արեւը ծագեցաւ, զարմացաւ իս կախած տեսնելուն:

Ոգիները մեծ քահնաւ մը փրցուցին: Ուրիշ մէկը առաջ եկաւ, վիզը խոշոր վէրքով մը.

«Որսորդութեան զնացի՝ սիրոյ վիշտ մը վրայէս փարատելու համար. հրաղանս բռնած էի թեիս տակը: Ծառի մը բարձրէն ազուաւր կռնչեց. գլուխդ վնաս, գլուխդ վնաս:

«Աղաւնիի մը կը սպասէի. բարեկամունիիս պիտի տանիմ ան — կը խորհէի, և որսորդի նայածքս ուղղեցի մացառուտներուն և մացառներուն մէջէն:

«Ի՞նչ է այս աղմուկը: Կարծես երկու տատրակ էին որ իրար կը կոցէին: Վամաց մը առաջ գնացի. Ասուածս, ի՞նչ տեսնեմ, իմ սիրելիս, իմ աղաւնիս:

«Իմ աղաւնիս, իմ սիրելիս էր ան: Անծանօթ մարդ մը իր բազուկներուն մէջ գրկած էր զինքը: Հիմա վարպետ որսորդ, աղէկ նշան առ: — Անծանօթ մարդը պառկեցաւ արիւնի մէջ:

«Քիչ ետքը, պինդ մը կապւած, դահիճին սպասաւորներուն հետ՝ անցայ անտառէն: Ծառին բարձրէն ազուաւր կռնչեց. գլուխդ խնայ, գլուխդ վնաս:

Ոգիները մեծ քահնաւ մը փրցուցին: Զուլթակահարը ինքն ալ առաջ եկաւ այն ատեն.

«Ատենով ես աղւոր երգ մը երգեցի. հիմա վերջացաւ. երբ կուրծքին մէջ սիրաւ խորտակւած է, ալ երգերը կը հեռանան:

Ոգիներուն մեծագոյ խնդալը կրկնապատկեցաւ և մթապատ խումբը տատանեցաւ շրջանակին մէջ: Յանկարծ զանգակատան ժամացոյցը ժամը մէկը զարկաւ, և ոգիները ոռնալով նետւեցան իրենց գերեզմաններուն մէջ:

Ո Վ Ե Կ Ո Ջ Ո Ի Թ Ի Ի Ն

Իր խցիկին մէջ մինակ նստած է երիտասարդ Փրանչիսկիանը. Դժոխքին քանալին անունով կախարդական գիրքը կը կարդայ:

Ու երբ կէս գիշերը կը հնչէ, ալ հոն չի կենար. և վախէն շրթունքները տժգունած, կը կանչէ զժոխային ոգիները.

«Ո՛գիներ, գերեզմանէն հանեցէք ինծի համար ամենէն զեղեցիկ կնոջ մարմինը. կեանք տւէք անոր այս գիշերւան համար. կ'ուզեմ իր հրապոյրներէն օրինակ առնել»:

Ոգեկոչութեան սոսկալի բանաձևը կ'արտասանէ, և իսկոյն իր աղետաւոր կամքը կատարւեցաւ. մեռած խեղճ զեղեցկուհին կուգայ, սպիտակ լաթերով փաթթւած:

Նայւածքը տխուր է: Անոր սառ կուրծքէն կսկծաղին հառաչանքներ կ'ելլեն: Մեռելը կը նստի աբեղային քով. իրարու կը նային ու կը լռեն:

Ո Ղ Բ Ե Ր Գ

1

«Փախի՛ր ինծի հետ և կինս եղի՛ր, ու հանգչէ՛ սրտիս վրայ. հեռուն, օտարութեան մէջ, սիրտս՝ հայրենիք և հայրենական որուն պիտի ըլլայ քեզի համար»:

«Եթէ չգաս հետս, ես հոս կը մեռնիմ, և դուն մինակ ու լքւած կը մնաս, ու հայրենիքի մէջ, հայրենական տան մէջ, օտարի պէս պիտի ըլլաս»:

2

(Ժողովրդային իրական երգ մըն է սա՛, որ լսեցի Հոնոսի եղբրներուն վրայ):

Գարնան գիշեր մը եղեամ՝ մը ինկաւ. ինկաւ կապոյտ սղտիկ-փափուկ ծաղիկներուն վրայ. թոռմեցան, մեռան անոնք:

Երիտասարդ մը աղջիկ մը կը սիրէր. գաղտուկ փախան անոնք հայրենիքէն, առանց իրենց հօրն ու մօրը զիտութեանը:

Դէս ու դէն թափառեցան. ո՛չ բարի բախտ, ո՛չ բարի աստղ ունեցան. թոռմեցան, մեռան անոնք:

3

Իրենց գերեզմանին վրայ թմբի մը կը բարձրանայ, ուր թըռչուններն ու իրիկւան հովը կը սուլեն, և որուն տակը, կանաչ խոտին վրայ, ջաղացպանին մանչը կուգայ կը նստի իր սիրուհիին հետ:

Հովերը կը սո՛ւլեն չարաշուք սարսուռներով. թռչունները շատ անուշ և ողբազին ձայնով մը կ'երգեն, ու շատախօս սիրահարները, յանկարծական համրութեան մը ենթարկւած, կուլան առանց զիտնալու թէ ինչո՛ւ:

Ո Ւ Խ Ս Ը

1

Մայրը պատուհանը կեցած է. զաւակը պառկած է անկողինը.— չպիտի ելլես, Վիլհէլմ, թափորը տեսնելու:

«— Այնքան հիւանդ եմ, մնջրիկ, որ ոչ կրնամ լսել, ոչ տեսնել. սիրական մեռելիս վրայ կը մտածեմ, և աս՝ սիրտս կտոր կտոր կ'ընէ:

«— Ելի՛ր, Քէլլար երթանք. ան ժամադրիքդ ու վարդարանդ. Աստածածինը պիտի բուժէ վիրաւոր սիրտդ:

Խաչին դրօշակները կը ծածանին հովին դէմ. շարականներ կ'երգին. թափորը Հռենոսեան Քոլոնիա կ'անցնի:

Մայր ու զաւակ կը հետեին ամբոխին. երկուքն ալ դպիրներուն հետ կ'երգեն. «Փառք քեզ, Մարիամ:

2

Քէլլարի Աստածածինը իր ամենէն զեղեցիկ զգեստները հագած է այսօր. ան այսօր շատ ընելիք ունի. խումբ խումբ հիւանդներ կուգան իրեն:

Հիւանդները անոր կը բերեն՝ իբրեւ նւէր՝ մեղրամոմէ անխամներ, մեղրամոմէ շատ մը ոտք ու ձեռք:

Եւ ո՛վ որ մեղրամոմէ ձեռք մը կը նւիրէ, ձեռքը կը բուժւի. ան որ մեղրամոմէ ոտք մը կը նւիրէ, ոտքը կ'աղէկնայ:

Անթացուպերով շատերը գնացին Քէլլար, ու հիմա կը ցատկըտեն չւանի վրայ. շատերը ջութակ կը զարնեն հիմա, եկած ատեննին մէկ մատերնին իսկ չէին կարող շարժել:

Մայրը մեղրամոմ առաւ, և անով սիրտ մը շինեց. — «Աստածածնին տար աս. Ան պիտի ցաւդ բուժէ:

Տղան հառաչելով առաւ մեղրամոմէ սիրտը. հառաչելով՝ Սուրբ Պատկերին առջև տարաւ. արցունքներ յորդեցան աչքերէն, սն խօսքերն ելան սրտէն.

«Փառաւորանձ Մարիամ, անարատ կոյս և մայր Ասածու,
Նրկնքի թագուհի, մոխկ ըրէ ողբա:

«Մօրս հետ Գոյոնիա կը բնակէինք, այն քաղաքը որ հարիւր-
ներով մատուռ ու եկեղեցի ունի:

«Ու մեր մօտիկը կը բնակէր պզտիկ Մարգարէտան, որ վերջերս
մեռաւ: Մարիամ, մեղրամօմէ սիրտ մը կը բերեմ. սրտիս վէրքը
բուժէ:

«Բուժէ՛ վշտահար սիրտս. և առտու իրիկուն ջերմեռանդօրէն
պիտի երգեմ. փառք քեզ, Մարիամ:

3

Հիւանդ տղան ու մայրը կը քնանային իրենց պզտիկ սենեա-
կին մէջ: Աստուածածինը կուգայ և կամաց մը ներս կը մտնէ:

Կը ծռի հիւանդին վրայ. թեթեւ մը՝ ձեռքը անոր սրտին վրայ
կը դնէ. անուշ մը կը ժպտի և կ'աներեւութանայ:

Մայրը երազին մէջ ամէն բան կը տեսնէ և աւելի բաներ իսկ.
իր մրափէն կ'արձնենայ. շուները բակին մէջ կը հաչէին կատա-
ղաբար:

Զաւակը հոն՝ փուեր էր Խշտեակին վրայ. մեռնձ էր. առտուան
կարմրկեկ լոյսը կը խաղար անոր ճերմկած աչտերուն վրայ:

Մայրը բարեպաշտօրէն միացուց ձեռքերը, և բարեպաշտօրէն
ցած ձայնով երգեց. «Փառք քեզ, Մարիամ:

ԵՐԿՈՒ ԳՈՐԸՆԱԴԻԷ

(ղրած 1816-ին)

Դէպի Ֆրանսա ճամբայ ինկան երկու պահակ զօրնադիէ ¹⁾.
երկար ատեն Ռուսիոյ մէջ զերի մնացեր էին. ու երբ դերմանական
զաւառները հասան, տրտում տխուր՝ գլուխին կախեցին:

Այնտեղ իմացան որ Ֆրանսա յաղթւած էր, թէ զօրաւոր և
մեծ բանակը ջարդ ու փշուր եղած էր և թէ ինքը կայսրը բան-
տարկւած էր:

Այս ցաւալի լուրին վրայ, երկուքն ալ սկսան արտասուել: Մէկն

¹⁾ Grenadier.

ըսաւ. «Ի՛նչքան կը տառապիմ. հին վէրքերս նորէն կը բացւին և մահս կը մօտենայ»:

Ու միւսն ըսաւ. «Ամէն բան պրծաւ: Ես ալ շատ կը փափաքէի մեռնիլ. բայց հունս կին ու զաւակներ ունիմ, որ առանց ինծի մեռնին»:

—Ի՛նչ ընեմ ընեմ կիսն ու զաւակները. ուրիշ շատ հոգեր ունիմ ես: Թո՛ղ երթան մուրան, եթէ անօթի են: Ինքը, կայսրը, կայսրը բանտարկեւծ է:

«Ընկեր, մօտիկ ըրէ աղաչանքս. եթէ ես այստեղ մեռնիմ, մարմինս առ հետդ տար, և Ծրանսացի հողին մէջ թաղէ իս»:

«Պատուի խաչը՝ իր կարմիր ժապաւենովը՝ սրտիս վրայ պիտի դնես, և ձեռքս պիտի տաս հրացանս, սուրս ալ՝ քովս ի վար»:

«Ասանկ, պահապան զինւորի մը պէս կ'ուզեմ մնալ գերեզմանիս մէջ, և սպասել մինչև այն օրը, երբ հնչէ թնդանօթներուն գոռուիլը և ձիերուն դափրը»:

«Այն ատեն կայսրը ձիով պիտի անցնի գերեզմանիս վրայէն՝ թմբուկներու դռնչիւնով և թուրերու շառաչիւնով. ու ես, ամբողջ զինւած, դուրս պիտի ելլեմ գերեզմանէս՝ սլաշտպանելու համար ան, իմ կայսրս, իմ կայսրս»:

Հ Ո Ւ Ր Ի Պ Ա Յ Ե Ր

Աւիքները տարփատենչ կը ծփան ամացի ծովեզրին դէմ. լուսինն ելած է. երիտասարդ ասպետ մը՝ ձերմակ աւազակոյտին վրայ երկնցած՝ կը հանդէի, հազար մտածումներու մէջ տարուբեր:

Ձուրի գեղեցիկ պաշերը ¹⁾, սպիտակ քօղեր հագած, կը թողուն ծովուն խորքը: Թեթեւ քայլերով երիտասարդ ասպետին կը մօտենան, որը իրաւցնէ քնացած կը կարծեն:

Մէկը հետաքրքրութեամբ անոր գտակին փետուրներուն կը դպչի. միւսը կը քննէ անոր գօտին ու սաղաւարտը:

Երրորդը կը ժպտի, և կը շողայ իր աչքը. ասպետին սուրբ կը հանէ պատեանէն, և, փայլուն պողպատին կրթնած, հիացումով՝ գեղեցիկ ասպետը կը զիտէ:

¹⁾ Ondines—ջուրի ոգիներ:

Ձորերորդը կը ցատկաէ անոր շուրջը դէս ու դէն, և շատ կամաց կ'երդէ. «Ա՛խ, ինչ՞ու քու սիրունիդ չեմ ես, ասպետներուն սիրելի ծաղիկը»:

Հինգերորդը հեշտաբոյր տենչով մը կը համբուրէ ասպետին ձեռքը. վեցերորդը կը վարանի ու վերջապէս կը համարձակի անոր շուրթերն ու աչտերը համբուրել:

Ասպետը յիմար մը չէ. կը զգուշանայ աչքերը բանալ, և հանդարտ կը թողու որ ջուրի գեղեցիկ պայծերը համբուրեն զինքը, լուսնակ լոյսով:

Ն Ա Ի Ա Կ Ը

Ժպիտներ ու երգեր: Արևին ճառագայթները կը փալփլան և կը խաղան ջուրին վրայ: Յնծալից նաւակ մը կ'օրօրւի ալիքներուն վրայ: Ուրախ զւարթ նստած էի՝ լաւ բարեկամներու հետ:

Նաւակը խրեցաւ՝ հազար կտոր ըլլալով: Բարեկամներս գէշ կը լողային. ջախջախեցան անոնք հայրենիքի խոթերուն դէմ. իսկ փոթորիկը իս Սէնի եզերքը նետեց:

Նոր նաւ մը նստայ՝ նոր բարեկամներու հետ: Օտար ալիքները կ'օրօրեն ու կը տանին իս: Հայրենիքը ինչքան հեռու է. սիրտս ինչքան կը սեղմի:

Ժպիտներն ու երգերը նորէն կը հնչեն: Հովը կը սուլէ. տախտակները կը ճարճատեն. երկնքի վրայ կը մարի վերջին աստղն ալ: Սիրտս ինչքան կը սեղմի. հայրենիքս ինչքան հեռու է:

(Թոռլիկ թերթեր)

*
* *

Կ'արտասուէք դուք, տիկին:

Ո՛հ, իցիւ թէ այդ աչքերը, որ այսքան աղւոր արցունքներ կը թափեն, դեռ շատ երկար ժամանակ լուսաւորեն աշխարհը իրենց ճառագայթներովը, և իցիւ փափուկ ձեռք մը փակէր անոնք օրին մէկը, մահւան ժամուն: Կակուղ բարձն ալ լաւ բան մըն է մահւան ժամուն, տիկին, և իցիւ որ չպակսի ան. ու երբ ձեր յոգնած գեղեցիկ գլուխը անոր վրայ ծախ և ձեր սեւ մազերը թափւին գունատած աչտերնուդ վրայ, Ասուած թող այն ատեն հաճի ձեզի դարձ-

նեւ այն արցունքները որ թափւեցան ինծի համար... Որովհետեւ ես ինքս եմ այն ասպետը, որուն համար լացիք դուք. ես ինքս եմ սիրոյ պատճառով աստանդական ասպետը, ինկած աստղին ասպետը՝ Կ'արտասուէք դուք, տիկին:

Ո'հ, կը ճանչնամ այդ արցունքները: Ինչո՞ւ համար կեղծաւորել երկար ատեն: Դո՛ւք, տիկին, դո՛ւք էք այն գեղանի կինը որ այնքան դառնօրէն արտասուած է Գոտէսբէրգի մէջ՝ կեանքիս այս տխուր պատմութիւնը լսելուն... Ինչպէս մարգարիտները վարդերու վրայ՝ այնպէս ձեր արցունքները կը թափւէին ձեր այտերուն վրայ... Թխամազ շունը տեղէն չէր շարժեր. անժէլիւսը կը հնչէր Քէօնիզս-վենտէրի մէջ. Հակնոսը շատ կամաց կը մըմնջէր. գիշերը իր սև վերարկովը կը ծածկէր երկիրը. ու ես նստած էի ձեր ոտքերուն առջև, տիկին, աստղազարդ երկինքը դիտելով՝ վաչրկեան մը, ձեր աչքերը երկու աստղ կարծեցի: Բայց ինչպէս կարելի է շփոթել այդքան ալւոր աչքերը աստղերուն հետ: Երկնքի այն պանդ լոյսերը չեն կարող արտասուել մարդու մը դժբախտութեանը վրայ, մարդու մը որ թշուառ է և ան արցունք չունի...

(Հատուած «Մեծ Թմրուկէն»)

Բ Ո Մ Ա Ն Ս Է Ր Օ

ՊԱԼԱՏՈՒՆԻ ԿՈՄՍՈՒՀԻՆ ¹⁾

Պալատունի Jutta կոմսուհին ու իր աղախինը թեթև մակոյկի մը մէջ նստած՝ կ'անցնէին Հռենոսէն, լուսնակ լոյսով: Աղախինը կը թիափարէր, կոմսուհին ըսաւ. «Ձեռ տեսներ սա եօթը դիակը, որ լողալով մեզի կը հետևին: Մեռելները ինչ տխուր կը լողան գիշեր ատեն:

«Հրճանքով ու սէրով կայառուն ասպետներ էին ատոնք ժամանակով: Խելակորոյս, թւերուս մէջ ինկան և յաւիտենական հաւատարմութիւն մը երդւընցան: Ապահով լինելու համար թէ անոնք

¹⁾ La Comtesse palatine.

միշտ պիտի պահեն իրենց երդումը, անմիջապէս անոնք բռնել և խեղդել տւի գիշեր ատեն: Մեռելները ինչ տխուր կը լողան գիշեր ատեն:

Աղախինը կը թիավարէ. կոմսուհին քահ քահ մը կ'արձակէ, որը լեռներուն արձապանգը կը կրկնէ՝ հեգնոտ և թախծալի ձայնով մը: Ծփացող դիակները ջուրէն դուրս կ'ելլեն մին, և մակոցկին յետակողմը. կը նային իրենց ապակեայ աւլըներովը. ձեռք կը վերցնեն՝ կարծես երդում ընելու համար:—Մեռելները ինչ տխուր կը լողան գիշեր ատեն:

Ա Ս Ր Ա Մ Ը

Ամէն օր, Սուլթանին գեղեցիկ ու դեռատի աղջիկը կը պտըտէր իր հօրը պարտէզը. ամէն օր կ'երթար ու կուգար ան, իրիկւան դէմ, ցայտող աղբիւրին մօտ, ուր կը խաղան և կը ծփծփան սպիտակ ջուրերը:

Ամէն օր, գեղեցիկ և դեռատի գերին, իրիկւան դէմ, կը կենար ցայտող աղբիւրին մօտ, ուր կը խաղան և կը ծփծփան սպիտակ ջուրերը. օրէ օր դէմքը աւելի կը գունատէր. մահւան պէս տժգունեցաւ ան:

Իրիկուն մը, իշխանուհին արագ քայլերով՝ անոր մօտեցաւ ու ըսաւ. «Դերի, անունդ, հայրենիքդ ու ցեղդ կ'ուզեմ գիտնալ»:

Ու գերին պատասխանեց. «Մուհամմէտ կը կոչւիմ. Արաբիա, Եգիպտոսի մէջ ծնած եմ, և Ասորաներու ցեղին կը պատկանիմ. այս Ասորաները անոնք են, որ կը մեռնին երբ կը սիրեն»:

ՂԱԶԱՐԻ ԳԻՐՔԸ

ՀԱՆԳՍՏԻ ԾԱՐԱԻ

Թող որ վերքերդ արիւնին, թող որ արցունքներդ թափին անհատնում. վշտին մէջ զաղտնի հեշտանքի զեղխութիւններ կան, ու արցունքը շատ քաղցր բալասան մըն է:

Եթէ օտար ձեռք մը վիրաւորած չէ քեզ, լաւ կ'ընես որ դուն վիրաւորես ինքզինքդ. մի' մոռնար նաեւ վայելուչ կերպով շնորհակալ լինել բարի Աստուծոյն, երբ արցունքները թրջեն այտերդ:

Յերեկան աղմուկները կը մարին. գիշերը կ'իջնէ իր երկար քօղերովը: Անոր ծոցին մէջ ո՛չ դաւաճան կայ, ո՛չ ալ ապուշ որ դայ խռովել քունդ:

Հոն ապահով պիտի ըլլաս երաժշտութենէն, դաշնամուրի տանջանքներէն, Մեծ-Օպերայի շքեղութենէն, շահատակութեան ահաւոր զղրղիւններէն:

Հոն այլ ևս չպիտի հալածւիս ու տանջւիս վարպետներու խուժանէն, Զիւկովի հանճարէն, և անոր անունը մինչև աշխարհին ծայրը տանող ծափահարութիւններէն:

Օ' գերեզման, դուն դրախտն ես փափուկ ականջներու, որ կը վախնան ամբոխին գռնհիկ աղմուկէն: Մեռելիք լաւ է, բայց սուելի լաւ է ծնած չըլլալ բնաւ:

Մ Ա Յ Ի Ս Ի Մ Է Ձ

Համբուրած, սիրած բարեկամներս ամենէն անվախել վարմունքն ունեցան հետոյ: Սիրտս կը խորտակւի. վերը սակացն արեւը խնդալով կը բարեւէ հեշտանքի ամիսը:

Գարունը ծաղկազարդւած է: Կանաչ անտառին մէջ կը հնչէ թռչուններուն զւարթ երգը, և ծաղիկներն ու աղջիկները կուսական ժպիտով մը կը ժպտին.— ո՞վ սքանչելի աշխարհ, տգեղ ես դուն:

Իսկապէս պիտի փորձուէի Օւկիւսը ¹⁾ դովել. հոն չկայ բնաւ անիմաստ հակառակութիւն որ մեզ կը սպաննէ: Տառապող հոգիներուն համար վնասը, այնտեղ, շատ աղէկ է, Ստիքսի գիշերական ջուրերուն եզրը:

Անոր մեկամաղձօտ աղմուկները Ստիքսի խոնքերու ²⁾ բիրտ և տառապագին աղաղակը, գժոխքի աստաճներուն երգը, այնչափ սուր, այնչափ ծակող ցէրբէրի ³⁾ հաջիւնը—

¹⁾ Ստորերկրեայ կամ մեռելների աշխարհ:

²⁾ Գիշակեր թռչունների պղնձեայ թևերով Արկադիայի Ստիքսի խոնքի մէջ, որ Հերքիւլէս սպաննեց:

³⁾ Cerbere. երեք գլխով շուն. գժոխքի բարապան:

Բոլոր ասոնք զժբախտութեան և տխրութեան հետ կը յօրինեն վշտագին ներդաշնակութիւն մը: Սուերներու կայսրութեան մթին ձորին մէջ, Պրօսէրպինի անիծած կալածներուն մէջ, ամէն բան համաձայն է մեր արցունքներուն:

Բայց հոն. վերը, արեւն ու վարդերը ինչքան կը տանջեն իս անգթօրէն: Երկինքը կը ծաղրէ իս, կապույտ երկինքը մաշիսի երկինքը... ի՞նչ սքանչելի աշխարհ, տգեղ ևս դուն:

Գ Ե Ր Ե Վ Ա Ն Ա Ռ Ն Ա Ի Ը

Ա

Մինչէր վան Կուկ, նաւին նաւապետը, նստած է իր խուցը և իր հաշիւներով կը զբաղի: Բեռին արժէքն ու հաւանական շահը կը հաշուէ:

«Խէժը լաւ է, լաւ է պղպեղն ալ. երեք հարիւր պարկ և երեք հարիւր տակաւ խէժ և պղպեղ ունիմ: Ունիմ նաև ոսկիի փոշի և փղոսկր. բայց սեւամորթներուն վաճառականութիւնը աւելի շահաւոր է:

«Վեց հարիւր խափշիկ ունիմ, որ փոխանակութեամբ առած եմ Սենեգալի եղբրքը, և իսկապէս զրեթէ ոչինչ գնով: Միսերնին պինդ է, ջիղերնին լարւած. կարծես անագապղնձէ ըլլային:

«Փոխարէնը՝ օղի, ապակիէ աղամանդներ, պողպատէ գործիքներ տւած եմ: Հարիւրին՝ ութը հարիւր պիտի շահիմ, եթէ միայն կէսը ողջ մնայ:

«Այո, եթէ միայն երեք հարիւր սեւամորթ մնան ինծի Բիօ-Ժանէյրօյի նաւահանգիստը, Գոնզալէս Պէրէյրօյի տունը ամէն մէկին համար հարիւր դուքատ 1) պիտի համրէ:

Յանկարծ Մինչէր վան Կուկը, ընդհատեցին իր խոկումներէն: Խուցը կը մօնէ նաւին վերաբուժը, պ. բժիշկ վան դէր Սմիսէն:

Չոր ու բարակ դէմք մը, քիթը կարմիր ելունդներով լեցուն: — «Այո, նաւային էսքիւլապ, կը պոռայ վան Կուկը, ինչպէս են սիրելի սևերս:

Բժիշկը շնորհակալութիւն կը յայտնէ և կ'ըսէ. «Կուգամ ձեզի իմացնել որ մեռնողներուն թիւը այս զիշեր շատ մեծցած է:

«Մէկ օրէն միւսը գրեթէ երկու մեռնող կար օրական: Այսօր հօթը հոգի մեռած են, չորս մարդ և երեք կին: Կորուստները խկոցն նշանակեցի հաշուետարին մէջ:

«Մանրագնին քննեցի զիակաները, որովհետև այս սրիկաները շատ անգամ սուտ մեռել կը ձևանան, որպէս զի ծովը նետին:

«Շղթաները առի իրենց վրայէն և, սովորութեանս համաձայն, այս առտու, լոյսը ծագելուն, անոնց մարմինները ծովը նետել տի:

«Խսկոցն խումբ մը շանաձուկեր դուրս նետուցան ալիքներու ծոցէն. շատ կը սիրեն սեերուն միսը. իմ թռչակաւոր հիւրերս են անոնք:

«Մեր նաւին կը հետեւէին՝ ծովեզրէն բաժնւելէս ի վեր: Անպիտանները ոկրամոլի ոռնգով կը հոսւըտան զիակաները:

«Շատ ծիծաղաշարժ է տեսնել անոնց մեռելներ կորզելը: Մէկը գլուխ մը կը լափէ, միւսը սրունգ մը, ուրիշներ մսի կտորներ կը կլլեն:

«Երբ ամէն բան հատցնեն, ուրախ զւարթ կը խայտան նաւին բոլորովիքը, կարծես ուզէին շնորհակալութիւն յայտնել ձաշին համար:

«Վան կուկ հառաչելով անոր խօսքը կը կտրէ. «Խնչպէս չարիքին առաջքն առնելու է, ինչպէս մահւան աճումը դադրեցնենք»:

Իժիշկը կը պատասխանէ. «Շատեր իրենց սխալմէն է որ մեռան. պատճառը դարչահոտութիւնն է որ կ'ապականէ կամուրջի տակի իրենց բանտին օդը:

«Շատերն ալ մեղամաղձոտութենէ մեռան. որովհետև կը ձանձրանային: Քիչ մը օդ, քիչ մը երաժշտութիւն և պար կը բաւէ չարիքը դարմանելու»:

«Ա՛յ, խորհուրդ, կ'աղաղակէ վան Կուկը, սիրելի նաւային էսփուլապս՝ Ալէքսանդրի ուսուցիչ Արիստոտէլին պէս խելացի է:

«Դէլֆոի մէջ կակաչներու մշակիչ ընկերութեան նախագահը հանձարեղ մարդ մըն է. բայց քու խելքիդ կէսին չափ խելք չունի:

«Շնուտ, երաժշտութիւն, երաժշտութիւն: Սեերուն պարահանդէս մը պիտի տամ կամուրջին վրայ, և վնչ անոր, որ պարին չպիտի զբօսնու. մտրակի հարւածներով կ'ուրախացնենք անիկայ:

Երկնքի կապոյտ կամարէն, հազարաւոր աստղեր կը նային, տենչանքէն կածկլտուն, խոշոր խեղացի աչքերու պէս, դեղնցիկ կիներու աչքերուն պէս:

Վար, դէպի ծովը կը նային, հեռուն փոսփորի ծիրանեզոյն շողիներով ծածկւած: Ալիքները հեշտաշշունչ կը մրմնջեն:

Գերեզմաճառ նաւին կաջմերուն վրայ ոչ մէկ առաքաստ կը ծփայ: Կարծես իր հանդերձանքէն մերկացած է ան. բայց լապտերները կը փալփալան կամուրջին վրայ, այն տեղը, ուր երաժշտութեամբ ու պարով կը զբօսնուն:

Նաւապետը ջութակով կը նւագէ. խոհարարը սրինգ մը կը փչէ. նաւաստի մը թմբուկ կը զարնէ, և բժիշկը փող կը հնչեցնէ:

Հարիւրի չափ սեւամորթ, երիկ մարդ ու կին, ուրախութեան աղաղակներ կ'արձակեն, և կը ցատքտեն ու կը վազվզեն խնթերու պէս: Իրենց ամէն մէկ շարժումին շղթաները կը շխրտան ներդաշնակօրէն:

Մոլեգին ոստումներով իրենց ոտքերուն տակ կը փշրեն տախտակները, և բազմաթիւ սեւամորթ կիներ թեւերնին կ'անցնեն հեշտանքով իրենց ընկերոջ մերկ մարմինն: Այս ժխորին մէջէն շատ մը հեծեծանքներ ալ կը բարձրանան:

Գերիներուն պահապանն է ղբօսապետը, մորակի հարւածներով յոգնած պարողները կը զրգռէ և ուրախութեան կը դրդէ:

Ու թռառա՛-թռառա՛ դռմդռմ՝դռմդռմ: Շուինդը ջուրժ խորքէն՝ իրենց ապուշ քունովը թմբած՝ ծովի ճիւղները իրեն կը քաշէ:

Եւ դեռ թմբած՝ կուգան կը հասնին, շանաձուկեր են, հարիւրաւոր շանաձուկեր. աչքերնին դէպի նաւը կը վերցնեն, և զարմանքէն շարած կը մնան:

Սակայն կը տեսնեն որ նախաճաշին դեռ ժամանակ կայ. կը յօրանջեն և մինչև յառտի կը բանան իրենց երախը. կզակներուն վրայ սղոցի պէս սրածայր ակռաներ բուսած են:

Ու նորէն թռառա՛-թռառա՛ և դռմդռմ՝դռմդռմ: Պարը չի զաղրի: Շանաձուկերը անհամբերութենէն իրարու պոչ կը խածնեն:

Անոնք կարծեմ երաժշտութիւնը չեն սիրեր, ինչպէս իրենց նմաններէն շատերը: Նւագը չսիրող ամէն անասունէ զգուշացիր, ըրած է Ալպիոնի մեծ բանաստեղծը:

Ու թողաւ՝ թողաւ և ղումիլում-ղումիլում: Պարը կը շարունակի միշտ: Մինչէր վան Կուկ նստած է մեծ կայմին մօտը, և ձեռնամած՝ կ'աղօթէ՝

«Քրիստոսի սիրուն համար, խնայէ, Տէր, սեւամորթ ձկնորսներուն կեանքը: Եթէ մեղանչած են ասոնք, գիտես որ եզներու պէս անբան են:

«Խնայէ ասոնց կեանքը՝ Քրիստոսի անունովը, Քրիստոսի որ մեզի ամենքիս համար մեռաւ. որովհետեւ Ռօ-Թանէյրօյի մէջ եթէ միայն երեք հարիւր սեւամորթ մնան ինծի, գէշ գործ մը ըրած պիտի լինիմ:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Ա

Թող հոգ սուրբ առակաները, թող հոգ բարեպաշտ ենթադրութիւնները. ջանս առանց երկդիմութեան լուծել մեզի հետ սոս գծախաչին հարցումները.

«Ինչու համար արդարը կը քաշլուտի արիւնթաթաթախ, խեղճ, խաչի բռնին տակ, մինչդեռ չարը, յաղթողի մը պէս երջանիկ, կը սիգայ իր հպարտ ձիուն վրայ:

«Սխալը որո՞ւ վերադրել: Մեր Տէրը ամենակարող չէ, կամ միթէ ինքն է այս անկարգութեան հեղինակը: Ա՛խ, իրաւ, գէշ բան պիտի ըլլար ատոն:

Անդադար այս տեսակ հարցումներ են որ կը կրկնենք, մինչև որ մեր բերանը փակեն բուռ մը հողով, — բայց ատ պատասխան մըն է միթէ.

Բ

Սեւ կինը գորովանքով սեզմեց գլուխս իր սրտին վրայ: Ա՛խ, մազերս ճերմկեցան հոն, ուր անոր արցունքները թափեցան:

Ան գրկեց իս, անդամալոյծ եղայ. ան գրկեց իս, և ուժաթափեցայ, աչքերս համբուրեց և կուրցայ. քամեց ան իր վայրագ շուրթներով երկամունքիս բոլոր ծուծը:

Սիրոս հիմա դիակ մըն է, ուր բանտարկւած է հոգիս: Շատ անգամ ինքզինքը խղզւած կը զգայ ան, կը յուզուի, կառաղուծենէն կը խենթենայ, կը պոռայ, կը հայհոյէ:

Անզօր անէծքներ. ամենէն սոսկալի անէծքդ ճանճ մը չի սպաններ: Հանդուրժէ ճակատադրիդ և փորձէ կամացուկ մը սուտ լալ և աղօթել:

..b

Խարտեաշ աղջիկ մըն էիր, այնքան շնորհալի, այնքան սիրուն, և այնքան պնդ: Զուր տեղը կը սպասէի այն ժամուն որ սիրադ բացւէր՝ ոգևորութիւն ժայթքելու համար:

Ոգևորութիւն այն վսեմ բոներու համար, որ գռեհիկ ու տափակ կեանքը կը վնահատեն, սակայն որոնց համար ինչ որ կայ այս երկրի վրայ ամէն աղնիւ, գեղեցիկ և բարի բան՝ կ'այլուի, կը տանջուի և կ'արիւնոտի:

Հռնոսի եղբայրներուն վրայ, որթերով ծածկւած բլուրներու մօտ կը գնայինք երբեմն ամառ օրերը: Արևը կը ժպտէր. ծաղիկներուն տարփատենչ բաժակէն խնկաբոյր հոտեր կը բարձրանային:

Ծիրանեղոյն շահողրամը և վարդերը կը շրկէին մեզի կարմիր համբոյրներ, որ կը վառէին բոցերու պէս: Ամենէն խոնարհ մարգարտածաղիկներուն մէջ իդէալ կեանք մը կը փթթէր:

Բայց դուն, դուն հանդարտ կը քալէիր քովէս, անդուսէ սպիտակ շրջագոյնստիդ մէջ, սուրբ ու համեստ այն աղջիկներու պատկերներուն նման, որ կը նկարէ Նէտշէրի վրձինը: Սիրող մարմնիդ մէջ պզտիկ սառցակոյտի պէս բան մըն էր:

..է

Նամակդ ինծի համար փոթորկի այն փայլակներէն մէկն էրաւ, որ գիշերը վիհով մը կը լուսաւորեն: Յցուց ան ինծի ահաւոր լոյսով մը թէ ինչքան խոր է վիշտս, թէ ինչքան խորունկէն սոսկալի է:

Դուն ահա կը յուզուիս արգահատելով, դուն որ կեանքիս անապատին մէջ կը կենացիր հոն, լռիկ արձանի մը նման, մարմարիոնին պէս գեղեցիկ, մարմարիոնին պէս ալ սնու:

Աստուածս, պէտք է որ թշառ ըլլամ: Կըսիսի հետս խօսիլ
ան, աչքերէն արցունքներ կը հոսին. քարն իսկ կը գթաց վրաս:

Ինչ որ տեսայ հոն՝ տակն ու վրայ ըրաւ իս: Դռն ալ գութ
ունեցիր վրաս, ով Աստուած, հանգստութիւն զրկէ ինծի և վերջ
դիր այս սոսկալի ողբերգութեանը:

ՆԱԽԱՍԱՀԾԱՆԻԱԾ ՆՇԱՆԱԾՆԵՐ

Կ'արտասուես, ինծի կը նայիս, և ինքնիրենդ կ'երեւակայես որ
դժբախտութիւնս է քեզ լացնողը: Ձեռ գիտեր թէ նոյն իսկ քեզի
համար կը թափւին այս արցունքները, որը աչքերդ կը հոսեն:

Օհ, ըսէ ինծի, սիրող երբէք կասկած մը, յանկարծական լոյս
մը չէ ունեցած, որ քեզի յայտնէ թէ բախտին կամքը մեզ իրա-
րու համար ստեղծած է Միացած՝ երջանիկ, և բաժնւած՝ թշառ
պիտի ըլլանք:

Ճակատագրի մեծ գրքին մէջ գրւած է թէ պէտք է իրար սի-
րէինք: Քու տեղդ կուրծքիս վրան էր. բազուկներուս մէջն էր որ
էութեանդ գիտակցութիւնը պիտի արթննար. համբոյրներովս է, ով
անուշ ծաղիկ, որ քեզ պիտի աղառէի բուսական քունի մը թմրու-
թենէն. շունչս պիտի վառէր քու մէջդ մարդկային գեղեցիկ կիր-
քերու բոցը. քեզ դէպի իս պիտի բարձրացնէի, դէպի գերագոյն
կեանքը. քեզի հոգի մը պիտի տայի:

Հիմա որ բոլոր այս առեղծաւծները պարզւած են, հիմա որ
աւազը կը դադրի հոսիլ աւազէ ժամացոյցին մէջ, ոհ, մի արտա-
ւեր, աս այսպէս պիտի լինէր: Կ'երթամ ես, ու դուն մինակ մնա-
ցած՝ պիտի թողմիս. պիտի թողմիս՝ փթթելէ առաջ, պիտի մա-
րիս՝ չվառւած, պիտի մեռնիս՝ չապրած:

Գիտեմ հիմա: Այո, իմ սիրածս դուն ես: Ինչ դառն ճակա-
տագիր, իրար ծանցած ժամը՝ ժամն է նաև իրարմէ ցմիշտ բաժ-
նելու. բարովեկարի խօսքերը միևնոյն ատեն երթաս-բարովի խօս-
քեր են: Իրարմէ կը բաժնւինք այսօր ու յաւէտ կը բաժնւինք: Բնաւ
յոյս չկայ մեզի՝ իրար ուրիշ աշխարհի մը մէջ տեսնելու—Գեղեց-
կութիւնը փոշիի մէջ ինկած է. դուն պիտի սթափիս ու նազիս
պարսպութեան ծոցը: Բանաստեղծներուն ճակատագիրը շատ տար-
բեր է. մահը անոնք ամբողջապէս չի կրնար սպաննել: Ներկային

անհացումը մեզի չի հասնիր: Մենք կը շարունակենք ապրիլ բանաստեղծութեան կալածներուն մէջ, պարիկներու հայրենիքին, Աւստինի կախարդի, կղզիին մէջ: Մնաս-բարով ցմիշտ, գեղեցիկ գիակ:

Մ Ա Ր Գ Ա Ս Է Ր Ը

Երկու եղբայր կացին. մէկը հարուստ էր, միւսը՝ աղքատ: Աղքատ եղբայրն ըսաւ հարուստ եղբօրը. «Կտոր մը հաց տուր ինծի»:

Հարուստ եղբայրն ըսաւ աղքատ եղբօրը. «Հանգիստ թող իս, գէթ այսօր միայն. տարեկան հացկերոյթս կուտամ այս իրիկուն: Մեծ-Խորհուրդի պարոն անդամներուն»:

«Մէկը կրիացով ապուր կը սիրէ. միւսը անանասի սիրահար է. երրորդը ախորժակով կ'ուտէ Պէրիգորդի յեանասուններով փասիան»:

«Զորրորդը միայն ծովի ձուկ կ'ուզէ. հինգերորդին համար կարմրախաչտ պէտք է. իսկ վեցերորդը ամէն բան կ'ուտէ, առանց հաշուելու որ կերածէն աւելի ալ կը խմէ»:

Խեղճ եղբայրը տուն դարձաւ բոլորովին անօթի. նետուեցաւ իր անկողնին վրայ, խոր հառաչանքներ արձակեց ու մեռաւ:

Ամենքս ալ մահկանացու ենք: Մահւան մանգաղը վերջապէս զարկաւ հարուստ եղբայրն ալ, ինչպէս զարկած էր աղքատ եղբայրը:

Ու երբ հարուստ եղբայրը տեսաւ իր վերջի ժամին մօտենալը, մարդ զրկեց՝ նոտար մը կանչելու, և իր կտակն ըրաւ:

Կղերներուն, դպրոցներուն, կենդանաբանութեան մեծ թանգարանին խոշոր զումարներ կտակեց:

Զմոռցաւ նաև ապահովել հրէաներու դարձին աշխատող ընկերութիւնն ու խուլ-համբերու վարժարանը՝ կարևոր հրիտակներով:

Սուրբ Ստեփանոսի Նոր-զանգակատանը զանգակ մը նւէր ըրաւ. հինգհարիւր քենտինար կը կշռէր, և ամենալաւ մետաղէն էր:

«Ահաւասիկ մեծ զանգակ մը որ իրիկուն առտու կը ղողանջէ. կը հնչէ ան անմահ պարգևողին պատիւին և փառքին համար»:

Իր արօյրէ բերնով էր հռչակէ բոլոր այն բարիքները, որ ըրած է մեռնողը իր քաղաքին ու քաղքցիներուն, ինչ դաւանանքի ալ որ պատկանին:

Ո՛վ մարդկութեան մեծ բարերար, մահւնէդ ետքը, ինչպէս և կեանքիդ մէջ, մեծ զանգակը քու ամէն մէկ բարի գործդ պիտի ծանուցանէ:

Թաղումը մեծ հանդէսով և շքեղութեամբ կատարւեցաւ: Ամբոխը կը խռնէր՝ զարմացած ու յարգալից:

Մեռելական սև կառքի մը վրայ, ջայլամի սև փետուրէ զարգմանակներով, կը հանգչէր սև թաւիշով ծածկւած զագաղը:

Արծաթէ արցունքներով, արծաթէ ասեղնադործութիւններով բոլորովին կը փողփողէր զագաղը. սևին վրայ արծաթը միշտ գեղեցիկ կ'երևնայ:

Սև ծածկոցներով վեց ձի կը քաշէին կառքը. ծածկոցները, սուգի վերարկուներու պէս, մինչև իրենց սմբակները կ'իջնէին:

Կառքին ետևէն՝ սևեր հագած բանակ մը սպասաւորներ կը քալէին, ձիւնի պէս ճերմակ թաշկինակներ բռնելով վիշտէն կարմըրցած իրենց զէմքերուն:

Քաղաքին բոլոր նշանաւոր անձերը, յուղարկաւորական սև կառքերու շարքով մը կը հետևէին յուղարկաւորութեան:

Անոնց մէջ կը գտնւէին Մեծ-Խորհուրդի պարոն անդամները: Բայց սակայն ամենք չկային:

Գետնասուներով փասիան սիրողը կը պակսէր. անմարսողութենէն նոր մեռած էր ան:

ՃԱՄԲԻՆ

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Հայրենիքիս վան. երազով՝
Գիշերն ինձի քուն բերեց.
Նարաք ուլ էր անուշ ձէնով
Խորունկ քնէս ձէն տւեց.
«Վեր ել, ճամբորդ, զարիս ախպէր,
Բարի լուսը բացւեր է.
Երազիդ մէջ շատ ես լացեր,
Աչքներդ թրջեր է...»

Արեւն ելաւ ցոլցլալով
Աղօթքանի պալատէն,
Սև թւերը թափ ծափ տալով՝
Հաւքեր կ'անցնին երկնքէն:
Ղարիս հաւքեր, զարդոտ հաւքեր,
Ես էլ զարդու ճամբորդ եմ.
Կեցիք, հաւքեր, մէկ տեղ երթանք,
Ես էլ ձեզ պէս զարիս եմ...

Ա՛խ, մեր գեղեր-տեղերն կ'երթամ,—
Էնոնց շատ եմ կարօտեցեր.
Թռչնած սրտով՝ զարդըն կ'երթամ,—
Գէօզալ եմ եմ կորուցեր.
Գողտուկ լալով՝ սիրտս էլման
Արտըստեքով լցւեր է.—
Ազիզ մօրս, ջանիս կ'երթամ,—
Աշխարք ինձի մոռցեր է...

ԷՆ ՄԱՐԴԻԿ...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Ա՛խ էն մարդոց կեանքը չորնայ,
կեանքս կերան մաշեցին.

Վարդս տեսան՝ ձեռքէս առան,
Տրորեցին, չորցուցին.

Եարս տեսան՝ ձեռքէս առան,

Ինձի աչքէն գցեցին,—

Օ՛Ք, էն մարդիկ ջահէլ-ջիւան

Արե՛ կեանքս սևցուցին...

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ՀԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅՈ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԻԱՍԹԱՓՈԻՄՆԵՐ

(Շարունակութիւն ¹)

XIX

Օգոստոսի տաք և պարզկաջ երեկոներին մէկն էր: Մաղէրի փոքրիկ այգում սեղաններից մէկի մօտ մենակ նստած էր Ֆալչեանը, առաջը դրած մի բաժակ զարեջուր: Հայեացքը դէս ու դէն էր շրջում. այնտեղ հաւաքւած հասարակութեան և ել ու մուտ անող յաճախորդների մէջ կարծես ծանօթ դէմք և խօսակից էր որոնում: Այգու մուտքից նա հեռու էր նստած, բայց և այնպէս իսկոյն ճանաճեց Ոսկերչեանին, երբ նա՝ մի ձեռքով գլխարկը բռնած և միւսով կոկեղով քրքրած մազերը, ներս մտաւ այնտեղ: Մի քանի քայլ անելուց յետոյ, Ոսկերչեանը զգաց, որ մէկը թեւիցը քաշեց, ասելով.

— Բարեւ, բարեւ, Արտաշէս: Այս երբ?

— Ա, Իսահակ, զու այստեղ ես? Ես այսօր եմ եկել, առաւօտեան:

¹) Տես «Մուրճ» 1897 թ. № 1—12 և 1898 թ. № 2—3, 4:

—Գնանք ինձ մօտ, սեղանս աջտեղ է:

Եւ երկօքեան նստեցին սեղանի մօտ, իրար հանդէպ: Ոսկեր-
էանը կանչեց ծառային և, երբ նա եկաւ, մի բաժակ զարեջուր
և մի բուռէբրուդ ուղեց իւր համար:

—Ե՛հ, պատմի՛ր տեսնենք, ինչպէս անցկացրիր ամառը,—խօ-
սեց Փալչեանը՝ կղակը դնելով միմեանց վրայ զարսած ձեռքերի վրայ:

—Վատ, շատ վատ,—ասաց Արտաշէսը, շփելով ճակատը և
աչքերը:

—Ինձանից էլ վատ?

—Ինչ կար, ինչ չկար այստեղ?

—Ինչ պէտք է լինի այստեղ ամառը—շոգեր, փոշի և անտա-
նելի ձանձրոյթ: Երբեմն երեկոները գալիս ենք այստեղ, պատահում
ենք ծանօթների, ասում լսում ենք, և սա է մեր միակ մխիթա-
րութիւնը:

Ոսկերչեանը ընդունեց մատուցարանի ձեռքից զարեջրի բա-
ժակը, խմեց կէսը և, մէջքը դէմ տալով աթուին, մտածմունքի
մէջ ընկաւ: Ինչ որ փոփոխութիւն էր նշմարւում նորա դէմքի
վրայ, ճանապարհին կրած նեղութիւնների և յոգնածութեան հի-
տեանք էր դա, թէ վշտի կնիք—Փալչեանը չկարողացաւ հասկանալ,
ուստի և հարցրեց.

—Գիտես, ինչ կայ, Արտաշէս. դու աչքիս փոխւած ես երևում:

—Ինչս է փոխւած?

—Զգիտեմ, ճշմարիտ. յոգնածութիւն ասեմ թէ վիշտ, որ
նկատւում է դէմքիդ, բայց կարծես մի քանի տարով ծերացել ես:
Ասա, խնդրեմ, հօ քեզ անբախտութիւն չէ պատահել?

—Ինչպէս չէ,—արտասանեց Ոսկերչեանը, հոգոց քաշելով,—
կրկնակի անբախտութիւն:

—Զլինի, Արտաշէս, հաջորդ?...

—Այո՛, դու գուշակեցիր. հաջրս մեռաւ, և ես մնացի բոլորո-
վին որբ, անտուն և անտէր: Որբ և անտուն—այս խօսքերը դու
պիտի հասկանաս բառացի կերպով:

—Միթէ? Շատ ցաւալի է: Ե՛հ, լաւ. բայց ինչու է կրկնակի
անբախտութիւնդ? Դու, կարծեմ, այդպէս ասացիր:

—Տունս էլ ձեռքիցս դուրս եկաւ...

— Ինչպէս? Տունդ? Օ, դա քիչ բան չէ: Բայց ինչ պատճառով?

— Ե՛հ, դա մի ամբողջ պատմութիւն է:

— Պատմի՛ր, խնդրեմ, ինչպէս եղաւ? Միթէ դա կապ ունէր հօրդ մահւան հետ? Երեւի նա պարտքեր ունէր?

Ոսկերչեանը լուռ քմծիծաղ տւեց:

— Լ՛ու, — խօսեց նա քիչ յետոյ, — կը պատմեմ, եթէ ուզում ես: Ի դէպ, դու նիւթեր ես փնտռում պատկերների համար: Ես քեզ իրողութիւնը կ'ասեմ, դու յետոյ մշակիր: Պատկերիդ աննունը էլ կարող ես դնել Գիշատիչ, որովհետեւ այն անձը, որը ինձ իմ հայրական տանից վանտեց և փողոց ձգեց, իւր բոլոր յատկութիւններով գիշատիչների ցեղին է պատկանում:

— Զի՞նի, վաշխառու պարտատիրոջ ճանկն ես ընկել?

— Երեւակայիր իմ դրութիւնը, Իսահակ. երբ ես տեղ հասայ և սալակը կանգնեց մեր տան դարպասի մօտ, էլ չիմացայ, ինչպէս ինձ ձգեմ գետին, որ շուտ սլանամ հօրս մօտ: Բայց դուռը փակ էր. հրում եմ — չի բացւում: Երկաթէ ծանր մուրճով սկսեցի բաղխել — ոչ մի ձայն, բացի ներսի արձագանքից: Իսկոյն սիրտս վկայեց, որ արդէն բանը բանից անցել է, և ես հօրս աջ և երբէք չպիտի տեսնեմ: Անմիջապէս հարեանիս մօտ վազեցի: Իմ բախտիցը, նա տանն էր: Տեսաւ թէ չէ, «գալուստդ բարի» ասաց. տխուր նայելով երեսիս: Ես մի ինչ որ բան մրմնջացի, և նա, ինձ ընդհատելով, պատասխանեց. «Հնա, չմնաց, ազատեց այս փու՛ճ աշխարհից»: Արտասուքը ինձ խեղտում էր, և ես շարունակ կրճում էի շրթունքս, որպէս զի չսկսեմ հնկեկալ երեխայի պէս: Երեւի ցաւակցելով վշտիս, հարեանս կամեցաւ ինձ սփոփել, ասելով. «Աստուած իր որդուն միթէ արութիւն տաց: Մեր մարդ էր, չդիմացաւ: Աստուած տաց, մենք էլ նրա չափ ապրենք»: Ես հարցրի, թէ ում մօտ է տանս բանալին: Նա մարդ ուղարկեց մելիքի ետեւից, որ պաշ և բանալին ինձ յանձնի: Մինչև նորա գալը, իմ դրացին շատ բաներ պատմեց հօրս մասին: Ոչ մի բան նորա խօսքերից ինձ վրայ այնքան չազդեց, որքան հետեւեալը: Նա ասաց, թէ հայրս, իւր մահւան ճգնաժամին, իմ լուսանկարս է խնդրել, համբուրել է և կրծքի վրայ դրած՝ աւանդել է հոգին:

— Թո՛ղ այդ տխուր պատմութիւնը, — նկատեց Պալչեանը, ձեռ-

քով դժգոհ շարժում անելով, — դու ուրիշ բան էիր ուզումս պատմել:

— Այս րոպէին, — ասաց Ոսկերչեանը և, վերջացնելով մնացած գարեջուրը, կանչեց մատուցարարին ու երկրորդ բաժակ պահանջեց: Մի խօսքով, ինչ գլուխդ ցաւացնեմ, զուռը բաց արին, և ես մտայ իմ տունը: Զգիտեմ, իրողութիւն էր դա թէ իմ երեակայութիւնը, բաց ինձ թւաց, որ բակիցը մեռելի հոտ փչեց երեսիս: Մերուկիս թաղել էին մի օր առաջ, և հաւանական է, որ սենեկի միջից ծանր օդը անց կացած լինէր բակի մէջ: Բաց ես կրկին ի չարն եմ գործ դնում քո համբերութիւնը: Լմաւ, այս պատմութեանը վերջ եմ դնում:

— Դու այն ասած, թէ քո ժառանգած անշարժ կայքը ինչպէս ձեռքիցդ գնաց: Դեռ ևս հայրենիք չգնացած, դու, կարծեմ, ասում էիր, թէ այնտեղ մի բան ունիս, որը քեզ կարող է պէտք գալ սև օրւայ համար: Խօսքդ, ի հարկէ, դորա մասին է?

— Այո, ի հարկէ:

Ոսկերչեանը վերցրեց ծառայի մատուցած բաժակը, մի կում խմեց և սկսեց շարունակել.

— Նոյն օրը երեկոցեան իմ ընտրի հարեանը ինձ կանչեց իւր մօտ թէյի: Ես գնացի: Բաց կ'ուզես, մի քանի խօսքով նկարագրեմ նորա արտաքինը? Նա կը լինի մօտ վաթսուն տարեկան: Կարճահասակ է, վտիտ, և ոսկորը պինդ, և, ինչպէս կարծում եմ, կեանք շատ պիտի լինի նորա մէջ: Բունը անհամաչափ երկայն է, իսկ ոտները սաստիկ կարճ և ծուռ: Այդ տեսակ մարմնի վրայ հագցրու ծալծլւած, լայն սև շալար, կարծիքի ժիլէտ, որի տակից միշտ զուրս պրծած կը տեսնես շապիկը, և ժիլէտի վրայ մի իւղոռւած, պսպղուն սև սերթուկ, որի փեշերը, քայլելու ժամանակ, խփուում են ծնկներին, — և աչքիդ առջև է իմ հարեանը, եթէ մի րոպէ ենթադրենք, որ նա առանց գլխի է: Բաց նա, ի հարկէ, գլուխ ունի:

— Միթէ? Կատակեց ունկնդիրը և սկսեց ծիծաղել:

— Այո, մի գլուխ, որ քոնիցն էլ փոքր է...

— Ուրեմն ես բախտաւոր եմ, ապա թէ ոչ ես կարծում էի:

Թէ աշխարհիս երեսին իմ գլխից աւելի փոքրիկ գլուխ չկայ...
Բայց գիտես, արդէն ուշ է. մենք չգնանք?

—Ինչ կայ, շտապում ես? Նստի՛ր մի քիչ էլ: Ես շարունակում եմ: Կը հաւատաս ինձ, Իսահակ, չնայած նորա ծեր հասակին, գլխիցը ոչ մի մազ է պակասել, ոչ էլ սպիտակել. կարծես, ջահէլ երիտասարդ լինի: Դա մի տեսակ Ֆէնոմէն է, ճշմարիտ: Մանուկ հասակիցս նորան այդպէս եմ տեսել: Զիգ ու Թաւ յօնքերի տակ, որոնց ամեն մի մազի ետեւ, ինչպէս ասում էին, մի-մի սատանայ է Թագնւած, արագ շարժւում են և ասես մի բան են որոնում նորա սև, խորամանկ, խոշոր աչքերը: Ձարհուրելի է, երբ ժպտում է նա. առաջիդ տեսնում ես բերանի տեղ, մի մութ խոռոչ, որի առաստաղից դէպի ներքև են ցցւած, ատամների տեղ, երկու սևացած ոսկորի կտորներ...

—Երևում է, լաւ գգել են քեզ այդ սևացած ոսկորի կտորները, որ այդպիսի կրքով նկարում ես այդ հրէշի պատկերը:

—Ի հարկէ! Բացականչեց Ոսկերչեանը տաքացած և ձեռքը սեղանին: Այդ սրիկան յափշտակեց իմ նիւթական վերջին ապահովութիւնը! Հասկանո՞ւմ ես դու, իմ վերջին ապահովութիւնը! Զէ որ ինձ համար էլ կայ ծերութիւն, կայ հիւանդութիւն, կան թշուառութեան անակնկալ դիպածներ? Յամենայն դէպս, ես կ'ունենայի մի ծածկ, մի ապաստան, որտեղ գլուխս կը թեքէի: Վերջապէս, ես կարող էի ծախել այդ տունը, հեղինակութիւններս հետզհետէ կը հրատարակէի. մի խօսքով, նա մեծ օգնութիւն կը լինէր ինձ համար: Բայց խլեց անիրաւը, իւր սեփականութիւնը դարձրեց, և այն էլ ինչքան ինձ չարչարելուց յետոյ, եթէ իմանաս!...

—Էհէ, բարեկամ, ես չեմ կարող նստել այլ ևս. օգը սկսում է զովանալ,—խօսեց Ֆալչեանը, Թոթակելով ուսերը և ձեռքի ետևի կողմով շփելով մէջքը, որպիսի շարժում անում են, երբ մթնոլորդի մէջ եղած խոնաւութիւնը զգացւում է մարմնի մէջ:

—Բոլորովին ոչ,—գոչեց Ոսկերչեանը՝ պինդ նստած մնալով իւր տեղում. եղանակը շատ մեղմ է, մինչև անգամ տաք է...

—Ո՛չ, մի՞թէ չես տեսնում, հազս սկսեց, —այս ասելով, մի երկու անգամ նա թեթև հազաց:

— Նստի՛ր, տտում եմ: Հազդ միշտ կայ ու կայ, դա նորու-
թիւն չէ, — համոզում էր Ոսկերչեանը:

— Դու կարծում ես, ինձ համար նորութիւն է այն, ինչ որ
դու սկսել էիր պատմել գիւղական չարչիներին և վաշխառուների
մասին? Ե՛հ, այնքան տեսել և կարդացել եմ, որ այդպիսի արա-
բաճներ ինձ չեն էլ հետաքրքրում: Վեր կ'աց գնանք: Տունդ խե-
ցին? Վարսալամ!

Գարեջրի փողը վճարեցին և գրչի ընկերները դուրս եկան այգուց
ու գնացին Միքայէլեան փողոցով: Արդէն ուշ էր, երթեկութիւնը
սակաւ էր, և հակառակ մայթի անցորդը պարզ կարող էր հետեւել
նոցա խօսակցութեան:

— Դու այն ասած, Արտաշէս, մի բան էիր սկսել այստեղ, վեր-
ջացրի՛ր թէ ոչ?

— «Արտաւազդ II»-ը? Ո՛չ, ի հարկէ, ո՛չ: Ինչպէս կարող էի վեր-
ջացնել այնպիսի դժոխային պայմանների մէջ?

— Լեւ, ճանապարհածախս որտեղից գտար?

— Ինչ կար չկար տանը, կիսագին ծախեցի եկայ:

— Ուրեմն գրպանդ լաւ չաղացած կը լինի, — այդ ասելով Ֆալ-
չեանը ծիծաղեց և ձեռքը մի քանի անգամ խփեց նորա շարժարի
գրպանին:

— Որտեղից? Ինչ էր մնացել որ? Խղճալի ինքնաեռ, խարխուլ
աթոռներ և ուրիշ մի քանի այդպիսի անդրհեղեղեան առարկաներ,
որոնք կազմում էին մեր տան ամբողջ սարքը:

Այսպէս զրոյց անելով, նոքա հասան Ալէքսանդրեան այգու
մօտ, որտեղից նոցա ճանապարհները պիտի փոխէին:

— Բարի գիշեր, — ասաց Ոսկերչեանը, կանգ առնելով և ձեռքը
մեկնելով ընկերոջը:

— Որտեղ ես իջել? հարցրեց Ֆալչեանը:

Նա մի քարւանսարայի անուն տւեց և, ձեռքը ազատելով հի-
ւանդոտ երիտասարդից, որ նա ամուր բռնել էր, շտապ քայլերով
հեռացաւ:

Հետեւեալ օրը Ոսկերչեանը վճռեց այցելել Զառիկեաններին:

Քանի ամիս է, նա ոտ չէր դրել դոցա տան շէմքին: Ինչ կը
մտածէ մայրիկը? Միթէ իրաւունք չունի Խարեգինը նեղանալու?

Պէտք է մարդ նորա մեծահոգութիւնը ունենայ, որպէս զի ոչ միայն չվիրաւորի, այլ նոյն իսկ չզլանայ զժւար հանգամանքներում օգնութեան ձեռք մեկնել իւր ջահէլ բարեկամին, նորան, որը աջնքան անքաղաքավարի, ապերախտ գտնեց այդ քաղցրաբարոյ ընտանիքի վերաբերմամբ: Իսկ այն անմիտ սէրը, որ նա տածում էր զէպի նախկին Վարժումեանը, հօ աջամ անցել է, երազի պէս, թէև, ճիշտ է, առաջին և բուռն սիրոյ վէրքը իւր անջնջելի հետքը թողնում է մեր սրտի խորքի մէջ: Ինչու ուրեմն համարձակութիւն չունենայ ուղիղ նայելու իւր բարեկամի կնոջ երեսին և միևնոյն ժամանակ ինքն իրան մտածելու. «երանի այս հրեշտակը իմ հարազատ քոյրը լինէր? Իսկ Աշխէնը... Ախ, ինչպիսի մի անգին բարեկամ կորցրեց նա յանձին մի սիրարժան աղջկայ, որպիսին էր Աշխէնը! Այո, կորցրեց, որովհետև Ազատեանի ամուսինը Ոսկերչեանի բարեկամը այլ ևս չէ կարող լինել...

Ահա ինչ էր մտածում մեր երիտասարդը, երբ իւր քայլերը ուղղում էր զէպի Զառիկեանների տունը: Վաղուց ընդհատած լինելով իւր այցելութիւնները այդ ընտանիքին, որի սովորական յաճախորդը և միշտ ցանկալի հիւրն էր նա երբեմն, նա իւր խղճի վրայ ծանրացած էր տեսնում մի մեղք, որը պէտք էր քաւել: Նա հաւաստի էր. իրան զրկաբաց կ'ընդունեն այդ տանը և կը սիրեն, ինչպէս առաջ: Զէ որ նա որք և մենակ է մնացել? Ախ, սրբան վաւաղում է նա, որ իրան սիրեն, ինչպէս որդու, ինչպէս եղբօր և ինչպէս բարեկամի!

Հասաւ և զանգը քաշեց մի քանի անգամ. բայց դուռը բաց անող չկար: Վերին յարկը լուռ և պարապ բնակարանի տպաւորութիւն էր գործում: Նայեց պատուհաններին—սպիտակ և անթափանցիկ գոյնով ներկւած էին ապակիները: Բակը մտաւ, որպէս զի ներքևի յարկի կենդանիք, որոնք նորան անձանօթ չէին, տեղեկութիւններ իմանայ տանտէրերի մասին, և իմացաւ հետեւեալը.

Զառիկեանները դեռ չեն վերադարձել ամարանոցից: Գարեգինը մի շաբաթ առաջ Թիֆլիս է եղել և շուտով անցել է մի գաւառական քաղաք, որի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրել է նորան տեսի թէ ուսուցչի պաշտօնով, յայտնի չէ: Այնտեղ նա պիտի բնակարան վարձի, տեղաւորւի և յետոյ գայ կնոջը

տանի իւր մօտ ինչ վերաբերում է Սշխէնին, նա պսակել է Ագա-
տեանի հետ և միասին ուղևորել են վերջինիս ծննդավայրը՝ ամառը
աջնտեղ անցկացնելու համար:

Կորագլուխ և տխուր վերադարձաւ նա իւր կացարանը: «Ու-
րեմն Գարեգինը այստեղ չի լինելու»: Հարց տւեց նա ինքն իրան:
«Այս շատ վատ եղաւ», եղբակացրեց նա. «նա միայն բարեկամ չէր
ինձ համար. նա մեծ եղբայր էր, որ հոգ էր տանում իմ մասին:
Իսկ ես յոյս ունէի, որ նա ինձ համար մի գործ կը գտնի կամ գոնէ
դասեր կը ծարիւ: Հիմա ձեռքիս դեռ փող կայ. մի քանի շաբաթ
կարող եմ քարշ տալ կեանքս: Իսկ յետոյ, յետոյ ինչ կը լինի?...»

Գլուխը ձեռքերի վրայ դրած՝ նստած էր նա սեղանի մօտ:
Մէկը յանկարծ մատներով ծեծեց դուռը և կանչեց դրան ետեւից.

—Արտաշէս!

—Բանց է,—պատասխանեց Ոսկերչեանը՝ առանց տեղից շարժ-
ւելու: Ներս մտաւ Ֆալչեանը և, իսկոյն կանգ առնելով, երեսը
ծոնեց ու սկսեց ուշի ուշով դիտել սենեկի ցած առաստաղը, պատերի
գունաթափ և դժլուած պատառները, յատակի ճեղքերը և աղ-
քատիկ կահ կարասիքը:

—Ափսոս քո նախկին բնակարան! Բացականչեց նա, առաջ
գնալով: Սա գում է, սա հօ սենեակ չէ! Ի՞նչ մուխ էլ է: Իսկ ճուղ,
օղը, այստեղ խեղդւել կարելի է: Ասա, խնդրեմ, այստեղ ինչպէս
ես կարողանում ապրել? Եւ երկար պիտի մնաս այս զբի մէջ?

—Ո՛հ, շուտով պիտի տեղափոխւեմ:

—Այստեղ կէս ժամ չեմ կարող նստել: Գնանք Մադէր:

—Օ՛հ, այնտեղ էլ ձանձրալի է!

—Հերիք է քեզ Բայրն երեւակայես! Վեր կաց, ասում եմ.
շորերդ հագիր:

—Ինչ աշխոյժ և ուրախ ես այսօր, Իսահակ:

—Ես պատճառ ունիմ ուրախ լինելու և այս բոպէին կ'ասեմ:
Գիտես ինչ կայ, Արտաշէս? Ես արդէն գտել եմ իմ կոչումը!

—Ուրեմն մեծ գիւտ ես արել:

—Ես կատակ չեմ անում: Երեւակայիր, Արտաշէս. այս գիշեր
ես բաց աչքով եմ լուսացրել:

—Ինչու?

—Քեզնից բաժանւելուց յետոյ, երբ տուն գնացի, դեռ ճրագը չվառած՝ կայծակի նման մի միտք յղացաւ գլխիս մէջ, և այդ միտքը ինձ լծողեց քնել մինչև արևի ծագելը:

—Ինչու՞մն է կայանում դա?

—Մի այնպիսի բան պիտի գրեմ, որ հռչակելու է իմ անունը: Հրաշալի բան պիտի դուրս գայ Արտաշէս, մի հիացք!

—Վերջապէս պիտի ասես, դա ինչ բան է թէ ոչ?

—Զգիտեմ, վէպ կը լինի թէ դրամա. այդ մասին կը մտածեմ: Գլխաւորը սիւժէան է, որ արդէն մտածւած է: Այս երկասիրութեան մէջ ես պիտի դուրս բերեմ մեր կուսակցական պայքարները: Ես կը ներկայացնեմ երկու մարտնչող բանակներ. մէկը—«Ճառագայթի» դրօշի տակ, միւսը՝ «Ժամանակի»: Ընթերցողների կամ հանդիսականների առաջ ես բաց կ'անեմ ճակատամարտի հետաքրքրական տեսարան, ճակատամարտ, որը, ի հարկէ կատարւում է գաղափարի հողի վրայ, և ցոյց կը տամ այսպիսով նոր և առողջ մտքերի օրհասական մաքառումը հին և փտած նախապաշարմունքներին դէմ!...

Ինչ կայ որ. լաւ միտք է: Բայց բանը իրագործելն է: Պիտի կարողանաս գլուխ հանել մի այդքան բարդ թեմայից?

—Ես կ'իրագործեմ: Այո, կ'իրագործեմ, և դու կը տեսնես, թէ ով է Ֆալչեանը! Ֆուրոր պիտի անեմ, բարեկամ, Ֆուրոր!...

—Արդէն սկսել ես?

—Դեռ ոչ:

—Գոնէ ծրագիրը մշակել ես?

—Ո՛չ, բոլորը այստեղ է և դեռ եփւում է, —ասելով «այստեղ» է: Ֆալչեանը բաղխեց ճակատը:

—Ե՛հ, եղբայր. մեր Ֆուրորը միայն մեր գլխի մէջն է: Վեր կաց, վեր կաց գնանք: Ես արդէն պատրաստ եմ:

Երբ դուրս եկան սենեկից և սկսեցին իջնել մութ աստիճաններով, նոքա դէմ առան քարւանսարայի մշակներից մէկին, որը՝ հինգ-վեց փութանոց ահագին հակը մէջքին բարձած՝ քրտնաշաղախ ու տնքալով բարձրանում էր վերև: Ֆալչեանը լսաց, տեղ տալով, որ նա անցնի.

—Տեսնում ես, Արտաշէս? Իրանից մեծ բեռն է շալկած այս

Թշուառականը: Ինչ կեանք է այս խեղճերի կեանքը? Սա մի տեսակ տաժանակիր աշխատանք է, ճշմարիտ:

—Բայց ինչ կ'ասես,—վրայ բերեց Ոսկերչեանը,—որ այս մարդիկ մեզնից բախտաւոր են: Պէտք է տեսնել, թէ ինչպէս են ընդհանուր ճաշի նստում գետնին փռած խսիրի վրայ: Նախանձս շարժւում է, երբ տեսնում եմ, որ այս պանդուխտները իրանց օդաբաշու հետ միասին մի եղբայրական շրջան կազմած՝ բոլորել են մի մեծ ամանի շուրջը և փայտեայ գդալներով ուտում են բրդած համով բոգբաշը, ուտում և զրոյց են անում, իսկ ճաշը վերջացնելուց յետոյ՝ խաչակնքում են երեսները և փառք տալիս Տիրոջը, որ այդ օրն էլ իրանց կշտացրեց: Հալալ է այս սշխատաւորների հանգըստութիւնն էլ, կերածն էլ...

«Երեանեան հրապարակում» երկու ընկերները նստեցին ձիաքարշը և մի քսան րոպէից յետոյ վեր եկան Մադէրի մօտ ու մտան ներս:

Փոքրիկ այգին, կամ աւելի ճիշտ, պարտէզը լի էր մարդկանցով, այնպէս որ մեր զրազէտները ստիպւած էին բաւականին սպասել, մինչև որ ազատ սեղան կը բացւէր իրանց համար: Դեռ նոր էին նստել, երբ մի ձայն Ոսկերչեանի անունը տւեց: Սա գլուխը դարձրեց—Ձիագեանն էր, որը հեռւից ձեռքը մեկնած՝ մօտենում էր այնպիսի քաղցր ժպտով, ինչպէս հանդիպում են վաղեմի բարեկամին: Նա եկաւ, երկուսին էլ բարևեց, հարցրեց Արտաշէսի առողջութիւնը, կամեցաւ իմանալ, թէ որտեղ էր ամառը, որ չէր երևում, ինչ էր անում և երբ է եկել: Իւր նախկին արւեստակցի միավանկ և սառը պատասխաններից նա բնաւ չէր վրդովւում և շարունակում էր իւր մտերմական հարցումները: Դատ ուրախ էր, գուցէ գարեջուրն էր դիպել: Քիչ յետոյ ց'տեսութիւն ասաց, որ գնայ. և օգուտ քաղելով հրաժեշտ տւողի իրաւունքից, նա կրկին վերցրեց Ոսկերչեանի ձեռքը և կարծես սիրով չէր տալիս բաց թողնել ու հեռանալ:

—Հա, քիչ էր մնացել մոռանայի: Մենք քեզ մի առաջարկութիւն ենք ուզում անել, Արտաշէս...

Ոսկերչեանը ազատեց նորանից իւր ձեռքը և ասաց.

—Ինչ առաջարկութիւն?

— Կ'ուզես այս տարի մեր խմբի մէջ լինել? Քեզ ուրախութեամբ կ'ընդունենք: Ազնիւ խօսք: Ինչու ես ծիծաղում? Անցած տարի, գիտես, Զամբաղեանն էր, որ ամեն բան խառնում էր: Օ, նա սարսափելի ինտրիգանն է... Ես նրան լնւ ճանաչեցի... Բայց այս տարի նա չկայ: Կարող ես միամիտ լինել:

Ոսկերչեանը լուռ էր, և դէմքին չէր երևում քմծիծաղը:

— Ես հանաքով չեմ ասում, գիտես? Հէնց այս բոլէիս Մուրադեանի հետ քո մասին էինք խօսում... Նա ասում էր, թէ...

«Ախ, ես չափադանց զգացւած եմ ձեր ուշադրութեան համար» — «Շնորհակալ եմ ասելով սա ետ ետ էր հրում իրանից անկոչ այցելուին: Բայց վերջինս, որի պատուի զգացմունքը և չափաւոր ինքնասիրութիւնը իսպառ դադարել էին գոցութիւն ունենալուց, կրկին և կրկին սեղմեց Ոսկերչեանի ձեռքը ու վերջապէս հեռացաւ իւր ընկերների մօտ, որոնք՝ եօթ-ութ լի, կիսատ և դատարկ շիշերի և բոկալների շուրջը ժողովւած՝ վաղօրօք խորհում էին առաջիկայ թատրոնական սեղոնի ներկայացումների մասին:

— Շատ օտարոտի է, — խօսեց Արտաշէսը նորա գնալուց յետոյ, — այս մարդու հետ ես վաղուց է ընդհատել էի ծանօթութիւնս: Յանկարծ ինչ փչեց խելքին?

— Ինչ ես ուզում, եղբայր? Մարդը, երևի, քեզ այնքան յարգում է, որ...

— Բայց դու, Իսահակ, որտեղից ես ծանօթ նորա հետ?

— Դա ծանօթացաւ ինձ հետ այն օրը, երբ օգտաւէտ համարեց ինձ հետ ծանօթ լինել: Ես դրան մի անգամ զգել եմ «Ճառագայթի» մէջ, չի մոռանում: Ինձ տեսնում է թէ չէ փողոցում, գոտակը մի արշին հեռու է տանում գլխիցը:

Ահա, հանելուկը պարզւում է: Ես հասկացայ: Նա ինձ հետ խօսում էր, բայց իւր քաղցր ժպիտը քեզ էր մատուցանում:

Ներկայ դէպքը Ոսկերչեանի միտը բերեց հերևաց քաջած բոլոր նեղութիւնները և թեթեւութիւն զգաց կրծքի մէջ, երբ մոքումը այն տարին համեմատեց մօտ ապագայի ակնկալութիւնների հետ: Նա ուրիշ պերսպեկտիւ էր տեսնում այժմ իւր առաջ — գրադէտի խաղաղ և ազնիւ աշխատանք և անկապտելի փառք ու պատիւ, իբրև առաջինի բարոյական վարձատրութիւն: Բայց մի հոգս ու-

Նէր նա, որը այժմ աւելի, քան երբ և իցէ, մնատանջութիւն էր պատճառում նորան: Այդ հոգսը կայանում էր նորա մէջ, թէ ինչպէս պիտի պահի իւր գլուխը: Մի համեստ ապրուստ — և նա ամենաերջանիկ մարդկանցից մէկն է: Այս խորհրդածութեան բոպէին սիրելի էր Ոսկերչեանը: Անպորր մեղամաղձութեան կնիք էր դրոշմւած նորա ամբողջ դէմքի վրայ: Հայեացքը դադար էր առել զիմացի ծառի տերեւների վրայ: Նորան աթափեցրեց ընկերոջ ձայնը, որ ասաց.

— Նայիր, նայիր, Արտաշէս: Տեսար?... Ա՛խ, դու փարիսեցի!

Ֆալչեանը իւր ցուցամատով նորա ուշադրութիւնը դարձրեց այն սեղանի վրայ, որի մօտ նստած էին Մելպոմէնայի երկրպագուները: Ոսկերչեանը նայեց և տեսաւ հետեւեալը: Սևումեանը, որը մինչև այդ ժամանակ աչքի չէր ընկնում այդու հասարակութեան մէջ, կանգնած էր Մսւրազեանի մօտ, սորա ձեռքը իւր ձեռքի մէջ բռնած, և ժպտալով խօսում էր նորա հետ, իսկ Չիչազեանը տեղից վեր էր կացել և, համարեա աղերսելով, ասում էր.

— Պարոն Սևումեան, խնդրեմ, նստեցէք: Ես ինձ համար աթոռ կը ճարեմ, պարոն Սևումեան!...

Իսկ պարոն Սևումեանը չէր էլ նայում և Չիչազեանի երեսը տեսաւ միայն այն բոպէին, երբ փառաւորապէս բազմեց նորա աթոռի վրայ:

Ոսկերչեանը իւր զարմանքը յայտնեց այն պատուի վրայ, որին արժանացնում էին «Ժամանակի» բեցենդենտին Չիչազեանը և նմանները:

Ֆալչեանը նկատեց.

— Ես ամենեւին չեմ զարմանում: Սևումեանը իւր գրիչը դարձրել էր թշնամիների համար խարազան, իսկ իւր ծանօթ ու բարեկամների համար — բուրվառ: Այդ անիրաւը վերջին ժամանակներս շատ է երես առել: Ես դրան մի օր, կարծեմ, լնւ պիտի շշփւեմ: Այսպէս անպատիժ մնալով՝ նա շատ հեռու կը գնայ...

Յետոյ, ինչպէս եղաւ, երկու ընկերների մէջ խօսակցութիւնը փոխւեց, Ֆալչեանը կրկին իւր կուսակցական պայքարների ծայրիցը բռնեց ու գնաց: Եւ Արտաշէսը ստիպւած էր մի ժամ շարունակ լսել նորա ցնդաբանութիւնը ապագայ հեղինակութեան մասին:

Խիստ վատը եկաւ Ոսկերչեանին: «Աշխարհիս բաները տեսէք», մտածում էր նա. «երէկ ես իմ իսկական թշուառութեան պատմութիւնն էի ուզում անել, սա չկամեցաւ լսել մինչև վերջ, և ահա այժմ ես, յիմարս, ականջս կախել ու լսում եմ սորա բարբաջանքը»:

Իւրաքանչիւրի առաջ դուած էր մի-մի բաժակ զարեջուր: Մի քանիսը լաքէջներից, որոնք, ինչպէս յայտնի է, երբէք չեն հանդուրժիլ վատ հազնւած աջցելուներին և պատրաստ էին աւելի մեծ յարգանք մատուցանել իրանց նմաններին, քան թէ նոցա, թէկուզ այս վերջիններս երկնքից իջած լինեն, երբեմն խէթ հայեացք էին ձգում մեր երկու երիտասարդների վաղուց կիսատ մնացած բաժակների վրայ, քաղաքավարութեան համար զսպում էին իրանց ծաղրական ժպիտը և քիչ էր մնում, որ զան ասեն. «էջ, պարոններ, եթէ ոչինչ չպիտի ուտէք և խմէք, ինչու գուր տեղը մի ամբողջ սեղան բռնել էք? Հերիք է, որքան նստեցիք. այժմ զնացէք և տեղ բաց արէք աւելի պատուաւոր հիւրերի համար»: Բայց Ոսկերչեանի և, մանաւանդ, Ֆալչեանի բախտիցը, քանի որ սորա հազուադէպ աւելի ողբալի դրութեան մէջ էր և կռիկն էլ մինչև անգամ կարկատած, այդ սեղանի շուրջը հաւաքւեցին մի խումբ երիտասարդներ, և մէջ տեղ եկաւ զարեջրի բաւականին հաստափոր տակաւը: Ուշացած եկուորները մեր երկու գրագէտների ծանօթներիցն էին, բոլորը ջահէլ և տաք գլուխներ—ուսանող, ուսուցիչ և լրագրական աշխատակիցներ: Խօսք ու զրոյց բացւեց, որը՝ սկսելով կատակներից և անեկդոտներից աննկատելի կերպով բարձրացաւ մինչև ամենաբարձր նիւթերի զագաթը: Այս ուրախ շրջանի խօսակցութիւնները և ծիծաղը յաճախ գրաւում էին հեռւից Սեումեանի ուշադրութիւնը, որի հայեացքը երբեմն խաչափարւում էր երիտասարդներից մէկի և միւսի հայեացքի հետ, և այդ հայեացքները, որոնք մի տարի առաջ իրար հանդիպելիս ժպտում էին սիրով, այժմ իրանց մէջ թագցրած պահում էին դրական և բացասական ելեկտրականութիւն: Դժուար է ասել, թէ ինչ կարելի էր կարգաւ այդ բոլորներին Սեումեանի աչքերի մէջ—նախամի՞նձ թէ բարկութիւն:

Եղանակը սքանչելի էր. օդը ակորժելի և փափուկ: Այգին շատ ուշ սկսեց զատարկւել, և Ոսկերչեանը իւր ծանօթների հետ վերջիններից էր, որոնք թողին Մադերը:

Այսպէս գրեթէ ամեն օր նա յաճախում էր այս տեղը, և այդ շարունակեց այնքան ժամանակ, մինչև որ նորա պորտմոնէն բոլորովին նիհարեց, փորը մէջքին կպաւ, և քաղցած շունը իւր բաց բերանով երևաց նորա սարսափած աչքերին:

Դիմել և խնդրել նա չէր սիրում. սպասում էր, որ գործը իւր ոտովը գաջ և առաջը կանգնի: Բայց երբ տեսաւ, որ այդ չէ լինում և ոչինչ լաւ բան չէր կարելի յուսալ զատարկ գրպանից, նա մի պահ ամեն բան մոռացութեան տուց և բոլոր հոգով անձնատուր եղաւ մի հոգսի—ապրուստի միջոց գտնելու: Եւ, պէտք է ստել, այս անգամ նորա բախտը բանեց:

XX

Այս աշնան Ոսկերչեանի ուշ ու միտքը կլանւած էր ամբողջապէս մի շատ կարևոր հոգսով: Նա վճռել էր անպատճառ յաջողեցնել իւր բանաստեղծութիւնների հրատարակութիւնը: Այդ դիտաւորութիւնը, ասելք, նոր չէր: Դեռ ամիսներ առաջ նա լուրջ մտածում էր այդ մասին, բայց միշտ յապաղում էր և այլ և այլ պատճառներով յետաձգում գործը:

Մեծ յոյսեր էր դրել նա իւր ուսանաւորներ՝ ժողովածուի վրայ: Եւ տեսնի թէ չէ, լրագիրները, անշուշտ, իրանց կարծիքները պիտի յայտնեն, և, եթէ մամուլի վերաբերմունքը լինի անաչառ, ու քննադատութիւնը կատարւած լինի ճաշակով և բանիմացութեամբ, նա իրան խրախուսւած կը զգայ, և այդ կ'աւելացնէ նորա եռանդը և ոգևորութիւնը: Բացի այդ, նիւթական շահ էլ է սպասւում: Հարկաւ, Ոսկերչեանը փող վաստակելու ակնկալութեամբ չէր, որ գրում էր. նա գրում էր, որովհետեւ չէր կարող չգրել. դա նորա ներքին պահանջն էր: Հաստատ կարելի է ասել, որ նա, եթէ ունենար ապրուստի միջոց, բնաւ չէր ցանկանալ յոգնեցնել իւր ուղեղը զանազան հաշիւներով. հարիւրաւոր օրինակները մի ամսում կը սպառէր, ձրիաբար բաժանելով իւր ընկերների, ծանօթների մէջ և ուրիշ շրջաններում: Պօէզիան նորա աչքում աստեղծութիւն էր: Միթէ վայել է բանաստեղծին շահագործել այդ աստեղծութիւնը? Բայց կարիքը սովորցրեց նորան ուրիշ կերպ նայել իւր

ստեղծագործութեան վրայ. բարոյական վարձատրութիւնը մի կողմ, ինչու արհամարել նիւթական վարձատրութիւնը?

Եւ ահա մէջտեղ եկաւ հաշիւը. քանի տպագրական էջերից կը լինի բաղկացած գիրքը? Ինչ գիրքով տպելի լաւ է? Ինչքան ծախս կը գնաց ժողովածուի վրայ? Ինչ նշանակիլ գինը? Որքան օգուտ կ'ունենայ, եթէ տպելու լինի 1200 օրինակ?...

Նա անձանթ էր հրատարակչական գործին. հարկաւոր էր ունենալ ձիշա և հիմնաւոր տեղեկութիւններ: Այդ նպատակով նա սկսեց ելու մուտ անել զանազան տպարաններ, ուր խօսակցութիւն էր ունենում կառավարիչների հետ պայմանների մասին, խանութներ, ուր զանազան տեսակ թղթերի գինն էր հարցնում, փորձառու մարդկանց էր դիմում խորհուրդներ լսելու համար:

Այս բոլորը շատ գեղեցիկ և շատ սիրուն: Գիրքը մի օր լոյս կը տեսնի, նա մի քանի հատ շքեղ կաղմէլ կը տալ, բարեկամներին կ'ընծայի, լրագիրները մի բերան կը զովեն հեղինակին և նոր բաւարարութիւն կը շնորհաւորեն, ընթերցասէր հասարակութիւնը ազահուլութեամբ կը սպառէ բոլոր օրինակները, նորա անունը կը թնդալ ամենուրեք, և Ոսկերչեանը կը փառաւորելի ու կը լիանայ: Առշտ փորով և բեխերը սրած ման կը գալ, նախանձողների լեզուն կը պապանձի, և ամենքը կ'իմանան վերջապէս, թէ ով է Արտաշէս Ոսկերչեանը:

Այսպիսի յոյսերով էր վառւած մեր բանաստեղծը, երբ կաղմււած տետրակի մէջ կ'ամենում էր արտագրել իւր ոտանաւորները: Բայց ինչպէս դասաւորել? Ըստ տարիների թէ ըստ համանման մոտիւնների? Նա մտածեց և ընտրեց երկրորդը, այնպէս որ տարբեր բաժիններ պիտի կաղմէին սիրոյ երգերը, բնութեան նկարագրութիւնները, հասարակական տենդենցիա պարունակող ոտանաւորները: Մի մասը արդէն արտագրւած էր: Բայց չետոյ նորա խելքը մտաւ Պալչեանի տւած խորհուրդը: Նա ասաց, թէ՛ ինչպէս լեռնադաշտի գոյնզգոյն ծաղիկների մէջ չկայ մտացածին դասաւորութիւն, այնպէս էլ բանաստեղծութիւնները աւելի լաւ տպաւորութիւն կը գործեն, եթէ, գոյնզգոյն ծաղիկների պէս, ցրիւ եկած լիւնեն գրքի մէջ: Ոսկերչեանը էլ երկար չմտածեց: Գնեց մի նոր տետրակ և սկսեց նորից արտագրել:

Դրում էր օրինակի խնամքով, վերնագիրները համարեա նկարում էր: Առաջին երեսի վրայ շատ գեղեցիկ զուրս բերեց հետեւեալը. «Արտաշէս Ոսկերչեան. Բանաստեղծութիւններ. Թիֆլիս»:

Չմոռացաւ նա և մի յարմար բնաբան իւր զրքի համար: Դա Նադսոնի բանաստեղծութիւնից այն հատածն էր, որ սկսում է այսպէս. „Пусть пѣснь твоя кипитъ огнемъ негодованія“.

Երբ արտագրութիւնը բոլորովին վերջացած էր, նա տարաւ ձեռագիրը և յանձնեց զրաքննիչին:

Այն, այս բոլորը շատ սիրուն է: Բայց զիրքը տպելու համար Ոսկերչեանին երկու հարիւր մանէթի չափ փող է հարկաւոր. որտեղից պիտի ճարի?

Նա յոյսը դրել էր բաժանորդագրութեան վրայ և կարծում էր, թէ այդ միջոցով կարող է ձեռք բերել անհրաժեշտ գումարը: Տարածեց ծանօթների մէջ բաժանորդութեան: Մի-մի օրինակ գրւում էին՝ ոմանք՝ դրդած համակրութիւնից, որ տաճում էին դէպի ասպողաց խոստացող բանաստեղծը, միւսները՝ խղճալով: Գարեգին Զառիկեանը պոստով ուղարկեց նորան տասը մանէթ, որ քսան օրինակի դին էր:

Անցաւ մի ամիս: Արդէն ստացել էր զրաքննիչից թույլտուութիւն: Մնում էր միայն ձեռագիրը յանձնել տպարանին:

Ոսկերչեանը կամեցաւ վերահասու լինել բաժանորդագրութեան հետեւանքին և ում յանձնել էր, ետ պահանջեց բաժանորդութեան: Բայց աւանդ. երբ նա հաշւեց, տեսաւ, որ ժողոված փողի քանակութիւնը վաթսուն մանէթ է միայն: Գոնէ կէսը հաւաքւած լինէր. ձեռագիրը կը տար շարելու և ապա հանգիստ սրտով հոգ կը տանէր մնացած կէսի մասին: Բայց կար և մի ուրիշ ելք: Երկու դասից նա ստանում էր ամիսը քսան և հինգ ուրբի: Եւ ահա նա աչքը տնկեց այդ փողի վրայ: Նա մոռածեց, որ, եթէ գոնէ կէսը կարողանայ ետ դնել, մի քանի ամսում բաւական նշանաւոր գումար խնայւած կը լինի գործի համար: Վճռեց ու սկսեց. ապրիլ ժլատի պէս ճաշարանում նորա երեսը ամեն օր չէին տեսնում: Իսկ երբ դնում էր, ուտում էր միայն մի տեսակը: Թէյը աճում էր թէյամանի մէջ զգուշութեամբ, որպէս զի աւելի չլինի, քան հարկաւոր է երկու բաժակի համար: Ընթրիք չէր անում: Գիշերը,

Թէկուզ մի ժամով էլ հեռանար կացարանից, պիտի հանգցնէր ճրագը և յետոյ դուրս գար: Փորձեց թողնել ծխախոտը—չ'եղաւ: Գինի կամ գարեջուր թոյլ էր տալիս իրան խմել շատ սակաւ: Շորը մաշուում էր և չէր նորոգւում: Նա ինքը ծիծաղում էր իւր ապրուստի վրայ, ասում էր կատակով, թէ դարձել է Պլիւշկին: Բայց հաւատացած էր, որ այս ձևի կենցաղը մազի չափ էլ չի փոխիլ բնաւորութիւնը, քանի որ այս բոլորը ժամանակաւոր բան է: Երկու ամսից յետոյ Ոսկերչեանի ձեռքին հարիւր մանէթից աւելի փող կը լինէր, որովհետեւ միաժամանակ առաջ էր տանում և բաժանորդագրութիւնը: Ել չապասեց. տարաւ ձեռագիրը և յանձնեց տպարանին: Երբ ձեռքերը շփելով ուրախ-ուրախ դուրս էր գալիս այնտեղից, հոգոցով դուրս թռաւ բերնից հետեւալ բացականչութիւնը.

—Վերջապէս մի հոգսից պրծայ!

Այնուհետեւ նա սկսեց մաշել տպարանի շէմքը: Օր չէր անցնիլ, որ նա չ'մոնէր այնտեղ: Գրաշարը ցոյց տւեց նորան, թէ ինչ ձևով պէտք է կատարել սրբագրութիւնը: Թերթերը բերում էր տուն և ուշադիր ջանասիրութեամբ ուղղում սխալները: Պատահում էր, որ նա բանաստեղծութիւնը կարդալու ժամանակ, ոգևորւում էր և, փոխանակ սրբագրութիւն կատարելու, սկսում էր արտասանել ղեկավարացիայով, ինչպէս ղերասանը արտասանում է բեմից:

Գործը առաջ էր գնում:

Արդէն լրագիրների մէջ սկսել էին երեւալ Ոսկերչեանի յայտարարութիւնները զրքի մասին. «Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «Բանաստեղծութիւններ»—Արտաշէս Ոսկերչեանի: Գինն է 50 կոպէկ: Վաղօրօք բաժանորդ գրելը ցանկացողները պէտք է դիմեն իրան հեղինակին».—հասցէն էլ ի հարկէ որոշւած էր:

Թէև զրքի տպագրութիւնը վերջանալու վրայ էր, բայց Ոսկերչեանը սաստիկ անհանգիստ էր: Նա գիտէր, որ, մինչև տպարանի հետ հաշիւները չ'մաքրի, զրքերը բաց չեն թողնելու: Այդպէս էին պայմանաւորւած: Հարկաւոր էր մի ելք գտնել: Նա դիմեց փոխառութեան Խնդրեց մէկից, միւսից. բայց որը մերժեց, որը տւեց շատ չնչին բան: Մնաց ուրեմն Գարեգինին դիմել: Ուղարկեց նորան մի թախանձալից նամակ, որով աղաչում էր նորանից լրացնել պա-

կասը (քառասուն ռուբլի) և իւր բարեկամին դժւար զրուծիւնից ազատել. նա խոստանում էր միևնոյն ժամանակ, զրքերը ծախելուց յետոյ, անմիջապէս վերադարձնել ստացած գումարը: Շուտով եկաւ նամակի պատասխանը, և Ոսկերչեանը միամուկեց:

«Բանաստեղծութիւնները» վերջապէս լոյս տեսան: Որքան քախտաւոր զգաց նա իրան այն ըրպէին, երբ մի օր, կազմարարի խանութը մտնելով, տեսաւ իւր առջև զրքի օրինակները իրար վրայ դարսած, մաքուր ու գողարիկ հատորներ! Աչքերը փայլեցին ու մեծացան, կրակ վառւեց բիբերի մէջ: Մանկան երջանիկ ժպիտով նա վրայ պրծաւ զրքերի մօտ. վերցրեց մէկը, միւսը, երրորդը. բոլորը իրար նման, ինչպէս աղբիւրի ջրի կաթիլները: Թերթել սկսեց, կարդաց մի քանիսը ոտանաւորներից, որոնց, Աստուծոն է յալանի, թէ քանիբորդ անգամն էր կարդում: Մի անգամ էլ աչքի տակովն անց կացրեց վրիպակների ցանկը, որոնք, չնայած ամենադժգոյշ կատարւած սրբազրուծեան, այնուամենայիւ խուսափել էին նորա աչքից:

Տպարանի և կազմարարի հետ բոլոր հաշիւները վերջացնելուց յետոյ, նա մշակ կանչեց, շալակը տւեց զրքերի ահագին հակը և ուղեւորեց դէպի իւր բնակարանը: Առատ վարձատրեց բեռնակրին, որը «չէն կենաս» ասաց և ամեն բարիք մաղթեց երիտասարդին ու գնաց:

Ոսկերչեանը նստեց սեղանի մօտ, դարսեց իւր առաջ իւր զըրքերից մի տասը օրինակ և իւրաքանչիւրի երկրորդ կազմի վրայ սկսեց մակագրել «ընկերական» և «բարեկամական» նւէրներ զանազան անձանց: Գարեգին Զառիկեանի համար վճռեց պատրաստել մի օրինակ՝ փառակազմ և ոսկետառ: Մի-մի օրինակ նա շտապեց հասցնել Թիֆլիսում եղած բոլոր խմբագրութիւններին:

Այդ ամբողջ օրը նա գերազանց տրամադրութեան մէջ էր. սուլում, երգում էր, անց ու դարձ էր անում՝ երեակայնութիւններ անելով, նստում կամ պառկում էր մահճակալի վրայ՝ դարձեալ երեակայնելու համար:

Փառքի տենչանքը նորից զարթել էր նորա հոգում և, իւր ցնորքներով հեռու-հեռու տարւած, ինչեր ասես, չէր երազում! Անցեալի դառը փորձը դեռ ևս խելքի չէր բերել նորան: Կարծես

մինչև անդամ մոռացել էր, թէ որքան անխիղճ կերպով, ինչպիսի մեծ տրամադրութեամբ խորտակեցին նորա առաջին յոյսերը: Այն դեռ քիչ էր: Հարկաւոր էր մի աւելի ծանր, աւելի անգութ հարւած, որպէս զի նա կարգին սթափւէր և աշխարհիս բաները լաւ ծանաչէր:

Բայց այս էլ պէտք է ասել: Երբեմն նորա դէմքի ինքնագոհ և խնդալի արտայայտութիւնը փոխւում, տեղի էր տալիս լուրջ, նոյն իսկ մռայլ թախծութեան. յօնքերը մոտենում էին իրար, և ճակատի վրայ ծաււում էին կնճիւնները: Եւ այդ բոլորներին անցնում էր նորա մոքով. «Ինչ կը լինի, և թէ իմ այս զրականական դեբիւտն էլ նոյն այն թշուառ վիճակին ենթարկի, որին ենթարկւեց իմ բեմական չարաբաստիկ դեբիւտը?» Այս խորհրդածութիւնը սարսուռ էր բերում նորա վրայ, և նա, զլուխը սեղմելով, կարծես խեղտել էր կամենում այդ միտքը ուղեղի մէջ:

XXI

Այն գրքոյկը, որ հրատարակեց Սփերչեանը, բաղկացած էր մօտ վաթսուոն ոտանաւորներից: Սոցա ուղղութեան և մօտիւնների մասամբ ծանօթ պիտի լինի իմ ուշիմ ընթերցողը: Այ բոլորը, ի հարկէ, միևնոյն արժանաւորութիւնը ունէին: Նոցա միջից կարելի էր ընտրել 12—15 հատ բաւական յաջող բանաստեղծութիւններ: Ինչպէս էք հաւանում, օրինակ, հետևեալը, որ ես կը բերեմ ամբողջապէս՝ Վերնագրի տեղ մենք կարդում ենք ահա այս տողը. «Նւէր մեր մեծ դերասան Ադամնանին»:

Բացւեց վարագոյր. . . Եւ բեմի վերայ,
Ուր հազարաւոր գամած են աչքեր,
Շուտով զըլիսիւր պիտի երևայ
Վըսեմ Համէտի սրգաւոր պատկեր:
Ա՛խ, հէզ զոյութեան անվերջ հոգսերում
Մարեցին ազնիւ մեր ըզգացումներ,
Ուրախ անցեալը—երազ է թըւում.
Կորան, չըքացան սուրբ իզէալներ! . . .
Բայց վայրենացած և բիրտ սըրտերին

Հարկաւոր է ձայն մարգարէական,
Որպէս զի փափկած՝ ըսթափւեն կըրկին
Եւ իրանց անաղճ անկումը ողբան!

Հոռտ արա, արտիստ. եղիր մեզ համար
Մի նոր Պոսթիթիւս! սառ զիւկներին
Ներշնչիր կեանքի սուրբ հուր բոցավառ,
Երկնքի տենչանքով վառիր մեր հոգին!
Խօսիր. կըրակոտ քո սըրտի խորքից
Թո՛ղ հընչի սիրոյ լաւագին գոչիւն,
Մեզ յարուցանէ մեր թըմրութիւնից,
Ինչպէս քընածին՝ ամպերի ճալթիւն:
Խօսիր—եւ գիւթիւ ձայնըդ թո՛ղ դողաց
Մեր հոգու բոլոր լարերի վերայ!
Թո՛ղ ողջ թատրոնը՝ մի հոգի դարձած՝
Հալւի մոմի պէս... Թո՛ղ լաց, հեծկըլտաց,
Եւ արտասուքը, անձրևի նըման,
Բոլոր չորս կողմից գետի պէս տեղաց!...

Միջակ բաներ էլ շատ կային, որոնց կարելի էր կարգաւ և անցնել առանց ձանձրոցթ զգալու. եթէ ոչ ներքին իմաստով, նոքա գրաւում էին գոնէ իրանց պարզ և պատկերաւոր ոճով և տաղաչափութեան սահունութեամբ: Բայց կային և այնպիսիները, որոնք, բացի գրքի երեսների թիւը աւելացնելուց, ուրիշ ոչ մի նշանակութիւն չունէին: Եթէ այդ բալլաստը չլինէր ժողովածուի մէջ, գիրքը ոչ միայն ոչինչ չէր կորցնի, այլ դեռ մի բան կ'վատասկէր: Այդ թոյլ, շաբլոնական մոտիւնները, որոնք նման էին աշակերտական վարժութիւնների, միայն վատ ծառայութիւն կարող էին մատուցանել հեղինակին: Նոքա շատ հեշտ կարող էին ծառայել իբր զէնք այն պարոնների ձեռքին, որոնց համար դասարկ բան է մի լաւ գիրք տեղն ու տեղը սպառել:

Ոսկերչեանի բախտիցն էր դա թէ անբախտութիւնից, բոլոր պարբերական թերթերը ուշադրութեան արժանացրին նոր լոյս տե-

սած ժողովածուն և շտապեցին իրանց կարծիքները յայտնել «Բանաստեղծութիւնների» մասին:

Նախ և առաջ խօսեց «Ժամանակը»: Գրախօսութեան տակ ստորագրւած էր Ս., և ամենքի համար պարզ էր, որ դա Աւու-միանն է: Հեղինակի գլխին Թերսիտէսի հայհոյանք թափելուց յետոյ, քննադատը կարծես խղճի խայթոց է զգում, որը թելադրում է նորան հետևեալ տողերն ուղղելու «ինքնակոչ» բանաստեղծին.

«Ասկայն, արդարութիւնը չուրանալու համար, մենք պէտք է խոստովանենք, որ պ. Ոսկերչեանի ժողովածուի մէջ մենք գտանք մի քանի սիրուն, մինչև անգամ շատ սիրուն ոտանաւորներ. բայց, դժբախտաբար, այդպիսիների թիւը այնքան քիչ է, որ դիւրաւ կոր-չում են բազմաթիւ ցնդաբանութիւնների կոյտի մէջ: Եւ այդ, ի հարկէ, շատ բնական է: Իւրաքանչիւր գրող, նոյն իսկ ոչ գրող, որ իւր ջահէլ ժամանակ յանգեր շինելու վրայ եղունգներ է կրծոտել, եթէ համբերութիւն ունենայ շարադրել վաթսուն ոտանաւոր, այդ պատկառելի քանակութեան մէջ անշուշտ կը գտնւէին մի քանիսը, որոնք ոչ պակաս յաջողւած կը լինէին, քան թէ մեր պատանի հեղինակի ամենաընտիր տաղերը»:

Գորանից յետոյ քննադատը սկսում է իւր լեզւի դասը, որ, առանց խնդրելու որեւէ մէկի կողմից, այնքան սիրում էին և այժմ էլ սիրում են սալ հայկաբան և ոչ հայկաբան մատենախօսները, մամուլից դուրս և մամուլի մէջ՝ սկսած Կովկասից մինչև Ռուսիա և Պոլսից մինչև Վիէննա. դասեր եմ տսում, որոնցով մեզ կամե-նում են սովորեցնել, թէ փոխանակ ասելու «ինտելիգենտ» պէտք է ասել «հասկացող». թէ օտարաբանութիւն է ասել «ծանօթ լինել ում հետ», այլ պէտք է ասել «ծանօթ լինել ում». թէ հայերէն չէ «անդորրութիւն էր բուրում». թէ սխալ է ասել «գրական», այլ պէտք է ասել «գրականական». կամ հետևեալ քմահաճութիւնների նման բաներ. «ինչո՞ւ բարեւել և ոչ ողջունել» և այլն և այլն և այլն:

Համեմատաբար տւելի մեղմ էր «Մանկական թերթի» կարծիքը: Սա էլ հաւանել էր միայն այն ոտանաւորները, որոնք տըպ-ւած են եղել այդ թերթի մէջ: Իսկ մնացածը «չարժէր տպել»: Քացի այդ, գրախօսը ավստսում է, որ ժողովածուի մէջ, անհասկա-նալի պատճառով, տեղ չեն գտել մի քանի շատ գեղեցիկ մանկա-

Պան ոտանաւորներ, որոնք լոյս են տեսել «Մանկական թերթի» մէջ: Վերջումը մի առանձին ինքնագործութեամբ նա յայտնում է իւր հետեւեալ գիւտը. «պ. Ոսկերչեանի բանաստեղծութիւններից շատերը գրւած են նմանողութեամբ օտար հեղինակների». և, իբր ապացոյց, բերում է մի օրինակ, որը, սակայն, ջահէլ բանաստեղծի ինքնուրոյն գործերից մէկն էր:

«Ծառագայթի» մէջ ևս երեաց չարաբաստիկ զրքի քննադատութիւնը, որը պատկանում էր Ազատեանի զրչին: Յօդաւորի սկիզբը մի շինծու ողբ էր բանաստեղծութեան անկման մասին: Վերջին ժամանակներս,—ասուում էր այնտեղ,—սկսել են երեւալ մեր զրաւանութեան մէջ զանազան «բանաստեղծներ» և «բանաստեղծութիւններ»: Բայց երանի այդ կոչման արժանի լինէին զրանք: Մի տեսակ ցաւ է մտել մեր մէջ, մի ախտ, որով վարակւած երիտասարդը վճռում է անպատճառ բանաստեղծ դառնալ: Այդ ախտի անունն է քանաստեղծամոլութիւն: Բայց այդ ողորմելիները չգիտեն մի շատ հասարակ ճշմարտութիւն, այն է՝ եթէ չկայ աւիւն, բոլոր ջանքերը աւելորդ են: Սակայն ոչ. մենք աւելին կ'ասենք: Բանաստեղծական աւիւնն էլ բաւական չէ մեր օրերում բանաստեղծ հռչակելու համար: Մեր դարը և մանաւանդ մեր սերունդը աւելի խըստապահանջ է: Անցան այն երանելի ժամանակները, երբ՝ կարմիր վարդ, պայծառ զարուն և քաղցր սէր երգելով՝ աճում բազմանում էին սալոնական պօէտները և քնքոյշ տիկիւնների ու նազելի օրիորդների ուշադրութեան արժանանում: Այժմ ուրիշ բան է պահանջւում: Երգեցէք մեզ համար ժողովրդի ցաւերը, հասարակական մոտիւնները շատացրէք և, եթէ ձեր մոքերը կամենում էք անպատճառ չափական ձևերով և ջանգերով արտայայտել, յայտնեցէք, ինչպէս կ'ուզէք, միայն, ՚ի սէր Աստուծոյ, ոչ ձեր վարդն ենք ուզում, ոչ ձեր զարունը, այլ լուսամիտ առողջ գաղափարներ տւէք մեզ: Ահա թէ ինչ է պահանջւում ժամանակակից բանաստեղծից...

«Նորերս լոյս է տեսել «Բանաստեղծութիւններ» վերնագրով մի գիրք, որի հեղինակն է մի ոմն Արտաշէս Ոսկերչեան: Սա մի ժողովածու է մի քանի չաջող և բազմաթիւ անյաջող և անպիտան ոտանաւորների: Ուշադրութեամբ թերթեցէք գրքոյկը և կը տեսնէք, որ համարեա ամեն մի երեսի վրայ վարդեր են բուրում, սոխակներ

են երգում, և սէրը երկրային զրախտ է խոստանում: Եթէ ժողովածուի մէջ չլինէին մի չորս-հինգ հատ ընտիր երգեր, սրոնց մէջ կայ և զգացմունք և միտք, այն ժամանակ զըջոյկը առանց խղճահարութեան կարելի էր զէն շարտել, իբր անպէտք աւարանք: Հետեւապէս հարց է ծագում. ինչի՞ համար և ում համար է հրատարակել այս գիրքը: Սա չեմ հասկանում: Ով կարող է ասել, թողնա պատասխանի: Գուցէ պ. Ոսկերչեանը փառք է երազել. բայց փառքը ամեն մէկին չեն տալիս: Գուցէ հեղինակը յոյս է ունեցել, թէ զիրքը ապրուստի միջոց կը տայ. բայց ամեն մի զիրք ապրուստի միջոց չէ տալիս, որովհետեւ հասարակութիւնը յիմար չէ, որ, ինչ ձեռքը տաս, փողով առնի: Եթէ լրացրի էջերը չափստայի, ես կարող էի իմ ասածները փաստերով ապացուցանել: Բայց անտեղծութեան հետեւ ես կը բերեմ ներքեւ մի նմուշ՝ ընթերցողին ճշակ տալու համար պ. Ոսկերչեանի «Բանաստեղծութիւնների» մասին: Ահա բարեհաճեցէք կարդալ հետեւեալ տողերը, որոնք զբաւած են այդ ահաւատութեան բոլորին, ինչպէս այդ երևում է վերնագրից.

Ա՛խ, իմ դաժան վըշտի ձեռքին

Սիրտըս ինչքի՜ չը տեսաւ.

Կորաւ աշխոյժ, թարմ հասակըս

Դեռ չը ծաղկած՝ խամրեցաւ:

Կարճ է կեանքը, և վըշտիցը

Նա մաշւում է, կէս լինում.

Ուրախութեան լի բաժակը

Անձեռնամուխ է մընում:

«Ուրեմն ի՞նչ պէտք է անել վըշտից ազատելու համար: Լսեցէք բանաստեղծին.

Էլ ճար չը կայ. արի՛, ընկեր,

Մէջ տեղ դընենք լաւ գինի.

Խըմենք, երգենք և պար բըռնենք—

Ինչ լինում է, թող լինի!...

«Համաձայնեցէք ինձ հետ, պ. հեղինակ, որ այս ոտանաւորի մէջ ոչ մի պոէզիա չկայ: Սա բանաստեղծութիւն չէ, այլ արբեցողի վայրենի աղաղակ:»

Այսքանն էլ բաւական էր, որպէս զի Ոսկերչեանի նման դիւ-
բաբեկ երիտասարդը բոլորովին վհատէր և ընկճէր: Բայց ամեն
բան սորանով չվերջացաւ: Քիչ ժամանակից յետոյ լոյս տեսաւ
«Հոսանք» կիմամեայ հանդէսը, որի խմբագիր-հրատարակիչն էր
«Ժամանակ» լրագրի խմբագրութեան ըմբոստացած հրեշտակներից
մէկը: Ահա այս հանդիսի մէջ, ի միջի այլոց, կար նաև Ոսկերչեանի
բանաստեղծութիւնների քննադատութիւնը, յօդած մի անյայտ
պարոնի: Սա իւր տեսակի մէջ եղածների դուխ-գործոցն էր:

Ես այստեղ արտագրում եմ այդ յօդածը բառ առ բառ:

«Դժբախտ օրերի հասանք», ասւած էր անտեղ. «իւրաքանչիւր
համբակ իրան զրոյ է երեւակայում և անմնքոյր ոտներով կոխ-
կըրտում է գրականական ասպարէզը, և այսպիսով մեծ վնաս է
հասնում մեր գրականութեան, որովհետեւ սա վխտում է այս տե-
սակ գրչակներով: Բայց ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ մինչեւ
օրս չէր լսում քննադատի զօրեղ ձայն, որ սարսուռ բերէր այս-
պիսի մոլորածների վրայ և խելքի բերէր այդ մանկամիտ տղանե-
րին, ինչպէս այդ անում են օտարազգի քննադատները»:

Օգուտ քաղելով հանգամանքից, յօդածի հեղինակը ընթեր-
ցողի աչքի առաջ շարում է մի քանի ուսու ու եւրոպական կրիտի-
կոսների անուններ և յետոյ շարունակում է.

«Մեր քննադատութիւնը, կարելի է ասել, զեռ ևս օրօրոցի
մէջ է: Շատ անգամ նա ոչ միայն չէ կարողանում բարձր լինել իւր
քննադատութեան առարկայից, այլ նոյն իսկ ստոր է լինում նրա-
նից: Եթէ կ'ուզէք իմանալ, իսկական քննադատութիւն սկի չկայ
էլ, մինչդեռ մի լուրջ քննադատի մէջ մեծ պահանջ է զգացւում:
Անաչառութիւնը և արգարասիրութիւնը, միացած խելքի և ճա-
շակի հետ, կազմում են իսկական քննադատի անպայման յատկա-
նիշները, որոնցից զուրկ են մեր quasi քննադատները, որովհետեւ
սրանք գրում են և կողմնադահութեամբ: Կրիտիկայի բացակայու-
թիւնը մեր գրականութեան դատարկ տեղերից մէկն է: Մենք մեզ
համար նպատակ ենք դրել, որքան, ի հարկէ, թոյլ կը տան մեր
համնստ ոյժերը, այդ պակասը լրացնելու»:

Այս յառաջաբանն էր: Դորանից յետոյ քննադատը անցնում է
Ոսկերչեանի գրքի տեսութեան, և ընթերցողը զգում է, որ նորա

ատամները սկսեցին կրճտալ: Բայց նա առաջ անհրաժեշտ է համարում մի քանի կենսագրական տեղեկութիւններ հաղորդել հեղինակի մասին: Եւ ահա ինչ է ասում:

«Պր. Արտաշէս Ոսկերչեանը մի դեռահաս պատանի է, երեկաց աշակերտ, որին, ինչպէս երևում է, Բայրնի դպինիքը թույլ չի տւել, որ նոյն իսկ միջնակարգ ուսումը աւարտի: Դա նոյն այն Ոսկերչեանն է, որը անցեալ տարի դերասանական խմբի մէջ էր, դուրս էր գալիս զանազան դերերի մէջ, և, թէ ինչպէս էր կատարում իւր դերերը, այդ կ'իմանան նրանք, որոնք հետևում էին մեր տաղանդաւոր հրապարակախօս պ. Սեուսեանի բեցենգիաներին, որոնք երևում էին մի... լրագրում»:

«Աչքի առաջ ունենալով մեր հեղինակի ջահէլ հասակը,—շարունակում է նա,—մենք կ'ուզէինք նրան խնայել, բայց ճշմարտութիւնը - նախ և առաջ:

«Բանաստեղծութեան մէջ նախ և առաջ մենք փնտռում ենք գողտրիկ տաղաչափութիւն, կանոնաւոր և ճկուն լեզու, պատկերաւոր ոճ: Բայց պ. Ոսկերչեանի ոտանաւորները այս պահանջներինց ոչ մէկին բաւարարութիւն չեն տալիս: Չէ որ դուք, պ. հեղինակ, որ յաւակնութիւն ունիք «բանաստեղծ» դառնալու, ուսումնարանում սովորած պիտի լինիք տաղաչափութեան կանոնները: Ինչո՞ւ ուրեմն չէք օգտուել ձեր սովորածից: Երևի դուք կարծել էք, թէ ոտանաւոր գրելու համար բաւական է բառերը շարել իրար ետևից, տողերը բաժանել հաւասար վանկերի, ջանգերը չորստել—և «լմնցմա՞ն»: Ո՛չ, դրա համար երաժշտական նուրբ լսողութիւն էլ հարկաւոր է: ունենալ: Ինչի՞ նման են, օրինակ, հետևեալ տողերը.

«Ինձ թողիր միայնակ, հեռացար

Յաւիտենական քո օթեանը.

Ա՛խ, հայր իմ, հայր*, երանի իմանամ,

Որտեղ է շնչում քո ուրականը:

*) Ոսկերչեանի գրքի մէջ այս երկու տունը գրւած է ալսպէս...

Ինձ թողիր մենակ և դու հեռացար

Յաւիտենական քո օթեանը.

Ա՛խ, հայր իմ, երնէկ իմանամ,

Խաւարեց, սեցաւ որընդ կեանքը,

Սիրտս մաշեցին ծանր հոգսեր.

Հայր*, լսում ես իմ հառաչանքը.

Հայր*, տեսնում ես իմ արցունքները *)... .

«Իսկ լեզուն, լեզուն... Դա այն փորձաքարն է, որի վրայից անցնելիս շատերն են սալթաքում և վալը ընկնում: Նոյն իսկ ջերմ զգացմունքները և յաջող մտքերը չեն օգնիլ, եթէ բանաստեղծի լեզուն վատ է: Ել ինչ բանաստեղծութիւն, երբ ամեն մի քայլում մենք պիտի հանդիպենք այնպիսի տգեղ բառերի, որոնցից մինչև անգամ արձակ գրողները աշխատում են ծողողալընչ, ուր մնաց պօէաները: Գիտէք, ընթերցող, ինչպիսի բառեր են պատահում պ. Ոսկերչեանի ոտանաւորների մէջ. «ճամարտակ», «նկրտում», «ափեղջիկեղ», «աղջամուղջ» և այլն»:

«Եթէ այս բոլոր արժանաւորութիւններից միանգամայն զուրկ են մեր «բանաստեղծի» երգերը, գոնէ իրանց խոր զգացմունքներով և հարուստ մտքերով իրաւունք ունենային պարծենալու: Զգացմունքները թունդ են, բայց ոչ խոր և ոչ անկեղծ: Նս սարսափում եմ, օրինակ, մի այսպիսի հրաբխային զգացմունքից.

«Իմ յոյզերը քեզ օտար են,

Սիրտըս լաւա է ժայթքում.

Սէրըս, յոյսըս բոցավառ են.

Ես այրւում եմ, կրրակւում!»...

«Թողնենք այրի, ինչքան քէֆը կը տայ, իսկ մենք շարունակենք: Սէրը քաղցր զգացմունք է. նա ոչ այրում է, ոչ կրակում: Այս բոլորը դեռ մի կողմ: Բայց ինչ կ'ասէք այն ջահէլ երիտասարդին, որը դեռ նոր է սկսում ապրել, աշխարհիս բարւոյ և չարի-

Որտեղ է շրջում քո ուրաւկանը:

Խաւարեց, սեցաւ որբիկիդ կեանքը,

Սիրտըս մաշեցին ծանր հոգսեր.

Հայր իմ, լսում ես իմ հառաչանքը?

Հայր իմ, տեսնում ես իմ արցունքները?...

Մանօթումիւն հեղինակի:

մասին հազիւ մի աղօտ հասկացողութիւն ունի և յամենայն դէպս ափնքսն նեղութիւններ քաշած չի լինիլ կեանքումը, որ իրան թոյլ տայ յոռեաես ձեանալ և ձեռքով շոտակահառէր հետեւեալ մտքերը վիժել.

«Աշխարհն ինձ համար դարձաւ օձի օղ:
Նա սեղմում է ինձ, նա ինձ խեղդում է...
Հոգուս տիրել է մահւան ահ ու դող.
Ամբողջ մարմինըս փշաքաղում է!»

«Դուք չէք զգում, ընթերցող, թէ որքան կեղծ են հնչում այս խօսքերը: Ինքը հազիւ քսան տարեկան, և աշխարհը նրա համար դարձել է արդէն օձի օղ, որ նրա վզից փաթաթւած՝ սեղմում խեղդում է: Հօ տեսնո՞ւմ էք:

«Զարժէր, ձշմարիտ, երկար կանգ առնել այս գրքի վրայ: Եթէ մենք ուշադրութեան արժանացրինք նրան, դրա պատճառը այն է, որ մենք վճռել ենք մի անդամից վերջ դնել զրականական տոյն անմիտ հոսանքին, որ սկսել է վերջին ժամանակներս թանաւաւորողութեան՝ անունով և միւս կողմից քարեկամական խորհուրդ տալ պատանի հեղինակին, որ նա ձեռք վերցնի ոտանաւորներ զբելուց և ուրիշ բանի մէջ որոնի իւր կոչումը, եթէ կամենում է օգտաւէտ լինել թէ իրան թէ հասարակութեան:

«Հա, մենք մոռացանք ասել, որ գիրքը արտաքուստ լաւ տպուկորութիւն է գործում՝ թուղթը ընտիր, տիպը գեղեցիկ, թէև վատ չի լինիլ, որ պ. Ոսկերչեանը մի քիչ սովորէր հայերէնի ուղղագրութեան կանոնները, որովհետև սակաւ չեն այսպիսի սխալներ. «ասպարեզ» — եչով, «խօստում» — օջով, «բախտ *») և այլն: Գրքի գինը 50 կոպէկ է, մեղ թանկ է թւում:

Վերև բերւած յօդածները խլացուցիչ հարւածների նշանակութիւն ունեցան Ոսկերչեանի համար, և նորա սրտի մէջ չորս վէրք բացւեց, մէկը միւսից աւելի խոր: Այն օրերը, երբ այդ յօդածները երևում էին, նորա համար խաչելութեան օրեր էին: Նա փակում, առանձնանում էր, ինչպէս վիրաւոր վազան, հառաչում

*) Վրիպակների ցանկում աղ սխալները նշանակւած էին, բացի վերջինից:

Ա տնքում էր, ինչպէս ծանր հիւանդ: Նա ցնցւում, կուչ ու ձիգ էր լինում իւր սենեակում, ինչպէս թունաւորւած մուկը իւր բնի մէջ: Մի հատիկ հայհոյական բառ դուրս չէր թռչում նորա բերնից, որովհետեւ համապատասխան խօսք չէր գտնում, որ ասէր և սիրտը հովացնէր: Գրականական դատաւորների կարծիքները սոսկալի էին թուում, ազտազոլմները—գարհուրելի, դատաւճիռները—անխիղճ և անարդար: Նա պատրաստ էր մենամարտութեան կանչել ամբողջ հայ մամուլը, բայց միևնույն ժամանակ ղգում էր, որ մի այդպիսի հերոսական քայլի համար նա անգոր է, ինչպէս կատաղի տարերքի առաջ: Նա երեւակայում էր, թէ ինչպիսի փոթորիկ կը բարձրանայ իւր դէմ: Նա տեսնում էր իւր թուլութիւնը, և հոգին դուրս էր գալիս հոգոցներով և հառաչներով: Անյաջող սիրոյ վերքը, բեմական Ֆիասկօն—ոչ մէկը այս հոգոցների կէսը չը խլեց նորա կրծքից: Միևնույն է, թէ նորա մէջքը կապտացնէին մորակներով, ոտներով կոխկրօնէին, հողաթաղ անէին և կիսամեռ, կիսակենդան հանէին գերեզմանից...

—Ինձ խեղդեցին, խեղդեցին, Իսահակ, ինձ շան պէս սպանեցին! ողբաց նա հեծկլտալով և իրան նետելով Ֆալչեանի գիրկը, երբ սա մի անգամ նորա սենեակը մտնելով՝ յուսահատ դրութեան մէջ տեսաւ իւր ընկերոջը:

(Շարունակելի)

*
*
*

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Շառաչելով մի վառ աստղիկ
Երկրի կրճքին վաչր ընկաւ,
Բայց երկիրը մնաց լռիկ,
Աստղն էլ լռեց ու հանգաւ...

Իմ վառ սէրս բոցով-երգով
Սրտիցս սուրաց, սիրտդ ընկաւ.
Սիրտդ էլ մնաց մռննջ, անվրդով,
Բայց, ախ, սէրս չհանգաւ...

1897 թ., 26 նոյեմբեր,
Ալեքսանդրապոլ:

* * *

ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Ես չեմ ուզում արե ցոլայ,
Ամպը նազէ երկնքում,
Վարդի ծոցում ցօղը շողայ,
Հովը սուլէ այրերում:
Ես չեմ ուզում ոսկի-աստղունք,
Մարմանդ ծովի օրօրանք,
Փարթամ ծառեր, ճոճուն սուեր,
Թռչունների գուրգուրանք:
Ես չեմ ուզում կեանքը վիտայ
Յոգնած երկրում ամեն-տեղ.
Օ', հերիք է մարդը սողայ
Ծերուկ երկրում ամեն տեղ:
Տիեզերքը թող շունչ դառնայ
Թող ծաւալի լուսթիւն,
Ա'խ, ես ցնդւիմ, սիրտս հովնայ—
Անվերջ, յաւերժ անդորր քուն...

1894, օգոստոս 5, Լալաջիկ:

ԷԻՈՒԻՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ, ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

«Որ մարդը մասնակից է եղել ընդհանուր Եւրօլիցիային, որ նա
ևս պատկանում է կենդանական թագաւորութեան, որ նա առաջա-
ցել է կապկանման կենդանիներից—այդ ամենը կայծակի պէս շան-
թում է բոլոր ուղղափառներին, քնքոյշ, զգայուն սրտերին: Ով որ
անասուած չի գտնում այդ վարդապետութիւնը, գտնում է նրան
անձաշակ, ով նրա մէջ չի տեսնում ատոենտատ ընդդէմ «Գերապոյն
Յայտնութեան», ապա նա տեսնում է ատոենտատ ընդդէմ մարդկային
արժանաւորութեան—այսպէս է ճառում հռչակաւոր աթէիստ-փիլի-
սոփա Շտրաուս իր նշանաւոր գրածքի մէջ (Der alte und der
neue Glaube:—Հին և նոր հաւատը):

«Գարւինի վարդապետութիւնը աթէիստ է, նա վերջ ի վերջոյ
տանում է դէպի անասուածութիւնը, դէպի Արարչի բացասու-
թիւնը—ձայնում են թէօլոգները: Մենք կ'աւելացնենք, որ ընդ-
հանրապէս Եւրօլիցիայի թէօրիան աթէիստական է, քանի որ նա
անհրաժեշտաբար տանում է դէպի մի միայնակ սկզբունք, մի Սուր-
բատանց, որը ինքն իրեն գոյութիւն ունի և որ իրենից դուրս ոչ
մի պատճառ, ոչ մի ոյժ չի ճանաչում: Սակայն զիտութիւնը կրօ-
նական հրահանգներով չի առաջադիմում: Նա չի հաստատում այս
կամ այն թէօրիան, ի նկատի առնելով նրա առաջ բերելիք հետե-

¹) Տես Մուրճ 1897 թ. № 2—12, և 1898 թ. № 1, 2—3 և 4.

ւանքները, այլ առաջ է ձգտում միշտ մէկ մտքով տողորւած՝ միշտ աւելի և աւելի մօտենալ ճշմարտութեան. և իր յաղթական ընթացքի մէջ տապալում է նա ամեն մի ապօրինի հեղինակութիւն, հաստատելով ընդմիշտ մեն-մենակ գիտութեան ճշմարիտ հեղինակութիւնը: Այո, նոյն իսկ աստուածները զահաւիժւում են, — այս է տիեզերական էւոլիւցիայի նշանաբանը. աստուածութիւնը ևս ունի իր էւոլիւցիան, մենք այդ կը տեսնենք թեր ևս, եթէ հնար լինի:

Վերը յիշած անդունդը մարդկային և անասնական աշխարհի միջև հարթւած է այսօր: Այն բոլոր առանձնայատկութիւնները, որոնցով հակաէւոլիւցիօնիստները ճգնում էին բաժանել մարդուն ուրիշ կենդանիներից, կամ գոյութիւն ունին այդ վերջինների մէջ ևս, և կամ բացակայում են ամենաստորին մարդկային ցեղերի մէջ: Խօսք չըկայ, եթէ համեմատենք մի Վանտ կամ մի Սպենսէր ամենաբարձր կենդանիների հետ՝ անդունդ կը տեսնենք մէջ տեղը. բայց Սպենսէրից մինչև հիմիկայ աֆրիկական Բուշմէնը կամ Պապուատը ևս ահագին տարածութիւն է: Այնուամենայնիւ Պապուասներն ու Բուշմէնները ղեռ շատ բարձր են նախնական մարդուց, որը ապրել է մեզնից շատ դարեր առաջ գէօլոգիական (երկրաբանական) երրորդական շրջանում: Նախամարդը, տկոր, թափառական, առանց որ և է զէնքի ու գործիների, բիրտ ու ապուշ, քարանձաւներում կամ ծառերի փշակներում կուչ եկած, — ահա թէ ում պէտք է համեմատել անասունների հետ:

Որտեղ է սահմանագիծը: Այստեղ ևս չկայ նա, ինչպէս որ նա չըկար բոցսի և կենդանու, կենդանու և անկենդան նիւթի միջև: Մարդկային և անասնական աշխարհի տարբերութիւնները որակական չեն, այլ քանակական, էութեան մէջ չեն, այլ միայն աստիճանի: Մարդը ևս կենդանի է, նման անաստամիական կազմութեամբ և ֆիզիոլոգիական ֆունկցիաներով: Կենդանին ևս բանական գիտակցական արարած է, նա ևս զգում է, ուզում է, յիշում է, սիրում ու ատում է, աղբսում ու սպառնում է, այն, նոյն իսկ զատում է, նոյն իսկ որոշ չափով աբստրակցիա էլ է անում: Կենդանիները ևս լեզու ունին, խօսում են իրար հետ, արտայայտում են իրենց

զգացումները, վիշալը, երկիւղը, ուրախութիւնը և այլն: Անհամար փաստեր կան այն բոլոր հեղինակների մօտ, որոնք զբաղւել են անասունների հոգեբանութեամբ. բայց մենք չենք ընդարձակւիլ:

Ընդ որում էութեամբ մարդս պատկանում է ընդհանուր կենդանական աշխարհին. իր մարմինը, ինչպէս և բոյսերինն ու կենդանիներինը, կազմւած է բջիջներից և բջջակոյտերից, իր զգացողութեամբ և ազատ կամաւոր տեղափոխութեամբ մոնում է նա կենդանական թագաւորութեան մէջ. իր մարմնի մասերի որոշ կազմութեամբ ու դասաւորութեամբ նա պատկանում է ողնայարաւոր կենդանիների դասին, մասնաւորապէս կաթնասուններին և աւելի մասնաւորապէս բարձրագոյն կապկապին տեսակներին: (Րոլլէ): Մարդը էպպէս չի տարբերւում բարձրագոյն անասուններից, բայց նա իր կատարելագործումով, Ֆիզիկական ու հոգեկան կարողութիւններով կանգնած է կենդանական երկարաձիգ սանդուխքի գագաթին: Օկէնը հակիրճ, բնորոշ խօսքերով տալիս է մեր քարակտրիստիկան. «մարդս ամենամոլեգին, զիշատիւ գազանն է և ամենահնազանդ որոճողը, ամենահպարտ նոյգր և ամենահամբերատար էշը, ամենահաւատարիմ շունը և ամենակեղծ կատուն, ամենամեհանձն փիղը և ամենաանգութ, մարդասիրտը բորենին»:

Լիննէյը († 1778) դեռ անցեալ դարում գրել էր մարդուն միւսնոյն ընտանիքում կապիկների հետ, անւանելով զրանց բոլորին primates, այսինքն կենդանական աշխարհի պետերը, բարձրագոյնները: Դրանով շէշ-բնագէտը առաջին հարւածը տւեց նախկին կլասիֆիկացիաներին, որոնք բաժանում էին օրգանական աշխարհը երեք թագաւորութիւնների՝ բուսական, անասնական և մարդկային: Բայց Լիննէյից յետոյ Բլումենբախը նորից զատեց մարդուն, որը երկու ձեռք ունի միայն (bimane), միւս կենդանիներից, որոնք ունին չորս ձեռք (Quadrumanes): Կիւլիէն ևս ընդունեց այդ բաժանումը: Եկաւ Հէքսլին և ջնջեց զանազանութիւնը մարդու և բարձրագոյն կապիկների ձեռքերի մէջ: Ուսումնասիրելով ձեռքերի ու ոտների ոսկորներն ու մկանները մարդու և կապիկի մօտ անատոմիական կազմութեան տեսակէտից՝ նա ցոյց տւեց, որ չորս ձեռք ունեցողները իրօք նոյնպէս երկու ձեռք ունին, ինչպէս և մարդը: Ճիշտ է, կապիկների մօտ ձեռքի ու ոտի հակադրութիւնը կամ աշխատանքի բաժանումը

նրանց մէջ այնքան խիստ ու որոշ կերպով զճւած չէ, ինչպէս մարդու մօտ: Սակայն այդ տարբերութիւնը մորֆոլոգիական է, և ոչ ֆիզիոլոգիական. մարդկային ձեռքերը համեմատաբար կարճ են, ոտները երկար: Կապիկների ոտ ու ձեռքը կամ հաւասար երկայնութիւն ունին, կամ ձեռքը դեռ աւելի երկայն է լինում ոտից: Տարբերութիւնը բղիտում է ոսկորների ու մկանների առանձին կազմութիւնից: Այնուամենայնիւ Գորիլլա կապիկ մօտ ոտ ու ձեռքը նոյնքան են տարբերում, որքան և մեզ մօտ: (Հէկկել): Գորիլլայի և Շիմպանզէի ձեռքերը իսկական ձեռքեր են, ինչպէս մարդունը, թէ անատոմիական, թէ ֆիզիոլոգիական տեսակէտից: (Րոլլէ): Միւս կողմից՝ չայտնի է, որ շատ վայրենի ցեղեր դորժ են ածում իրենց ոտը՝ որպէս «յետին ձեռք» ինչպէս մենք ընդդիմադրում ենք ձեռքի բութը միւս չորս մատերին, նրանք էլ գիտեն ոտի չորս մատերին ընդդիմադրել ոտի բթամատը, այսինքն նրանք կարող են ծառայեցնել իրենց ոտը, իբրեւ «վերցնելու», «բռնելու» աշխատելու ձեռք: Մինչև իսկ բարձր զարգացած ցեղերի մէջ չարատեւ դորժադրութեամբ կարելի է վարժեցնել ոտի բթամատը: Շատ նկարիչներ են տեսնւած առանց ձեռքի օգնութեան՝ նկարելիս, և շատ ջութակահարներ՝ ոտքով չալելիս: Վերջապէս նոր ծնւածները առն ազգերի մէջ իրենց գոյութեան առաջին ամիսներում ոտի միջոցով նոյնքան դիւրութեամբ են բռնում զգալը կամ մի ուրիշ բան, որքան և ձեռքով: Աւրեմն, այստեղ ոչ մի պատճառ չըկայ մարդուն զատելու կապիկներից:

Այսօր համաշխարհային կնքով ընդունւած է արդէն գիտնական Հէքսլիի (Huxley, † 1895) եզրակացութիւնը, որի համեմատ՝ մարդուն և բարձրագոյն կապիկներին (գորիլլա, շիմպանզէ և այլն) բաժանող անատոմիական տարբերութիւնները աւելի թոյլ են, քան այն տարբերութիւնները, որ կան բարձրագոյն և ամենաստորին կապիկների միջև: Հէքսլին եկել է այդ նշանաւոր եզրակացութեան զանազան օրգանների՝ զանգի, ուղեղի, ոտ ու ձեռքի ամենաբարեխիղճ ուսումնասիրութիւնից յետոյ, որոնք հրատարակւած են դեռ 1863 թւին իր հանրածանօթ գրւածքում «Մարդու դիրքը ընդթեան մէջ»: Հէքսլիի, Բրոկայի, Ֆոլտի, Հէկկելի և բազմաթիւ ուրիշ բնագէտների ու մարդաբանների վկայութիւններին աւելացրեց Դարւինը իր սեփական ֆակտերի անվերջանալի շարքը, որ

նա հաւաքել էր իր աշխարհաշուրջ ճանապարհորդութեան ընթացքում:— և հրատարակեց 1871 թւականին իր խոշոր աշխատութիւնը «Մարդու ծագումը եւ սեռական ընտրութիւն», որը մի տրամաբանական շարունակութիւն է «Տեսականների ծագման»: Ֆակտեր, որոնք անտարակուսելի կերպով հաստատում են անասնական և մարդկային աշխարհի սերտ կապը, միութիւնը, կենդանիների (մանաւանդ կապիկների) և մարդկանց անատոմիական, ֆիզիոլոգիական և վերջապէս հոգեբանական նմանութիւնները:

Երբ Դարւինիզմի հակառակորդները և մարդու առանձին ստեղծագործութեան երգեհալ պաշտպանները ներքուստ համոզեցին, որ իրաւ, «մարմնի» արմատական տարբերութիւններ չըկան, սկսեցին յօրինել «հոգու» տարբերութիւններ մարդու և անասունների մէջ: Խեղքը, հասկացողութիւնը, կրօնը, բարոյականութիւնը և և այլն չատուկ են միայն մարդուն— յայտարարեցին նրանք: Բայց համեմատական հոգեբանութիւնը, (կենդանիների, երեսնաների և վայրենիների), որքան էլ նա զեռ ջահէլ ու անկատար է, այնուամենայնիւ հաստատեց ակներև կերպով, որ վերոյիշեալ դատողութիւնը հիմնուած է թիւրիմացութեան վրայ: Սահմանափակենք առ այժմ մի քանի փաստերով:

Երևելի նատուրալիստ Բիւֆօնն 1740 թ. մի շիմպանզէ ունէր երկու տարեկան. ման էր զալիս նա միշտ ուղղահայեաց դիրքով: մինչև անգամ երբ ծանր առարկաներ էր կրում: Դէմքը տխուր էր, լուրջ, խոհուն, հնազանդուող, իր թաթը մեկնում էր մարդկանց, ճաշի ժամանակ նրանց պէս սեղան էր նստում, վերցնում էր անձեռոցը, նրանով մաքրում շրթունքները, զործ էր ածում զգալ ու չանգալ, ինքը անձամբ դինի էր ածում իր բաժակի մէջ, զեռ «էքստրա» էլ էր խմում: Նա այնքան ուժեղ զգացմունք էր տածում զէպի մի տիկին, որ զագանակով հարւածում էր բոլորին, ով մօտենում էր այդ տիկնոջը: Այս ամենը հէքեաթ չէ: Մի այլ տեղ շիմպանզէին այնքան էին վարժեցրել, որ նա կատարում էր նաւի մէջ նաւաստիի բոլոր պաշտօնները: Օրինակները կարող են բազմապատկել: Այդ բոլորը ցոյց է տալիս, թէ որ աստիճանի կարող է կրթւել ու նրբանալ կապիի հասկացողութիւնը: Մինչև անգամ հակաէոլիցիօնիստ Ազասին խոստովանում էր, որ

նա ոչ մի էական տարբերութիւն չի տեսնում մի երեխայի և մի ջահէլ շիմպանզէի հասկացողութիւնների մէջ: Շատ բնազդումներ ընդհանուր են մարդու և անասունների համար. օրինակ, կեանքի պահպանութեան բնազդումը, սեռական և ծնողական սէրը և այլն. (Գարլին): Իսկ մրջիւնների և մեղուների հասարակական հրաշալի ինստինկտները յայտնի են ամենքին: Նրանց մասին ամբողջ հատորներ են գրել և բազմաթիւ առասպելներ են տարածել: Նշանաւոր մրջիւնաբան Հիւբեր հուշակում է մրջիւնների աշխատասիրութիւնը, նրանց համերաշխ ու անխոնջ գործունէութիւնը, փոխադարձ աջակցութիւնն ու հոգատարութիւնը, նրանց արշաւանքներն ու պատերազմները: Ամբողջ պետութիւններ են հաստատում այդ մանրիկ արարածները, քաղաքներ ու փողոցներ են շինում, կամուրջներ են ձգում, կազմակերպում են արշաւանքներ աւարառութեան համար, կռւում են զինւորական դիպցիպլինով, — ահա մի կեանք, մի սքանչելի հոգեկան աշխարհ, որ հիացնում է բնագէտներին ու մղում նրանց դէպի մանրագնին ուսումնասիրութիւն: Ուսումնասիրել են այդ կեանքը Հիւբեր, Ֆորէլ, Լէօբոկ, Բոմանէս և այլք: Գարլինը ևս խօսում է մրջիւնների մասին դեռ իր անդրանիկ գրածքի մէջ և ձգնում է ըմբռնել նրանց սոցիալական բնազդի զաղտնիքն ու ծագումը: Հեշտ լուծելու բան չէ. Ֆորէլը, քննելով մրջիւնի անհատական իմացականութիւնը, նրան աւելի ստոր է դասում, քան բարձր ողնայարաւոր կենդանիներին և ընդունում է, որ սոցիալական բնազդն է գլխաւոր Ֆակտորը մրջիւնների հոգեկան կեանքի: Լէօբոկը դասում է մրջիւններին անասնական իմացականութեան (intelligence) ամենաբարձր աստիճանի վրայ, ուրեմն աւելի բարձր, քան մարդանման կապիկներին:

Գարլինը ընդունում է. — իր հետ և շատ ուրիշները — որ կենդանիների մէջ կայ ինքնագիտակցութիւն, դատողութիւն, որոշ չափսով եզրակացնելու ոյժ և այլն: Գարլինը պնդում է, որ նոյն իսկ կրօնի զգացմունքն էլ յատուկ չէ միայն մարդուն, այլ նաեւ կենդանիներին, հէնց օրինակ շանը. և նա փորձեր էր արել իր սեփական շան վրայ ¹⁾: Սլորուիզմի և ամենաօրինակելի անձնուրացութեան Փակ-

¹⁾ Darwin, Descendance.

տեր են զիտւած կապիկների, շների, թռչունների և այլ կենդանիների կեանքում:

Այդ բոլորը մի կողմից: Միւս կողմից աչքի առաջ բերէք զանազան վայրենի ցեղեր, որոնց մէջ մուսուր ու բարոյական կեանքի նշոյլն անգամ չըկայ: Վայրենին, առանց երկար ու բարակ մտածելու, թեթեւ սրտով պատահողում է իր հարազատ զաւակին: Հոտտենտոտները և Աստրալիացիները սովի միջոցին ուտում են իրենց կանանց ու երեխաներին. բայց մարդակերութիւնը կատարւում է և ոչ միայն սովի զէպքում: Էսկիմոսը ուրիշ բանի մասին չի մտածում, բայց միայն ուտել, և անվերջ ուտել: Մեռնում է նրա հայրը կամ մայրը՝ նա նրանց հետ թաղում է և իր կենդանի զաւակներին: Հարաւային Ամերիկայի մի ցեղի առաջնորդ պարծենում էր, որ Նա իր կեանքում աւելի քան 5000 մարդ է կերել: (Լէտուրնո, «Գիտութիւն և մատերիալիզմ»): Վիտիան կոչւած վայրենիները կենդանի թաղում են իրենց ծնողներին, թէ՛ պառաւել են, բանի պէտք չեն, միայն հաց են ուտում: Գոյութեան կռիւ է: Հռչակաւոր Մալթուսի օրէնքը այստեղ է ցոյց տալիս իր զօրութիւնը. բայց միայն այստեղ (? Խմբ.): Սէր բառը գոյութիւն չունի շատ վայրենիների լեզւում. բայց շատերի մէջ լեզուն էլ գրեթէ չկայ: Վայրենիները յաճախ անընդունակ են լինում ամենաշնչին ընդհանրացումների. նրանք խօսք չունին արտայայտելու համար՝ «մարդ», «կենդանի», «բոյս», «գոյն» և այլն, թէպէտ ամեն մի կենդանու կամ գոյնի համար ունին որոշ խօսքեր: Նրանց համբելու կարողութիւնը չի անցնում 10-ից, 20-ից: Էսկիմոսը կարող է հաշւել իր որդոց, երբ նրանց թիւը հասնում է մինչև 6-ը, 7-ը. իսկ երբ դրանից աւելի ծնեցին՝ էլ չի կարողանում համբել: Շատ ցեղերի համար չորս թիւը արդէն «շատ» է նշանակում (այսինքն՝ անորոշ): Աֆրիկական Բուշմէնների առասպելական չիմարութեան մասին վկայում են բոլոր ճանապարհորդները: Կրօնի հետքը շատ տեղեր չկայ. Հրոյ երկրի բնակիչները (հարաւային Ամերիկա) չունին կրօնի գաղափարը. ոչ Աստուած, ոչ սատանա: Սակայն վերջին կարծիքը զեռ վիճելի է: Նա կախւած է կրօնի որոշումից: Կան ցեղեր, որոնք միայն չար աստուածներ ունին, բայց ոչ մի ցեղ չկայ, որ միայն բարի աստուածներ ունենայ: Սատանայի պրինցիպը աւելի է տարածւած, քան հրեշ-

տակի 1)։ Կոպիտ և իրօք վայրենի է կրօնի զաղափարը այդ ցեղերի մէջ։ Պատմում են, որ միասիօնարները Եւրոպայից իրենց հետ Նոր Կալէդոնիա էին տարել մի բուլղոզ շուն և որովհետեւ Նոր Կալէդոնիայի մէջ չկային չորքոտանիներ, նորեկ եւրոպացի շունը տեղացի վայրենիներին երեացել է որպէս մի գերբնական էակ, մի հրաշք։ Կենդանին զարհուրելի սարսափ էր ներշնչել նրանց։ Եւ ահա, այդ վտանգաւոր ու չնաշխարհիկ էակին սիրաշահելու համար, վայրենիները տրամաբանում են իրար մէջ և որոշում են հաշուել նրա հետ։ Ընտրում են մի պատգամաւորութիւն, որ պառզներով ու անուշեղէններով մի օր երևում է բուլղոզի առջև, յայտնում է նրան բարեկամութեան զգացմունքներ, բնակիչների կողմից ճառ է արտասանում, փառաբանում է բուլղոզի զօրութիւնը և այլն։

Եթէ ընդունում ենք, որ երկիւղը առաջնական դեր է խաղում կրօնի ծագման մէջ, ապա ինչ տարբերութիւն կայ Նոր-Կալէդոնացիների և Պարսիների շան մէջ. Պարսիների շունը, տեսնելով իր տիրոջ հովանոցը գետնին փռած և քամու հարւածներից տատանւելիս, սարսափում է և լարւած երկիւղածութեամբ դիտում է հովանոցը, մոռածելով, անշուշտ, որ մի աներևոյթ ոգի թաքնւած է նրա մէջ և շարժում է նրան...

Քրիստոնէութեան առաքեալները մեծամեծ անախորժութիւնների են հանդիպում վայրենիների մէջ Աւետարանը քարոզելիս։ Վայրենու գլխին կամ գալլի գլխին աւետարան—միւնոյնն է. քարոզի մէջ տեղը ունկնդիրը յանկարծ կտրում է միասիօնարին. «Այդ բոլորը, ինչ որ պատմումես, շատ լաւ է, բայց ես քաղցած եմ. հաց տալիս ես ինձ, այո՞ թէ ոչ։ Եւ եթէ ոչ՝ մէջքը շուռ է տալիս ու անտառը քաշւում սնունդ ձարելու համար։ Կամ թէ յաճախ՝ համբերութեամբ լսելով միասիօնարի երկար ու բարակ բացատրութիւնները քրիստոնէական կրօնի մասին, վայրենին դառնում է իր քարոզին. լմենք քեզ այսքան երկար ականջ դրինք, հիմա տուր մեր վարձատրութիւնը»։

Զերկարացնենք. Բոլոր թւաձ ֆակտերը մոռածել են տալիս, որ նախամարդը չնչին, շատ չնչին տարբերութիւն է ունեցել բարձր

1) Heim, Դասախօսութիւնների (Յիւրիխ)։

կենդանիներին, որ նրա կենքում երկու հոգս է եղել միայն՝ ուտել և չուտիլ: Այսօր իսկ շատ ցեղեր այն աստիճան մօտ են կենդանիներին, այն աստիճան հեռու մարդկային պատկերից, որ մի քանի ծանապարհորդներ հրաժարուում են նրանց «մարդ» անունը տալու: Վայրենիները ընդհանուր առմամբ երեխաներ են՝ օժտված հասակաւորների ֆիզիկական ոյժերով:

Մարդու և անասունների նմանութիւնները (անատոմիական, ֆիզիոլոգիական և այլն) մեր բերած մի քանի օրինակներով չեն սպառուում, ի հարկէ: Այդ նմանութիւնների մասին շատ թէ քիչ ամփոփ գաղափար կազմելու համար՝ հարկաւոր է ծանօթանալ Ղարւինի, Ֆոխտի, Հէքսլիի, Բիլիների, Հէկկելի, Րոլլէի և այլոց աշխատութիւնների հետ:

Ֆոխտ, Հէքսլի, Հէկկել, — երեք նշանաւոր մարդիկ, որոնք եղել են Ղարւինի նկատմամբ որոշ չափով և՛ ուսուցիչ և՛ աշակերտ, բայց մանաւանդ իբրեւ աշակերտ, երեքն էլ հպարտ են Ղարւինի անունով, Ղարւինն էլ հպարտ էր իր այդ տաղանդաւոր աշակերտներով: Այդ երեքը մեծապէս նպաստեցին դարւինիզմի առաջադիմութեան ու տարածման, թէ իբրեւ զուտ գիտնականներ, և թէ իբրեւ ժողովրդականացնող: Բայց դարւինիզմի (մասնաւորապէս «մարդու ծագման» թէօրիայի) ամենահամբաւաւոր պրոպագանդիստը անշուշտ Կարլ Փոխտն էր: Նա մէկն էր այն առաջնակարգ գիտնականներից, որոնք «Տեսակների ծագումը» լոյս տեսնելուց յետոյ ասպարէզ եկան եւրոպական ցամաքի վրայ իբրեւ քաջ առաքեալներ հելլենիական վարդապետութեան և մասնաւորապէս ծագման թէօրիայի: Նա այդ գիտնականներից ամենազօրաւորն էր: Հռետորական տաղանդով օժտված՝ այդ մարմնացած ազիտատորը թռչում էր անդադար Գերմանիայից — Շւէյցարիա, այնտեղից Ֆրանսիա, ուր այն ժամանակ խաչ էին դրել դարւինիզմի վրայ և երգում էին դեռ Կիւլիէյի անունով... Ֆոխտի կարող ձայնը որոտում էր բոլոր անկիւններում, և աստուածաբանների բանակից թունաւոր անէծքներ էին թափւում նրա հասցէին: Ֆոխտի միայն անունը սաբսափ էր տարածել նրանց մէջ, Հալաճում էին նրան, որպէս մատերիալիստի, և որ-

պէս մոլեգին աթէիստի: Նա մէկ անգամն էր այն նշանաւոր եր-
րորդութեան, որի անունն է՝ Մոլեշտտ-Փոխտ-Բիւլմէր, և երեքն
էլ հալածւած ու արքայութեան էին իրենց հալածիւնից: (Իսկ Ֆոխտը
բացի աթէիստ լինելուց՝ յեղափոխական էլ էր, ազատ մտածող—
և Գերմանիայում մահաւան դատաւարութեամբ՝ փախուստ էր տուել):
„Cousin germain“ (հօրեղբոր որդի) էր կնքել նա բարձր կապիկ-
ների անունը—Շիմպանզէ, Օրանճ, Գորիլլա մեր հօրեղբորորդիք
են¹⁾, և Ֆոխտին իրեն կոչում էին Affen-Vogt (կապիկների Ֆոխտ):

Նրա հրապարակական դասախօսութիւնների միջոցին կղերա-
կանները քարեր էին նետում դէպի նրա ամբիոնը, հայհոյեանք-
ներն ու հարաջ հրոցը անպակաս էին լինում, չաճախ միջամտում
էր պոլիցիան... Նւաւոյնում էին Ֆոխտին ժընէւի համալսարանում,
երբ նա նոր էր սկսել իր դասախօսութիւնները: Ֆոխտը անդրդւելի
էր... Լսեցէք, թէ այդ ահարկու մարդը ինչ շանթալից յայտարա-
րութեամբ դիմում էր իր հակառակորդներին (1863 թ.)²⁾:

«Բարձրագոյ մունչիւններն ու կսկծալից ճիչերը յանուն կրօնի
ու բարոյականութեան, ողբն ու հեծկլտանքը յանուն վտանգւած
հասարակական գոյութեան՝ շարունակում են հնչել: Ուղղափառ
եկեղեցիների ամբիոնները և կեղծ բարեպաշտութեան աղօթարան-
ները, ներքին առաքելութիւնների ատենաները և կոնսիստորիաների
նախագահական բազկաթոռները թնդում են, բարձրաձայն որո-
տում այն անյուր ատտէնտատների մասին, որ մատերիալիստներն
ու դարւինիստները ուղղում են մարդկային հասարակութեան հի-
մունքների դէմ: Կրօնաւորները յանդուգն ու լիրբ ճակատով ամ-
բիոն են բարձրանում ու քարոզում են՝ «եթէ մատերիալիստները
և դարւինիստները չեն սատարում ամեն տեսակ ոճրագործութիւն-
ներ, — դա միայն բղխում է նրանց կեղծաւորութիւնից և ոչ թէ
անկեղծ համոզմունքից»: Թո՛ղ որ իրարով անցնին ու զահալիժւին

¹⁾ Ասել է՝ կապիկները և մենք միևնույն նախնական տիպից ենք
առաջացել: Ֆոխտը եկել էր ալդ համոզմունքին ղեռ Դարւինից առաջ
(60-ական թւականների սկզբներում), համեմատելով մարդանման կապիկ-
ներին միկրոցէֆալ (մանրագլուխ) իդիօտների հետ, և ղեկավարելով ժա-
ռանգականութեան, ատաւիղմի ֆակտերով:

²⁾ S. C. Vogt. Vorlesungen über den Menschen.

Նրանք իրենց կոչը կատաղութեան մէջ: Նրանց համար անհրաժեշտ է պատժի երկիւղը կամ վարձատրութեան յոյսը մի ինչ որ հանգերձեալ, երազական կեանքում, որպէս զի մնան նրանք ուղիղ ճանապարհի վրայ. իսկ մեզ կը բաւէ միայն այն դիտակցութիւնը, որ մենք մարդ ենք մեր նմանների գիմաց, և որ ամենքի հաւասար իրաւունքները նշանաբանն է մեր բոլոր գործողութիւնների: Մի միայնակ յոյս ղեկավարում է մեզ՝ ճանաչել ու յարգել մեր նմաններից, և միմիայն մի երկիւղ՝ արատաւորել մեր մարդկային արժանաւորութիւնը:

Մինչև վերջին վայրկեանը չէր պարտում նա համալսարանական ամբիոնից կծու ծաղրական ֆրագներ արձակել թէօլոգների հասցէին. նրա գլխի մէջ երբեք չէր նստում, որ հնարաւոր լինի առողջ բանականութեան հետ որ և է կերպ հաշտեցնել կրօնի հաստատւիքները ¹⁾:

*
* *

Ո՞րն է մեր նախահայրը. ինչպէս է կազմւում մարդկային ցեղի տոհմածառը: Եթէ հարցը լայն ըմբռնենք, պէտք է իջնենք մինչև Հէկկելի մոնէքը, և հակասական ոչինչ չի լինի այդտեղ. այդպէս էլ անում է Հէկկելը: Նրա սահմանած տոհմածառի արմատը մոնէքն է, կատարը՝ մարդը, և երկու ծառք կէտերի մէջ անհամար ճիւղաւորութիւններ, որոնք ներկայացնում են զոլոգիական տեսակները: Բայց որոնք մեր ամենամերձաւոր նախահայրը: Նա ոչ Շիմպանզէ է, ոչ Փարիլլ, ոչ Օրանգ և ոչ Ժիրոն: Մեր իսկական նախահայրը չկայ, հանդած է: Մի օր, անտարակոյս, պալէօնտոլոգիան լոյս աշխարհ կը բերէ նրան:

Պարոն Դիւբուաի գիւտը, թերևս, հէնց նրա մի տեսակն է: Մեր նախահայրը ամենայն հաւանականութեամբ և՛ մարդ է եղել և՛ կապիկ: Նա ապրել է ենթադրաբար նորորդական էպոքի վերջերում, ունեցել է ուղղահայեաց դիրք, ձեռքերի ու ոտների աւելի մեծ դիֆֆերենցիացիա, քան թէ շիմպանզէն, գորիլլը և այլն:

¹⁾ Երեք տարի առաջ մեռաւ այդ անսովոր մարդը: Կալիֆոռնական Ժընէւը իր վերջին տարգանքներն իսկ մերժեց անշնչացած աթէիտի դիա-

Բայց նա դեռ խօսումն, յօղաւոր լեզու չի ունեցել, նա եղել է ան-
խօս մարդ (Homo Alalus): Այդ ենթադրութեան համար անվի-
ճելի ապացոյցներ են բերում համեմատական լեզագիտութիւնը և
երեխաների աստիճանական զարգացումը: Մարդը միշտ խօսումն լեզու
չի ունեցել, այդ վերջինն ևս կազմակերպւել է աստիճանաբար:
Այսօրւայ մի քանի վաչրենի ցեղերի խօսելու ընդունակութիւնը
անասնական դրութիւնից աչքան էլ հեռու չի դնացել: Բուշմէնները
մթութեան մէջ չեն կարողանում խօսել, արտայայտել իրենց մտ-
քերը, որովհետեւ նրանք խօսում են գլխաւորապէս ձեռքերի ու մա-
տերի շարժւածքներով: Վերջապէս, հէնց քաղաքակիրթ մարդկու-
թեան մէջ կան անխօս «մարդ-կենդանիներ»՝ երեխաները, խուլ-
համրները և միկրոցէֆալ իդիօտները: Ամենից հետաքրքրականն եւ-
մեր ծագումի անսակէտից միկրոցէֆալները (մանրադուխ): Նրանք
առաջանում են առողջ ու նորմալ ծնողներից: Գլուխը ամբողջ
մարմնի հետ համեմատած՝ չափազանց փոքրիկ, ուղեղի ծաւալը դեռ
աւելի պակաս, քան գորիլլայինը, օրանգինը: Նրանց դիրքը, դէմքի
արտայայտութիւնը բոլորովին կապկաջին են, ձեռքերը անհամաչափ
երկայն, ոտները կարճ ու թոյլ: Գլուխը—կապկի գլուխ, ճակատը
չրկայ, բերանը՝ ահագին, քիթը լայն բացւած—այդ ամենը զարմա-
նալի կերպով յիշեցնում է կապիկներին (ասում է Ֆոխտ), և զուր չեն
շատերը անւանում նրանց «կապկի զաւակ» կամ «մարդ-կենդանի»:
Միկրոցէֆալների հոգեկան կեանքը ևս կատարեալ անասնական է.
նրանք չեն խօսում, այլ կենդանիների նման միայն անկապ հնչիւն-
ներ են արձակում: Մի մի խօսքեր են սովորում, այն էլ ճիշտ թու-
թակի նման: Սեռական կեանք շատերը բնաւ չունին. սեռական մա-
սերը քնում են մանկական վիճակում: Խաղում են իդիօտները իրար
մէջ միայն, բայց ոչ ուրիշ՝ նորմալ երեխաների հետ, որոնց խաղը
չեն հասկանում: Նրանք անընդունակ են իրենց ձեռքերը ծառայե-
ցնելու: Նրանց հետ վարւում են, ինչպէս ընտանի կենդանիների հետ.
չիշողութիւնը թոյլ, գաղափար ասած բանի հետքը չըկայ: Ֆոխտը ¹⁾

կին: Տխուր, անազմուկ լուդարկաւորութիւնը և թաղման անշուք հան-
դէսը, որոնք ևրբեմն մի-մի արցունք էին խլում օտարերկրեալ ուսանող-
ների աչքի ից—պայծառ չօղայնում էին հանգուցեալի մէկուսացած, հա-

¹⁾ Vorlesungen über den Menschen.

պնդում է, որ միկրոցէֆալ իդիոտները որոշ տեսակէտից զեռ աւելի ստոր են կանգնած կենդանիներից: Նրանք (իդիոտները) զուրկ են ինքնօգնութիւնից, չեն կարող ինքնուրոյն կերպով, առանց ուրիշի օգնութեան, իրենց ապրուստը ճարել: Ֆոխար միկրոցէֆալների առաջին տաղանդաւոր ուսումնասիրողներից էր. նա հետազօտեց ու համեմատեց շիմպանզէի, միկրոցէֆալ իդիոտի և նեգրի դանգերը և դասաւորեց իդիոտներին մարդու և կապկի մէջ տեղը, հաստատելով, որ իդիոտները կապկային ատաւիգմի մի երեւոյթ են, որ նրանց տիպի մէջ ցոլանում է մեր նախահայր անխօս մարդը, կամ մարդկապիկը: Այստեղից եզրակացութիւն՝ որ մարդը և կապիկները մէկ (թէև աշխարհագրապէս մի քանի) ընդհանուր ծագում ունին. ֆոխարի այդ սրամիտ հիպոթէզը մեծ հաւանականութիւն է ստացել գիտութեան մէջ:

Քրքրենք այժմ գէօլոգիական արխիւը, կամ ուրիշ խօսքով՝ դիմենք նախապատմութեան, որը զբաղւում է մարդու ամենահին հետքերով: Մարդ միայն պատմութեան առարկայ չէ, այլ նաև գէօլոգիայի ու պալէօնոթոլոգիայի Ձինացիների ու հին եգիպտացիների պատմական աւանդութիւնները հասնում են մինչև 4 կամ 5.000 տարի Քրիստոսից առաջ. միջին եւրոպայինը հաշւում են առաջին դարից (Հռովմէական դադթականութիւն, կայսերական շըրջան): Յոյների գրաւոր աւանդութիւնները իջնում են մինչև ութերորդ դարը Ք. ա.: Բայց հինգ կամ վեց հազար տարիներով չէ չափւում մարդու գոյութիւնը երկրիս երեսին, այլ հազարաւոր նշանաւոր ֆակտը: Բրածոյ մարդու (homme fossile) գոյութիւնը, ինչպէս տեսանք, հերքում էին առաջներում, և գլխաւորապէս Կիււիէն ¹⁾: Չըկայ բրածոյ մարդ! բացականչում էր նա համոզւած,

լածական վիճակը... Es war ein Mann! ինչպէս գերմանացիք են արտաբայտում, ալո, նա մարդ էր. գիտնական և մարտնչող: Գաղափարները արդարի մարդկանցով են առաջ մղւում:

¹⁾ Հռչակաւոր ֆրանսիական բնագետ, ծնւ. 1769, † 1832. համեմատական անատոմիան բարձրացրեց գիտութեան աստիճանի վրայ: Վաստակներ ունեցաւ նաև գէօլոգիայի մէջ:

վճռական կերպով: Դրանով Կիւլինն աստուածաբանների ջրադացին էր ջուր ածում: Հէ որ Աստուածաշունչը հաստատում է, որ նախամարդ Ադամը ստեղծւել է միայն սրանից 5 կամ 6 հազար տարի առաջ, իսկ մինչև Ադամը՝ մարդկութիւն չի եղել: Սակայն, բարեբաղդաբար, զանազան կէտերում կատարւած պեղումները Կիւլիէից յետոյ երևան հանեցին դէօլոգիական վաղեմի շերտերում մարդկային կմախքի մնացորդները և պարզեցին, որ մարդկութեան սկզբնաւորութիւնը շատ հեռու ու խոր անցեալին է պատկանում, որ մարդը ապրել է զիլիւլիալ՝ պերիօդում, (չորրորդական շրջանի սկիզբը) մամմոտ կոչւած փղի, քարանձաւային արջի և հսկայ, արագաւազ եղջերուի հետ միասին:

Հնագէտները բաժանում են ընդհանրապէս նախապատմութիւնը երեք շրջանների՝ քարի, բրոնզի և երկաթի, համաձայն նախամարդու արտադրած գործիքների տեսակներին: Քարի շրջանը երկու պերիոդ ունի. 1) անտաշ քարի, և 2) տաշած քարի պերիոդ: Առաջին շրջանը աւելի հինն է, ուրեմն ամենանախնականը: Նա համապատասխանում է մարդկութեան երեսնայական հասակին: «Դիլիւլիալ» կամ ջրհեղեղեան շրջանը զուգադիպում է այդ (անտաշ քարի) պերիոդի հետ: Քաղաքակրթութիւնը իր սաղմի մէջ է այդ տեղ. նրա ամենափայլուն կրիտերիումը աշխատանքի գործիքներն են, որոնք տակաւին բիրտ են, անմշակ: Մարդկային զաղափարների էւոլիւցիան սերտ կերպով կապւած է այդ գործիքների հետ. քաղաքակրթութեան պատմութիւնը իրօք այդ վերջինների պատմութիւնն է: Արդիւնաբերութեան գործիքների մէջ է որ երևում է նաև սոցիալական էւոլիւցիայի ամենագլխաւոր ազդակը:

Դիլիւլիումից կամ ջրհեղեղեան շրջանից իբրև կտակ՝ մնացել են մեզ ահագին քարանձաւներ, ուր նախամարդը ապաստան է գտել մասամբ փառ եղանակներից, մասամբ գիշափիչ զաղանների չարձակումներից: Հազարաւոր այգւլիսի քարանձաւներ գտնւած են Նգիլ-տոսում, Յունաստանում, Իտալիայում, Շւէյցարիայում, Ֆրանսիայում, Բէլցիայում, նաև Անգլիայում: Այդ քարանձաւների պատմական մեծ նշանակութիւնը կայանում է նրանում, որ այնտեղ գտնւում են մարդկային ոսկորներ՝ զանազան կաթնասուն կենդանիների մնացորդների հետ միասին. առատութեամբ գտնւում են և քարէ ու ոսկրեայ

գործիքներ, կայծակնաքարից շինած զէնքեր և այլն: Յիշենք մի քանի գիւտեր:

1853 թ. Բէլգիացի բնագէտ Շմերլինգ, հետազոտելով Լիւտտիխի մօտ (Բելգիայում) գտնուող այրերը, գտաւ նրանց մէջ երկու մարդկային գանգ, բազմաթիւ կայծակնաքարեայ գործիքներ արջերի ու բորենիների կմախքների հետ: 1864—74 Ֆրանսիայում յայտնի մարդաբան Լարոէ հետազոտեց Պերիգոր զաւառի այրերը, գտաւ զէնքեր և ուրիշ գործիքներ անտաշ քարից. հողի մէջ՝ եղջերուի կմախքի մնացորդներ, կայծակնաքարեայ դանակներ, չաքուճներ, սղոցներ, ոսկրից շինած ասեղներ, նետեր և այլն: Նման քուրանձաւներ հետազոտեցան Անգլիայում: Մի այլ գտնուեց Վէզէր գետի ափին (Գերմանիայում) 1868 թ., ուր հինգ մարդկային կմախք փորեցին, գլուխները երկայն, բարձր, ուղիղ ճակատով: Մարդաբանները տալիս են նրանց երկայնագլուխ անունը (dolichocephale): Մի ուրիշ քարայր գտնուեց նոյն ժամանակները Բէլգիայում, ուր երեւացին կարճագլուխ (brachicephale) մարդկանց կմախքներ բազմատեսակ կենդանական մնացորդների հետ:

Երկու մարդկային ուսաները ուրեմն (երկայնագլուխ և կարճագլուխ) բնակել են «դիլիվիալ» էպոխայի միջոցին միջին Նւրոպայում, պարսպել են, հաւանօրէն, որսորդութեամբ, վարել են մի ողորմելի կեանք. ապացոյց՝ նրանց բիրտ գործիքները: Կարճագլուխ ուսան համապատասխանում է այժմեան Ֆիններին, երկայնագլուխը — էսկիմոսներին ¹⁾:

Ուրեմն, մարդկութեան սկզբնական հետքերը Նւրոպայում պատկանում են Վիլիւվիումին, կամ ջրհեղեղեան պերիօդին: («Ջրհեղեղեան» անունը, որ մնացել է նախկին գէօլոգներից, զուտ պայմանական է. «նոյեան ջրհեղեղի» խնդիր չըկայ այստեղ): Վիլիւվիում... դա զարհուրելի սառնամանիքների էպոխան է Նւրոպայում: Յայրագոյն հիւսիսի կենդանիներն ու բոյսերը հասնում էին այն ժամանակ մինչև միջին Նւրոպա, իսկ դա ապացոյց է, որ կլիման շատ ցուրտ է եղել այնտեղ: Սկանդինաւեան և Շոտլանդեան լեռներից մինչև Կարպատներն ու Սլովեան զագաթները տարածւում

¹⁾ A Kirchhof Unser Wissen von der Erde.

էր հիւսիսային սառնամանիքը: Զիւնը սառչում էր վիթխարի զանգւածներով, որոնք հանդարտ լողում էին անեղր տարածութեան մէջ հիւսիսային բարձրութիւններից միշտ զէպի հարաւ. Եւրոպան ներկայացնում էր հսկայական սառցակոյտերի մի անօրինակ տեսարան: Անտարակոյս, չտեսնւած մի կառաստրոֆ էր տեղի ունեցել: Բայց Կիւիէպէս բացատրութիւն չտանք. այդ կառաստրոֆը պատճառուել է անշուշտ երկար դարերի ընթացքում և բնական պատճառներով: Դրանցից մէկը կարող է լինել ցամաքի ու ծովի պայմանների փոփոխութիւնը, զեմնի բարձրացումը կամ իջնելը, որոնց շնորհիւ փոփոխել են յարաբերութիւնները ծովի ու ցամաքի միջև. և այդ երևոյթը կարող է մեծապէս ազդած լինել ցրտի ու ջերմութեան աշխարհագրական բաշխման վրայ: Ուրիշ պատճառ ևս կարող է լինել: Այրօրւայ Եւրոպայի կլիման համեմատաբար շատ բարեխառն է, և այդ այն պատճառով, որ Սոլանտեան Ռվիանոսից փչում է զէպի եւրոպական հիւսիսարեւմտեան կողմերը Գոլֆստրէմ ջերմաշունչ հոսանքը, իսկ միւս կողմից Սիրոկկո աւրող քամին է փչում Սահարայի արեւակէզ անապատից, և տարածւում զէպի հարաւային ու միջին Եւրոպա: Ապա ուրեմն, եթէ այդ երկու վերը չիշած հոսանքները փոխէին իրենց ուղղութիւնը— դա կարող էր անաղին փոփոխութիւն առաջացնել եւրոպական կլիմայի մէջ: Այդպէս էլ եղել է հաւանօրէն ¹⁾: Հաւանական է ենթադրել, որ Սահարայի մի մասը ծածկւած է եղել ծովի տակ և որ Գոլֆստրէմը ջրհեղեղեան պերիոդում իր ջերմութիւնը չէր տարածում եւրոպական եղբայրների վրայ: Դիլիվիումի (որ կոչւում է նոյնպէս սառցային էպոխա) միջոցին հանգած կաթնասուն կենդանիներից դանւում են ներկայումս մամմութ (հոյսփիղ), քարանձաւային վաղր, արջ ու բորենի, ռնգեղջիւր, և այլն, որոնք յատուկ են միայն ցուրտ, սառցային կլիմայի: Մամմութի հսկայական մարմինը ամբողջապէս գտնւած է Սիբիրիայի տունդրաներում. նա զիլիվեան ժամանակների ծնունդ է. ապացոյց՝ այն թանձր մորթին, որ նա հագել է տիրող սառնամանիքներին յարմարելու համար: Մամմութի մի օրինակը պահւում է այսօր Պետեր-

¹⁾ Rolle. Der Mensch.

բուրգի թանգարանում: Վեց մեար բարձրութիւն ունի այդ տարօրինակ փիղը:

Կատաստրոֆը, որքան էլ երկարատե, այնուամենայնիւ ժամանակաւոր էր: Գէօլոգիական փոփոխումները նորից վերջ գրիին Եւրոպայի սառնամանիքներին (այդ բոլորը դարձեալ կատարեց հազարաւոր տարիների ընթացքում): Գերմանիան, հիւսիսային ու արեւմտեան Ռուսաստանը և Լեհաստանը ազատեցին իրենց կաշկանդող սառցակոյտերի ծովից: Եւրոպան նորից դարձաւ մեղմ ու հիւրընկալ, որի համեմատ փոխեցին և նրա Ֆլորան ու Ֆաունան: Սկսեց մեծ գաղթականութիւնը: Հիւսիսային, ցուրտ կլիմայի սովոր կենդանիներն ու բոյսերը, որոնք զիլիւվիալ էպոխայի միջոցին իջել էին դէպի հարաւ, այժմ, երբ արդէն անցել են ցրտերը, նորից քաշոււմ են հեռոջսեռէ դէպի իրենց նախնին բնական վայրերը, դէպի հիւսիս, և կամ ապաւինում են բարձր լեռների կատարները: Այդ է պատճառը, որ Ալպեան և Սկանդինաւեան կենդանիների ու բոյսերի մէջ մեծ նմանութիւն է նկատոււմ: Ալպեան նապաստակը տեսնում ենք այսօր Սկանդինաւիայում, Սիբիրում և Շոտլանդեան լեռներում: Միևնոյն ժամանակները կենդանիների ու բոյսերի մի այլ գաղթականութիւն սկսւում է հարաւից ու արեւելքից դէպի միջին Եւրոպա:

Մարդիկ ևս անտարակոյս մասնակցել են այդ ընդհանուր գաղթականութեան: Մարդը ականատես է եղել Գիլիւվիումի հեղեղներին, կենակցել է արադաւազ եղջերուի հետ, փախել, պառսպարւել է մամոնթի ու բորենիների հալածանքներից: Կլիմայական փոփոխութիւնները մարդկանց ևս մղել են դէպի Սկանդինաւիայի լեռները և Մեծ Բրիտանիայի կղզիները, որոնք այդ ժամանակ կղզի չեն եղել, այլ անբաժան շարունակութիւն եւրոպական ցամաքի: Մարդու առաջին մուտքը Եւրոպայի մէջ՝ դժւար է որոշել: Յամենայն դէպս առաջին գաղթականները եղել են մամոնթի, անդեղջիւրի և այլոց ժամանակակիցներ, ունեցել են քարէ ու ոսկրեայ կոպիտ, պարզ զործիքներ և զուրկ են եղել տակաւին ընտանի կենդանիներից: Նրանց յաջորդել են ուրիշ գաղթականներ որսորդական ցեղերից, որոնք ունեցել են աւելի մշակած զործիքներ և քաւականաչափ հարուստ անտեսութիւն: Հետեւել է երրորդ գաղ-

Թախանութիւնը դէպի Նւրոպա խաշնարած ցեղերից, ոչխարների, աչձերի, խոզերի հոտերով, բայց դեռ քարէ ու ոսկրեայ գործիքներով, թէպէտ անհամեմատ աւելի մշակւած: Վերջապէս ներս են խուժել աւելի քաղաքակրթւած ցեղեր, որոնք բերել են իրենց հետ մետաղները՝ բրոնզի ու երկաթի գործածութիւնը: Այս դասողութիւնները հիմնւած են պալէօնոլոգիական, հնագիտական փաստերի վրայ: Դիլիվեալ հպոխայի քարանձաւները միակ նախապատմական զոկոմենտները չեն: Տաշած քարի կամ Նէօլիտական պերիօդից անթիւ արձաններ են մնացել, որոնք Թանկագին ու անսպառ. պաշար են մատակարարում նախամարդու կեանքը ուսումնասիրողին: Նախ յիշենք Դոլմեն կոչւած արձանները: Ստորերկրեայ գերեզմանոցներ են դրանք, մէկ կամ մի քանի սենեակից բաղկացած. նրանց պատերը կազմւած են ահագին քանէ մասսաներից, յաճախ այդ ստորերկրեայ շինութիւնների վրայ տեսնուում են կառուցած ահագին հողի բլուրներ. այդ ձևով զոկմենտները կոչւում են Տումուլի: Դրանք նոյն կուրգաններն են, որ տարածւում են հարաւային Ռուսիայից դէպի Կովկասը և Ասիայի խորքերը: Պատկերում են զոկմենտների ու Տումուլիների մէջ բաւական մշակւած կացիւններ, նեո ու աղեղներ, սրեր և այլն,—այդ ամենը խառն մարդկային ոսկորների հետ: Յայտնի չէ, Տումուլիների հեղինակները ինչ առաջի են պատկանել. առաջներում նրանց վերագրում էին Կելտերին: Հնագէտներից ոմանք ընդունում են, որ այդ ստորերկրեայ նկուղները բնակարան են ծառայել նախապատմական մարդուն: Ամեն տեղ նման են զոկմենտները: Շատերի մէջ, որոնք աւելի ուշ քաղաքակրթութեան ծնունդ են, գտնում են բրոնզից, երկաթից, և նոյն իսկ ոսկուց իրեղեններ: Մարդիկ հաւանօրէն պարապել են որսորդութեամբ. ընտանի կենդանիների հետքը դեռ չկայ:

Դոկմենտներից ու Տումուլիներից յետոյ յիշենք դանիական Կլոկկէն-Մոօդինգները (Kjokken-mödding, խոհանոցի մնացորդ-

¹⁾ Ապա նոյնանման շինութիւններ գտնւեցան չափ ուրիշ տեղեր՝ Շէկցարիալում և Շէկցարիալից դուրս:

²⁾ Նրանք պարապել են, բայց որսորդութիւնից, խաշնարածութեամբ և երկրագործութեամբ:

ներ): Նախապատմական ժողովուրդների խոհանոցային թափթփուկներն են զրանք, որոնք ամբողջ բլրակներ են կազմել ծովի եզերքին: Ձկների, խեցգետինների կմախքներ, ջրային ու ցամաքային կենդանիների՝ արջի, գայլի, եղջերուի, ծովահորթի և պէս պէս թռչունների մնացորդներ: Միակ ընտանեցրած անասունը շունն է: Անհամար գործիքներ ոսկրից ու եղջիւրից, կաւէ կոպիտ անօթներ և այլն և այլն:

Խրոնոլոգիական կարգով՝ տաշած քարի շրջանից երրորդ նշանաւոր յիշատակարաններն են լճային շինութիւնները (Constructions lacustres), որոնք աւելի բարձր կուլտուրայի արդիւնք են: Առաջին անգամ նրանց զիւտը արեց Ֆերդինանդ Կելլէր Յիւրիսի լճի ափին ¹⁾ (1853 թ.): Սեւ, թանձր հողային շերտի մէջ բաց արեց նա օրգանական մնացորդներ՝ մեծ-մեծ զերաններ, հողից ամաններ, մարդկային ատամներ ու զանգեր բազմաթիւ ընտանի կենդանիների կմախքների հետ. եգ, ոչխար, խոզ, այծ, ձի, շուն և այլն: Պտուղներից՝ անտառի խնձոր, տանձ, մորի. դործիքներ ու զէնքեր՝ ոսկորից, քարից, բրոնզից, երկաթից:

Ինչպէս տեսնում ենք, լճային բնակիչները ապրել են նաև մետաղեայ պերիօդում ²⁾: Ընդհանրապէս՝ խիստ բաժանում դժւար է զնել նախամետաղեայ պերիօդների մէջ: Ինչպէս և որտեղ է առաջին անգամ մետաղը գործածւել—յայտնի չէ: Ենթադրում են, որ մետաղների գործածութիւնը բերել են իրենց հետ Սրիական ցեղերը՝ Կելտերը, գերմանացիք, սլաւոնները—դեռ ևս հռովմէական աշխարհակալութիւնից առաջ:

Այո, նախապատմական խրոնոլոգիան շատ մութ է: Մի բան միայն պարզ է. այն՝ որ հազարաւոր և տասնեակ հազարաւոր ձիգ տարիներ են անցել, մինչև որ նախապատմական մարդկութիւնը դոյութեան արհաւրալից կռւի մէջ իր անասնական վիճակից աստիճանաբար բարձրանալով, հասել է մինչև եգիպտական և ասորական քուլտուրայի աստիճանը, իսկ այդ աստիճանը տակուին արշալոյսն է եւրոպական քաղաքակրթութեան: Այդտեղ նախապատմութիւնը վերջանում է և սկսում է պատմութիւնը. այդտեղ անսոս արձաններին աւելանում են և գրաւոր դոկումէնտները:

Սակայն չշտապենք: Մենք խօսեցինք մարդկային տարբեր ուս-

ասների գաղթականութեան մասին դէպի Եւրոպա, բայց չյիշեցինք՝ ճրտեղից էր գալիս թափառական ցեղերի այդ հոսանքը: Ո՞րն է արդեօք մարդկային սեռի նախնական հայրենիքը, որտեղ է մարդկութեան և քաղաքակրթութեան մեծահռչակ որրանը: Այդ հարցը մի ուրիշ հետաքրքիր հարց է ծագեցնում, արդեօք մէկ որրան է ունեցել մարդկութիւնը, թէ գուցէ նա ծնունդ է առել երկրագնդիս զանազան կէտերում: Իսկ դա առաջնորդում է մեզ դէպի ռասաների հարցը: Երկու թէօրիաներ վաղուց հակառակութեան մէջ են: Միաժնական կամ մոնոգենիստական թէօրիայի համաձայն՝ բովանդակ մարդկութիւնը մէկ ծագում ունի ¹⁾, մէկ ստեղծագործութեան ²⁾ կենտրոն, մէկ հայրենիք, իսկ ռասաները միայն էությունների տարբեր աստիճաններն են: Բազմաժնական կամ պոլիգենիստական թէօրիան ընդհակառակը պնդում է, որ ռասաները ունին բազմաբնուծ ծագում, որ նրանք անկախ են իրարից և հենց ի սկզբանէ եղել են անկախ ու տարբեր: Այդ թէօրիայի համեմատ մարդկութիւնը ունեցել է մի քանի ծննդավայրեր: Երկու կողմն էլ ունին իրենց արդարացուցիչ պատճառները. անտրոպոլոգիան դեռ բաւականաչափ լոյս չի սփռել այդ հարցի վրայ: Հէկկեկը և շատերը նրա հետ ընդունում են մի ենթադրական ցամաք «Լեմուրիա» անունով, որը երբեմն կապել է Մադագասկար կղզին Յէյլոնի ու Սումատրա ստիական կղզիների հետ, և որը՝ ըստ Հէկկեկի՝ եղել է նախամարդու առաջին ծննդավայրը: «Լեմուրիա» ցամաքի հիպոթէզը պատկանում է անգլիացի բնագէտ Սկլատերին, որը դրանով ուղղում է բոցատրեյ կէս-կապիկների (Lemuriden) նմանութիւնը Մադասկարի և Հնդկական կղզիների վրայ: Ենթադրական «Լեմուրիան» վաղուց անհետացել է, անջատելով իրարից աֆրիկական և ասիական կէս-կապիկներին: Այդ ցամաքի յարմար աշխարհագրական դիրքով են բացատրում մարդկային բազմազան ռասաների

¹⁾ Մէկ ծագում ասելով՝ միաժնականները չեն ընդունում, որ իբր մարդկութիւնը առաջացել է մէկ պոպից: Այդպէս անում են թէօլոգները և ֆատրիստը:

²⁾ «Ստեղծագործութիւն» բառը չպէտք է հասկանալ թէօլոգիական իմաստով:

գաղթը ու տարածւելը Ասիայում, Աֆրիկայում և Աւստրալիայում։ Սակայն այդ ենթադրութիւնը այսօր խիստ կասկածելի է։

Մոնոգենիստների ասելով՝ տարբեր ռասաները առաջացել են միևնոյն սկզբնական ժարդ-կապկային տիպարից, բայց երկար դարերի ընթացքում տարբեր կլիմաների, արիւնացին խառնուրդի և ուրիշ պայմանների շնորհիւ փոքր առ փոքր տարբերւել են սկզբնական տիպարից։ Այդպէս օրինակ զիտնական Քատրիֆաթի կարծիքով (վերջինս մոնոգենիստ լինելով, պնդում է նաև, որ ամբողջ մարդկութիւնը միմիայն մի զոյգից է առաջացել), ամերիկական և անգլոսաքսոնեան ռասաների խառնուրդից 2—3 դարի միջոցում գոյացել է այսօր մի նոր, սպիտակ ռասա՝ Նանկինները։

Ֆոխտը խստիւ առարկում է դրա դէմ։ «Միջավայրի, կլիմայի և այլն փոփոխումները և արիւնի խառնուրդը շատ քիչ ազդեցութիւն ունին ռասաների գոյացման վրայ. կան խոր արմատական տարբերութիւններ հէնց ի սկզբանէ։ Ինչու էլնդունել—շարունակում է Ֆոխտը, որ Ամերիկայի կապիկներից ամերիկական ռասաներն են առաջացել, տֆրիկական կապիկներից—նեղրները, ասիականներից—թերևս նեգրիստոսները»¹⁾։ Ֆոխտը, ինչպէս տեսնում ենք, ջերմ պոլիգենիստ է. նրա համար ռասաների առանձնացուցիկութիւնները սկզբնական են, մշտապես ու անջնջելի։ Ականջ դնենք Դարւինին։

«Իժևար է ենթադրել—ասում է նա—որ մարդկային ռասաները հէնց սկզբից զատ ու տարբեր եղած լինեն։ Այնքան մտաւոր ու հոգեկան նմանութիւններ կան բազմատեսակ ռասաների մէջ (դեռ մի կողմը թողած ընդհանուր տիպարի նոյնութիւնը). միևնոյն գործիքները, սովորութիւնները, միևնոյն զգացմունքները, մտաւոր կարողութիւնները... Անհաւանական է, որ այդքան նման յատկութիւններ տարբեր ռասաների մէջ ձեռք բերած լինին անկախ, ինքնուրոյն կերպով, այլ հաւանօրէն նրանք (այդ ընդհանուր յատկութիւնները) առաջացել են ժառանգականօրէն ռասաների ընդհանուր պատկերից»²⁾։ Սեռական ընտրութիւնը Դարւինի կարծիքով մեծ դեր է խաղում

¹⁾ Vogt, Vorlesungen...

²⁾ Darwin, Descendence.

ռասաների գոյացման մէջ: Ինչպէս անասնական, նոյնպէս և մարդկային աշխարհում կայ սեռական ընտրութիւն, որը բնական ընտրութեան մի տեսակն է ¹⁾: Մարդկային ռասաների տարբեր գոյնը, մազերը, դէմքի գծագրութիւնը, հասակը, ֆիզիկական ոյժը զօրեղ ձայնը և այլն և այլն—այդ ամենը վաստակել են տղամարդիկ, կանանց տիրանալու համար մղած կռիւ մէջ:

*
* *

Եզրակացնենք: Զօոլոգիական էւոլիւցիան վերջացաւ: Մոնէրի ծագումով սկիզբ առաւ նա, մարդու ծագումով աւարտեց իր վիթխարի շրջանը: Աւարտեց. Վենք այդ չենք կարող ասել: Ինչպէս որ տիեզերական անթիւ արեգակներն ու մոլորակները ծնւում, զարգանում ու մեռնում են անսահման յաւիտենականութեան մէջ, տեղի տալով միշտ նոր-նոր մարմինների ծագման ու զարգացման, — այնպէս և երկրագնդիս շնչաւոր արարածները, մարդն ու մարդկութիւնը ևս նրանց մէջ ծնւում, ապրում են, մշտապէս յառաջադիմելով ու փոփոխւելով, և պէտք է վաղ թէ ուշ անպայման անհնոտանան, տեղի տալով շնչաւոր էակների նոր ու տարբեր աշխարհ երին: Ամեն բան չքանում է, և միմիայն էւոլիւցիան է, որ ոչ-սկիզբ ունի, ոչ վախճան: Մարդը ստեղծագործութեան վերջին խօսքը չէ:

¹⁾ Այն բոլոր կենդանիների մօտ, ուր ործերը մաքառում են իրար գէմ էգերին տիրանալու համար, աւելի ուժեղները (այսինքն՝ ուժեղ զէնք ունեցողները) չաղթանակելով՝ իրանք են սիրում ու բազմացնում «տեսակը»: Կռիւ մէջ նրանք (ործերը) ձեռք են բերում նոր, սեռական առանձնաւատկութիւններ, նոր զէնքեր, որոնք ժառանգւում ու ամրապնդւում են որձ սերունդների մէջ, քանի որ ընդհանրապէս գոյութեան կռիւ մէջ (ուրիշ անհատների կամ տեսակների գէմ) ործերն են պաշտպանողները: Սեռական ընտրութեան շնորհիւ է, որ շատ կենդանական տեսակների մէջ ործերը անհամեմատ աւելի չաղթանալով ու վաղելլալով են և օժտւած են աշխարհի գէնքերով ու զարդերով, ինչպէս օրինակ՝ եղջիւրները եղնիկի մօտ, բաշը՝ առիւծի, խթանաւոր ոտքը աքաղաղի մօտ և այլն: Թռչունների աշխարհում ևս ործերը ձգտում են գրաւել էգերին փառահեղ փետուրներով, երգեցողութեամբ և այլն:

ԶԻՆՒՈՐԻ ԵՐԳԸ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Ընկեր, մենք շատ երազեցինք,
եւ մեր ուղին կիսատ մնաց,
Մեր օրերը զուր վառնեցինք,
եւ խաւարը պատեց յանկարծ:

Յիշում ես այն ժամը ոսկի,
երբ խոստացանք ընկնել կուռում.
Բռնւած էինք անվերջ խօսքի,
երբ շողում էր յոյսը հեռում:

Բայց մեր խօսքը երկար տևեց.
երբ զուրս ելանք, ուշ էր արդէն—
Փոթորիկը մեզ հետևեց,
Հարւածեց մեզ, թողեց անզէն:

Արկին եղանք մենք ցիրուցան,
Բո ոտքերին շղթայ դրին,
Ինձնից վերջին ուժերն առան,
Միւսի հոգին զբոխը դարձրին:

Ինչո՞ւ այնքան երազեցինք,
Որ մեր ուղին կիսատ մնար.

Ընկեր, ինչո՞ւ միշտ խօսեցինք,
Որ մեր շուրջը պատէր խաւար:

Սակայն մի օր եթէ շողայ
Մեզ առաջնորդ յոյսը կրկին,
Կեանքն էլ մեզ հետ խաղ չը խաղայ,
Շղթաներըդ երբ փշրուին,

Երբ նորից-նոր ոյժ ըստանանք,
Մեր եղբօրն էլ վերականգնենք,
Այլ ևս գլուխ զլիսի չը տանք,
Եւ զուր խօսքով չը բըռնուենք:

Ահա ճամբան մեր առաջին,
Պիտի զընանք թըշնամու դէմ.
Թող ոխերիմ մեր թըշնամին
Տեսնէ, որ մենք դարձանք խոհեմ:

Թող իր մահով նա գին դառնայ
Մեր զուր թափած արցունքներին,
Թող, թող շիրիմն իր գլտնէ նա
Մեր արիւնոտ դաշտի միջին:

ՀԻՒՄԻՍԱՓԱՅԼ ԵՒ Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

(Դրականական-քննական էտիլո)

ՅՈՎ. Ն. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ

Յիսնական թւականները կազմում են մի նշանաւոր դարագլուխ մեր ազգային յառաջադիմութեան պատմութեան մէջ: Այդ չիշատակելի ժամանակի մտաւոր և բարոյական ժառանգութիւնն է, որ մինչև օրս շարունակում է յուզել հասարակական միտքը: Այսօր մենք վերջ ենք իրերի այն դրութեան, երբ ամեն մի մտածող անհատ պարտք է համարում պատկանել այս կամ այն կուսակցութեան, երբ իւրաքանչիւրը մեզանից շտապում է դաւանել մի բան, ունենալ մի որոշ գոյն և կերպարանք:

Դրականութեան և հրապարակախօսութեան մէջ մենք տեսնում ենք ձգտումների և իդէալների իրարանցում, աշխարհայեացքների կռիւ: Հինը և նորը շարունակում են իրանց պատերազմը, չեն վերջացրել իրանց հաշիւները: Աստուծային կայծը, որ վառ էին պահում իրանց սրտերում Ս. Նազարեանը, Մ. Նալբանդեանը և Ռ. Պատկանեանը, վառում է և մեր օրերում շատ մշտքեր ու սրտեր և առաջացնում է մեր մէջ առաջադիմելու սուրբ պահանջը, մտածողութեան և կեանքի նոր հիմքեր որոնելու ճիշտումը: Ըմբոստ գաղափարը յանձինս այդ գործիչների դուրս էր եկել կռիւ դաշտը և անխնայ հարւածում էր հասարակութեան անշարժութիւնը և աւանդամոլութիւնը, նրա փոփոխութիւնը և պական տարտիւփութիւնը: Նոքա սկսել էին իրանց ծանր գործը համարձակ, հաւատով և յուսով, որ իրանց հոգեբուզիւ խօսքը չի

չինի ձայն բարբառոյ յանապատին: Գարուս ոգին ներշնչել էր նրանց մէջ այնպիսի եռանդ և տոկունութիւն, որ ոչ մի արգելք, նոյն իսկ ասիական խաւարի հրէշաւոր բնութիւնը, չէին կարող շփոթել նրանց վստահութիւնը: Վառւած քաղաքացիական եռանդով՝ նոքա որոնում էին իրանց անձնական բազմը ազգային շահերին ծառայելու մէջ, լոյս և զիտութիւն տարածելում շրջապատողների մէջ: Այո, նոքա հասկանում էին կեանքի խորհուրդը, հասկանում էին, որ ամեն ինչ անցաւոր է և ժամանակաւոր, մնացուն է միայն և յաւիտենական այն ոյժը, որ ձգտել է տալիս անհատներին և ազգերին դէպի լոյս, մոքի ազատութիւն և կատարելագործութիւն՝ մի ճշմարտութիւն, որ դուրս էին բերել գիտութեան տաճարից-համալսարանից և իրանց աչքի առաջ կատարւող պատմական իրողութիւններից: Այս անյողգող գիտակցութիւնը և վեհ տրամադրութիւնը ստանում էր իր սնունդը Եւրոպայից և Ռուսաստանից, որտեղ սկսւել էր մշտաբերի կատարեալ յեղափոխութիւն:

Սրեմուտքի հասարակութիւնը այլ ևս չէր ուզում տանել իր վարիչների բռնակալութիւնները. դարաւոր փորձանքները սովորացրել էին նրան ճանաչել իրան վայել դիրքը և իրաւունքները. նա փշրում էր իր իշխանաւորների կոփած շղթաները և բարձրաձայն պահանջում էր խղճի ու մտքի ազատութիւն. նա օդ էր պահանջում, ազատ շնչելու օդ, և վառւելով դժոխային բարկութեան կրակով՝ բողոքում էր բռնաւորների դէմ, բողոքում էր ստորացին եռանդով տիրապետող չարիքների դէմ: Հնչում էր մոլեգին կոծը վշտահարների. և լուսաւորւած քաղաքացին՝ և խաւար ամբոխը մի ձայն-մի հողի պաշտպանութեամբ՝ էին իրանց ոտնակոխած մարդկային պատիւը համապատասխան զէնքերով՝ հրապարակական խօսքով և սուր ու հրացանով: Ֆրանսիացին հասել էր իր փափագին, վերականգնել էր իր պատիւը 48 թւականի յեղափոխութեան պնով:

Զարթել էր և Խաղաղին, որ տառապում էր անկոչ հիւրերի՝ աւստրիացիների հովանաւորութեան տակ, և վրէժ էր պահանջում: Գարիբալդին, այդ մարմնացած ազգային բողոքը, իր ճնշւած հայրենիքի այդ առաքինի ոգին, մի վսեմ պատկեր էր ներկայացնում ամբողջ աշխարհի առաջ և հրաւիրում էր կաշկանդած մոքերը դէպի ազատ կեանք. նա կենդանի յանդիմանութիւն էր այն ազգե-

րին, որոնք գլխակոր հաշուում էին իրանց ստրկութեան հետ։
 Սթափւում է և Ռուսաստանը, մանաւանդ Սեւաստոպոլեան
 արիւնահեղ պատերազմից յետոյ, որ մի ուժգին հարւած էր ազ-
 գային ինքնասիրութեան համար։ Այդ ծանր փորձանքը զարթեց-
 նում է ուս հասարակական միտքը։ Ահեղ պատերազմի ողբերգական
 ելքը կենդանի ապացուցիլ էր, որ ազգերի փառքն ու մեծութիւնը
 նրանց մտաւոր և բարոյական ոյժի մէջ է, որ ձեռք է բերւում այն
 դէպքում, երբ ազատ են մարդկային միտքն ու խիղճը, երբ բռնաբար-
 ւած չեն քաղաքացիների կամքն ու իրաւունքները։ Սկսել էին ճանաչել
 ժողովրդի գոյութիւնը իբրև բանաւոր հաւաքական ոյժի, աստարեզ
 էր հկել հասարակական կարծիքը։ Հասարակութիւնը ստանում է
 որոշ քաղաքացիական իրաւունքներ՝ հոգալ և ղեկավարել իր պէտ-
 քերն ու կարիքները։ Կենդանացել էր և ուս գրականութիւնը, որ
 պահում էր հասարակական միտքը մի ինչ որ տենդային գրութեան
 մէջ։ Հասարակական եղանակը դարձել էր ղեկարւեստի էական պա-
 հանջ։ Կեանքը իր բազմազան ելեէջներով, իր հարց ու պատաս-
 խաններով պատւաւոր տեղ էր բռնել գեղարւեստի, հրապարակա-
 խօսութեան և քննադատութեան մէջ։ Գրականութիւնը ղիջիլ էր
 իր անմատչելի բարձունքից և ներազւում էր երկրի ցաւերով և
 ուրախութիւններով, նա կապել էր երկրի հետ անխզելի կերպով և
 ճնշւածների պաշտպան էր հանդիսանում։

Գրականութիւնը խայթում է հասարակական խիղճը՝ մատնա-
 ցոյց անելով գիւղացու ստրկական, շարքաշ գրութեան վրայ։ Ռուս
 գիւղացին դառնում է օրւայ հերոս. նա դասւում է մարդկանց
 շարքը և հասարակութեան անդամ ճանաչւում։ Խանդարւում է
 ուս ազնւականութեան քաղցր անդորրութիւնը, ազնւականու-
 թեան, որ մինչև այդ պարում էր ժամանակից և տարածութիւ-
 նից դուրս, չէր մտածում իր պարտքի մասին դէպի այն մշակները,
 որոնց քրտինքով էր ձեռք բերւում իր կենսական վայելքները։ Ար-
 դարութեան և բարոյականութեան խրոխտ ձայնը հրաւէր էր կար-
 դում հասարակութեան բոլոր տարրերին և իրաւունքների ու
 պարտականութիւնների ներդաշնակութիւն քարոզում։ Ճորտերի
 ազատութեան խնդիրը հերթական էր դարձել։ Գրականութիւնը
 իր ընդարձակ ծաւալով ներշնչւել էր ամենալսեմ գաղափարներով

և հանդիսանում էր պահապան-հրեշտակ զրկածների, դատաւոր բռնակալների. նա մաքրում էր գովելի եռանդով վարակած օդը միազմներից, մտրակում էր հասարակութեան բարքն ու վարքը և հրաւիրում նրան դէպի նոր կեանք:

Ընդմիջել էր ազգերի երկարատե, վտանգաւոր լուռութիւնը. երևացող խաղաղութիւնը անսպասելի փոխարինւում էր մրրիկի, և հասարակութիւնները հրաբուդի ուժով պայթեցնում էին հին կարգերը և հասկացողութիւնները: Լուծը և շղթաները փշրւել էին կամ փշրւում: Նիւթական ոյժի հրապոյրները թուլացել էին, բռնակալութիւնը վերացւում էր, և ժամանակէ, այդ հրաշագործ դատաւորը մարդկային գործողութիւնների, պահանջում էր վերածնութիւն, մտքի ու խղճի կապանքների խորտակում:

Այսպիսի պատկեր էին ներկայացնում Եւրոպան և Ռուսաստանը, երբ կերպարանաւորւում էր մեր ինտելիգենցիայի առաջին սերունդը և որոշւում էր նրա աշխարհայեացքը: Հրապուրիչ էր այս տեսարանը հայ մտածողների համար. նա չէր կարող չ'ազդել մեր ինտելիգենցիայի վրայ, չ'առաջացնել նրա մէջ հոգեւոր ու մտաւոր շարժեր: Ականատես լինելով կատարւող իրողութիւնների, առաջնորդ ունենալով ազգերի պատմութիւնը և զրականութիւնը, ազգերի, որոնք յառաջադիմում են և ընդհանուր մարդկային գանձարանի մէջ դնում իրանց քաղաքակրթական լուման, հայ ինտելիգենցիան ներազդւում է նոյնպէս ժամանակի ոգով, մտածում է իր հայրենիքի բարօրութեան մասին:

Հայ գիտնականը քաղաքացիական պարտք է համարում իջնե գիտութեան բարձրութիւնից, խօսել իր վշտաբեկ «մօր խօսքը», իրլ մայրենի լեզուով:

«Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգու համար՝
Առաջին դու խօսք, ականջիս հասած,
Դու, սիրոյ քաղցրիկ առաջին յօդած
Մանկական լեզւիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ, անդադար:
.
.
.
Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան,

Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փոշուց
Բզզեցիր նոր կեանք սուրբ գրեթեներով
Որ ամենայն սիրտ վառւի քո սիրով:

.

Ս. Նազարեանց.

Ազգային ոգու այս վերացումը խրախույս և քաջալերութիւն է բուրում թարմ մտքերի վրայ: Աւելում են նոր հասկացողութիւններ բարոյապէս ստրկացած ժողովրդին, քարոզում է Վիդի ու մտքի ազատութիւնը, «մայրենի լեզուն», բաց ոչ հնացածը, այլ կենդանին, քարոզում է մոռացութիւն անցեալի փառքի և ապաւինութիւն միայն սեփական ոյժի և եռանդի վրայ:

Ինտելիգենցիայի այս նոր տրամադրութեան արգասիքը լինում է «Հիւսիսափայլ» ամսագրի լոյս աշխարհ գալը, խմբագրութեամբ Ս. Նազարեանցի (58 թւականին), ամսագրի, որ դառնում է արտայայտիչ հայ մտքի լաւագոյն ներկայացուցիչների: Լի յոյսերով և հարուստ՝ գաղափարներով հանդէս են գալիս Մ. Նալբանդեանը, Ռ. Պատկանեանը և ուրիշները կենդանի գործունէութեան համար:

Ժամանակի իրէախնդրով ոգևորւած՝ հայ մտածողները ձեռք են զարկում մի նոր, ազգաշէն գործի. նրանց առաջնորդող սկզբունքն էր — «լուսաւորութիւն, ինքնաձանաչութիւն, և ազգայնութիւն»:

Տխուր պատկեր էր ներկայացնում ազգային կեանքը այս պատմական ժամանակամիջոցին. նա զուրկ էր կենսունակութեան նշույլներից: Ժողովուրդը հեծում էր խաւարի և տգիտութեան մէջ: Եկեղեցին, այդ մեծ և հոյակապ հիմնարկութիւնը, շնորհիւ իր տգէտ պաշտօնեաների փոխել էր իր բնական կերպարանքը և չէր կատարում իր վսեմ կոչումը, այն եկեղեցին, որ արժանաւոր հովիւների օրօք ներկայանում էր մի տեսակ շտեմարան գիտութեան և լուսոյ, դաստիարակիչ մարդկային հոգու: Հասարակութեան գրագէտ դասակարգերը քաղում էին իրանց մտաւոր և հոգեւոր սնունդը զանազան «էփեմերոիդներից», «Բեղ կենաց» չոր ու ցամաք բարոյագրքերից: Եղած սակաւաթիւ դպրոցները անկազմ էին: Վարժապետները լսող մեծի մասին տգէտ տիրացուներ, որոնք գաղափար չունէին լուսաւորութեան և դաստիարակութեան մասին: Մեր ազգը, ասում է

Ռ. Պատկանեանը իր «Ազգային երգարան» գրքոյկի յառաջաբանում (1857), տակաւին երկխաչ է. նա կարօտ է հմուտ և անկողմնապահ գաղափարակներին, որոնց բարի խրատով պիտի ուղղէ իր զոզոջուն քայլափոխները. թարաբախտաբար, այդ մանկավարժները երբեմն սուպու ազիտութեամբ, անընկճելի յամառութեամբ, նախանձով և չարականութեամբ այնպէս նախապաշարել են իրանց ձեռնաստեղծներին, որ նոքա մինչև այժմ խօսում են նոցնը, ինչ որ կէս-գար առաջ լսել են իրանց շառլատան-դաստիարակիչներին և ինչ որ մի անգամ տպաւորել է նոցա թեթեւ խելքի մէջ: Ուսանելի առարկաները Ողորմոն էր և Նարեկացին, մի կտոր քերականութիւն, ճարտասանութիւն և տրամաբանութիւն, մի փոքր էլ հայոց պատմութիւն: Կրթիչ միջոցը ձեռն էր, և լաւ գէպքում տափակ բարոյախօսութիւնը: Կային մի քանի դպրոցներ, որոնց կազմակերպութիւնը համեմատաբար կատարեալ էր, ինչպէս Լազարեանց ձեռնարանը, որ մեկուսացած էր և մատչելի չէր ժողովրդի համար, Ներսէսեան դպրոցը և Աղբաբեան ուսումնարանը (Ասորախանում): Ուսման և կրթութեան մատակարարը հոգևորականութիւնն էր, որ ինքն էլ զուրկ էր ամենատարրական գիտութիւնից: Լուսաւորութեան կարիքը շատ թոյլ էր զգացում ժողովրդի մէջ: Ասպարէզը լիովին պատկանում էր հայ փողաւորներին և հոգևորականութեան, որոնք կազմում էին հասարակական կարծիք: Քմայքը և բոնակալութիւնը օրէնք էր: Ազգի հոգևոր հայրերը անձնատուր էին շահախնդրութեան և աշխարհակերութեան: Չկար գէթ մի փոքր հոգածութիւն տհաս և խաւար ժողովրդի, այդ մոլորած և տնտէր ոչխարների մասին: Անուսումնասէր հոգևորականը և ոսկի հորթի արբանեակ հայ մեծատունը մոքերի ուղղիչ էին հանդիսանում և դաստիարակիչ հասարակութեան: Ազգային գաղափարը եկեղեցու մէջ էր, հայութիւնը՝ քրիստոնէութեան մէջ: Նեղհայեաց հոգևորականի մաւառ հորիզոնը այնքան սահմանափակ էր, որ նա չէր ուզում ծանաչել հայութիւն լուսաւորչական կրօնից դուրս. «չիք հայութիւն արտաքոյ լուսաւորչական եկեղեցոյ» սկզբունքն էր տիրող գաւառանքը: Սակաւութիւն գրագէտների ընթերցանութեան ազբիւրը Մխիթարեանների հրատարակութիւններն էին, բայց նրանք չէին տալիս բաւարար անունդ, չարունակելով իրանց մէջ ժամանակին համապա-

աասխան կենդանի նիւթ: Գրականական և ուսումնական լեզուն գրաբարն էր: Լուսաւորածը նա էր, որ գրաբար գիտէր, և որքան մութ ու խրթին էր գրում նա, այնքան լաւ և ընտիր էր համարւում նրա լեզուն: Հոգեւորականը, որ առհասարակ սիրահար է ամեն մի հնութեան և խորհրդաւորութեան, մոլեռանդութեամբ պաշտպանում էր ժողովրդին անհասկանալի գրաբարը և դրանով աշխատում էր քողարկել իր թերութիւնները:

Հայ ընտանեկան կեանքի մէջ չէր թափանցել լուսաւորութեան և ոչ մի ճառագայթ, նա ունէր նոյն նահապետական կերպարանքը, ինչ որ դարեր առաջ. հայ կիներ նոյն հարձն էր և իր ամուսնու հաւատարիմ կողակիցը, անկամ և ճնշւած:

Անմխիթար էին հանգամանքները. ազգը ներկայացնում էր մի հիւանդոտ, իր գոյութիւնը դառնազին քարշող, արատաւոր և վիրալի կազմւածք, որին հարկաւոր էր հիմնովին բժշկել և դատարանակել, որին պէտք էր արթնացնել, կենդանացնել և լոյս աշխարհի բարիքները ցոյց տալ: Այս ծանր և պատասխանատու գործը յանձն առաւ Հիւսիսափայլը իր աշխատակիցներով: Սկսւում է վերանորոգութեան գործը. հիւանդ մարմնից անխնայ կտրւում են անպէտք, մաշւած մասերը, բայց հիւանդը—հին սերունդը և նրա ներկայացուցիչները—չի ուզում իրան հիւանդ ճանաչել. նա պաշտպանւում է օրհասականին յատուկ եռանդով, նա ճիշ և ազադակ է բարձրացնում նոր բժիշկների դէմ և զինուորւում է իր հանգիստը խանգարողների դէմ: Եւ ում է և դեռահաս գործը. նոր գործիչները հարւածում են, քանդում են, կտրում են նոր բուրմունքին տեփական աշխոյժով նման աչն հեղեղատի, որի փրփրալից ջրերը, ճռինչով գլորւելով զառիվայրից, ուժգին զարկում են պատահած արգելքներին: Պատերազմը կատաղի է երկու սերունդի մէջ. կեանքի և մահւան խնդիրը, ինչպէս Գամկելեան սուր, կախած էր նրանց վրայից: «Հայոց ազգի մարմինը», ասում է Ս. Նազարեանցը, «ունի իւր վերայ ապականւած տեղեր». դորան քննել անաշուռապէս և ի բաց կտրել սուր դանակով, չպիտի վախենայ գիտութիւնը և մարդկութեան բարեկամը: Թող հիւանդը ցաւի և դանդաղէ. թող կարճամիտը և հիւանդի մերձաւորքը հառաչ հուոց բարձրացնելով հուշոյնն բանագէտ բժիշկը... Բայց այդ լաց ու կոծը չպիտի խա-

փանէ բժշկութեան գործը, որչափ ծանր լինէին այն պայմանները, որոնց մէջ վիճակիկ է հայկական բժշկին գործ լինել իւր ճարտարութիւնը...» Քննող միտքը խանգարեց հեռութեան ամբողջութիւնը և հանգիստը։ Սուր էր և անհաշտ երկու հակադիր դաւանանքների շփոթը (разлад)։ Յետ գնալ չէր կարելի, հաշտեցնել հինը նորի հետ նոյնպէս անկարելի էր. հարկաւոր էր վստահ և համարձակ պատերազմ. հարկաւոր էր զգալ նոր աշխարհայեացքի արարող կարողութիւնը և յուսալ նրա բողբոջների վրայ։ Գաղափարական մարտնչողները պաշտպանում են մի ընդհանուր գործ, ձգտում են դէպի մի նպատակ, բայց տարբեր ճանապարհներով. նոքա համերաշխ են իրանց հայեացքներով հայ իրականութեան վրայ, բայց նրանց բժշկական միջոցները երբեմն տարբերում են։ Այսպէս թէ այնպէս՝ նրանց բոլոր գործողութիւնները և մտածմունքները կրում են իրանց վրայ մի ընդհանուր գաղափարի դրօշմ. լուսաւորութիւն տարածելու և նրա միջոցով զարթեցնել հասարակութեան ինքնաձանաչութիւնը, հասունացնել ազգայնութեան գաղափարը և լայնացնել սրա շրջանակները։ Ազգի պատմական անցեալը պատկերաւորում է նրանց առաջ ինչպէս ալիճուփ ծովի մէջ խորտակւած մի նաւ, որի բեկորները դուրս են ընկած ժայռի վրայ, ազգային վիճակը—մի անապատ, որ պէտք է մշակել և ծաղկեցնել։ Հիւսիսի վայելը, Եւրոպայի արևից պայծառացած՝ պիտի լուսաւորի խաւարի մէջ կացող հասարակութիւնը։ Ազդում է և որոշ նրանց դործունէութեան բնաբանը, որ մենք կարգում ենք «Հիւսիսափայլի» կազմի վրայ. «Այսուհետև ոչինչ եզիպտական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միակ պահապանքը. այսուհետև ոչինչ չինական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ. այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարելոնեան գերութիւնից։ Դժուար էր աւելի պարզ արտայայտել մի գործունէութեան ծրագիր։ Այստեղ կենդանի կանգնած է մեր առաջ ամբողջ նազարեանցը, անձնէր և ազգասէր հայ հրապարակախօսը իր պարզ հոգևով և արի բնաւորութեամբ։ Մտրակը ուղղած է հոգևորականների դէմ, որոնք եզիպտական քուրմերին չատուկ խորամանկութեամբ քողարկում են ժողովրդի առաջ իրանց տգիտութիւնը փքուն և անիմաստ բարո-

յախօսու թեամբ, իրանց կասկածելի գիտութիւնը՝ մեռած զրաբար լեզուի: Ծննդելով Ս. Գրքի վրայ՝ նրանք ձեռնում էին գիտութեան և իմաստութեան ներկայացուցիչներ և զարմանալի Ֆանատիկոսութեամբ զիմադրում էին նոր զաղափարներին: Նրանց աչքում գասակարգային շահերը վեր են հղել ազգային շահերից, և ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու արտօնութիւնը միշտ վերապահում էին իրանց:

Ժողովուրդը պահւում էր խաւարի մէջ. նրան լուսաւորող և զաստիարակող չկար: Վանական իմաստութիւնը զղեատուորւած էր զրոց լեզուով և խորհրդաւորութեամբ. ուսումը պատած էր վանական պարիսպներով և չէր համուծ աշխարհին՝ ժողովրդին: Նազարեանցը և նրա համախոհները բողոքում են լուսաւորութեան զեկը պինդ բռնող հոգեւորականների դէմ, որովհետեւ սրանք և չեն նւիրւած այդ սուրբ գործին, չունեն և հարկաւոր պատրաստականութիւն, իսկ զլոռաւորը՝ արգելում են լուսաւոր զաղափարների մուտքին: Համարձակ է յայտարարում Նազարեանցը իր դաւանանքը և նոյն համարձակութեամբ գործում է կեանքի մէջ: «Թող, ասում է նա, հոգեւորականութիւնը դուրս գայ իւր միջին դարերի կապանքից, թող բացի նրա բերանը... և կենդանացնէ Աստուծոյ բանը ժողովրդի մէջ»: Այսպէս հրապարակ է հանում հոգեւորականութեան անհոգութիւնը և անպարտաճանաչութիւնը, մերկացւում է սուտ ազգասէրների ծումուն հոգին, մեծատունների անարդ կենցաղը և նիւթամոլութիւնը:

Հայը սպէտ է, պէտք է նրա մտաւոր հորիզոնը բարձրացնել. նա քաղաքակրթութեամբ մանուկ է, պէտք է նրա համար մտաչելի դարձնել գիտութիւնը. իսկ այս կարելի է անել միայն կենդանի խօսքով և լեզուով. և նոր գործիչները Նազարեանցի առաջնորդութեամբ փաստաբանում են աշխարհիկ բարբառի քաղաքացիութիւնը: Հայը ուսում չունի, հարկաւոր է դպրոցներ բանալ, բացց ոչ հոգեւորականների խնամակալութեամբ, այլ ազգի սեփական ոչ ժերով: «Լուսաւորութեան տաճարը պիտի կառուցանւի ամբողջ ազգի ձեռքով, ասում է Մ. Նալբանդեանցը. մի ազգի լուսաւորութիւն պիտի կառարւի նրա սեփական, մայրենի լեզուով. լուսաւորութեան հանդիսում շատ նեղ է հոգեւոր հայրերի ասպարէզը. ոչ մի ազգ չէ

հասել լուսաւորութեան վերին աստիճանին, հոգեւոր դաստիարակ-
ների ձեռքով: Թող հոգեւորքը պարապեն Աստածային բանի ողջա-
միտ վարդապետութեամբ, բայց ազգի լուսաւորութիւնը պիտոյ է
յառաջանայ բուն ազգի հոգաբարձութեամբ. լուսաւորութիւնը ան-
կախ է և ազատ. նա չէ կարող ծլել և ծաղկել ստրկութեան մէջ:
Հերիք է, եթէ հոգեւոր հայրերը հոգաբարձու լինէին հոգեւոր դըպ-
րոցներ շինելու, արժանաւոր քահանայք պատրաստելու ազգի հա-
մար: Այսպէս է հասկանու Բ Նալբանդեանցը ազգի լուսաւորու-
թեան դործը: Ազգը ինքը պիտի հողաց իր պէտքերը, ինքը պիտի
ստեղծագործող ոչ թ հանգիստանայ իր մտաւոր և բարոյական զար-
գացման մէջ և դուրս գայ հոգեւորականների հոգածութիւնից. հա-
տարակական ինքնագործունէութիւնը ամենահիմնաւոր գրաւականն
է, որ մի ազգի կրթութեան գործը կանոնաւոր ճանապարհով ըն-
թանայ և լինի արդիւնաւոր. ամբողջ ազգի մտաւոր և բարոյական
զերութիւնը մի զասկարգի ձեռքում և անարդար է և չարիք,
ուստի այդ զերութիւնից ազատելու ձգտումը պարունակում է իր
մէջ սխալման և առաջագիմութեան ամենա-առողջ սաղմը:

Շիտակութիւնը առաջին պայմանն է ամեն դործում, մանա-
ւանդ աչն հասարակութեան մէջ, որ նոր է սկսում ճաշակել հա-
սարակակեցութեան բարիքները և որի դրականութիւնը թոթովում է
մեծամասնութեան համար անսովոր խօսքեր: Հրապարակական խօսքը
անմիջապէս է ազդում ընթերցողների վրայ և, երբ նա կեղծ է,
կարող է անբարոյականացնել հասարակութեան դիւրաթեք և ինքնու-
րոյն հացեացքներից զուրկ տարրերին: Կեղծաւորութիւնը, պաշտո-
նական բարեմտութիւնը, նենգաւոր ոտնձգութիւնը և զրպարտող
ոգին ընտանեցի էին մեր վանքերին և հոգեւորականութեան. այդ
արատները, որ ծածկւած էին հաստ քօղով, մերկացնեցին աչն մի-
ջոցին, երբ դարանւած կզերր և հնութեան սիրահարները հանդես
եկան պաշտպանելու իրանց հացեացքները իրերի դրութեան վրայ,
երբ սկսեց հրատարակել «Մեզու Հայաստանի» լրագիրը: Միջոց-
ների անխորութիւնը մի դաս պաշտպանելու ժառանգի, ու-
րիշի զաղասիրները չեղաշրջելու սովորութիւնը, անհամբերա-
տարութիւնը հակառակորդների վերաբերմամբ նեղ ազդացնա-
կան տեսակէտը՝ մի սկզբունք էր դարձել տւանշտպահների համար:

Կենդանի գործիչը, ժամանակի ոգին և պահանջները, հասկացող գրականը կամ հրապարակախօսը հալածւում էին նրանցից և հուշակում էին ազգի թշնամի: Մանր էին անձնուրաց Ս. Նազարեանցի և նրա երգւեալ նիզակակիցների զործուէթեան պայմանները. սրանք ստիպւած էին մաքառել ոչ միայն մի հնացած անկենդան աշխարհայեացքի դէմ, այլ նոյն իսկ գրականութեան և հրապարակախօսութեան մէջ տիրապետող միջոցների անխորութեան դէմ՝ մի չարիք, որ հետևանք էր ասիական կրքոտութեան, հասարակական կեանքի երիտասարդութեան և խակութեան: Մեք կը փառաւորենք ճշմարտութիւնը, ասում է նոր զաղափարական հասանքի ակոյեան Նալբանդեանցը, մինչև ի մահ կ'աշխատենք շուրջ վանել ստութեան և խաբերացութեան դէմ: Հայաստանի աւերակներից և կը հասանենք մեր հողով չափ ցանկալի նպատակին, որ է կանգնեցնել այդ նւիրական աւերակների մէջ զրօշակ, որի վրայ տակդէն տառերով գրած էր ճշմարտութիւնը:

Համամիտ գործիչները հասարակական պայքարի են հրաւիրում իրանց հակառակորդներին և բնդհանուրի դատաստանի ենթարկում զիմակաւորւած, գարեկի ընթացքում իրանց յանցաւոր և եսական հակումները վարադուրող բնաւորներին: Նոքա հարւածում են փարիսեցի հրապարակախօսների նեղհայեացութիւնը և մտաւոր սահմանափակութիւնը: Հին աշխարհայեացքը, պայծերից ժառանգած և իր ամբողջ կուսութեամբ պահպանած-զգւած աշխարհայեացքը ճանաչում էր միայն մի գործօն՝ Հայաստանեայց առաքելական եկեղեցին, որ մարմնացում էր ոչ միայն մեր կրօնական կեանքի, մեր հողու և խղճի, այլ և ազգայնութեան, հայութեան զաղափարի. նրա մէջ ամփոփւում էր ազգի հոգևոր և մտաւոր գոյութիւնը. նա էր գիտութեան և լուսոյ միակ աղբիւրը, իսկ նրա ներկայացուցիչները՝ կղերը և հոգևոր հայրերն էին հանդիսանում և անսխալական դատաւորներ, և գիտութեան մատակարարներ, և «գլխին մոքի լուսաւորիչներ ու դատաւարակիչներ, մի խօսքով՝ ազգի ընտրեալներ և արտօնւած իշխաններ: Այս զաւանանքով սնւած հրապարակախօսները, որոնց արտայայտիչ էին Մեղու Հայաստանի Վառնի և Ճոաքաղօ օրագիրները, այնքան յեռ էին մնացել ժամանակի հոսանքից, որ անընդունակ էին հասկանալ իրանց առաջ կու-

տարւող պատմական իրողութիւնների իմաստը: Մարդկային մտքի ձգտումները, նրա փառաւոր նւաճումները զիտութեան զանազան ձիւղերում աշնքան մեծ են, որ քրիստոնէական եկեղեցին, անդամ աջ պատկուռի մարմինը, այլ ևս չէր կարող ամփոփել իր մէջ այն ամեն սնունդները, որ հարկաւոր է կեանքի առաջադիմութեան համար: Նա կատարել է և շարունակում է կատարել իր պատմական դերը. նա մեծ բարոյական հիմնարկութիւն է, որ զաստիարակում է մեր հոգին և տալիս է սնունդ մեր կրօնական զղացմունքին, բայց նա չի կարող լինել ազգային բարդ կեանքի միակ դորձօն, նա չի կարող անձնաւորել իր մէջ ազգայնութեան ամբողջ զաղափարը, նա չի կարող և չպէտք է լինի աղղութեան միակ յենարանը: Այս ճշմարտութիւնը անհասկանալի էր աւանդապահներին, և ով որ քարոզում էր եւրոպական լուսաւորութիւն, աշխարհական գաղտնիքի անհրաժեշտութիւն և հոգեւորականութեան խնամակալութիւնից դուրս գալու ձգտում, նա համարւում էր ազգի խորթ զաւակ, հերետիկոս և դաւաճան եկեղեցւոյ:

Անհամբերատարութիւնը մինչև այն աստիճանն էր հասել, որ առաքինութիւնը կապւում էր որոշ փաւանութեան կամ զոգմայի հետ, և Քրիստոսի մեծ հաւատքը ամփոփւում էին ծիսական նրբութիւնների մէջ: Կրօնային ֆանատիկոսութիւնը դէպի տարբեր զաւանութիւնները մի ազգի մէջ արտայայտւում էր փայրենի ձևերով: Այս տխուր երևոյթը, որ Վրտերից յետոյ մի տեսակ անաքրոնիզմ էր համարւում Եւրոպայում, մեր մէջ զեռ տիրապետող ոյժ էր, որի դէմ զինւորւեց Հիւսիսափայլը, խոր խոցելով բթամիտ, մեռցնող ձևականութեամբ տոգորւած հրապարակախօսներին և քարոզելով շահերի փոխադարձ ներդաշնակութեան զիտակցութիւն:

Թար Դ և կենդանի զաղափարները, որ քարոզում էին Ս. Նազարեանցը և Մ. Նալբանդեանցը, առաջացրին ընթերցող հասարակութեան մտածողութիւնների մէջ մի նոր, սթափեցնող տարր: Կենդանացաւ հասարակական միտքը, որ սկսեց հետաքրքրել իր շուրջը կատարւող երևոյթներով, երբեւեց հասարակական նիրհող կեանքը: Սկսեց փողփողել առաջադիմութեան դրօշը մեր հրապարակախօսութեան և գրականութեան մէջ:

Մտքերի այս յեղափոխութեամբ, նոր հայեացքների և ձգտում-

ների երևան դալովը մենք պարտական ենք Հիւսիսափայլին, որի խմբագիրը հանդիսանում է աւելի իբրեւ մանկավարժ-հրապարակախօս, որ տարածում է ժողովրդի մէջ գիտութեան զանազան ճիշդերից անհրաժեշտ տեղեկութիւններ և ցոյց է տալիս այն ճանապարհները, որոնցով պիտի ընթանայ ազգի կրթութեան և առաջագիմութեան զործը: Նրա մարտակից Մ. Նալբանդեանցը ներկայանում է մեզ իբրեւ մաքառող քաղաքացի-գրական, որի համար գաղափարական կռիւն սրտի ու մտքի պահանջ է. կարծես, նա կրում լինէր իր կրծքում հայի դարաւոր բարոյական նեղութիւնները և վրէժ էր պահանջում նեղիչներից. լինելով մարմնացած գաղափար՝ նա այնպիսի խոր զգացմունքով պաշտպանում է անհատի և հասարակութեան իրաւունքները, որ պատրաստ է ոչնչացնել, հողի հետ հաւասարել նրանց զրօռներին: Կեանքը նրա հասկացողութեամբ մի անընդհատ կռիւ է նիւթի և գաղափարի մէջ, իսկ ասուն մարդը միշտ սոսառազինեւած պիտի լինի մարտնչելու խաւորի և նիւթի ներկայացուցիչների հետ: «Մեր ազգի մէջ», ասում է նա, «կան հայեացքներ, կայ ուղղութիւն, կան ուրեմն և դրօշակներ, կայ պատերազմ: Պատերազմը հեռեանք է շարժողութեան, իսկ շարժողութիւնը կեանք է: Օրհնեալ է պատերազմը, թող նա լինի հօր, անխնայ, ազնիւ և բարեխիղճ: Նա, որ փախում է ազնիւ պատերազմից, մարդ չէ բարոյապէս, այլ մի թշուաւ արարած կնամարդի բնաւորութեամբ»: Հիւսիսափայլի տաղանդաւոր աշխատակիցը, որի ազգու գրիչը, սուր և մտրակող լեզուն, մտացածին ուղղութիւնը և աշխարհայեացքը գոյն և կերպարանք էին տալիս այլ ամսագրին, լաւ էր հասկանում իր ժամանակի ոգին. նա գիտէր, որ անկարելի է կործանել դարերից սրբադորձեւած սկզբունքները առանց բացարձակ կռիւի, առանց մտրակի, և նա կատարեց իր կոչումը, իր քաղաքացիական պարտականութիւնը մեծ տաղանդով, անվեհեր և անարատ սրտով:

Հակադրելով փարիսեցիական, ձեական ազգասիրութեանը՝ ճշմարիտ քաղաքացիական զգացմունք, բռնացող հողերականութեան գիրքին և աստիճանին՝ աղբային իրաւունք, մեծատունների ոսկուն՝ լուսաւոր մտքի ոյժ՝ յիսնական թւականների քաջամարտիկ զործիչները լոյս ներմուծեցին խաւարով պատած հայ հասարակու-

Թեան մէջ, կենդանի շունչ փչեցին սառած, կիսակենդան ազգին:

Այս ուսանելի սրտմական ժամանակամիջոցին, երբ հասարակութիւնը զարթնում է իր դարաւոր քնից և բացարձակ յայտնում է իր լաւագոյն մարդկանց բերանով, որ հասել է ժամանակը ձեռք զարկելու վերածնութեան գործին, երբ նա սարդ ձգտում է իր ոչժերով տնօրինելու իր լուսաւորութեան գործը, երբ նա պահանջում է իր զարգացման ղեկավարներից կենդանի, ամենքին հասկանալի լիզւի գործադրութիւնը, ահա մաքերի այդ սլաքառացման և նորոգման ժամանակ զրականական ասպարէզ է դուրս գալիս բանաստեղծ Ս. Շահազիզեանը:

(Շարունակելի)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԱԻԵՏԻՔԵԱՆ, Ստեփան, Բանանցեցի.— Ղեկավարներ, զիրք ա. I. Կապ բռնողը, II. Մեր տէրը: Արտատպած Լումայ հանդիսից, Թիֆլիս, տպ. Մ. Նարաձէի, 1897 թ., 97 էջ, գինը 40 կ.: Հրատ.

Սարգիս Եղիգարեանցի (Ղարաքլիսեցի):

ՆՈՅՆ.— Սամիտարնի, Թիֆլիս, տպար. Մ. Նարաձէի, 1897 թ. 29 էջ, գինն է 20 կոպէկ:

«Ղեկավարներ» առաջին գրքից երկու պատմածքից է բաղկացած՝ «Կապ բռնողը» և «Մեր տէրը»: Կապ բռնող նշանակում է ղեկավար, հասարակական գործիչ, ինչպէս ծանոթութեան մէջ լատնում է հեղինակը: Կաթնաչէնում Սեռնից Եղին է Կապ բռնող, ամեն բանում նրա մասին է խառը: Այդ զիրքը նա ձեռք է բերել տաճուտէրի և միւս առաջաւոր մարդկանց հետ նստել-վերկենալ ու նենալու, նրանց շահերը պաշտպանելու և իր բարձր գոգոռացող ձայնի շնորհիւ Մերացած է արդէն, բայց իր պաշտօնը ձեռքից չի թողնում, ամեն սոսակ թուք ու մուր է ուտում, որովհետեւ զիրք ու աղղեցութիւն ունենալը շահեկան է զրպաճին: Գիւղացոց «էշ արած» ու կապները ձեռքը հաւաքած՝ տանում է՝ որ կողմն ուղղում է և ուր հաճելի է գիւղի սէրերին, այդ «մարդակեր-

ներին»՝ ինչպէս գիւղացիք են ասում: Նա մենակ չէ. նրա պէս մարդիկ էլի կան գիւղում: Հասարակական գումար կլանողի արդարացնել, գիւղացիներին խաբելով՝ նրանց մնասող թղթեր ստորագրել տալ, շահի համար գիւղի աղքատ մասին հարստահարել ու ճեղել—բան ու փնշակ է դրանց համար:

Մեր առաջն է Սեռնից Եղու գործունէութիւնը խոտատեղերը բաժանելիս: Այստեղ էլ առաջին տեղը, ի հարկէ, գիւղի տէրերին է թողնւած. և «ծեղ» գցողը, որ գիւղի կողմից պիտի ընտրուի, համարեա թէ չի էլ ընտրուում, ալ մի քանի աղղեցիկների ասելովը գնում է խոտատեղերը բաժանելու: Սովորաբար և համարեա ընդ միշտ «մաղբուն են մնում» աղքատները: Եւ դեռ բաւական չէ, որ վիճակ գցելիս ամեն տեսակ անարդարութիւններ են լինում,

իրանց ընկած բաժնից էլ գիւղացիք
են կարողանում կարգին օգտել,
որովհետեւ «ղանակաւորները» չեն
թողնում: Աւ մեր առաջ բացւում է
նախնական, կոպիտ ուժի անարդել
գործունէութեան աչն ասպարէզը,
որ «գիւղական կեանք» է կոչւում:

Գիւղացիներն իրանք էլ շատ
լաւ գիտեն թէ ինչ խաղեր են խա-
ղում իրանց հետ Սևունց Նղին և նրա
նմանները: Կուտում են, դուռում, գոռ-
գոռում, բալց դրական արդիւնք
չկալ չարիքը վերագնելու մտքով:
միւս տարին Սևունց Նղին էլի բար-
ձրանում է սարն ու «ծեղ» գցում...
Նորից անարդարութիւն, հարստա-
հարութիւն, ոտնակոխ եղած իրա-
ւունքներ, կռիւ, գողգոռոց, ծեծ ու
արիւնլաւ զլուխներ... Նղին չարու-
նակում է իր անելիքը, իսկ ալդ
ամբոխը, որ սեփական կաշուով գիտէ
թէ ինչ են անում, խաղալիք է դար-
ձած և անկարող է միանալ ու ընդ-
հանուր ուժով իր ցաւին դարման
ածել:

Աւ ահա թէ ինչ ենք տեսնում:

«—Բարի երեկոյ, Գաւիթ ամի,—
ասում է Արշակը հասնելով նրան:

—Այ Աստծու բարին քեզ—պա-
տասխանում է Գաւիթը:

—Հր խոտ շատ հնձեցիք:

—Է՛, որտեղից հնձեցի, տեսչէն:
Էն օրը հու գու ինքդ տեսար, ինչ
հալի էի ես, ջարդած, կտրատած
սաղ օրն էլ կարացի ոչ մասս բանի
տամ: Էքսի օրը վաղ էն հալին զնա-
ցի Ալթալէն: Էնտեղ սրա, նրա
աղաչանք անելով կենտ երկու բեռը
խոտ հաւաքեցի:

—Երկու բեռը,—հարցնում է

զարմացմամբ Արշակը:

Երբու բեռը, հա, մինն երէկի եմ
առն տարել, մինն էլ էս ա հիմի եմ
տանում:

—Բա ձմեռս առանց խոտի էդ
ոնց պտես անիլ:

—Ոնց թա ոնց պտեմ անիլ. մի
ջորի ունեմ, մնէլ մի կով. ընէլ Սև-
ունց Նղին կիսագնով ծախել կը տալ
ու եախէս կը թափի նրանցից. ոնց
պտեմ անիլ, ա քե մատաղ,—պա-
տասխանում է Գաւիթը ու կրկին
լուռթեան մէջ ընկղմւում: —Թո՛չ,
թո՛չ, երբեմն միաջն ձաշն է տալիս
նա (էջ 40—41):

Նկատեցէք, որ Գաւիթը մէկը
չէ, երկուսը չէ, ալ շատ են. և ու-
ժով մարդիկ նրանց տունը քանդում
են անարդել ու հարստահարում ոչ
միաջն խոտատեղերը բաժանելիս,
ալ և ամեն անգամ, երբ առիթ ու
ղէպք է լինում:

Հեղինակը դեռ շատ անփորձ է
և անպատրաստ. նա բաւականաչափ
լուրջ ու խորամիտ չի վերաբերում
իր ընտրած նիւթին. աչքովն ընկա-
ծը նա տալիս է, անցնում: «Ապա
բռնողը» մի շատ լաւ առիթ էր
ըստ կարելոյն պարզ ու որոշ ներ-
կալացնելու ղեկավարների և ամ-
բոխի փոխադարձ չարաբերութիւն-
ները իրանց բարդ ցանցով: Մեզ
համար պարզ չէ ալն հլու կա-
պը, որ կա Սևունց Նղու և գիւղա-
ցիների մէջ, ալն կապը, որ թէև
գժգոհութիւն ունի իր մէջ, բալց
ընդդիմադիր բողոք չի դառնում և
դրական ձևով արտապայտւում:

Գրածքը տեսողծագործութիւն
չէ, և մենք չենք պահանջում դրու-

թիւնների հոգեբանական վերլուծութիւն ու կեանքի բազմակողմանի պատկերացում: Նա լուսանկար է, իսկ լուսանկարից կարելի է պահանջել, որ իր պատկերացրածը լինի մի ամբողջական տեսարան կարևոր մանրամասնութիւններով և մասերի էական կապակցութիւններով. մենք կարող ենք պահանջել, որ ալդտեղ մէջ բերած դրութիւնները իրանց նշանակութեան կողմից ընդհանուր ֆոնի առաջնակարգ տեղերը բռնեն, որ պատկերի մէջ երևան նաև աչն առարկաները, որոնք դուրս են մնացել լուսանկարչի տեսողութեան զաշտից նրա համար, որ գործիքը լարմար տեղ չի եղել գրեալ: Այս պատկերում նախ իսկ տեսողութեան կէտի մասին խօսք չի կարող լինել:

Մենք ալդ արդիւնք ենք համարում աչն բանի, որ հեղինակը պարզ չի գիտակցում իր ուշադրութիւնը աչս կամ աչն պատճառով գրաւած երևոյթի արժէքն ամբողջովին, որ ալդտեղ գործողը գրողի շնորքն է միաչն և ոչ նրա գիտակցութիւնը Նիւթերի մէջ ընտրութիւն չանելը մեր ժողովրդական գրողների ցաւերից մէկն է. ճողաբանն, օրինակ, ամենակարևոր, մեծ նշանակութիւն ունեցող երևոյթների չարքում արձանագրում է և չնչին զէպեր ու երևոյթներ, փնտնելով միանգամաչն գրաւծքի արժանիքներին թէ գրական և թէ հասարակական տեսակետից: Երևում է, որ ալդտեղ գործում է լուսանկարչի գործիքը միաչն... իսկ ալդ ցաւալի երևոյթն արդիւնք է մեր ժողովրդի կեանքից գրողների մտաւոր զարգացման պակասութեան

ընդհանրապէս և գրական զարգացման պակասութեան մասնաւորապէս: Սրա մասին՝ մի ուրիշ անգամ:

«Մեր տէրը» մի գիւղական քահանայի պատկեր է, որ պատմելով գնում է մեր առաջ մի գիւղացի: Պատմելիս նա համեմատութիւններ է գնում իրանց «տէրի» և ուսումնական քահանայի միջև. և ալդ տեղերը ուշադրութեան արժանի են հասարակական տեսակետից. մեր առաջն է ալդտեղ գիւղացու հախացքը քահանայի մազին: «Տէրին» չարքում ու պատում է ոչ միայն իր հօտը, ալ և չրջակալ գիւղերն ու թուրքերը. մի քանի «չապկաւորներ» ու մի «մահտեսի» միաչն չեն ուզում տէրին ճանաչած լինել: Ալդ չարգանքի և պատի աղբիւրն ամենից առաջ աչն է, որ նա իրանց «հօղի ու ջրի» մարդ է, հեռները մարեղ գիտէ, իրար բնոյթով չարմար են գալիս, և որ գլխաւորն է, նա զլուխը չետ դրած ունի իր ժողովուրդի համար: Աղէտ է թէ դժբախտութիւն՝ «տէրը» հանգիտա չունի. իտերալի տարին ժողովուրդին լետեն արած՝ աչս ու աչն մատուռի մօտ թափոր է անում, երաշտ տարիները ոտաբորիկ, օրերով երկար ճանապարհ է կտրում, գնում է Արթոնաչ սարից սուրբ քար բերելու, որ գետը գցի և ծարաւ արտերի համար անձրև բերի: Կորել է գիւղացու ևզր կամ կովը՝ նա իսկոն «գիւկապ» է անում, որ իր հօտին ալդպիտով գալի միասից աղատ պահի: Առաւօտը չառ վաղ «մեր տէրն» արգէն ոտի վրաչ է և ժամ է չտալում. ճանապարհին պատահածներին իրաւունք է, ծովին լանդիմանում, բմբոս-

տին դաս տալիս, ուշացողին շտապեցնում գործի, իսկ գնացողին օրհնում—մի խօսքով դիւզի վրա՝ հըսկում է հօր նման: «Տէրը» շատ անգամ սուն չի գնում, որովհետեւ ամենքի գոռը նրա համար բաց է. սրա, նրա սունը ստնելով, իր հօտին ակը տալով ու օրհնելով, մի տեղ մի պատառ հաց ուտելով, մի ուրիշ տեղ ծաշ՝ օրը մթնացնում է: Կարգալ գրեւ վաղ աչն հալին որ դիտէ. համարես չգիտէ. բարկանալ ու նեղանալ չունի. հեղ բարքի տէր մարդ է: Նրա ներքին ամենախոշոր ուժը նրա հաւատն է, որ ժառի պէս ամուր նստած է նրա հոգում:

Ճիշտ է, «տէրի» արածները մեր տեսակէտով միատակար են. նա քարոզում է, որ բոլոր դասերն ու պատուհասները Աստուած է ուղարկում մեր մեղքերի համար, ուտոի պիտի համբերութեամբ կրել պատիժը. Նա խիտ գէմ է «տամիտարններին» և բորդորում է իր հօտին, որ նրանց չհետեն, լաւանելով միտնգամաչն, որ ինչ գրած է մարդու ճակատին: պիտի կատարւի, աչնպէս որ միամտաբար միատում է իր հօտին. բալց աչտեղ մեղ գրաւում է ոչ թէ նրա անմիջական, խաւար ուղեղն ու հախտապաշարած գլուխը, այլ նրա բարոյական կազմը: Արպէս բարոյական տիպ նա ոչ միայն բարձր է (ուսումնական)՝ քահանաներից, այլ և մեր ինտելիգենցիա կոչած դասից: Թող նախապաշարմունք լինի ո. քարի փրկարար ուժը, թող ծիծաղելի լինի «գիլ-կապը»,—բալց աչգ որ սուսմական քահանան է, որ լանձն կ'առնի օրերով, ոտաբոքիկ, համա-

րեա առանց հանգստանալու վերստեր կտրել իր ժողովրդին մի աղէտից փրկելու համար. աչգ որ քահանան է, որ ամեն քաղաքիսում իր հօտի վիճակով է զբաղւած և ձեռքից եկած միջոցները չի խնայում նրա համար: Թող նրա քարոզները անմիտ, ճուշ իսկ միատակար լինին, թող նրա վարմունքները մեղ անախտօք երեւան, բալց նա աչգ բոլորն անում է մաքուր ազրիւրից զրդւած և ժողովուրդը գնահատում է աչգ մաքուր աղբիւրը, «տէրի» սիրառատ սիրտը և իր վստահութիւնը «չլապիւարին» տալու տեղ նրան է տալիս: Կրկնում ենք. մեղ հիացնողը «տէրի» մանկական, մաքուր հոգին է, սիրող սիրտը և սիրած հօտի համար ստեն տեսակ նեղութիւն լանձն առնելու պատրաստականութիւնը: Այս տեսակ տիպեր չգիտեմ կան մեր ինտելիգենտ կոչւած դասի մէջ. հազիւ թէ...

Եւ կարծէք հէնց հեղինակին ոգեւորուն էլ «տէրի» բնաւորութեան աչգ կողմն է. գրածքի սկզբում ու վերջում հեղինակի տրամադրութիւնը բարեհամբոյր հումորն է, որ «տէրի» Արթոն գնալու պատմութիւնն անելիս լարում, լրջանում է ու հիացմունք գտնում: Եւ իսկապէս հիանալի են աչգ էջերը. հեղինակի հոգին իր լարման գագաթնակէտին է հասնում, և նկարագրածի վնասութիւնով թափանցում է նրա գրիչը. ինչ որ մեծ, սքանչելի բան է նկարում ձեր առաջ. «տէրը» Արթոն է դնում ո. քարը բերելու և իր սիրած հօտին երաշտից փրկելու!...

Հեղինակը պատմելու և նկարագրելու չնորք ունի, որի չափերը,

ճիշտն ասած, մեզ համար պարզ չեն
դեռ նա ինչ վերաբերում է լատի-
կոսթեան, աչգ շնորքը վիպական է՝
իստունած քնարականի հետ, որ չի
երևում, բայց իր ջերմութեամբ տա-
քացնում է նրա գրեթեները. երե-
ւում է, որ հեղինակը սիրում է իր
նկարագրած կեանքը, սրտով կապ-
ւած է նրա հետ. նրա տւած
պատկերները թափանցւած են աչգ
սիրով, որ «Ապա բռնող»-ում մի
մեղմ ցաւով մշուշում է գրեթե և
վերջում զառնում նոյնպիսի մի մեղմ
վիշտ, ինչպէս մեր մէջ բերած կտո-
րում. իսկ «Մեր տէրում, ինչպէս
վերն էլ ասինք, նա բարեհամբոյր
հումոր է, որ պատմւածքի կիսում
բարձրանում հիացմունք է զառնում
և նորից իջնում խառնում իր աղ-
բիւրի հետ. Գալով նկարագրութիւն-
ներին՝ կարող էք տեսնել ջահիլ
խոտ հնձողների մրցութիւնը, որ
աչնքան կենդանի է դուրս հանած,
երկու գրեթե էլ թերութիւն-
ներ ունին. Հեղինակի պատկերա-
ցումները բաւականաչափ վառ չեն և
ամբողջացած. Օրինակ Սեռենց Նիկի
ինքն իրան խօսում է գանգատելով
«այբ-բէն» սովորածներից. բայց հեղի-
նակը մի հինգ տող չեսող մոռնում
է, որ Նիկի ինքն իր հետ էր խօ-
սում, և նրան վերագրում է աւսպի-
սի մի վարմունք.

— Սրա չափ վախտս (ցոյց է տա-
լիս նա դէպի գրագիրը) ո՞վ կը համար-
ձակէր իրանից մեծին ասել, թէ
աչքիդ վերին ունք կալ (էջ 12):

Ուշադրութիւն դարձրէք մեր
ընդգծած տողի վրալ. ում էր ցոյց
տալիս, ինչո՞ւ, չէ՞ որ Նիկի ինք իր

հետ էր խօսում:

Կամ, օրինակ, խալիֆանց Գաւթի
խօսակցութեան ժամանակ պատմում
է թէ ինչպէս «Սեռենց Նիկի ու ստար-
չինը» իր «բկին չոքած» հարկ էին
ուզում ու նեղացնում—թէն ատածը
իսկի խօսակցութեան նիւթի հետ
կապ չունի և միջանկեալ բան է (էջ
33): Ինքն ըստ ինքեան շատ հե-
տաքերական խօսքեր են, բայց
տեղին չեն մէջ բերած, որ ցոյց է
տալիս, թէ հեղինակը պարզ չի պատ-
կերացրել խօսողներին ու նրանց
խօսակցութիւնը:

Կամ գիւղացու բերանն աչնպիսի
խօսքեր և արտապատկեան ձևեր
է դնում, որ անկարելի է թույլ
տալ. — Ստեփանն ինքնաբաւականու-
թեամբ դարձաւ դէպի գրագիրն ասե-
լով, և ալն (էջ 19) Սա գիւղացու
խօսք ու արտապատկեան է...

Ինչ վերաբերում է «Մեր տէրին»
տա էլ հիւանդ է անեկդոտներով.
Անեկդոտը մի պատահական դէպքի
արտապատկեան է, որ երբէք չը-
պիտի տեղ բռնի մի գրական երկի
մէջ, որովհետեւ թէն նա իրական է,
պատահած բան է, բայց ամեն պա-
տահած բան չի կարող գրական եր-
կի նիւթ դառնալ, քանի որ նա կա-
րող է ընդհանուր չլինել, ուրեմն և
անբնական երեւալ. Ուշադրութեան
առարկալ պիտի դառնան միայն աչն
գրութիւններն ու դէպքերը, որոնք
տարածւած են, ընդհանուր են, ուրեմն
և որոնք արտապատկելով տիպական
կը լինեն ¹⁾: Այս էլ մեր ժողովրդա-

¹⁾ Անեկդոտներ կամ անեկդոտա-
նման դէպքեր տես «Անկալարներ»
էջ 50, 51, 53—54, 57 և 58, 59, 60:

կան գրողների ցածրից մինն է, որ պիտի արմատախիլ անեն իրանք գրողները...

Եթէ «Մեր տէրի» անեկղոտներն ու անեկղոտի բնաւորութիւն կրող ղէպքերը չլինին, եթէ, բացի այդ, մի երկու տեղ սղմւի պատկերն ու վերջին պարբերութիւնը դուրս ձգւի, կամ ալ կերպ խմբագրւի (մի ինչ որ լար է հնչում այդ տեղ, որ չի ներդաշնակում գրածքի ընդհանուր տրամադրութեանը), այն ժամանակ «Մեր տէրը» մի սիրուն պատկեր կը զառնայ:

«Ղեկավարների» 90-92 էջերում կարճ տւած է միւս՝ «Սամիտարնի» անունով պատկերի բովանդակութիւնը: Այստեղ հեղինակն ուշադրութեան է առել այն դրութիւնը, որ ստեղծել էր սամիտարների և գիւղացիների փոխադարձ վերաբերմունքը խոլերայի տարին: Բայց պատկերը գրած է չափ թույլ, մի ամբողջութիւն չի կազմում և ըստ ամենայնի լաւ չի մտածւած: Մենք կանգ չենք առնի մեր այս կարծիքն ապացուցելու: Ընթերցողն ինքը կը տեսնի, եթէ աչքի առաջ ունենալ թէկուզ այն մի քանի պատկերները, որ մենք վերը դրինք լուսանկար-գրաւորների վերաբերմամբ: Մենք այս կ'ասենք միայն, որ հեղինակի ընտրած նիւթը միանգամայն խորին ուշադրութեան արժանի նիւթ է և քանադիր մշակման կարօտ—նոյն իսկ լուսանկարիչ-գրողի համար, իսկ տեղեւոր գործող հեղինակի համար դա մի պատասխանատու թեմա է, իր բազմակողմանի նշանակութեան և հետաքրքրութեան կողմից: 92 թւա-

կանը մի շատ նշանաւոր տարի էր մեր կեանքում. առաջին անգամն էր, որ ինտելիգենցիան չտեսնւած մեծ չափերով գործ ունեցաւ հասարակ ժողովուրդի հետ դիւզերում և քաղաքներում—և այդ հանդիպումը ցուց տւաւ թէ որքան պատրաստ են երկու կողմերն ևս իրար հասկանալու, ուրեմն և թէ որքան կարող են իրար ազդել ու փոխել, ազդել ու փոխել: Այս իրողութիւնը չգիտակցւեց և փորձից օգտուողներ չափ քիչ եղան թէ կեանքում և թէ գրականութեան մէջ...

«Մեր տէրի» հեղինակը իր երեք պատկերումն էլ աւելի կամ պակաս չափով չօգտւում է գիւղացու վերաբերմունքը ղէպի «չլապկաւորը» և երեք պատկերից էլ տեսնում ենք, որ գիւղացին խորշում է «ուսում առածից», թերահաւատ է ղէպի նա. նրա վերաբերմունքը լիքն է անվստահութեամբ և արհամարհանքով. երեւում է որ գիւղացին չի հաւատում «չլապկաւորին»: Այդ իրողութիւնը մենք պարզ տեսնում ենք հեղինակի գրածներից, բայց թէ ինչն է պատճառը՝ անորոշ է մնում մեզ համար, դարձեալ նոյն լուսանկարչական գործիքի թերի գործադրութեան պատճառով: Ցաւալի իրողութիւն, որին պարզելու հնար չունինք մենք...

Մեզ մնում է միայն ցանկանալ, որ պ. Աւետիքեանը շարունակի իր պատկերները գիւղական կեանքից՝ աշխատելով ոչ միայն դիտել ու տրպաւորութիւններ ստանալ, ալ և դիտածն ու տպաւորութիւնները կարգի բերել, խմբել, մտովին թափանցել ընտրած երևոյթի խորքերը:

և աշխատի հասկանալ նրա կապը միևս երևույթների ու նրան առաջ բերող պատճառների հետ: Մեր ալոման ժողովրդի կեանքից գրողները ահապին՝ դորժ են կատարում, բայց աւելի մեծ կը լինէր նրանց արածը, եթէ ջանք թափէին հասկանալու իրանց տւած կեանքը: Այդ ոչ միայն նրանց գրածների շահն է պահանջում, ոչ միայն նրանց կարգը կ'աւելացնի, այլ և դառնում է ներկայումս արտադրութիւն, որովհետեւ հանգամանքների բերմունքով նրանք միայն կարող են տալ մեզ գիւղական կեանքի լալն ու բարդ պատկերը...

Անկախ գրածների նիւթից ու մշակելուց, մեր հեղինակը պիտի աշխատի նաև իր գրելու ձևերը մշակել և հեռու մնալ, բացի ցոյց տւած թերութիւնները, նաև չափազանցութիւններից. նա գրում է.

«Անցնենք սարը:

«Այստեղ ասեղ զցելու տեղ չկալ. գիւղի թէ մեծ, թէ փոքր իրանց բեռնակիր ձիաների ու ջորիների հետ միասին ալտեղ են ժողովւած: Վերջիններիս բազմաթիւ երամները

ծածկել են լալնածաւալ արօտատեղերը» (էջ 8):

Ի՞նչքան է մի գիւղի մեծ ու փոքրը, որ սարում «ասեղ զցելու» տեղ չլինի, կամ ինչքան ձի ու ջորի ունին, որ կազմում են «բազմաթիւ երամներ» (?) ալն էլ «լալնածաւալ արօտատեղերը» բռնող!

Մի քանի խօսք էլ լեզւի մասին: Ընդհանրապէս սահուն է և կենդանի. ալնպէս կարգում է մարդ գիրքը, որ չեղած. կարծէք զրոյց լինի, Բայց դեռ մաքուր չէ ալնքան. անընդհատ, ամեն քաղաքիսում հան. գիւղում էք խառը, իրար մօտ, ներկալի և է վերջաւորութեան. (հէնց թէկուզ տեսէք էջ 13, 22, 23, 70, 71 և ալլն): Պատահում է նաև հոլովական վերջաւորութեան գաւառական ձևը. — «խեղճ թիւնին».. տրեխները մի հանգաւ ոտներն է գցում... (էջ 30): Յալտնի է որ դործիական հոլովը աշխարհարարում «վ է վերջանում:

Պր. Աւետիքեանը անշուշտ պիտի հոգ տանի և իր լեզւի վրայ:

Ն. Աղբալեան:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒԻՒԻԱՄ-ԷԻԱՐՏ ԳԼԱԴՍՏՈՆ

Ձկաջ ալլ ևս Գլադստոնը! Վախճանեց նա ներկայ մայիսի 7 (19)-ին
Հովարդէն կալւածքում, Լոնդոնի մօտ: Նա իւր հետ տարաւ գրեթէ մի
դարի պատմութիւն. ծնւած 1809 թւականին՝ նա իւր վերջին
շունչը փչեց 89 տարեկան հասակում: Մեծ հասակ անշուշտ, որ
ամենքին չի վիճակուում հասնել. և չնայած այդ զառամեալ հասա-
կին՝ նորա մահը, որը, բացի այդ, անսպասելի չէր նորա քաջած
երկարատե հիւանդութեան պատճառով, խորը տպաւորութիւն գոր-
ծեց ամբողջ լուսաւոր աշխարհի վրայ: Որովհետեւ նա ոչ միայն
աշխարհահռչակ անուն ունէր, այլ և մանաւանդ այն պատճառով,
որ այդ անւան հետ կապւած են դարու շառաջդիմական գործերից
շատերը և որովհետեւ նորա մեծ ոգին կարողացաւ այդ գործերին մի
իմաստ ներշնչել, որի առջև պատկառանքով պիտի վերաբերէին թէ
կուսակիցը և թէ ոչ-կուսակիցը: Հազւագիւտ տաղանդ, որ կուսակցու-
թեան պարագլուխ լինելով հանդերձ՝ կարողացել էր դառնալ համ-
ազգային մեծութիւն—մի մեծութիւն ամբողջ ազգի համար:
Նա վախճանեց, երբ արդէն ազգը սովոր էր ճանաչել նո-
րան իբր Grand old man—մեծ-ծերունի: Գլադստոնը դորանով
ճանաչուում էր որպէս ազգի փառք: Եւ այդպէս էր նա ստուգապէս՝
թէ որպէս քաղաքական գործիչ, թէ որպէս հռետոր և թէ իբր
հասարակական մարդ և թէ իբր մարդ-անձնաւորութիւն: Գլադստո-
նոն գործիչը նոյնն էր ինչ Գլադստոն-մարդը: Վաթսուն տարի քա-
ղաքական աննման կեանք ունեցաւ, և այդ երկար ժամանակը ներ-
կայացնում է մատուցած ծառայութիւնների մի աննման շարք:
պերճախօսութեան մի անեղբ ովկիանոս, որի առաջին հրապարա-

կական արտայայտութիւնը եղաւ 29 հոկտեմբերի 1825 թ., Էտոտում, յօգուտ ընկձեալների, և վերջինը՝ 24 սեպտեմբերի 1896 թ. Լի. երպուլում, ուր հնչեցին հանգչող ձայնի վերջին ֆնացորդները, մի ձայնի սակայն, որը միշտ վառւած է եղել եռանդի կրակով:

Հրաշալի է արդարև տեսնել, թէ ինչպէս Անգլիայի այս ամենամեծ զաւակի մէջ չէր նւագում եռանդը: Մի տարիքում, երբ նա սովորաբար հանգչում է, Գլադստոնը նորանոր և մէկը միւսից աւելի ծանրակշիռ դատեր էր իւր ձեռքն առնում: Ժամանակակից պետական մարդկանցից չկայ մէկը, որը Անգլիայի կերպարանափոխութեան համար աւելի արած լինի, քան Գլադստոնը. և այժմ էլ, մեռնելով, նա, ազատամիտ պատմական կուսակցութեան բաժանման հետ ի միասին թողնում է մի քաղաքական կտակ, իրլանդական ինքնավարութեան ծրագիրը, որի հենց առաջին յօդւածը, հայրենասէրներից շատերի աչքում, հաւասարադօր է բրիտանական կայսրութեան խորտակմանը: Նւայնու ամենայնիւ՝ ամբողջ ազգը ամենախորին պատկառանքով դուրս է խոնարհում նորա գերեզմանի առաջ: Երկու ամբողջ օրեր տեեց անգլիական ղեմոկրատիայի ուստագնացութիւնը մի գերեզմանի առաջ, որի մէջ դրած թանկագին դագաղի դիպար էլ, Վեստմինստէրի մենաստանը տանելու միջոցին, բռնած էին թողած առանց Ուէլսեան իշխանը, Իորքի իշխանը՝ որպէս ներկայացուցիչներ դիւնաստիայի և պետութեան, և երկու մեծ կուսակցութիւնների պարագլուխները լորդերի ու համայնքների ժողովներում՝ լորդ Սալիսբուրի և կոմս Քիմբերլէյ, պ. պ. Բալֆուր և սրբ Ուիլլիամ Հարկուր:

Նւ, սակայն, չի կարելի ասել թէ Գլադստոնի կեանքը յաղթանակների անընդհատ մի շարք է եղած: Բայց և Գլադստոնը, ծրագիրների յաղթանակներին ձգտելով՝ անձնական յաղթանակ տանելու զգացմունքի գերին չէր. իշխանութեան ձգտելով՝ նա այդ իշխանութիւնը դնում էր միմիայն և եթ իւր ծրագիրների ծառայութեան. և երբ իշխանութիւնը դոցա չպիտի կարողանար ծառայեցնել՝—նա իջնում էր վար՝ ընդդիմադրական կուսակցութեան մէջ լինելու համար, — և միշտ ու անընդհատ ծառայելով գաղափարին:

Ազգը դատեց որ Գլադստոնի յաւիտենական հանգստեան տեղը

Վէստմինստերի դամբարանն է, Անգլիայի Թագաւորների հանգստեան տեղը և աղբի փառքը կազմող մեծ որդոց հանգստարանը: Գլադստոնի գերեզմանի վրայ ըստ իմաստալից համեմատութեան մի քաղաքական գրողի, հսկում են այժմ այն Թագաւորների արձանները, որոնք զարմացքով կը հարցնէին թէ այդ պարլամէնտական մարդը ինչ ունի շինելու այդտեղ. այդտեղ է արձանը Վիլհելմ Նաժդի, որը հիմնեց անգլիական միապետութիւնը և Ֆէօդալականութիւնը, որի դէմ Գլադստոնը դրեց ժողովրդական լիբերալիզմը, և նորմանական արխտոկրատիայի դէմ՝ անգլո-սաքսոնական դեմոկրատիան: Հենրիխ II-ն էր որ նաճեց Իրլանդիան, ուր Ստրոնգբօն հաստատեց անգլիական լուծը, որ աւելի ու աւելի ծանրացրին Նորմանիքը, Կրմէլլը և Պիտտը. և այդ ամենի տեղն է, որ Գլադստոն կամեցաւ դնել միմիայն սրտերի միութիւն երկու քոչր կըզգիների միջև. Էդուարդ I ի և Էդուարդ III-ի սահմանադրութիւնները, վեց դար փառաւոր կեանքից յետոյ, Գլադստոնի կողմից տուեց դեմոկրատիայի բաղդի խաղին. և Հենրիկ VIII-ի և հպարտ Նորմանիքի-ի արձանները այժմ լուռ նայում են այն անընկճելի պարլամէնտական մարդու վրայ, որը բաւականաչափ հաւատ ունեցաւ դէպի իւր երկրի հաստատութիւնները՝ քաղաքական և հասարակական բոլոր հիմքերը տատանելու համար, այն մարդու, որը այնքան նպաստեց եկեղեցական ունեւորմանի կոմպրոմիսը կասկածի նիւթ դարձնելուն և որը պետական եկեղեցին դէպի կործանման շաւիղը մղեց:

Եւ չնայած անցեալի այսքան աւանդութիւնների խորտակման — Գլադստոնի մէջ կար պատկառանքի մի զգացմունք դէպի անցեալը, որը բղխում էր սոցիալական մեծ շահերի խորը ըմբռնումից և ցոյց էր տալիս մեծ մարդու խոնարհութիւնը ազգային անցեալ և ներկայ կեանքի միութեան առաջ. որը և կազմում է անընդհատ յառաջագիմութեան մէջ զոնուող լիբերալիզմի նոյն իսկ հիմքը: Այ, որպէս նկատուել ենք մեր յօդաւանդում Բնգլիայի մասին, ոչ մի տեղ միութեան ոգին այնքան պայծառ չի երևում գրեթէ անվերջ փոփոխութիւնների տակ, որքան Անգլիայում: Եւ Գլադստոնը այդ կողմով ևս գերազանցօրէն անգլիական գործիչ էր:

Իսկ նորա պաշտպանած արտաքին դատերը Գլադստոնին ճշնշւած ազգերի մեծ պաշտպանի տիտղոսը:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵՍՅԱՆ

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Տ. Ա Ր Կ Օ Մ Է Դ

Գաւառական քաղաքների ինքնավարութեան միամենալ գործունէութեան առթիւ Մուրճի անցեալ համարում գրած չօղւածը լուրջ ուշադրութեան և հետաքրքրութեան արժանի է ալն ամենքի համար, որոնք զիտեն դնահատել և հասկանում են թէ ինչ է նշանակում ինքնավարական կեանքը մի երկրի համար: Նահանգական ինքնավարութեան խնդիրը (դէմստւո) ընդհանրապէս և քաղաքալին ինքնավարութիւնը մասնաւորապէս դարձել է մեր երկրի համար ամենաուշանակարգ կենտական հերթական խնդիրներից մէկը: Տեղական ռուսաց թերթերը համեմատաբար աւելի շատ են դբադած ինքնավարութեան կեանքով քան հալոց թերթերը. սրանք զարթնում են միալն ալն ժամանակ, երբ Թիֆլիսում ընտրողական խիստ պալքար է մղւում խորհրդարանի կուսակցական խմբերի մէջ... Ապա թէ ոչ՝ ուրիշ խաղաղ ժամանակ թէ ինչ է կատարւում զիցուք Թիֆլիսի ինքնավարական ներքին կեանքում, ալդ մասին բնաւ կարիք չէ համարւում մեր թերթերի կողմից հալիւ ու համար տալու ընթերցող հատարակութեան:

Եթէ Թիֆլիսի վերաբերմամբ ալդպէս են վարւում մեր «պատւելի» օրաթերթերը, Թիֆլիսի, որ Անդրկովկասի մտաւոր կենդրոնն է, դաւառական քաղաքների ինքնավարութեան մասին խօ էլ խօսք չէ կարող լինել: Ալդ դատապարտելի ընթացքն է, որ ամենքի աչքն է ծակւում և որի մասին մատնացոլց էր եղել Մուրճը իր անցեալ համարում:

Եթէ ասենք, որ ալդ հարցում մեր մասուլը հալ ինտելիգենտ դասակարգի արտալատիչն է, սխալած չենք լինի: Սրանից երկու երեք տարի առաջ նոն ալս էջերում Երևանի քաղաքալլի ընտրութեան առթիւ խօսելիս լալտնում էինք, որ մեր հասարակութեան ինտելիգենտ դասակարգը իրան հեռու է պահում, իրան «խորթ դաւալ» է համարւում և բնաւ մասնակցութիւն չունի քաղաքալին գործերին: Ղեռ աւելին պէտք է ասել. նա բնաւ տրամադրութիւն անղամ չէ արտալատում մասնակցելու:

որքան մենք աչդ ղիտել ենք տարիներ շարունակ։ Աչդ չէ կարելի սակաչն ասել բացարձակապէս Թիֆլիսի վերաբերմամբ, ուր վերջին տարիները սկսել է ինտելիգենտ առաջադէմ երիտասարդութեան կողմից կազմակերպւել օպոզիցիա Սոլովակի բուրժուազիայի և արիստոկրատիայի դէմ։ Առաջադէմ ինտելիգենտ դասը թէ Թիֆլիսում և թէ մասնաւանդ զաւառներում ներկայումս, ուր մտցրած է կրճատ թէ լիակատար քաղաքային ինքնավարութիւնը, մեծ միասնա ունի կատարելու Նա չպէտք է միաշնակ մնալ, նա կաստալի բնաւորութիւն չպէտք է ընդունէ, ինչպէս աչդ դժբաղդաբար տեսնում ենք Թիֆլիսում, ալ միացած ժողովրդական առողջ, առաջադէմ տարրերի հետ գործէ նրանց հետ և նրանց համար... ձշմարիտ է, քաղաքային ինքնավարութեան ներկայ Պոլոժէնիան հասարակութեան ունի որ, ցենզանոր դասակարգին է արտօնութիւն տալիս միաշն մասնակցելու քաղաքի ինքնավարական կեանքին, բաց աչդ հանդամանքը չըպէտք է մեզ մոռանալ տալ ազգաբնակչութեան մեծամասնութեան, մասսալի շահերը, Նոյն ալս դրութիւնը ունեցել է Եւրոպական օրէնսդրութիւնը. ուէֆորմներ եղել են աչդ օրէնսդրութեան մէջ, ինչպէս և ուէֆորմներ եղել են և կ'լինին բնականաբար ռուսաց օրէնսդրութեան մէջ։ Այս անցողական դրութեան մէջ պէտք է չառաջ կոչել քաղաքային ինքնավարութեան գործում աշխարհի միջին դասակարգ, որ աւելի մօտ է, աւելի վիճակակից և կարիկից է ընդհանրութեան շահերին. աչդ միջին դասակարգը, որ առաջամ պէտք է գործէ՝ կալւածական ցինդ ունեցող արհեստաւոր և մանր արդէւնարներող դասակարգն է. աչդ տարրը պէտք է կազմակերպել և դեր խաղալ և նրա հետ էլ միանալ և գործէ լուսաւոր անշահասեր դասը։ Քաղաքների առողջ և առաջադէմ տարրերի համերաշխ, միաբան գործունէութիւնը միաշն կարող է թող չը տալ, որ օրինակ Թիֆլիսում Սոլովակի արիստոկրատիան, Բագուում՝ նաւթի բուրժուազիան և միւս քաղաքներում կազմակերպող «կուպեչեստօն» ամին ինչ անհն՝ իրանց դասակարգային օդտի համար խեղդելով հարստահարած մեծամասնութեան շահերը։ Այս զգացմունքներով և ոգով ղեկավարւած Թիֆլիսի և թէ գաւառական ինտելիգենտ առաջադէմ դասը քաղաքային գործունէութեան ասպարէզ պէտք է իջնէ. նրան վաղուց սպասում են մեր կեանքի հասարակական հակասող պայմանները, որոնց առաջ նա խուլ և անսարքեր է մնացել։ Թէ Թիֆլիսի և թէ գաւառական քաղաքների ինքնավարութեան կեանքը պէտք է ալսուհետեւ լրջօրէն զբաղեցնէ ամենքին, որովհետեւ, կրկնում ենք, աչդ հաստատութիւնը մի դօրաւոր ֆակտոր է մեր երկրի առաջադիմութեան համար, որը անտես է առնել դժբաղդաբար մեր լուսաւորած դասի կողմից։ Հաջոց մամուլի մէջ Մուրճը առանձնապէս խոստանում է զբաղւելու քաղաքային ինքնավարութեան կեանքի խնդիրներով, որպէս նաև անցեստում, Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների համար 1893-ին և 1897-ին մի առան-

ձին զգալնութիւն ցոյց տւեց: Յոսալի է, որ գաւառական քաղաքներից հաստատ, ստուգ տեղեկութիւններ և ֆակտեր կը հաղորդեն խմբադրութեան: Իսկ մենք խոստանում ենք օգտւել հաղորդւած ֆակտերից մեր դրացմունքի առարկայ դարձնելով Մուրճի էջերում մեր երկրի ինքնավարական կեանքի վերաբերեալ խնդիրները:

«Նոր-Պար» թերթի № 89-ում մի առաջնորդող ենք գտնում ղեկավարած ինքնավարութեան խնդրին վերաբերեալ ընդհանրապէս, որը թւում է մեզ թէ գրած է իբր պատասխան «Մուրճ»-ի: Կարողւմ ես ալդ և դրա վերաբերեալ լօղածի նման լօղածներ չաճախ մեր օրաթերթերում և դարմանում ճշմարիտ թէ ինչ տարօրինակ հալեացքներ են տիրում դէպի հասարակական խնդիրները մեր օրաթերթերի ղեկավարների գլուխներում: Յօդւածում չալտնում է այն միտքը թէ շատ քաղաքներ տժգոհ են քաղաքային ինքնավարութեան կարգերից և երանի են տալիս ոստիկանական շրջանին, որ մարդիկ պատրաստ չեն ըմբռնելու ինքնավարութեան զաղափարը: Բայց ալդ բոլորը ասում է մի անպիսի տոնով, որ կարծես ինքը թերթն էլ ափսոսում է ալդ ոստիկանական վարչութիւնը! Եւ ալում բնական է, որ Նոր-Պարը ընդդէմ է լրագրական հրապարակականութեան, որը Մուրճը կարեօր միջոց է համարել ալ և ալ քաղաքների խորհրդարաններին ու հասարակութիւններին օգնութեան զալու համար, հրապարակականութիւն, որը ամեն հասարակական գործունէութեան անհրաժեշտ գործօններից մէկն է: Եւ անհ, Նոր-Պարը միասակար սովորութիւն է համարում խորհրդարանի արձանագրութիւնների հրատարակելը լրագրերում, որովհետեւ իբր թէ ալդ խորհրդարանի «հետորները» վառասիրութիւնն է դրուում և առիթ տալիս նրանց դեռ աւելի շատ խօսելու քան մի բան չինելու, և ալ ալսպիսի անհեթեթութիւններ: Թէ և ալս էլ կա, որ Մուրճ-ը՝ հրապարակականութիւն ասելով՝ չէր առաջարկում բոլոր քաղաքների խորհրդարանական ժողովների արձանագրութիւնները հրատարակել: Ալ է լրջօրէն զբաղւելը, և ալ՝ արձանագրութիւններ տալը:

Բանից դուրս է գալիս, որ ալդ թերթը բոլորովին անպատրաստ է, ինչպէս շատ նշաններից երևում է, ըմբռնելու և գնահատելու ինքնավարութեան զաղափարը:

Չենք զարմանում...

ՎՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՈՐ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆ

Վովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի իրաւունքների և պարտաւորութիւնների վերաբերեալ ժամանակաւոր կանոնների հաստատութեան մասին:

Բարձրագոյն հրամանով, Մինիստրների Վոմիտէտը, լսելով Վովկասի կառավարչապետի ամենահպատակօրէն զեկուցագիրը մարտի 17-ից, № 51, 1897 թ. մարտի 3-ի օրէնքի լրացուցիչ ժամանակաւոր կանոնների մասին, Վովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի իրաւունքների և պարտաւորութիւնների վերաբերմամբ, կարծիքով որոշեց. — յատկացնել Վովկասի կառավարչապետին հետևեալ ժամանակաւոր լիազօրութիւնները:

1) Հրատարակել հրահանգներ զիւղական և շինական գործերի տեղական հաստատութիւնների համար, կառավարչապետի խորհրդով քննելուց յետոյ:

2) Նշանակել օրէնքով կենսաթոշակ ներքին գործերի մինիստրութեան վարչութեան պաշտօնեաներին և նրանց ընտանիքներին, ինչպէս և միանւագ նպաստներ վերջիններին, քաղաքացիական ծառայութեան առանձին առաւելութիւնների մասին եղած կանոնադրութեան հիման վրայ:

3) Արձակուրդ տալ կայսրութեան ներսը և արտասահման բոլոր այն պաշտօնեաներին, որոնք նշանակուած են պաշտօնի մէջ Վովկասեան երկրում ներքին գործերի մինիստրի իշխանութեամբ, մինչև երկու ամիս ոռճիկ տալով և մինչև չորս ամիս՝ առանց ոռճկի:

4) Լուծել Վովկասեան երկրի զանազան նահանգների նահանգական ատեսնների մէջ ծագած հակաճառութիւնները իրաւասու-

Թեան մասին, ինչպէս և նահանգապետների առաջագործութիւնները արխիւացին գործերը ոչնչացնելու մասին այն զէպքերում, որոնք նախատեսնւած են ընդհանուր նահանգական հաստատութեան 601 և 602 յօդ. (օրէնսգիրք հ. II. հրատ. 1892) և հաստատել Կովկասեան երկրի աւաններում տանտէրերի համար պարտաւորութիւն՝ ոստիկանութեանը յայտարարելու տուն եկողների և դուրս գնացողների մասին:

5) Հաստատել Թիֆլիսի և Փութայիսի նահանգների ազնւականների ժողովների միաձայն որոշումները դրամական ժողովարարութիւնների մասին, հասցնելով այդ որոշումների մասին մինիստրների կոմիտէի տեղեկութեան, տարին մի անգամ ներքին գործերի մինիստրի միջոցով, ինչպէս և հաստատել ազնւականների ընտրութիւնների ժամանակամիջոցի փոփոխութեան վերաբերեալ որոշումները:

6) Փաղաքային ինքնավարութեան վերաբերմամբ Կովկասեան երկրի քաղաքներում և աւաններում բոլոր այն իրաւունքները, որոնք քաղաքային կանոնադրութեան հիման վրայ (օրէնսգիրք հ. II. հրատ. 1892) յատկացրւած են ներքին գործերի մինիստրին և գործադրւում են նրա կողմից առանց միւս մինիստրների հետ համաձայնութիւն կայացնելու և առանց գործը ներկայացնելու. պետական բարձր հաստատութիւնների քննութեան, այն պայմանով, որ այն գործերը, որոնք այժմ քննւում են նախապէս ներքին գործերի մինիստրի խորհրդում, քննեն կառավարչապետի խորհրդում:

7) Կովկասեան երկրում ռուսերէն լեզուով լոյս տեսնող մասնաւոր պարբերական հրատարակութիւնները ենթարկել այն պատիժներին, որոնք ցոյց են տրւած ցենզուրական օրէնսգրքի 154 յօդ., գործը նախապէս քննելով կառավարչապետի խորհրդում. թոյլատրել Կովկասեան երկրում լոյս տեսնող բոլոր պարբերական հրատարակութիւնների բաժանորդագրական վճարի փոփոխութիւնը և փակել ամեն տեսակ հրապարակական դրաղարաններ և ընթերցարաններ. և

8) Որոշել այն կէտերը, թէ որտեղ մշտական բնակութիւն պէտք է ունենան գիւղական բժիշկները և պէտք է լինեն բուժարաններ դեղատներով, հաստատել հրահանգներ, որոնք կ'որոնեն գիւղական

բժշկական մասի կազմակերպութեան մանրամասնութիւնները կով-
կասեան երկրում, ինչպէս և այն կարգը, որով պէտք է կատարեն
իրանց պարտաւորութիւնները այդ մասի ծառայողները, այլ և
որոշել Կովկասի նահանգների գաւառներում բժշկական կրտսեր ֆելդ-
շերների թիւը:

Թաղաւոր Կայսրը, 1898 թ. ապրիլի 28-ին, Բարձրագոյն հա-
ճութիւն տւեց կովկասի այդ որոշման:

ԳԵՒԵԹԱԿԵՆ ԹՂԹՂԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԳԱԻԱՌՈՒՄ

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼՄԻՑ

Մալխի 20-ին

Մեր կեանքում աջակիսի երևութներ են տեղի ունենում, որոնք պարզ
կերպով բնորոշում են մեր հասարակութեան անքուտուրականութիւնը:
Այդպիսի երևութներինցն է ամուսնութիւնը: Թէ ինչ տեսակ ամուսնութիւն-
ներ են տեղի ունենում գաւառներում, դա միանգամայն ասլէցուցիչ է և
խորը վիշտ ու մտածմունք է պատճառում նոցա, որոնց համար թանկ է
առողջ և ընդունակ սերնդի հարցը: Գժար թէ որեւիցէ բանում աջքան
թեթեամտութիւն նկատում լինի, որքան ալս գործում: Նոյն իսկ ղէպի ըն-
տանի կենդանիները աւելի լուրջ վերաբերմունք է ցոյց տալիս ժողո-
վուրդը, քան թէ ղէպի իւր որդոց ապագան: Հարցրէք իւրաքանչիւրին
առողջ կենդանիներ ունենալու պայմանները, նա ձեզ մի առ մի կը բա-
ցատրի. կամ թէ նոյն անձին հարցրէք մեծ և ընտրովի պտուղներ ստա-
նալու համար ի՞նչ է հարկաւոր անել, — նա ընդ մանրամասն տեղեկութիւն-
ներ կը տալ. բացց հրը հարցը վերաբերում է մարդկային առողջ և ընդու-
նակ սերունդ ունենալուն, ալդտեղ մեծամասնութիւնը ցոյց է տալիս իր
կատարեալ անգիտութիւնը, անհոգութիւնը և թեթեամտութիւնը, և ալս
մի աջակիսի հարցում, որի չաջող լուծումից է կախած ընտանիքների
բաղդաւորութիւնը: Եւ իրօք ինչ սէր և ուրախութիւն կարող է թագաւո-
րել աջն տանը, որտեղից կամ բժիշկն է անպակաս լինում, կամ խռովու-
թիւնները: Ալս ամենը տեղի է ունենալ մինչև որ ամուսնական հարցում
առաջնակարգ տեղ կը չատկացնէ փողին, քան առողջութեան, գեղեցկու-
թեանը՝ քան սէրին, բարեկամութեանը՝ քան բնաւորութեան, և ալն: Մեր
գիտողութիւնները Ազուլիսի վերաբերմամբ շատ անմխիթար են: Ֆիզիկա-
պէս և մտաւորապէս թող սերունդներ արդէն շատ են աշքի ընկնում:
Ներկայումս մեր գիւղում 20-ից աւելի խելագար, ապուշ, աննորմալ և ան-
դամալոյծ մարդիկ կան: Սա մի թիւ է, որը չափազանց մեծ պիտի համա-
րել մեր գիւղի համար, որի բնակիչների թիւը 1500-ից չի անցնում: Թ, Ղ-

Նեկով մ, կողմը ֆիզիկապէս թուլերին և հիւանդւոյններին, ես կարծում եմ, որ միայն այս ֆակտը բաւականին չուսահատեցուցիչ է և արժէ, որ մարդիկ մտածեն կատարող իրողութիւնների մասին: Արդեօք մտաւորապէս և ֆիզիկապէս թուլ սերունդների առաջ գալը չպէտք է վերագրել անկանոն կատարած ամուսնութիւններին: Խնկատի ունենալով տարիների ընթացքում կատարած ամուսնութիւնները, կարելի է վստահ կերպով ասել, որ մեծ մասամբ անլաջող ամուսնութիւններն են դեր խաղում: Սակայն ինչ սերունդ կարելի է սպասել աչն ամուսնութիւնից, երբ օտարութեան մէջ քաջաբաւած երիտասարդը պսակուում է գիւղական մի անմեղ օրրորդի հետ և կամ 33 տարեկանը 16 տարեկանի հետ, 60 տարեկանը 21 տարեկանի հետ, 22 տարեկան երիտասարդը՝ 28—30 տարեկան օրրորդի հետ, մտաւորապէս թուլ, թոքախտաւոր երիտասարդը մի ժամանակ սիֆիլիսով վարակւած օրրորդի հետ, առողջ և կալտառ երիտասարդը՝ ժառանգական թոքախտաւոր ընտանիքի զաւակի հետ, մտաւորապէս թուլ երիտասարդը՝ հոգեկան հիւանդութիւն ունեցող ծնողաց զաւակի, զաւատուչին՝ առողջի հետ, արեան պակասութիւնից հաղիւ քիչ կազդուրւած 16 տարեկան օրրորդը՝ 26 տարեկան երիտասարդի հետ, և ալլն և ալլն: Միթէ այս ամենը չի ապացուցանում մեր ժողովրդի տգիտութիւնը, միթէ սա չի հաստատում աչն, որ մեր ժողովուրդը անտեղեակ է գիտութեան մշակած հզօրակացութիւններին: Անշուշտ, եթէ տեղեակ լինէր ժառանգական օրէնքների հետ՝ երբեք իրեն թուլ չէր տալ ամուսնանալ չալտնի պակասութիւններով ընտանիքների զաւակների հետ, հաստատ համոզւած լինելով, որ ալդ պակասութիւնները ալոպէս թէ աչնպէս պիտի արտադաւեն իրենց ժառանգների մէջ, որով թէ վերջիններիս պիտի անբախտանան և թէ նոն իսկ իրենց ընտանեկան կեանքը պիտի թունաւորուի: Ասենք շատ անգամ անհնար է լինում ալդ պակասութիւնները նկատել, որովհետեւ իւրաքանչիւրին քաջ չալտնի լինելով ժողովրդի բծախնդրութիւնը և դրանից առաջացած բաւրասանքները, աշխատում են ծածկել աղջկերանց հիւանդութիւնները, ասելով, որ եթէ բժիշկ տանել բերելու լինեմ, դա առիթ պիտի տալ շատերին անհեթեթ լուրեր տարածելու աղջկալ մասին, որը և ապագալում պիտի նրա անբաղդութեան պատճառը դառնալ, և ահա ժողովրդի ալս տեսակ մերաբերմունքից վախենալով, ստիպւած են լինում բժշկի չղմնել, որով և թուլ են տալիս ամենաթեթեւ հիւանդութեանը գնալով մեծանալ և դառնալ կատարեալ անբախտութեան պատճառ թէ օրրորդի և թէ նրանից առաջացած սերնդի համար: Կարելի է ասել, որ աղջկալ տէրը թէ հարուստ և թէ աղքատ՝ կատարեալ անբախտ է: Նա չունի մինչև աղջկալ մարդու տալու օրը մի պալծառ օր: Նա կատարեալ գերի է հասարակաց կարծիքին: Կան հիւանդութիւններ և առհասարակ պակասութիւններ, որոնց մարդ կարող է և չնկատել, մանաւանդ որ շատերը չալտնում են

ամուսնանալուց չեսու կամ առաջի ծննդաբերութիւնից չետու. սակաւն ինչ կ'ստէք աշնպիսի հիւանդութիւնների մասին, որոնք ժառանգական են և, ալդ չալտնի լինելուց չետու էլ, իրենց թուլ են տալիս ամուսնանալ ալդպիսիների հետ: Մեզ չալտնի են ամուսնութեան աշնպիսի դէպքեր, երբ երիտասարդը ամուսնացել է մի օրիորդի հետ, որի ընտանիքում տիրում է ընկերութիւնը. կամ աշնպիսու հետ, որը վարակած է եղել ծնողներից սիֆիլիս հիւանդութիւնով և դրանից էլ ծննդ իսկ խելագարւած և ասլա ուղղւած. և կամ ամուսնանում են աշնպիսի ընտանիքի զաւակի հետ, որոնց սերունդը չալտնի է թէ իբր սերհատուղներ և թէ խելագարներ արտադրողներ. և ալն աշնպիսի դէպքեր: Շատ անգամ ամուսնացող երիտասարդները ուղղակի զոհ են լինում շնորհիւ իրենց ծանօթների և բարեկամների, որոնց զօրախտութիւն են ունենում հաւատալ, բալց կան դէպքեր էլ, երբ ուղղակի զոհ են իրենց շահասիրութեան: Վերջինս պակաս գեր չի խաղում մեր ներկալ խնդրում, մանաւանդ աղքատ դասակարգի մէջ: Թէ երիտասարդները և թէ մեր ծնողքը ալդ միջոցով են աշխատում իրենց ֆինանսական դրութիւնը լաւաւել: Շատերից չիշնք մի տարօրինակը: Մի պարոն, հարեան գիւղացի, ամուսնացնում է իր 22 տարեկան որդուն մօտաւորապէս 30 տարեկան օրիորդի հետ և ալդ ալն 400 ուրլու համար, որ աղջիկը հետը պիտի բերէր, իբր հօրից մնացած ժառանգութիւն. գորանով տղան մտադիր էր դրաւից ազատել իր ալդին: Անկասկած է, որ ներկալ դէպքում հալրը առաջնակարգ տեղը տւել է փողին, քան որդու բախտաւորութեան, նամանաւանդ որ աղջիկն էլ բացի ազնւ լինելուց, ունէր և տարօրինակութիւններ: Առաջնորդւելով աւելի իր սեփական շահերով, հալրը սակաւն չհառա էլ իր նպատակին, քանի որ փողը ստանալով մոխում է, իսկ ալդին անցնում է իբր սեփականութիւն վաշխառուի ձեռքը: Աչքի առաջ ունենալով տարիների ընթացքում կատարւած ամուսնութիւնները, կարելի է դրական կերպով ասել, որ կէսից աւելին առողջ սերունդ արտադրելու տեսակից անպէտք է: Արդ, հարց է ծագում. ում պարտաւորութիւնն է ալս չարիքի առաջն առնելու: Մեր կարծիքով ալդ բարոյական պարտքն է 1) Հոգևորականութեան, 2) Բժիշկների, 3) Մամուլի և 4) Խնտելիգենցիալի:

Աչքի առաջ ունենալով մեր հոգևորականութեան մտաւոր և բարոյական անանկութիւնը, պէտք է նրանցից մեծ մասամբ միանգամաւն հրաժարւել. նաանընդունակ է ալդ գերը կատարելու, դեռ շատ դէպքերում հոգևորականութիւնն է զօրախտութեան պատճառը և ալդ իրա մի քանի կոպէկների պատճառով: Մեզ մօտ գտնւող երեք քահանաներից ոչ մէկը համապատասխան չէ իր կոչման: Ունէինք և մի եպիսկոպոս (նոր հանդ. Աղափիրիան կպիսկոպոս, վանահայրը Ս. Թումաս Առաքեալ վանքի), սակաւն նա ևս իր կացութեամբ և ձգտումներով ոչնչով չէր զանազանում իր շրջապատող հոգևոր-

րականներէց փոխանակ նրանց վրայ ազդելու, նրանց բարձրացնելու և առաջնորդելու, զեռ ինքն էր վերջին տարիներս ստորացել մինչև նրանց աստիճանը: Կարելի է դեռ զարմանալ, թէ ինչպէս էին նրան իբրև ուսումնական եպիսկոպոսի՝ էջմիածնի զոհ համարում: Նա մի անհաստատ և անսկզբունք եպիսկոպոս էր և միմիայն ծառայում էր իր փորին: Տարիների ընթացքում ազուլեցին չլսեց նրանից մի առողջ և ոգևորիչ միտք, որը նրան ուղղէր դէպի գործունէութիւն: Նա մի բեռն էր մեր վանքի առանց աչն էլ աղքատ սնդուկի համար, որի վրայ նստել է 8—9 հազար ռուբլի...

Այդ դասակարգից լեռն ոգտաւէտ կարող է լինել բժշկական դասակարգը, իբրև սպեցիալիստ (մասնագէտ), սակաւն նա էլ վերոյիշեալ դասակարգի նման դատապարտւած է անչորութեան, աչն ինչ նրանք կարող էին իրենց դասախօսութիւններով և հանրամատչելի հրատարակութիւններով զգուշացնել ժողովրդին իրենց բռնած ուղղութիւնից: Անշուշտ զբանց մէջ կան բացառութիւն կազմողներ, ինչպէս և չորեքականութեան մէջ, սակաւն հարցը ալդ բացառութիւնների մասին չէ, ալ նրանում, որ մի դասակարգով, որի անդամների թիւը հարիւրների է հասնում և որի վրայ է լաւած ժողովրդի աչքը և նրանից է սպասում իր փրկութիւնը, աչսօր նա միանգամաչն նրան անուշադրութեան է մատնած: Եթէ ալդ տեսակ անչորութիւն ներելի է որեւիցէ դասակարգի, նոչնը աններելի է բժշկական դասակարգին, որը զբա համար մտաւորապէս պատրաստ է և կոչումն էլ հենց զբանումն է: Բալց ինչն է պակասում ալդ դասակարգին: Մեր կարծիքով՝ քիչ աղահուսթիւն և զբա հակառակը կարեկցութիւն դէպի թշուառ և սէր դէպի արիւնակիցը: Գոնէ աչտուհետև ալդ դասակարգը կատարէր իր բարոյական պարտքը և զբանով արդարանար թէ իր խղճի և թէ հասարակութեան առաջ, Ասպարէզը լաւն է և անելու բան չատ: Հունձք չատ, մշակներ, սակաւ:

Պալով մամուլին, պիտի խոստովանած, նա ևս լրիւ չի կատարել իր դերը: Տարիների ընթացքում իր էջերը զարգարելով անմիտ բանակութիւններով, որով միաչն փչացրել է ընթերցողի ճաշակը, չատ քիչ տեղ է չատկացրել լուրջ առողջապահական հարցերին: Ալդ կողմից բացառութիւն կազմում է Մուրճի, որը նախկին «Առողջապահական թերթից» լեռն, չնորհիւ իր չնորհալի բժիշկ աչխատակիցների՝ ինչպէս բժ. Թ. Չաքարեանի, բժ. Վ. Արծրունի, բժ. Գ. Սարգսեանցի, բժ. Ումիկեանի և բժ. Տէր Գրիգորեանի (Ղլարցո), տել է առողջապահական հարցերի վերաբերմամբ մի շարք լուրջ աչխատութիւններ: Մամուլի չրջանը լաւն է. նրա լսողների թիւը ամեն օր հազարների է հասնում և, բացի զբանից, նա է, որ մինչև անգամ հեռուօր անկիւններն է թափանցում. մի հանգամանք, որ ոչ մի հասարակական գործիչ ալդ աստիճանով չունի: Պէտք է ալդ հանգամանքը աչքի առաջ ունենալ և աչխատել զբաւել բժիշկ թղթակիցներին դէպի մա-

մուլը: Աւրախայի է նկատել, որ Մուրճի ալդ ուղղութեանը արդէն վերջի ժամանակս սկսել են և ուրիշները հետեւել, հրաւիրելով բխիչ աշխատակիցներ: Վաղուց պէտք էր արած, բայց լաւ է ուշ, քան երբէք: Մեր դրած հարցի վերաբերմամբ մեր գրականութեան մէջ մինչև այժմս չպատնի է բժ. Թադէոս Զաքարեանցի «Ամուսնական առողջապահութիւն» և «Ժառանգականութիւն» վերատառութեամբ լօղածները, որոնք տպւած են Մուրճի նախընթաց տարիների համալրերում և իր ժամանակ ընթերցող հասարակութեան կողմից բոտ արժանւոյն գնահատուցան: Առաջի լօղածը արտատրւած է Նաև առանձին գրքովով: Խորհուրդ ենք տալիս անխորքուր երկտասարդութեան անպատճառ ձեռք բերել և կարգաւ ալդ պատւական աշխատութիւնը և աշխատել նոյնպէս տարածել ընտանիքներում և թէ հեռաւոր խուլ անկիւններում: Երկտասարդութիւնը, որը հաց ճարելու համար չի խնայում զինուէլ ամեն տեսակ միջոցներով և գիտութիւնով, ամօթ է, որ չձեռնարկուած առողջ սերունդ և բախտաւոր ընտանիք կազմելու պայմանների հետ կը մտնի ամուսնական ծանր լուծի տակ: Սակայն ոչ միայն երկտասարդութեան պարտքն է, ալ և ծնողաց, որոնք նոյնքան բոքիկ են ներկայ հարցու, որքան և իրենց որդիքը: Այն ժամանակ միայն գուցէ աւսքան թեթեամբութեամբ չվերաբերուին զէպի իրենց որդոց ապագան, որքան այժմս: Սակայն ո՞վ միջնորդ պիտի հանդիսանալ ժամուկի և ժողովրդի մէջ, տարածելով վերջինիս մէջ օգտաւէտ գիտելիքներ և գրքովներ. դա մեր գաւառական ինտելիգենցիայի պարտքն է:

Թէ որքան համակրութեամբ են վերաբերում գիւղացիք զէպի ալդ տեսակ մտքերը և որքան չուտ են տարածում դրանք, ալդ բնթերցողը կը տեսնի հետեւեալ զէպիք: Մի քանի ամիս առաջ ինձ պատահմամբ զէպիք ներկայացաւ խօսել մի հեռաւոր հարուստ գիւղացու հետ ամուսնական առողջապահութիւնից: Մեծ եղաւ դարմանքս, երբ պարոնը լսելով խօսքս, խորը ախ քաւեց և դուխը թափ տուց: Բանից երևաց, որ պարոնը դժբախտ ծնողներից է. նա իր միակ զաւակը ամուսնացրել է մի ուրիշ գիւղի երկտասարդի հետ, որի մէջ արդէն թոքախտի նշաններ են երևում: Տղի ընտանիքը առհասարակ առողջ է:

—Ա՛յ, եթէ ալդ բանը ես առաջ իմանայի, բացականչեց դժբախտ ծնողը, այն ժամանակ ես ալսքան անբախտ չէի լինիլ:

Այնուհետև ինքը սկսեց հաստատել ասածներս, բերելով օրինակներ իրենց գիւղից: Ի վերջոյ խնդրեց ձեռք բերել իրա համար «Ամուսնական առողջապահութիւնից» մի օրինակ, որը և չուտով կատարեցի: Մի քանի ժամանակ անց ալս խօսակցութիւնից, զարմացմամբ լսեցի նոյն պատմածներս ալ գիւղացիներից, երբ սրանց հետ սկսեցի զրուցել վերոյիշեալ նիւթի մասին: Հարց ու փորձից երևաց, որ նոյն հարուստ գիւղացին է եղել տարածողը, որի հետ ես առաջները խօսել եմ: Նա զործ ունենալով վերջիններիս հետ, եղել է սրանց գիւղում և օգտակար զէպից, պատմել է նրանց ինձնից լսածները:

ԱՒԵՏԻՍ ԴԱԽԹԵԱՆՑ

Յ. Գ. Ուղարկելով խմբագրութեանը 3 բուլլի, խնդրում եմ Վ օրինակ «Ամուսնական առողջապահութիւնից» ուղարկէք ալն գի. գիւրը, որտեղ Մուրճ չի ստացւում: Յանկալի է նպատակ ալդ օգտաւէտ գրքի տարածելուն և տեսնել նրա երկրորդ, երրորդ, չորրորդ և աւելի տպագրութիւնները:

ՆՈՅՆԸ:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ ԲԱԳԻՈՒՄ

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Գ Ի Ի Ց

Առվկասում Բարձրագոյն դպրոց ունենալու հարցը չատ է զբաղեցնում վերջին տասը տարւոյ ընթացքում: Շատերը առաջարկում էին Թիֆլիսում համալսարան բանալ. սակայն ալդ միտքը չիրագործւեց և ինքիցիատորներին ուշադրութիւնը կէնտրոնացաւ պոլիտեխնիկում (քաղմարտական դպրոց) բանալու հարցի վրայ:

Թիֆլիսը ալդ հարցի առթիւ չատ է աշխատել և գործը իրագործման վրայ է: Թիֆլիսի լորդորը արձագանք գտաւ Առվկասի բոլոր անկիւններում, ի բաց առեալ երկու քաղաքից. Վլադիկաւազ և Բագու, որոնք նույնպէս աշխատում են, որ Առվկասում բացւելիք պոլիտեխնիկումը իրանց մէջ լինի: Ընթերցող հասարակութեան լաւտնի է թէ ինչ վախճան ունեցաւ Վլադիկաւազում պոլիտեխնիկում բանալու հարցը, բաւց լաւտնի չէ նոյն հարցի ծագումը Բագուում: Ուստի ներկայ նամակովս կը ցանկալի մի քանի տեղեկութիւններ հաղորդել ալդ վերջինի մասին:

Ապրիլի 17-ն մեր քաղաքագլխի պաշտօնակատար պ. Բելեասկին իւր մի շրջաբերական նամակով դիմում արեց մեր քաղաքացիներին և գլխաւորապէս նաւթարդիւնարերողներին հետեեալ խնդիրքով: Նթէ թուլատրւի պոլիտեխնիկում հիմնել Բագու, արդեօք ով ինչով և ինչ եղանակով կարող է օգնել ալդ հիմնարկութեան: Իւր առաջարկութիւնը պ. Բելեասկին պատճառաբանում է նրանով, իբր Բագու ինտելլիգենցիան չէ համակրում Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու հարցին, ալ կամենում է ալդ դպրոցը Բագու բանալ:

Մենք անկեղծ խոտովանում ենք, որ ալդ առաջարկութիւնը մեզ վրայ աւելի քան անախորժ տպաւորութիւն գործեց և ակամալից մենք մտածեցինք, թէ ալդ առաջարկութիւնը կամ յոպէական նախանձի ծնունդ պէտք է համարել և կամ թէ բաղդի բերմամբ հարստացած մի քանի պարոնների ինտրիգ, որոնք բարձրաձայն կերպով լարմար դէպքում գոռում են թէ, ալս կ'անեն, ալն ի'անեն, իսկ գործի ժամանակ լետ կը քաշեն զանազան պատճառաբանութիւններ անելով: Այսպէս թէ ալնպէս թիւրիմացութիւն

պէտք է լինի, որովհետև մենք համոզւած ենք, որ ոչ մի ինտելլիգենտ պարոն, որը լաւ ծանօթ է Բագւի և Թիֆլիսի կեանքի պայմանների հետ. երբեք թույլ չի տալ իրան ձախ տալ Բագւի համար, եթէ հարց բարձրացած լինի պոլիտեխնիկում բանալ Թիֆլիսում: Իրօք մենք մեր ենթադրութիւններով չսխալւեցանք: Այդ պարզեց ապրիլի 21-ի քաղաքային խորհրդի նիստում: Մեր կրթւած, քիչ թէ շատ զարգացած և գործի վրա բարեխղճ կերպով նաչող ձախաւորներից ոչ մէկը չէր պաշտպանում Բագւում պոլիտեխնիկում հիմնելու հարցը. նոքա բոլորն էլ մատնացողք էին անում մեր քաղաքի աւելի կենսական պահանջները և պակասութիւնները լրացնելու վրայ առ ալժամ: Թօսում և պաշտպանում էին Բագու պոլիտեխնիկում բանալու գործը մի քանի պարոններ, որոնք ալս կամ աչն միջոցներով ալժամ դիրք են ստեղծել իրանց համար: Այնպէս որ այ. Բելեաւսկու ասածը թէ իբր Բագւալ ինտելլիգենցիան կամենում է պոլիտեխնիկումը Բագու բանալ—ոչնչով չարգարացաւ:

Ընդհակառակը արտեղ պարզեց մի ուրիշ տեսակէտ, աչն է՝ «մեր»-ի և «ուրիշ»-ի: Մեր երկրի ընդհանուր շահը մի կողմ է դրւած: Այդ երեսաց քաղաքային խորհրդի ձախաւոր թուրք պ. Աշուրովի հարցմունքից. «Մենք տգէտ մարդիկ ենք, չգիտենք ինչ է պոլիտեխնիկում, եթէ ալդ հիմնարկութիւնից օգուտ կ'ունենալ մեր քաղաքը, ինչու մեր փողերը տանք ուրիշներին»: Ահա երևի աչն «ինտելլիգէնտները», որոնք ըստ կարծեաց պ. Բելաւսկու, ցանկանում են պոլիտեխնիկումը Բագու բանալ:

Այնպէս թէ աչնպէս Բագու քաղաքին վաւել չէ արհեստական կերպով որ և է արգելք ստեղծել Թիֆլիս պոլիտեխնիկում բանալուն, աչն հասարակ պատճառով, որ ալդ առթիւ Թիֆլիսը ամեն ինչ արել է: Տասնեակ տարի է, որ Թիֆլիսի մամուլը ալդ հարցը արծարծում է և կովկասցիներին լորդոր կարդում. և ահա ալժամ, երբ հարցը լուծւելու վրայ է, չանկարծ մենք հարուստ բազուցիներս պիտի երես շուռ տանք: Ոչ, ալդ ներելի չէ: Մեր քաղաքային վարչութիւնից Թիֆլիսը օգնութիւն սպասել չէ կարող, որովհետև բուրժուա ձախաւորները կամենում են իրանց փողը տալ Բագու հիմնելիք պոլիտեխնիկումին:

Սակաչն ալդպէս չվերաբերեց նաւթարդիւնաբերողների XII հերթական ժողովը դէպի Թիֆլիսում հիմնելիք պոլիտեխնիկումը, Խւր 28 ապրիլի նիստում նա քննութեան ենթարկեց ալդ հարցը. Ժողովին ներկայ էր և իշխան Գ. Թումանովը՝ «Նովոե Օբոլդէնիէ» լրագրի խմբագիրը, որը, ալդ հարցի մասին քանի տարի է աշխատում է ¹⁾: Իշխան Թումանովը

¹⁾ Իշխ. Գ. Թումանովը նաւթարդիւնաբերողների ժողովին ներկայ էր որպէս անդամ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի կողմից ընտրւած աչն լանձնաժողովի, որին լանձնւած է պոլիտեխնիկումի իրագործման համար միջոցներ գտնել:

մեր համառոտ ճառով ծանոթացրեց ժողովականներին հարցի դրուժեան հետ: Նրա ասելով ամեն ինչ արած է, մնում է միմիայն նիւթական կողմը ևս ապահովացնել, և այն ժամանակ հարցը լուծւած պէտք է համարել: Արվկասեան ուսումնարանական չրջանի հոգաբարձու պ. Եանովսկին ասել է, որ եթէ մինչև 80 հազար ռուբլի տարեկան կարող են տալ կովկասցիները՝ աչն ժամանակ հաւանական է որ Թիֆլիսում հիմնուի պոլիտեխնիկումը: Այդ դոմարից արդէն 33 հազար ռուբլի կալ: Յանկալի էր որ ժողովը ևս իւր կողմից տարեկան մի գումար նշանակէր պոլիտեխնիկումի համար: Ժողովականներից մի քանիսը առաջարկեցին 25 հազար ռուբլի չատկացնել իւրաքանչիւր տարի պոլիտեխնիկումին, սակայն սրա դէմ բողոքեցին մի քանիսները, առաջարկելով 5—6 հազար ռուբլի, պատճառաբանելով թէ Քաղում ևս պիտի բացուի պոլիտեխնիկում, նրան ևս պիտի տալ: Հարցը քննարկութեան հնթարկեցին և ձայների մեծամասնութեամբ՝ որոշեց թիֆլիսի պոլիտեխնիկումին չատկացնել իւրաքանչիւր տարի 17 հազար ռուբլի ¹⁾:

Աերջացնելով մեր նամակը, մենք՝ որպէս Բազու և Թիֆլիս քաղաքները լաւ ճանաչող, մեր բարոյական պարտքն ենք համարում մեր ձայնը միացնել ուրիշների հետ և կոչել, որ Արվկասեան պոլիտեխնիկումի համար Արվկասի քաղաքներից ամենապարմարը Թիֆլիսն է:

1) Թիֆլիսը բացի նրանից, որ կազմում է Արվկասի աղմինիստրատիւ կենտրոնը, կազմում է նաև երկրի տնտեսական կենտրոնը:

2) Թիֆլիսում բացւելիք պոլիտեխնիկումում, հնթադրւում է ունենալ գիւղատնտեսական լաչն բաժանմունք, հետեապէս այդ պոլիտեխնիկումը պիտի հիմնուի անպատճառ մեր երկրի գիւղատնտեսական մասում, ուր թէ հողը, բուսականութիւնը և բնութիւնը միջոց կը տան աւելի դործական կերպով անցկենալ առարկանները: Թիֆլիսը աչդ պահանջին համապատասխանում է, եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ մասամբ, չամենայն զէպս աւելի քան Բազուն, ուր չրջակայքը զուրկ են բուսականութիւնից, ներկայացնելով միմիայն չոր ու ցամաք աւազ:

3) Թիֆլիսի տնտեսական պայմանները աւելի բարեւաջող են քան Քաղւինը: Կեանքը, ապրուստը չափազանց թանգ է Բազու. այդ հանգա-

¹⁾ Աւելցնենք մեր կողմից, որ հարկաւոր եղաւ երկու քննարկութիւն կատարել. նախ աչս հարցի համար թէ՛ տալ արդեօք օժանդակութիւն: Թիֆլիսի պոլիտեխնիկումի համար: Այդ հարցը քննարկեց ոչ-ցենզի ձայներով և ընդունեց 47 ձայնով ընդդէմ 4-ի: Նրկրորդ հարցը՝ տալ աչդեօք տարեկան 17.000 ռ., թէ՛ մինչև 10.000 ռուբլի, որպէս առաջարկում էր նաւթադործների ժողովի խորհուրդը. Այդ հարցը քննարկեց ըստ ցենզի, և 17.000 ռուբլու առաջարկը ընդունեց 428 ձայնով ընդդէմ խորհրդի առաջարկի, որի օգտին տրեց 289 ձայն: Ծան. Խմբ.

մանքը մեր կարծիքով ամենազլխաւոր պատճառներից կարող է լինել, որ Բագւալ պոլիտեխնիկումի մէջ ամեն դասակարգից աշակերտներ մուտք չեն ունենալ: Ուսուցիչները ևս փոքր վարձով չեն վալ Բագու Մինչդեռ Թիֆլիսում կեանքը անհամեմատ էժան է, և Կովկասի ամեն կողմից հարուստ թէ աղքատ միջոց կ'ունենալ Թիֆլիսում ապրելու և աշխտեղի պոլիտեխնիկումում սովորելու:

4) Թիֆլիսի կլիման անհամեմատ աւելի առողջ է և բնութիւնը հարուստ քան Բագւինը:

Վերջապէս մենք կարող ենք մատնացոյց անել հաղար ու մի հանգամանքների վրայ, որով Թիֆլիսը աւելի լարմար է պոլիտեխնիկում բանալու համար: Վերոյիշած պատճառներն էլ բաւականաչափ կերպով ապացուցանում են Թիֆլիսի առաւելութիւնները: Մեզ բազուցիներիս մնում է միմիայն օգնութեան ձեռք մեկնել Թիֆլիսին, որպէս զի նա կարողանալ ըստ կարելուն չուտով իրագործել իւր պաշտելի իղձը: Մեր երեխաները Թիֆլիսում աւելի լաւ և առողջ կը զգան, ուստի մեզ վրայ բարոյական պարտք կալ, որ եթէ ալ 50 հաղար ուսուցիչ բաւականութիւն չանի, մի քանի հաղար ևս աւելացնել: Պետական դանձարանը ևս զուցէ մի գումար չատկացնի:

ՖԻԴԻՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆ

Բագու, 5-ն մալիս

1898 թ.:

ԻՍՊԱՆԱԿԱՆ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ¹⁾

Հիւս. Ամերիկան, Կուբայի համար սկսելով պատերազմը Իսպանիայի դէմ, իւր գործողութիւնը բաժանեց երկուսի. գլխաւոր ոյժը նա դարձրեց դէպի Կուբա, իսկ միւս կողմից յարձակում դրածեց Ֆիլիպինեան կղզիների վրայ: Ինչ վերաբերում է Կուբային՝ այսանդ գործը շատ դանդաղեց. մինչդեռ շատ շուտով ամերիկական Ֆլոտը՝ ծովակալ Դեւէի գլխաւորութեամբ՝ իսպառ ջնջեց իսպանական Ֆլոտը (11 նաւից բաղկացած) Կաւիտէ փորտային քաղաքի մօտ (Լուցոն կղզում), որը Ֆիլիպինեան կղզիների ամենաամուր կէտն է, Մանիլայի ծովածոցում, ուր է և Ֆիլիպինեան կղզիների մայրաքաղաք Մանիլան: Կաւիտէն նւաճելով՝ Ամերիկացիք չկարողացան վերցնել Մանիլա քաղաքը, զօրքի պակասութեան պատճառով: Եւ ներկայումս էլ (յուլիսի 15) այդ քաղաքը դեռ առնւած է, թէև ապստամբութիւնը՝ Ագւինալդօի առաջնորդութեամբ՝ ընդգրկել է բոլոր եօթ պրովինցիները այն օրից, երբ Ագւինալդօին յաջողեց մայլաի վերջը (հին տոմար) ոտի կանգնեցնել բոլոր զաւառները:

Դեւէի տարած յաղթանակի առաջ՝ Կուբայի դէմ ցոյց տւած գործունէութիւնը Ամերիկացիների կողմից՝ չափազանց անգոյն եղաւ, թէև Ամերիկացիների վերջնական յաղթանակի մասին ոչ ոք կասկածող չկայ: Ահա արդէն շուտով լրանում է երկու ամիսը պատերազմի յայտարարելուց յետոյ՝ և Ամերիկացիք միմիայն յունիսի 8-ին թէ 12-ին կարողացան որ և է զօրք իջեցնել Կուբայի ափը և միանալ ապստամբների մի զօրքի հետ (4000 հոգի), Սանտիագոից 17 անդլիական մղոն (մօտ 25 վերստ) հեռու:

Մինչդեռ պատերազմի սկզբում ամենքի ուշքը դարձրած էր

¹⁾ Տես սկիզբը Մուրճ № 4, Քաղաքական տեսութեան մէջ:

Կուբայի մայրաքաղաք Հաւաննայի վրայ, որը պաշարւել էր ամերիկական նաւերով, քիչ ժամանակ յետոյ ամենքի ուշքը դարձրեց Կուբայի հարաւարեմական մասում գտնուող Սանտիագո դէ Կուբա ¹⁾ քաղաքի վրայ, շինւած մի փոքրիկ ծովախորշի ափին: Իսպանական ծովակալ Սերւերա^ն էր, որ մի նաւախմբի ղեկն անցնելով՝ Կա-նաչ հրամանից անկատ կերպով ուղևորեց զէպի Կուբա. 30 ապրիլի նա հասել էր արդէն Ֆոր-դը-Ֆրանս (Ֆրանսիական Մտոի-լեան կղզիներից Մարտինիկ կղզու ամրացրած գլխաւոր քաղաքը) և այնտեղից ուղևորւել հարաւային Կուբա ու մտել Սանտիագոի խորշը, երբ զեռ ևս Ամերիկացիք ոյժ չունէին Կուբայի հարա-ուսմ: Սերւերայի այդ արշաւանքը կատարեց մեծ դադոնապա-հու(թեամբ ²⁾ և այն աստիճան խորհրդատր կերպով, որ զեռ ևս մայիսի 19-ին ամերիկական ծովակալ Շլէյ հարկ էր դատել իւր կառավարութեանը յայտնել, որ Սերւերայի լինելը Սանտիագոյում՝ անկասկածելի է: Եւ ահա, Սերւերայի այդ շարժման շնորհիւ՝ Ամե-րիկայի ռազմադիտական շարժումները ստացան աւելի որոշ կերպա-րանք: Պէտք էր ջնջել Սերւերայի էսկադրը: Դեռ դրութիւնը անորոշ էր, երբ Ամերիկացիք երեք նաւով ուժակոծեցին Հաւանայից զէպի արեւելք գտնուող Կարդենասս փոթը, որ տեւց մի ժամ, մնալով առանց հետեանքի: Մայիսի 1-ին չորս նաւով ուժակոծեցին Սիէն-ֆուէզոս նաւահանգիստը (հարաւային Կուբայում), ջանալով զէնք հասցնել ապստամբներին. բայց նոյնպէս անաջող: Նորից անաջող կերպով փորձեցին ուժակոծել Կարդենասսը: Անաջող անցաւ նաև Պենարիօ պրովինցում գտնուող Բահիա-Գոնդա քաղաքի ուժակո-ծումը (2 մայիս), որպէս նաև Պորտո-Ռիկո կղզու գլխաւոր քաղաք Սէն-Ժուանի ուժակոծումը: Մի փոքրիկ աջողութիւն եղաւ, երբ

¹⁾ Այս քաղաքի անունը ռուսաց և դոցա հետեւելով՝ նաև մեր հայոց տեղական թերթերը գրում են Սանտ-Յագո: Դա սխալ է. իսպանացիք գրում են (Santiago de Cuba), ուրեմն Սանտիագո և ոչ Սանտ-Յագո: Ի զէպ ասենք, որ իսպանիացում և մեծ մասամբ Ամերիկացում Սանտիագո անունով հինգ քաղաք կալ ու մի կղզի:

²⁾ Ամերիկացիք, խաբւելով լուր տւին թէ այդ նաւախումբը վերա-դարձել է Կադիքս (Իսպանիայում), մի լուր, որ ամենքին զարմացրեց: Մինչդեռ Սերւերան արդէն հասնում էր Կուբային:

նոյն ժամանակ, Տամպայից ճամբաւնկած ամերիկական նաւը կարողացաւ Կուբա իջեցնել երկու յիսնեակ զինւոր, որոնք միացան ապրստամբների հետ: Մայիսի 4-ին Հաւանայի խապանական նաւերը, զերազանցօրէն պաշտպանւած լինելով Հաւանայի ամրութիւններով, փորձեցին յարձակում գործել ամերիկական նաւերի վրայ, այն դիտաւորութեամբ, որ ամերիկացիք կարելիին չափ շատ ոյժ կենդրոնացնեն անտիկ Հաւանայի մօտ: Մայիսի 5-ին, Սերւերայի նաւախմբի Կուբային մերձեցած ժամանակ, ծովակալ Սամիսոն հրաման ստացաւ Կուբայի հարաւը գնալ՝ Սիենֆուէգոսի և Սանտիագոյի մուտքերը փակելու: Համար: Իսկ ծովակալ Շլէյ հրաման ստացաւ դէպի ծովը մեկնել՝ անյայտ զաղտնի ծրագրով: Այս զանգաղութիւնների ու անաջող փորձերի պատճառով, մինչդեռ խապանացի Սերւերայի անունը հիացմունք էր պատճառում Խապանիայում, Ամերիկացիք, տեսնելով իրենց անպատրաստ՝ ընկան տխուր տրամադրութեան մէջ: Վերջապէս մայիսի 15-ին հաղորդեց որ Ամերիկացիք կենդրոնանում են Սանտիագոյի մօտ, իսկ նախագահ Մակ-Կինլէյ հրաման տւեց 75.000 նոր կամաւորներ պրօշակի տակ կանչելու մասին, ամերիկական զօրքը 280.000-ի հասցնելու համար, որոնք սակայն դեռ մեծ մասամբ նախապատրաստութիւնների մէջ էին և ոչ պատրաստ՝ կռիւ դաշտերը մեկնելու: Ամերիկացիք սկսեցին հեռանալ Սիենֆուէգոսից թողնելով այնտեղ միայն չորս նաւ (17 մայիս) և միանալով Սանտիագոյի մօտ գտնւող նաւատորմին: Մայիսի 20-ին առաջին անգամ հրաձգութիւն եղաւ Սանտիագոյի մօտ երկու թշնամիների միջև, բայց անհետեանք մնաց: Երկրորդ անգամ ամերիկացիք ռմբակոծեցին քաղաքի ամրութիւնը, մինչդեռ 2000 ապստամբներ պաշարեցին քաղաքը: սակայն ամերիկացիք ետ նահանջեցին: Աւելի զօրաւոր եղաւ Սանտիագոյի ռմբակոծումը 24 մայիսի, որ տւեց 90 րոպէ, որի միջոցին արձակեց 70 ուսմբ: Նպատակն էր՝ դորանով ճանաչել խապանացոց բառարէյների դիրքերը: Բայց ինչ շատ կարեւոր եղաւ, այդ այն էր, որ Ամերիկացիք ծովախորշի մէջ անցկացրին Մենիմակ նաւը և խապանացիք էլ թող տւին մոտել որ տորպեդներով պայթեցնեն այդ նաւը, որպէս և եղաւ իսկապէս: Մենիմակ նաւը ընկղմեց ծովախորշի մէջ, ջրի վրայից երեցնելով միայն կալմերը և լոյզը: Հէնց նաւի ընկղմելն էլ

ամերիկացոց նպատակն էր, որովհետև զորանով նոքա կամեցան Սանտիագոյի ծովախորշի մուտքը փակել, ու այդպիսով Սերերայի էսկադրը խորշում փակած պահել: Իսպանացիք նախ յաղթութիւն կարծեցին, բայց այդ ոչ այլ ինչ էր եթէ ոչ: Ծովակալ Շլէյի ռազմագիրտութիւնը: Ծովակալ Սերերան այդպիսով մնաց փակւած, թէև Ամերիկացիք էլ զառապարտեցին անգործութեան երկար օրեր: Իսպանացիք փորձեցին ընկղմած նաւը պայթեցնել, որ խորշի մուտքը ազատուի. բայց Ամերիկացիք չթողին: Այժմ սակայն իմացւել է, որ այդ կարելի է խորշից նաւ անցկացնել՝ առանց ընկղմած նաւին դիպչելու: Մայիսի 29-ին ծովակալ Սամփսոն ութ նաւով նորոգեց Սանտիագոյի բարակոճումը, որ տեւեց երեք ժամ. բայց ափ իջնելը չեղաւ: Նոյնը կրկնեց յունիսի 4-ին, երբ 1000 ռումբ արձակեց ափի երկարութեամբ: Այս բոլոր անաշող փորձերից յետոյ՝ վերջապէս 8-ին թէ 12-ին յունիսի չիսուն ամերիկական նաւեր, որոնց հրամայում էին Շաֆտէր և Սամփսոն ծովակալները, կարողացան 15.000 զինուոր ափ իջեցնել Սանտիագոյից 17 մղոն հեռու (մօտ 25 վերստ), ուր մի շողոն դէպի երկրի խորքը միացան ապստամբների Գարսիա զօրավար 3000 մարդոց հետ:

Այսպիսով Ամերիկացիք ոտք են կոխում Կուբայի ցամաքի վրայ, և այսուհետ պիտե՛րազմի ընթացքը ընդունում է արդէն այլ կերպարանք:

Z.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիա: Չեմբերլէնի ճառը: Անգլո-Ամերիկեան նիզակակցութեան գաղափարը:

Ձեռքով չիւս. Ամերիկայի ու Իսպանիայի պատերազմի անդուլթեանը, քաղաքական մեծ խնդիրը ոչ թէ դա է, այլ Անգլիային զորանով ընծայւած առիթը՝ իւր համաշխարհային քաղաքականութեան համար նոր ճանապարհներ հարթելու: Անգլիայի փառքի մեծութեան արտայայտողը, որպէս անցեալ տարի, Վիկտորիա թագուհու 60-ամեայ յօբելեանին, նաև այսօր պահպանողական մինիստրութեան մէջ տեղ գտած արմատական անդամը՝ գաղութների մինիստր Չեմբերլէնն է, կրողը սերտ միութեան գաղափարի՝ անգլիական բոլոր գաղութների ու անգլիական մայր-երկրի միջև: Չեմբերլէնի այդ ջերմագին փայփայած գաղափարը մի նոր արտայայտութիւն գտաւ ներկայ մայիս ամսուայ 1-ին Բիրմինգհամում արտասանած ճառի մէջ: Բայց արդէն անցեալ տարւանից դէս՝ այդ գաղափարը նորա մէջ ընդարձակւել է՝ հասնելով այն չափսերին, որոնք համաշխարհային քաղաքականութեան ղեկավարութեանն են վերաբերում: Այս չնայած որ Չեմբերլէնը խօսեց ոչ իբր պաշտօնական ներկայացուցիչ ներկայ մինիստրութեան կողմից, այլ աւելի որպէս սոսկ անգլիացի, և չնայած որ լորդ Սալիսբրիին շտապեց պարլամէնտում յայտնել, որպէս թէ այդ ճառը բնաւ չի վերաբերում մինիստրութեան և թէ նա, Սալիսբրիին, այդ ճառի բնագրի հետ մինչև անգամ դեռ էլ ծանօթ չէ, բայց և այնպէս ամբողջ աշխարհքի մամուլը իսկոյն զգաց, որ Չեմբերլէնի բերանով խօսում է իսկական ազգային անգլիացին, և որ այդ ճառով մի քաղաքականութեան ուղի է գծւում նոյն իսկ ամենամօտ ապագայի համար:

Ձեմբերլէնի գաղափարը դաշնակցութիւնն է բոլոր անգլո-սաքսոն ազգերի մէջ: Ինչի համար. — Ռուսիայի ընդարձակելուն դէմ դնելու համար:

Քերես երբէք մի մինիսոր բանեցրած չլինի այնքան համարձակ լեզու մի օտար պետութեան դէմ, որքան այդ արաւ Ձեմբերլէնը Բիրմինգհամում: Անգլիան իրեն վտանգւած է կարծում ծայրագոյն Արեւելքում Ռուսիայի տառջնագլուխութիւնով:

«Ամեն մարդ նախատեսած էր, ամեն մարդ գիտէր ոչ թէ միայն մի քանի ամիսներից ի վեր, այլ շատ տարիներից ի վեր թէ Ռուսիայի անընդհատ քաղաքականութիւնը և յարատև փառամոլութիւնն էր՝ իւր արեւելեան տիրապետութիւնները տարածել դէպի հարաւ, սառցեցից ազատ նաւահանգիստ ունենալ (Թալիէնվան) իւր վաճառականութեան համար և սառուցից ազատ հանգրւան՝ իւր ապահովութեան համար (Փորտ-Արտուր): Այս կէտը չգիտցող չկար: Կառավարութիւնը գիտէր այս կէտը ինչպէս փողոցի ալեւն մի մարդ: (Ժիծաղներ): Բայց մի բան կայ որ ոչ ոք չգիտէր»:

Ինչը չգիտէին? Այն որ Չինաստանը այնքան տկար ու հիւանդ է Իբրև ապացոյց՝

«Մենք գիտէինք որ մի քանի տարիներից ի վեր Չինաստանի երկիւղը ստիպել էր Ռուսիային, որ սա ետ պարձնի այն հողերը, որ առաջուց ինքը զբաւած էր, և չեմ կարծում թէ այդ (չին-եպպոնական) պատերազմից առաջ շատ լուով գիտցողներ լինէին թէ Չինաստանի մանդարինների յոռի վարչութիւնը այդ հին Կայսրութիւնը առաջնորդած լինի դէպի մի գործնական անկարողութիւն, որով մի անժամանակ ամէն իրական ընդդիմութիւն բոլորովին ջնջւած է»:

Բայց, ասում է Ձեմբերլէնը—

«Այդ կէտը շատ կարեւոր էր գիտենալ: Այս իրողութիւնը ճանաչելուն պէս՝ կարող էիք տեսնել որ Չինաստանը բացարձակապէս նշաւակ էր զինուորական մի մեծ կայսրութեան (Ռուսիային) իւր հարիւրաւոր միլիոն բնակիչներով և Չինաստանի սահմանադրւի վրայ չորս հազար անգլիական մղոն ցամաքով: Ձեմբերլէն մեղադրում է ապա լիբերալ նախկին մինիստրու-

թեան, որ աչք տեսնելով Զինաստանի այդ անկարողութիւնը, ոչ մի պատրաստութիւն չտեսաւ Ռուսիայի առաջխաղացութեան դէմն առնելու համար, որից յետոյ՝

ւրկ ժամանակի մի պարզ խնդիր էր որ Ռուսիան ուղէր Փորտ-Արթուր գալ և իւր ազդեցութիւնը ընդարձակել Մանջուրիա երկրի վրայ։ Բայց նախորդ մինխտրութիւնը նոյն իսկ չկարողացաւ որևէ համաձայնութեան գալ Ռուսիայի հետ։ Ընդհակառակը չուզեցին միանալ Ռուսիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի միջամտութեան, որ այդ պետութիւնները արին արդեւելու համար որ Նապոնիան չաիրէ Փորտ-Արթուրին։ Կարելի է որ Անգլիան ևս այն ժամանակ իւր պայմանը դնէր. բայց այդ մինխտրութիւնը նպատակաւ համարեց մէկ կողմ մնալ և մի բան չարաւ։ Եւ ինչ պատահեց։ Անխուսափելին, ինչպէս միշտ լինում է։ Սպասւածը պատահեց, և Ռուսիան իջաւ դէպի վար՝ Փորտ-Արթուր և Թալիէնվան։

Ներկայիս մինխտրութիւնը պէտք է ուրեմն ուղղէր նախկին մինխտրութեան սխալները։

Վաղով այն եղանակին, որով Ռուսիա ապահովեց այդ գրաւումը, զալով եղած դիտողութիւններին ու խոստումներին, որ տրոււմ էին և տուանուհինգ օրից նորէն ետ առնուում, բան չեմ կարող ասել բայց եթէ այս որ՝ Վատանայի հետ ճաշ անողը պէտք է խոշոր դգալ ունենայ։ (Ժիծաղներ)։ Բայց ներկայ կառավարութիւնը ջանաց համաձայնութեան գալ Ռուսիայի հետ։ Զանացինք հասկացնել իրեն թէ մենք չենք նախանձում, առարկութիւն չունինք իւր առևտրական նպատակների դէմ, ոչ իւր վաճառականութեան զարգացման կամ իւր օրինաւոր հեղինակութեան տարածման դէմ։ Բայց ջանացինք նաև յորդորել իրեն որ մէկ կողմ թողնէ քաղաքական գերիշխանութեան ու գինւորական գրաւման դաշափարը։ Զյաջողեցանք։ Այս կէտը համաձայն չեղաւ իւր կառավարութեան փոստամոլութեան։ Զխարդացանք համոզել նորան, և այն ժամանակ միւս քող սքականութեան վրայ ընկանք—հատուցումի քաղաքականութիւնը. և ընդունեցինք Վէյհովէյի յանձնումը և առևտրական առանձնաշնորհումներ, որոնց կարևորութիւնը քիչ ժամանա-

կից զգալի է լինելու: Բայց կարծեմ թէ Ռուսիան հիւլէ անդամ չզօրացաւ Փորոս-Սրթուրով քան ինչ որ էր հինգ տարի առաջ: Կարծում եմ թէ, աւելի լաւ զիրքի մէջ ենք այսօր. բայց չեմ ուզում ձեզնից ծածկել իմ համոզումս թէ ընդհանուր կացութիւնը գոհացուցիչ լինելուց հետո է: Ապագայում գործ պիտի ունենանք Զինաստանում Ռուսիայի հետ, և այս տարբերութեամբ, որ Զինաստանի մէջ չունինք ոչ բանակ ոչ պաշտպանողական սահմանազլուխ:

Զեմբերլէնը պնդում է որ ուրիշ բան անել չէր կարելի, քանի որ Անգլիան մենակ էր մնացել: Կարելի էր պատերազմ հրատարակել և Փորոս Սրթուրը մի-երկու տարի Ռուսիայի դէմ գրաւել. բայց զուր փլինէր. քանի որ Անգլիան այնտեղ իւր ետեւը սահմանազլուխ չունի, զօրք չունի: Եւ ապա՝—

«Պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, թէ մինչև որ ղինւորական մեծ պետութեան հետ չզինակակցենք, ինչպէս Խրիմի մէջ, երբ Ֆրանսիան մեզ նիզակակից ունէինք, չենք կարող լրջօրէն վնասել Ռուսիային, թէև ճշմարիտ է որ նա էլ չի կարող մեզ լըրջօրէն վնասել:»

Զեմբերլէնը ներկայացնում է Զինաստանը, որպէս մի երկիր, ուր Անգլիան ունի հսկայական շահեր, և եթէ Անգլիան մնայ մեկուսացած՝ Զինաստանի ճակատագիրը կը փճուի առանց Անգլիայի: Զեմբերլէնը վերջացրեց իւր ճառը այս խօսքերով.

«Բայց այս երկրի (Անգլիայի) ապագայի վրայ մեծ փտահուլութիւն ունիմ, և չեմ տարակուսում թէ բոլոր դժւարութիւնների համար պիտի գտնուի մի ելք, որ արժանի լինի մեր աւանդութեան և ցեղին: Մեր հայրենիքը ամեն ազգից աւելի ծաղկած է և բարգաւաճ: Մեր ժողովուրդը միաբան է և գոհ, և ապահովութիւն եմ զգում թէ պէտք է կարողանանք դիմաւորել ապագայի մեծ պատասխանատուութիւններին այն աննւաճ ոգով, որ անցեալում մեր նախնիքներին յաղթանակով առաջնորդեց դժւարին և վտանգաւոր ժամանակների միջից:»

Այսպիսով ահա, Զեմբերլէնի ջատագոված նիզակակցութիւնը Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների հետ նպատակ պիտի ունենայ ապահովել մի կողմից Անգլիայի իշխանութիւնը Ասիայում ընդգէմ

Ռուսիայի, և երկրորդ՝ առհասարակ անգլո-սաքսոնական քաղաքակրթութիւնը:

Կը կայանայ թէ չի կայանայ Ձմբերկէնի երազած նիզակակցութիւնը Անգլիայի և Հիւս. Ամերիկայի միացեալ Նահանգների միջև — այդ ոչ ոք չգիտէ. բայց Ձմբերկէնի ճառը այնուամենայնիւ ցոյց է տալիս թէ ինչ ոգով է տոգորւած Անգլիայի քաղաքականութիւնը մանաւանդ Ասիայում, և թէ դրստելու ինչ հաշիւներ են վերապահւած Ասիայում առհասարակ:

Z.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐՆ ԶԱՆԳՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ. Պր. Շահնազար Շահնազարեանց (Ագուլիսից), Մուրճի տասնամեակ տարեշրջանի աւթիւ, Մուրճի պարտքերը հանգցնելու նպատակով նոյրեց 100 ռուբլի Մուրճի պարտքը աւալիսով մնում է 5048 ռուբլի 50 կոպէկ:

«ԽՕՍԷՔ ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒՄ ԷՔ» լոգւածի գաղափարը, համաձայն մեզ ուղղած թղթակցութիւնների, արձագանք է գտնում գաւառներում: Որպէս երևում է, մեր լոգւածը մի արտապաշտութիւն է եղել շատ տեղ զգացած պահանջի. բաւց ալն աստիճան ղօրեղ է գաւառական սահմանափակ մանուրդի և տեղական աւանդութեան ուժը, որ ալք գաղափարը համարում է եղել անիրագործելի, բոլորովին անպէտ, ինչպէս մի ժամանակ անհնարին է համարում եղել զրաբարի տեղ աշխարհաբարի գործածութիւնը գրականութեան մէջ:—Մենք աներկբաւ ենք, որ գրական լեզւի մուտքը ընտանիքների մէջ, աշխնքն գրական լեզւի մայրենի լեզու գտնալը ունենալու է նոյնքան մեծ հետեանքներ, որքան մեծ եղան հետեանքները, երբ աշխարհաբարը գրական լեզու դարձաւ: Կատարեալ քանցանք է աւսուհետե մանուկների ուղեղը չարմարցնել բարբառների, որոնք գրականութիւն չունին, որոնցով, ուրեմն, մեծացած հասակում չպիտի կարողանան մտաւոր սնունդ ստանալ: Դա նոյն իսկ քուլտուրական մեծ խնդիր է հալերիս համար:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ Պր. Լևոն Մանուէլեան Մարդասիրական ընկերութեան կողմից հրաւիրւած է Ընկերութեան գրադարանապետի պաշտօնով, Բաքու:

Պր. Թադէոս Զարտեան, որը 1890-ից սկսած մինչև 1897 թ. զինուորական բժիշկ էր Կովկասում և ապա Վարչաւալի զինուորական շրջանում, իսկ հոկտեմբերից 1897 թ. Լաւանի կատարում է օրգինատորի պարտականութիւնները պրոֆ. Ս. Ս. Բոտկինի սուր-վարակիչ հիւանդութիւնների կլինիկում (Ս. Պետերբուրգ), իբրև հրաւիրւած Զինուորական-Բժշկական Ակադեմիա. գիտութեան մէջ կատարելագործելու համար, նորերս ներկայացրեց իւր գիտելա-

յիւան բժշկութեան զոքտորի աստիճանը ստանալու համար: Դիտել-տացիայի վերջում, կենսագրական տեղեկատուի մէջ, իւր աշխատութիւնների շարքում քիչած են նաև զոքտորանտի Մուրճ'ում տպած աշխատութիւնները:

Բժ. Գարեգին Սարգսեանց, վերադառնալով Պարիզից, ստանձնել է բժշկի պաշտօն Նաւթագործների ժողովի խորհրդի հիւանդանոցում, Բայախանում:

ՄԱՌԲ ՆԻՒՐՈՂՆԵՐ: (Շարունակութիւն). Բժիշկ Գարեգին Սարգսեանց, ուղարկելով մեզ մի տարւալ բաժնեղինը, Մուրճ'ի ալ տարւալ մի օրինակը նւիրում է Պարիզի հալ ուսանողութեան:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ զպրոցների մասին, ինչպէս գրում է „Тих. Лист.“ լրագիրը, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն շրջաբերականով ժողովրդական զպրոցների ղրեկտորների առաջադրել է ընդունել աջն շինութիւնները և շարժական ու անշարժ ալ կալածները, որոնք ծառայում էին հալոց ծխական-կեղեցական զպրոցներին:

ԿԱՆԱՆՅ ՆՈՐ ԻՐԱՒՈՒՆԲՆԵՐԸ Ռուսիայում, Պետական Խորհրդի վետը. 23-ին կապարած և Բարձրագոյն հաստատւած վճռի համաձայն, որ պաշտօնապէս լալտարարեց մայիսի 2-ին, կին բժիշկները ընդունում են պետական ծառայութեան մէջ և նոյա լատկացում են ալն բոլոր առանձնաշնորհումները, որ վալելում են տղամարդ բժիշկները, բացի համազգեստի վերաբերեալ ոչ կարևոր արտօնութիւններից:

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐԶԱՊԵՏ Իշխ. Դ. Ս. Գոլիցին վերադարձաւ Թիֆլիս մայիսի 27-ին Ս. Պետերբուրգից, ուր նա ուղևորել էր երկրիս վերաբերեալ կարևոր խնդիրների քննութեանը մասնակցելու համար: Նորա հետ վերադարձան նաև կառավարչապետի զիւանապետ. Ի. Վ. Միցկիկ և ալ ուղևորները:

«ԱՐՁԱԳԱՆԻ» ԼՐԱԳՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ: Հեռաղիր Ռուսիայի հեռաղրական զործակալութեան. (մայիսի 27-ից) «Ներքին գործոց և արդարադատութեան մինիստրները, ժողովրդական կրթութեան մինիստրութեան կառավարիչը և սրբաղնագոյն սինոդի աւագ-պրովորորը վճռեցին՝ բոլորովին զաղարեցնել Թիֆլիսում հալոց լեզուով հրատարակող «Արձագանք» լրագիրը»:

ՍԻՆՈՒՆԻ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ: Եսայի եպիսկոպոսը եւ Յուսիկ վարդ. Մովսիսեանց, Բնտարաբիայի թեմի կառավարիչը, վերջինս արձակելով իւր պաշտօնից, նշանակւած են Ս. Էջմիածնի սինոդի անդամ:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ՝ ՈՐԲԱՆՈՅՆԵՐ.

I. Ս. Պատրիարք Օրմանեան թէ մօտ Կ. Պոլսի և թէ արտասահմանում գտնուող հարուստ հաւերին չատուկ գրութիւններ ուղղելով՝ կոչում է արած նոցա բարեսիրութեանը և նպաստ է խնդրած, որպէս զի Պատրիարքարանը կարող լինի աշխատանքները որոշողները պահպանել և նորերն ևս հաստատել:

II. Վան: Կարմրուորազ վանքը, որ աշխատանքները է, իւր շինութեան մէջ պահպանում է մի որքանոց 20 որբերով, ուսուցչով և խնամատարով:

— Խուլեվանքում (ալլապէս՝ Մովսէս կամ Մովսիսապանք), Խարբերդից երկու ժամ հեռու հաստատուած է որքանոց, ուր աշխատելու են 33 երեխաներ, մի չանձնաժողովի խնամակալութեան ներքոյ, որոնք են՝ պ. պ. Արաբիարեան, Տ. Ստեփանեան և Եսգճեան Գր. Որբերը ամենքը հազած են մէկ ձև մաքուր հագուստներ. գրասենյակներ չկան, նստում են ծալապատիկ: Մենաստանը ունի 16-17 սենեակ, երկու լարկերով. վերին լարկում վարժարանն է, ննջարանով. ներքին՝ ճաշատունն է:

Արաբիքում հաւոց որքանոցը բացեց մարտի 2-ին. որբերի թիւն է 33, որոնց 20-ը խնամուած են:

III. Գերմանական ընկերութիւնը «Օգնութեան գործը Հայերին» անունով գերմանական ընկերութեան գործունէութիւնից կարող ենք ամենաստուգ տեղեկութիւններ տալ, «Aus der Arbeit des Armenischen Hilfswerks» անունով թերթից, որի չունաւոր-ապրիլ ամիսների չորս համարները ստացած է Մուհի խմբագրութիւնը: Ընկերութիւնը իւր գործը սկսել է մայիսից 1896 թ., իւր զանազան կաշարաններում ընդունելով մօտ 700 երեխա, Դոցանից շատերը, մանաւանդ Բուլղարիա փախածների որդիքը, կարելի է եղել տեղաւորել նոցա ազգականների կամ ծնողների մօտ, իսկ 400-ից աւելի մնացել են ընկերութեան մշտական հոգաւորութեան ներքոյ, այն է՝ Ուրֆայում, ուր բերած են երեխերք Նախ Աղիամանից, 250 երեխա, Կիսարիայում 40, Պարսկաստանի Ղաթսար գիւղում և Ուրմիայում 60, Բուլղարիայի Վարնա և Բուրգաս քաղաքներում 60 երեխա, 280 հոգի բարերարներ են գտնուել, որոնք ընկերութեանը տալիս են իւրաքանչիւրը 100-ական մարկ (շուրջ 45 ռ.):

Ընկերութիւնը ունի երեք կաշարաններում Վարնա, Ղաթսար և Ուրֆա՝ բուժարան (կլինիկ) որը գործում է սկսած 1897 թ. նոր տմ. 18 չուլիսին: Աւելի աշխատել են 2 կին-բժիշկներ և 2 բժիշկներ: Դոցա գործունէութեան մասին գաղափար են տալիս հետեւել թերթը:

Նոր տոմարով բժշկական կոնսուլտացիաներ և բժշկական օգնութիւններ բժշկուհի օրիորդ Յիւրսէյի և ասիստենց-բժիշկ դոքտոր Աբրահամի ձեռքով եղած են՝ 11 970 (117 օրում), ամենամեծ մասամբ հալե-րին, չուրջ 25 % ոչ քրիստոնեաների (Թիւրքերի, տրաքների, հրէա-նեքի): Ուրեմն օրական միջին թւով 102 կոնսուլտացիա և բժշկական շօնութիւն: Բացի այդ կատարել են 142 օպերացիա, որից 20-ը ծանրաներից:

Այդ գերմանական բուժարանը, բացի ընկերութեան չորս ու-ր-ւնոցները խնամելուց, ամեն օր բժշկական տեսչութիւն է կատա-րում երկու ամբիկական որբանոցներում 120 երեխաներով և հաշ-լուսաւորչականների որբանոցում 40 երեխաներով:

Բուժարանը ծառայում է գլխաւորապէս հալազի աչրիներին և որբերին, որոնց թիւը Ուրֆալում (Նդեսիա) 10.000-ից անց է:

Պարսկաստանում ընկերութիւնը ունի 4 կաշարան որոնց կազմա-կերպողը և գլխաւոր ղեկավարն է պատտոր Ֆիշեր, որը մայիսի 1897 իւր կնոջ ու Պաուլինա աւուհով երկու քույրերի հետ Գերմանիայից Պարսկաստան եկաւ: 1) Ուրմիայում, ուր գործի գլուխ կանգնած է Դաւիդ Ա. Իսմաէլ սիրիացին, ուր գործում է նաև օրիորդ Մարգա-րիտ Պաուլիձատ: Դա մի որբանոց է սիրիացի որբերի համար. խնամ-ւում են 40 որբեր: 2) Սալմաստի գաւառի Ղալասար գիւղում, որի որբանոցի գլուխ կանգնած է հաշ Միհրան Բաղդասարեան (ամերի-կական հպատակ), որը տարիքով մարդ է և փորձառու՝ Բրուսայի որբանոցում իւր եղբորը՝ պատտոր Բաղդասարեանին երկար ժամա-նակ տեղապահութիւն արած լինելով: Նորան օգնում է օրիորդ Մարի Պաուլատ՝ վերը չիշածի մեծ քույրը, երկուսն էլ Քէօնիզսէրգի: Ղալասարում տեղաւորւած են 30 հաշ որբեր: Նոյն գիւղում ընկե-րութիւնը ունի մի հիւանդանոց, ղեկավարութեամբ Նւրուպալում ուսաց մի հաշ բժշկի: Ընկերութիւնը ունի նոյն տեղ նաև մի աղքատանոց՝ բոլորովին ծեր տղամարդոց և կանանց համար, որոնք ստիպւած էին Թիւրքիայից փախչել և փողոցներում ընկած էին: Նման մի աղքա-տանոց բացել է ընկերութիւնը նաև Ղալասարի հարեան Փայաշուկ գիւղում: Նրկու աղքատանոցներում խնամւում են մշտապէս 80-ից աւելի ծերեր: Մշտապէս այդ աղքատանոցներում մնացողները քիչ են. մեծ մասամբ նոքա տեղական հալերի մօտ տեղ են գտնում՝ նոր փախտակահաններին տեղ տալու համար: —

Նոյն գաւառի Հաւաւան գիւղում վերալիշեալ Դաւիդ Իսմաէլը մի ձեռնադործի դպրոց է բաց արել. ալգտեղ գործում են գուլպաներ ընկերութեան որբերի և աղքատների համար, կարում են անկողին-ներ, հայրստներ և այլն: Մօտ 30 հոգի ալգտեղ մշտապէս գործ են գտած:

Երրորդ կալարանը գտնուում է Մակուի խանութեան Ս. Թադէոս առարեալի վանքում: Ընկերութիւնը երկար ժամանակով կապալով է վերցրել վանքի հողերը, ուր աշխատում են փախստականները, որոնց տեղաւորել էին վանքի խուցերի մէջ, որոնք դատարկ էին: Կալարանի կառավարիչն է մի հայ՝ Արմենակ անունով:

Չորրորդ կալարանը Պարսկաստանում՝ Ղարաղուղումն է, ուր ընկերութիւնը մի երկրագործական կոլոնիա է հիմնել: Այդտեղ կարող կը լինէին 200 ընտանիք ապրել, եթէ ընկերութիւնը միջոցներ ունենար:

Մինչև լուսար 1898 թ. ընկերութիւնը ժամանակաւորապէս օգնել է 2000-ից աւելի հոգիների. իսկ մշտապէս հոգում էր մօտ 300 հոգու:

Բուլղարիայում, ուր ընկերութեան կոմիտէի ծառայութեան մէջ է պատտոր Աբրահամ Ամիրխանեանցը, 1896-ի վերջերքից սկսած օգնութիւն է տրած հարկւրաւոր ընտանիքների վարձա, Բուրգաս, Շումլա և Ռուսնուք քաղաքներում: Երեք վարձու տներում 300 աղքատ երեխաներ էին խնամուում, որոնցից մեծ մասը նաև նոր հագուատ են ստացել: Ամեն օր տրւում էր նոցա հաց, շոր և ամուսն Բացի ալդ, ընկերութիւնը ունէր մի արհեստանոց 65 ձեռագործող աղջիկների համար. զանազան արհեստանոցներում ընկերութիւնը ուսուցանում էր 14 տղալ, իսկ 60 երեխալ մնում էին ընկերութեան կատարեալ հոգացողութիւն տակ: Աշնանը 1897 թ. փախստականների մէջ քաղցից և վատ բնակարաններից լաւաջացաւ էպիդեմիա, որը դրեթէ ոչ մի փախստական ընտանիք չխնայեց. ալդտեղ օգնութեան եկաւ բժիշկ օրիորդ Մելիք-Բեգլարեան, որին ընկերութիւնը տւեց դեղեր: Այդ էպիդեմիայի միջոցին օր. Բեգլարեան 3.816 հիւանդի արաւ 9027 բժշկական կոնսուլտացիա: Ընկերութիւնը ապա շատ ընտանիքների օգնեց 1897-ի վերջերքը հարեներ վերադառնալու համար:

ՏԱՃԿԱԼԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ: Կովկասում սկսել է արդէն տաճկահայ փախստականների վերադարձի հոսանքը ղէպի հարեներ:

—Բարու 300 փախստականների հարեներ վերադառնալու համար Բաքուի ոստիկանապետ իշխ. Վոլկոնսկի'ն և պ. Համբարձում Մելիքեան ժողովեցին շուրջ 10-15000 ռուբլի, և ճանապարհեցին, ուղեկցութեամբ տէր Աբդար քահանայի, իզդիրի վրալով ղէպի տաճկական սահմանը, ստանալով անցադիր նահանգապետից: Աւելի քան 10.000 ռուբլի փոխադրեց նոցա օգտին ռուսաց ղեկավարին:

Փանծակի զաւառական վարչութեան կարգադրութեամբ մօտակալ երեք զիւղերում ապաստանած 80 տաճկահայ փախստականներ բեր-

ւեցին քաղաք: Գաւառական վարչութիւնը իւր մշտ ունեցած միջոցներով մաս-մաս խմբերով նոցա ճանապարհ գցեց զէպի հողերնիք: Գանձակի գիւղերում նոքա մնացին եօթ ամիս, ուր նոքա տեղաւորւել էին Գանձակի լաջորդ Բագրատ վ. Գէորգ-Թաւաքալեանցի ջանքերով:

—Մոսկուայի հայոց եկեղեցիների տպագրւած հաշւից երևում է է, որ 1897 թւին եկեղեցու հոգաբարձական խորհուրդը վճարել է եկեղեցական գումարներից «10 դաղթական ընտանիքների և ալլ անձերի» 121 ո. 40 կոպէկ:

—Մոսկուայի յոթերական եկեղեցու աւագ պատտօրը հանգանակել է լօղուտ հայ փախստականների Մոսկուայում 132 ո. 10 կոպ:

ՓԻՖԼԻՍԻ ՔԱՀԱՆԱՆՆԵՐԻ ՄԻԱՔԱՆՈՒԹԻՒՆ. Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Թիֆլիսի քահանաների մի խումբ, բաղկացած իննը հոգուց, մի կանոնադրութիւն է մշակել և որ Վեհ. Կաթողիկոսը իւր բարձր հաճութիւնն է տւել ալդ դործի համար: Կոնդակը տրւած է ապրիլի 17-ին, և ալդ կոնդակից, ուղղած Թիֆլիսի թեմի ս. առաջնորդին, երևում է, որ իննը քահանաների մշակած կանոնադրութիւնը ս. առաջնորդը ներկայացրել է Վ. Կաթողիկոսին մի գրութեամբ 27-ից մարտի ներկայ թւականի, համարաւ 135: Կաթողիկոսը կոնդակի մէջ լայտնում է թէ կանոնադրութիւնը ինքը գտել է «բաւական գոհացուցիչ և գործ գովելի», «արժանի խրախուսանաց» և ցանկալի, «եթէ ճշմարտիւ լարատեկցէ, դէթ ի բարւոքումն անկեալ վիճակի և համարման բաղմաց ի քահանայիցն մերոց չաչս ժողովրդականաց»: Թէ և լօղւած 14-ով կանոնադրութիւնը կարող էր փոփոխութիւնների ենթարկւել մի տարուց ինտու, բայց Վեհափառը, մի տարւալ փորձը քիչ համարելով, թուլ է տւել ալդ կանոնադրութեամբ վարւել երկու տարի: «Տեսցուք, եթէ լարատեկցէ և ինքեանք տան մեզ զհաշիւ երկամեալ գործողութեանց իւրեանց և զարդեանցն լայտ առնեն թէ որքան չահաւէտ և պատւաբեր լինի և որքան մասնակցողք չաւելուն, չաչնժամ կազմեսցեն նոքա զնոր իմն կանոնադիր ըստ ցանկութեան իւրեանց և անցեալ փորձառութեան և մատուցեն մեզ ի հաստատութիւն առւաւէտ գործադրութիւն»:

Այս ընկերութեան-միաբանութեան լաջողութիւնը, սակայն, որպէս մենք ենք հասկաց'լ նախաձեռնողների գիտաւորութիւնը, բնաւ չի կախւած մտանկողների թիւից, ալ միայն մասնակցողների բարուական ու մտաւոր ցենզից. որովհետև ընկերութիւնը միայն քահանայական խնդիրներ քննելու համար է կազմւած:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆԱՅԱԾ ՀԱՅՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ. Դժուր գաւառի (Խօլի նահանգ) երկու հայ գիւղերից մօտ 120 տղամարդ և կիւն հասարա-

կութիւն վերջերս ընդունել են մանմեղականութիւն, չիա աղանդիւ-
Պնդում են թէ ալդ կատարել բռնութեամբ: Թարիզում հրատա-
րակող «Նասըրի»: լրագիրը, իւր № 8-ում, մալխի 6, հարկ է հա-
մարել պնդել որ ալդ կատարել է «առանց որեւէ ստիպման և բըռ-
նութեան»: Պէտք է կարծել, որ քրիստոնեաներին ալդ քալէն անելը
ստիպել է չքաւորութիւնը: Գոնէ վիշեալ պարսիկ թերթի ասելով՝
Խօշի «Խմամ ջումանը», Աղա-Շէյխ-Նախնան, յոգանից աւելի քան
40 հոգու ճանապարհածախք տեց (յատերը կանչած էին Խօշ՝ կա-
ռավարութեան կողմից) և «մտադիր է հանդանակութիւն բանալ
դոցա բոլորին: օգնելու, որպէս զի յոգանից գոնէ աղքատներին հաս-
նի մի-մի զոյգ և զան արժէքը և երկրագործութեան անհրաժեշտ պա-
րագաները»:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. Նոր մինիստրութիւն: Մինիստր-Նախագահ Լմինը-Գովէ.
պաշտօնակ եղաւ և սաղրազամ նշանակեց Մուշիր-Գովէ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ առաջարկած է Պատրիարքաբանին միա-
ձայն, Եղիպտոսի զաւառական ընդհանուր ժողովի կողմից որպէս
Եղիպտոսի հաւոց առաջնորդ:

КАВКАЗЪ (Կաւկաս) լրագիրը իւր № 137-ում գետեղել է մի շատ
երկար առաջնորդող լօղած «Լեռ» ստորագրութեամբ, որ խօս-
ւում է Ղէորդեան ձեմարանի և հաւոց թեմական զպրանոցների մա-
սին, փաստաբանելու համար ալն տեսակէտը թէ ալդ զպրանոցների
ուսումնական մասի վրալ հսկողութիւնը պէտք է պատկանի ժողո-
վըրդական կրթութեան մինիստրութեան:

Յօդածի բովանդակութեան հետ մեր ընթերցողներին կը ծա-
նօթացնենք զալ անգամ:

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ԱՆՅՔԸ ԱՆԴԻԺԱՆՈՒՄ. Թուրքիստանի ընդհ. Նահանգա-
պետութ. մէջ, Ֆերգանում, 18 մալխի արչալուսին Գոն-Խիչլազ գիւղի
կողմից, որը իւր ալդիներով հասնում է Անշիթանի ուստաց բանակի
աջ կողմը, 1000 հոգուց աւելի տեղացիներ, առանց ձայնի մօտեցել
են բանակին, առջևից ձիաւորներ, ետեից՝ հետեակներ, միանգամից
չըջապատել են բանակի ծալրի բառակը, մտել են միջանցքների մէջ՝
խփելով և կոտորելով զինուորներին «ուռ» բացականչութիւններով:
Սկսել է կռիւը. ուստաց բանակը ունեցել է միալն մի արկղ պատ-
րոն—կարաուրների համար, որ իսկուց բաժանել է նոր արթնացած
պողպորուչիկ Նարսեւաձէ, որը սկսեց լարձակումը. տեղացիները սկսել
են ետ նահանջել, պաշտպանելով թերերով, խենջալներով, բատիկնե-
րով, մանգաղներով. ալդ միջոցին սպանւել են զորան կարդացող մուլան
և նորա մօտը եղած տասը մարդ, որոնք նշաններ էին կրում. ալլ
սպանւածներին ու վիրաւորներին ետ նահանջողները վերցնում տա-

Նուժ էին. սպանւեց ձիւս վրա՝ Նստած մարդը որը կանաչ դրօշակ էր բռնած. լարձակումից մինչև նախնջը տևեց քառորդ ժամ. կաւալերիայի բացակայութեան և պատրոնների չունենալու պատճառով՝ հալածանք գրեթէ չեղաւ. Բանակում եղած էին 163 ստորին զինւորներ. կուլից լիտոյ պակասել էր 31 հրացան, բալդ փամփուշտներ չեն կորել. Գաղաքի ռուս բնակիչները լաջորդ գիշերը անից ապաստանւեցին բերդի մէջ, ուր դտնւում էր ամբողջ դարնիդոնը և ուր փոխադրւեցին գրամները փոստից ու գանձարանից. Երբ Օչից և Մարգեղանից ռուսական եկան և հասաւ գններալ Պովալո-Շւէլկովսկին, քաղաքը խաղաղւեց. Մարգեղանից եկած ռուսան ետ դարձաւ լաջորդ օրը:

Գործի մանրամասները կը հաղորդենք. գալ անգամ, քանի որ դեռ ևս չարունակւում են խուզարկութիւնները. Առաջիկա լաւտենք որ ապստամբութեան գլուխը՝ Խան՝ բռնւած է և պահւում է բանտում. Նորա ասելով ինքը գործում էր թիւրքաց սուլթանի պատւէրի համեմատ:

ԱՆԳԼՈՍԻՔ ԲԱՔԻՈՒՄ. Անգլիական կապիտալիստների կողմից Բաքւայ նաւթալին գործերի մէջ մուտք գործելը ալս վերջին ամիսներում իւր վրա՝ ընդհանուր ուշադրութիւն դարձրեց, ալս հանգամանքի պատճառով, որ սպասւում էր թէ Բաքւայ նաւթալին գործերը գրեթէ ամբողջապէս կարող են անցնել անգլիացոց ձեռքն. Այդ լուրերի մէջ անհաւանական ոչինչ չկար, թէև շուտով պարզւեց, որը վաղաժամ էին նաւթահանքերից ոմանց անգլիացոց ձեռքն անցնելու լուրերը. Բայց թէ որքան լրջօրէն է սկսւած անգլիական կապիտալների հոսանքը դէպի Բաքու, ալդ երևում է ալս ուշադրութիւնից, որ մեր Ֆինանսական մինիստրութիւնը հարկ համարեց դարձնել անգլիական ընկերութիւնների ապօրինութիւնների վրա. Ռուսաց Ֆինանսական մինիստրութեան ագէնտը Լոնդոնում Ս. Վ. Տատիլլն տպեց «Թալմա» լրագրում մի նամակ, որ զրւած էր լանձնաբարութեամբ ռուսաց կառավարութեան. Այդ նամակում ալ. Տատիլլն վկայելով որ Նորերս Լոնդոնում կաղւած են ալլ և ալլ ընկերութիւններ Լոնդոնում նաւթի հողեր ձեռք բերելու և մշակելու համար, չախնում էր որ նոցա մեծ մասը հոգ չէ տանում կառավարութիւնից պատշաճաւոր թուլտուութիւն ձեռք բերել, մինչդեռ առանց ալդ թուլտութեան Ռուսիայում չեն կարող ակցիօնէրական ընկերութիւնները օրինական գոյութիւն ունենալ. Ռուսաց Ֆինանսական ագէնտը նախադրուշացնում է անգլիացիներին նաև ալս բանի համար, որ անանական կերպով ռուս հպատակների անուններով հողեր ձեռք բերելը ապօրինի է ճանաչւում:

ԲԵԼԻՆՍԿՈՒ մահաւան յիմամեակը, 26 ապրիլի, ամբողջ Ռուսիայում չիշատակեց արտակարգ երախտագիտութեան ցուցներով: Թիֆլիսի քաղաքացիին խորհրդարանը, իւր շինութեան դաշլիճում հոգեհանգիստ կատարեց, ալ և վճռեց Թիֆլիսի լաւագոյն փողոցներից մէկը անուանել նշանաւոր ռուս կրիտիկոսի անունով, և դալ տարի բացելիք քաղաքացիին դպրոցներից մէկին էլ տալ նորա անունը: Հոգեհանգիստ կատարեց նաև Բաքու խորհրդարանում:

Բելիսկու մասին Մուրճ'ը գալ անդամ պիտի տալ մի ընդարձակ լօղւած:

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ: Թիֆլիսի հայոց մամուլի և գրական շրջանի ներկայացուցիչների մի սուար խումբ, ժողովելով Աղբիւր-Տարազի խմբագրատանը, որոշեց հանգիստաւոր կերպով չիշատակել խաչատուր Աբովեանին, նորա մահաւան լիանամեակի առթիւ: Խաչատուր Աբովեանի չիշատակը արժանաւոր կերպով չարգելու համար որոշեց մի օր չատկացնել Աբովեանի չիշատակին, և ալ օր առաւօտը կատարել հոգեհանգիստ, երեկոյեան՝ պատշաճաւոր լիխանութիւնից թուլտուութիւն ստանալով՝ տալ մի գրականական երեկոյթ, որպէս ալ Եղսու Ղևոնդ Ալիշանի լօբելեանի առթիւ 1890 թիւն: Երեկոյթի ծրագիրը կազմելու է աչնպէս, որ նա ամբողջապէս նւիրած լինի Աբովեանին, իսկ երեկոյթից եթէ դրամական արդիւնք աւելանալ, չատկացելու է խաչ. Աբովեանի ընտանիքին: Հանգէսը ենթադրւած է կատարել աշնանը՝ կամ սեպտեմբերին կամ նոյեմբերին:

ՊՐՈՅ. ՄԱՐԻ ՅՕԴԻԱՄԵՆԵՐԸ, որոնցից մէկը քաղւածօրէն, միւսը՝ աւելի կարեւորը՝ ամբողջութեամբ թարգմանեցին Մուրճ'ի № 4-ում, ալ ժալուս են տեսել առանձին գրքովով (տես «Նոր ստացւած գրքեր»): Պր. Մարի առաջին լօղւածը, որ Մուրճ'ում քաղւածօրէն էր թարգմանւած, իւր ամբողջութեամբ լուս է տեսել նաև հայերէն, թարգմանութեամբ Ս. Հ-ի («Ակակի Մերեթելի Հայերի մասին») խորագրով: տես Մուրճ № 2—3-ում նոր գրքերի ցանկի մէջ): Ինկատի ունենալով լօղւածի կարեւորութիւնը, մենք աւելորդ չենք համարում դիտել տալ, որ պ. Մարի առաջին լօղւածի քաղւածօրէն թարգմանութեան համար մենք չենք հետեւած Ս. Հ-ի թարգմանութեանը, որովհետև մի քանի համեմատութիւններից համոզեցինք, որ Ս. Հ-ի թարգմանութիւնը ոչ միայն ճիշդ չէ, ալ և տեղ-տեղ, և աչն կարեւոր կէտերում՝ ուղղակի անպէտք է:

Ահա մի օրինակ: Մենք առաջ կը բերենք Ս. Հ-ի թարգմանութիւնից մի կտոր և փակագծերում կը գնենք տարբերութիւնները բնագրից: Ընթերցողը կը նկատի անշուշտ, որ փոքրիկ տարբերութիւնների հետ կան նաև խոշորները:

«(Պատկանեան) առաջին անգամ լուրջ կրիտիկայի ենթարկեց Վրաց տարեգրութիւնները, ցոյց տաւ ալի լիշատակագրի մէջ անգին (պէտք էր՝ խոշոր—крупные) անախրոնիզմներ, բացատրեց (պէտք էր՝ պարզեց—ВЫЯСНИТЬ) մի շարք փաստերի անգորութիւնը, որոնք հիմնած են անկասկած վիպական եղանակի վրա (խոշոր սխալ. պէտք էր թարգմանել՝ վիսլանական եղանակի վրա—на ЭПОНИМНОМЪ ПРИЕМѢ), որ իրեն ծանօթ է հալ պատմագիրներին, մասամբ ենթադրութիւնների վրա (շատ խոշոր սխալ) և մասամբ օտար հերոսների սխրագործութիւնները «վրացիացնելու» վրա (պէտք էր՝ մասամբ, ենթադրաբար, օտար հերոսների սխրագործութիւնները վրացիացնելու վրա—частью, предположительно, на „грузизации“ подвиговъ иноземныхъ героев. ալի ենթադրաբար բառից պ.Ս.Հ. շինել է՝ «մասամբ ենթադրութիւնների վրա», որ բնագրում իսկի չկայ) և ակներև կերպով ապացուցեց, որ Վրաց տարեգրութիւնները ալն ձևով, ինչ ձևով գոյութիւն ունէին իր օրերում (սխալ!), չալտնի են միալն եւրոպական գիտութեանը (նորից սխալ! Паткановъ... доказалъ, что грузинскія лѣтописи въ томъ видѣ, въ какомъ онѣ были въ его время единственно извѣстны въ европейской наукѣ. ալսինքն... որ Վրաց տարեգրութիւնները ալն ձևով, ինչպէս միալն նորա (Պատկանեանի) օրերով չալտնի էին եւրոպական գիտութեանը). և լամենալն դէպս (և-ը աւելորդ է ու սխալ. նորա տեղ, ինչպէս բնագրումն է, պէտք է լինէր ստորակէտ) արտադրութիւն են XVIII-րդ դարի, և թէ բացառապէս հալկական թարգմանութեամբ եղած (սխալ!) աւելի հին խմբագրութիւնը հալի թէ XI-րդ դարից աւելի հին լինի (շատ սխալ. պէտք է լինէր՝ և որ աւելի հին խմբագրութիւնը՝ առաջմ ծանօթ միմիալն հալկական թարգմանութեամբ, հալի թէ XI դարից աւելի հին լինի—и что болѣе древняя редакція, доступная пока исключительно въ армянскомъ переводѣ, едва ли древнѣе XI вѣка. որով պ. Մարրը չի պնդում թէ աւելի հին խմբագրութիւնը բացառապէս հալկական թարգմանութեամբ է եղած, ալ միալն զոուչաբար չալտնում է թէ աւելի հին խմբագրութիւնը առաջմ միալն հալերէն թարգմանութեամբ է մեղ ծանօթ):

Եւ ալւքան անճշտութիւններ ու սխալներ միալն մի պարբերութեան մէջ!

ՀԻՏՏԻՏՆԵՐԸ ԻՐՐ ՆԱԽԱՀԱՅՆԻՐ ՊՐՈՓ. Պ. ԵՆՆԱՆ ՆՈՐԵՐՈ ՏՐԱՏԱՐԱԿԵԿ ԻՐՐ մի նշանաւոր աշխատութիւնը՝ Հիտտիտներ և Հալեր (գերմաներէն լեզուով). Ստրասբուրգ, 1898, XXV+255 էջ, 10 տախտակներով և մի քարտէզով. գինն է 25 մարկ Ալդ մեծ աշխատութեան մէջ պրոֆ. ԵՆՆԱՆ, հիտտիտական արձանագրութիւնների հիման վրա

ապացուցանում է, որ Հիտտիտները՝ ալթման Հալերի նախնիքն են, որոնք Կիլիկիային տիրապետելուց լեռնո՝ տարածելովն մինչև Փռիզիա և Լիկաոնիա, որոնց լեզուները նույնպէս նման են հալերէնին, և որ Քրիստոսից մօտ եօթ դար առաջ մտան ալթման Հալաստանը ու տիրեցին տեղացի Ուրարտացիներին:

ԽՈՒԴԱԴԵԱՆԻ ԿՏԱԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի մասին անցեալ ամիս մեր տւած տեղեկութիւնից արդէն չափոնի է մեր ընթերցողներին, որ հանդուցեալ Յովհ. Խուզազեանի կտակած գումարի (մօտ 112.000 ռ.) գործադրութեան համար ընդհանուր ժողովը մի լանձնատոյով ընտրեց, որը մինչև տարւալ վերջը պիտի ընդունի և քննի ալ և ալ անձերից ստացւած առաջարկները: Յանկացողները իրենց առաջարկներով կարող են դիմել ալ հասցէներով. Тифлисъ. Д-ру Аристакесу Заргарянцъ, որպէս նաև խմբագրութեանս՝ Тифлисъ. Въ редакцію „Мурчъ“.

ՀԱՅՈՑ ՈՐԲԱՆՈՅ: Յովհ. Խուզազեանի կտակած 112 000 ռուբլու տոկոսները (տարեկ. շուրջ 6000 ռ.) գործադրելու համար առաջարկ է եղած մի որբանոց հիմնել, հալ մանուկ անտէր որբերը պահելու ու դիւզատնտեսութեան ու աշխատանքի մէջ կրթելու համար: Այդ առաջարկին համակրողներից նոցա, որոնք իրենց ցուցմունքներով կարող են օգտակար լինել, խնդրում ենք որ չլանան իրենց դիտողութիւնները հաղորդել Մուրճի խմբագրութեան՝ որքանոցը հիմնելու չարմարագոյն տեղի մասին, ալ և հաղորդել իրենց առաջարկած տեղի մասին կարելիին չափ որոշ տեղեկութիւններ, որոնք կարողութիւն ունին մի որբանոցի համար. այն է՝ դիւզի բնակիչների թիւը, բնակիչների դասակարգութիւնը ըստ ազգութիւնների, կրօնների և պարագմունքների, օգը, ջուրը և ալ առողջապահական հանգամանքները. տեղացիների վարք ու բարքը, չարմարութիւնները գիւղատնտեսութեան և արհեստներին վարժեցնելու համար՝ դիւղում գոյութիւն ունեցող միջոցներով. կան մօտերքը ֆերմաներ, գործարաններ կամ մեծ արհեստանոցներ. հաղորդակցութեան միջոցները նահանգական քաղաքի հետ. երթևեկութեան մեծութիւնը և հանգամանքները. տեղական գները հացի, մսի, բանջարեղէնի, գինու. կալ արդեօք տեղում կամ մօտերքում բժիշկ և բուժական հաստատութիւն, դեղատուն և ինչպէս են բժշկական վարձատրութեան պալմանները. քանի հայոց եկեղեցի կալ և որքան կիրթ են քահանաները. գիւղում որչափ է ծաւալած զրազիտութիւնը և զրազարանական ինչ հասարակաց կամ մասնաւոր հաստատութիւններ կան տեղում:

ՄԱՄՈՒԼ: Բիւրակն շաքաթաթերթը, որ դադարեցրած էր վերջին ժամանակներս, նորից սկսեց հրատարակել, փոփոխւած խմբագրութեամբ և ծրագրով: Նիւթերը նւիրւած են գլխաւորապէս ժողովրդական բանահիւտութեան, բարբառների և առհասարակ հաշ լեզւի ուսումնասիրութեան, հայկական ազգադրութեան, մասամբ նաև կրթական գործին: Գինը օտար երկիրների համար 12 ֆրանկ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

Թիֆլիս: Խորհրդարանի նիստում 15 չունիսի իրաւասու պ. Նադարէթ Տիգրանեանի և քաղաքագլուխ պ. Գ. Աւանգուեանի միջև տեղի ունեցաւ մի բանակութիւն, որի համար քաղաքագլուխը ստիպւած եղաւ ընդհատել նիստը. բարեբախտաբար իրաւասուների նիստը ապա շարունակեց իւր կարգով, առանց, սակայն, կարողանալու պատահած միջնադէպի տպաւորութիւնը անհետացնել: Մենք շատ, շատ և շատ ենք ցաւում, որ ալգայիսի մի դէպքէ պատճառ եղողը նորակազմ երիտասարդ կուսակցութեան ներկայացուցիչներից մէկն է խորհրդարանում: Ժամանակի սղութիւնը չի ներում մեզ աւելի հանգամանորէն խօսել այդ մասին, բայց միայն չոյս ունինք, որ պ. Տիգրանեան իւր արարքի անտեղիութիւնը հրապարակով կ'խոստովանի իւր ընկերակից իրաւասուների առջև, թողնելով որ իւր միակ պաշտպան Մշակ լրագիրը միութարւի պատահած դէպքի ստալօգ արձանագրութիւնով:

Շուշույ քաղաքագլուխ ընտրւած պ. Գերասիմ (Գրիգոր) Մելիք-Շահնազարեանցը (ազէնտ պետական կալւածների մինիստրութեան) չհաստատուեց Գանձակի նահանգապետի կողմից: Քաղաքագլուխ ընտրւած է ալօմ պաշտօնաթող փոխ-գնդապետ Կարապետ Գանիէլեան:

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ: Հետեւեալ տեղեկութիւնները հաղորդել է մեզ մեր աշխատակից պ. Գր. Վանցեան, որ և առաջ ենք բերում, դասաւորելով ուսանողների աղգանուները՝ ուսած տարիների համեմատ:

I. Բերլինի համալսարան 1897-98-ին: Տէրտէրեան Միքայէլ, բնագիտութիւն. ուսանում է 6 տարի (=12 կիսամեակ կամ սեմէստր). Նորաշէնցի (Շուշու աղ. գաւ.), հայրը քահանայ. միջնակարգ ուսում առել է Գէորգեան ճեմարանում. ուսանում է բարերարի և եղբոր հաշուով:

Աբեղեան Մանուկ, լեզւագիտութիւն. 4 տարի. Աստապատցի (Հին Նախիջևանի գաւառ), Գէորգեան ճեմարանից, հայրը հողագործ. բարերարի հաշուով:

Փալանթար Անուշաւան, քիմիա, 4 տարի, Ագուլիսից, ուէալական դպր., հայրը՝ ուսուցիչ:

Նդիաբեան Սեդրակ, բժշկութիւն, 4 տարի, Հալէպցի, բողոքականաց դպրոցից, հայրը վաճառական:

Շամտանձեան Միքաէլ, քաղաքատնտես., 4 տ., Կ. Պոլսեցի, Կենդրոնական վարժարանից, հալը վաճառական:

Աւժակբէկեան Յակոբ, քաղաքատնտես, $3\frac{1}{2}$ տարի, Թաւրիզեցի, գերմանական գիմնազից, հալը կալածատէր:

Վանցեան Գրիգոր, մանկավարժութիւն և ենական գիտութիւն, $2\frac{1}{2}$ տ, Բեժանօ գիւղից (Ախալքալաքի գաւառ) Ներսիսեան դպրոցից, հալը հողագործ:

Բունիաթեան Մենտոր, քաղաքատնտես, $2\frac{1}{2}$ տարի, Յընաչ գիւղից, գիմնադաւարտ, հալը վաճառական:

Թումաշեան Սարգիս, լեռնալին գործ, $2\frac{1}{2}$ տ., Բաքուցի, ուէալական դպր., հալը գրամատէր-վաճառական:

Աղամեան Սուրէն, քիմիա, $2\frac{1}{2}$ տարի, Շուշեցի, ուէալական դպր., հալը վաճառական:

Էարա-Մուրզա Պօղոս, մաթեմատիկա, $2\frac{1}{2}$ տարի, Ղարասուբազարից (Ղրիմում), ուէալական դպր., հալը վաճառական:

Աւետեան Աւետիս, քաղաքատնտեսութիւն, $1\frac{1}{2}$ տարի, Շուշեցի, գիմնադաւարտ, հալը վաճառական:

Միլիք Ղարադէօղեան աւուճ?, $1\frac{1}{2}$ տարի, Թիֆլիսեցի, հալը Ղարադաղից նախկին նօտար (Տեղեկութիւնները թերի):

Սարգսեան Քրիստափոր, քաղաքատնտեսութիւն $1\frac{1}{2}$ տարի, Բաքուցի, ուէալակ. դպր., հալը վաճառական:

Էլմաշեան (աւուճ?), բժշկութիւն, $1\frac{1}{2}$ տ., Տաճկաստանից, բարերարների հայտի:

Տէր-Մարկոսեան Ալէքսանդր, գիւղատնտեսութիւն, 1 տարի, Գիրք գիւղից (Շամախու), ուէալական դպր., հալը ծառայող քաղաքալին վարչութեան:

Յովհաննիսեան Յակոբ, քիմիա, $1\frac{1}{2}$ տարի, Շուշեցի, թեմակ. դպրոցից, հալը քահանայ:

Աւագեան Վարդան, քաղաքատնտեսութիւն, $1\frac{1}{2}$ տարի, Աստրախանցի, գիմնադաւարտ, հալը վաճառական:

Խախանեան Տիգրան, բժշկութիւն, $1\frac{1}{2}$ տարի, Շուշեցի, ուէալակ. դպրոց, հալը մետաքսի գործարանատէր:

Տէր-Գասպարեան Սարգիս, քաղաքատնտեսութիւն, $1\frac{1}{2}$ տարի, Բաքուցի, ուէալական դպր., հալը վաճառական:

Տոտոմեան Վահան, քաղաքատնտեսութիւն, (քանի երրորդ տարին?), Աստրախանցի:

Կարա-Մուրզա Պետրոս, բժշկութիւն, առաջին կիսամեակում, Կարասուբազարից (Ղրիմում), ուէալական դպր., հալը վաճառական:

II. Բերլինի պոլիստենիկում: Մանասեան Արչակ, քիմիա, 2¹/₂ տարի, Գանձակի գիւղից, գիմնազաւարտ հալը քահանայ:

Մեծլումեան Ղևոնդ, լեռնալին գործ, 1¹/₂ տարի, Մեղրի գիւղից, գիմնազաւարտ, հալը քահանայ:

III. Բերլինի այլ ուսանողներ: Գէորգեան, Կոմիտաս վարդապետ, երաժշտութիւն, 1¹/₂ տարի, Կոտինա գիւղից (Փսքր-Ասիա), Գէորգեան ձեմարանից, հալը արհեստաւոր. բարերարի հաշու:

Տէր-Մարկոսեան Ալէքսանդր, գիւղատնտեսութիւն, 1 տարի, Գիրք գիւղից (Գոկչա գաւ.), ռէալական դպր., հալը քաղաք. վարչութեան ծառայող:

Ասպիտով Բերլինում 1898—98-ի կիսամեակում ուսանում էին 26 հալեր, 20-ից մինչև 32 տարեկան հասակում: Գոցանից, մեր թղթակցի տեղեկութիւններով, 15-ը գիտեն հալերէն, 7-ի համար հիմնական լեզուն (որով մտածում են)՝ ռուսերէնն է, մէկի համար՝ գերմաներէնն է, երկուսինը անլալտ:

Այլ քաղաքների համալսարանական ուսանողների մասին գալանգամ:

ԾԱՂԻԿ ՊԱՏԻԱՍՏՈՂՆԵՐ Անդրկովկասում: Բժշկական մասի վարչութեան առաջարկով երկրիս բարձր կառավարութիւնը հաստատեց ծաղիկ հիւանդութեան դէմ պատւաստում կատարողների շտապը, որով Անդրկովկասի բոլոր գաւառներում պատւաստողների թիւն է 157:

ՄՐՅԱՆԱԿ Թէ՞ ԽԼՈՂՈՒԹԻՒՆ: Մի քանի ամիս առաջ, երբ իմացեց որ պ. Աւետ. Պօղոսեան Նւիրել է 10.000 ռ. Հալոց Հրատ. Ընկերութեան՝ մանկական և ժողովրդական գրքեր հրատարակելու համար, ամբողջ հասարակութիւնը միաբերան շնորհաւորեց հրատարակչական գործին նպաստող ալդ իւր տեսակում անդրանիկ նւէրը: Ապա գտնւեց նաև պ. Պօղոսեանի օրինակին հետևող—պ. Խանգեալդի Բաղալեան (Ռոստովում), որը նւիրում էր 5.000 ռուբլի նույն նպատակով: Բալց անխառը չեղաւ ամենքի ուրախութիւնը ալդ նոր կարգի նւէրների համար: Մշակի խմբագրութիւնը գտաւ, որ ինչ-որ լաւ բաներ են կատարում առանց լրեն հարցնելու, առանց որ իրեն խորհրդի զիմելու հարկ զղան: Եւ ահա նա, ալդ թերթի խմբագրութիւնը, ալդ նւէրների մասին լուրերը հաղորդելով՝ շտապում է գործի մէջ խառնել իւր խորհուրդներով: «Շատ լաւ է, (դատում էր Մշակը. № 52), որ ալդ գումարի մի մասով, ինչպէս արդէն նախադիւ է պ. Պօղոսեան, պիտի հրատարակեն ժողովրդական-մանկական գրքերը» (ի նկատի առէք որ պ. Պօղոսեան նախագծել էր մանկական և ժողովրդական գրքերի հրատարակութեանը լատկացնել ոչ թէ իւր նւէրի մի մասը, ալլ ամբողջը. Մշակը՝ զիտմամբ սղուաղում էր իւր իսկ:

Յղթակցի գրածը. տես թղթակցի հաղորդած լուրը Մշակ № 47, որի հետ համեմատեք Մուրճ № 4, էջ 567): «Մենք, շարունակում էր Մշակ'ը, կ'ցանկալինք, որ մնացած գումարով (աչն մնացած գումարով, որ իսկի գոյութիւն չունէր!) գրական մրցանակ նշանակէր, իհարկէ, Հրատարակչ. Ընկերութեան որոշմամբ, և ալ մրցանակին տրէր «Գրիգոր Արծրունու մրցանակ» անունը...»

Ընթերցողը, կարծում ենք, պարզ հասկացաւ, որ Մշակ'ի խմբագրութիւնը պարզ ի պարզու աշխատում էր արդէն կատարած նւերներին մի ալ նշանակութիւն տալ. դրա համար նա, ալ թերթը, ձեւացնում էր բանը աչնպէս, որ պ. Պողոսեանի 10.000 ռուբլու նւերի մէջ մանկական և ժողովրդական գրքեր հրատարակելու նպատակին ծառայող գումարից դուրս՝ իբր թէ կար և մի մնացորդ գումար. Դա, Մշակի կողմից, ոչ ալ ինչ էր, բալց եթէ պարզ խաբէութիւն, նա հնարումէր, որպէս ընթերցողը ինքը կ'համոզւի, կարգաւթով նոյն Մշակում տպւած թղթակցութիւնները Մոսկւայից՝ պ. Պողոսեանի նւերի մասին (թերթի № 47) և Ռոստովից՝ պ. Բաղալեանի նւերի մասին (տես թերթի № 52), Ռոստովից թղթակցութեան մէջ ասուած էր թէ պ. Բաղալեան նւիրում է 5000 ռուբլին, համակերպւելով պ. Պողոսեանի կազմած ծրագրին. իսկ Մոսկւայից, թղթակցութեան մէջ ասուած էր թէ պ. Պողոսեան 10.000 ռ. ամբողջապէս նւիրում է մանկական և ժողովրդական գրքեր տպագրելու գործին:

Մշակ'ը, երբ հնարում էր մնացորդ գումարներ՝ ի հարկէ անգործ չէր մնում. Իւր № 93-ում նա հաղորդում է ալժմ, որ պ. Պողոսեան իւր նւիրած 10.000 ռուբլուց 5000 ը չատկացնում է մանկական և ժողովրդական գրքերի հրատարակութեան, իսկ 5000 ռուբլի (ալսինքն տոկոսները) չատկացնում է մրցանակի գործին: Ալդ լուրի մէջ պակասը (առ ալժմ!) աչն է որ մրցանակը կրելու է «Գրիգոր Արծրունու մրցանակ» անունը, որպէս թելադրում էր Մշակ'ը:

Խիչ մանկական ու ժողովրդական գրքերի համար նւիրած գումարը՝ միմիայն մի մարդու անունը փառաբանելու համար—դա անիրաւ գործ է. Իւր լու նպատակից չեղելով՝ որ եւ է մէկի անուն մրցանակ հիմնել—ալդ չի նշանակում պատեւ մէկի անուն կամ զիջատակ. եթէ ձեր նպատակը Արծրունու անուն մրցանակ հիմնելն է—թող ալ մասին չախտարարի, և աչն ժամանակ Արծրունու անունով մի բան կ'ստեղծէր, ալսինքն Արծրունու չարգողները ալ նպատակով չատուկ նւերներ կ'անէին. իսկ ալժմ դուք չէք ստեղծում, ալ միայն խլում էք սչն, ինչ մանուկներին էր նւիրած: Որքան անպատւաբեր գործունէութիւն... Եւ մանկական գրադարանից խլած փողով վաղը կ'իմանանք որ Հրատ. Ընկերութիւնը Գրիգոր Արծրունու անուն մրցանակ է հիմնում. ինչ պարծանք!...

ՄՇԱԿՐ և ԴԱՏԱՐԱՆԸ ինչ սարսափելի ապականութիւն պիտի տիրում լինի մի թերթի մէջ, որը բնաւ չի քաշուում մի խնդիր՝ նույն իսկ դատարանում պարզ ելուց չեստո՞ւ էլի վարագուրել ու ալն ձև շերկաւացնել, որ զրպարուածը նորից մնալ զրպարուած... բնթերցողների աչքում: Հանգամանք. Մշակի թղթակից պ. Մ. Ղազարեան անցեալ տարի մեղադրել էր Հայոց Բարեգ. Ընկ. Կողղւանի ճիւղի վարչութեան նախագահ պ. Կաճկաճեանին, թէ սա 300 ռ. չանձնել էր մի «սոստանի» պարոնի՝ գիւղերում ցրած գաղթականների բաժանելու համար: Եւ որովհետեւ նա, ում չանձնւա՞յ էին փողերը՝ պ. Առաքել Սահրատեանն էր, ուստի վերջինս դատի կանչեց Մշակի թղթակցին «սոստանի» խօսքի համար, որ նա դորձ էր ածել իւր նկատմամբ: Պր. Ղազարեանի դիտաւորութիւնը անշուշտ ալն է եղած, որ բնկերութեան ճիւղի փողերը պիտի բաժանւէին գաղթականների մէջ մի պատասխանատու անձի (վարչութեան անդամի) ձեռքով, և ոչ թէ կողմնակի մարդու ձեռքով, որպիսին էր պ. Սահրատեան, ինչի նա նույն իսկ մի շատ վստահելի մարդ: Պր. Ղազարեանի դիտաւորութիւնը, ըստ երևութիւն, վատ չէ եղած. նա կամենում է եղել մի կանոն պաշտպանել. բալց նա արել է ալդ, պէտք է խոստովանել, անտարտ կերպով, որից պ. Սահրատեան ամենալին իրաւամբ կարող էր իրեն վիրաւորա՞յ համարել: Բանից չեստո՞ւ երեւացել է, որ բաժանելիք 300 ռուբլին բնաւ չի պատկանել բարեգ. բնկերութեան Կողղւանի ճիւղին, ալ մի պարոն ալդ գումարը չանձնել է բժ. Կաճկաճեանին, որ սա բաժանէ գաղթականների մէջ, և պ. Կաճկաճեանն էլ, բնկերութեան ճիւղի նախագահութիւնից հեռացած ժամանակ, ուրեմն իբրեւ սոսկ անձն, ալդ գումարը վստահացել է պ. Սահրատեանին գաղթականների միջև բաժանելու համար: Զուտ վստահութեան խնդիր մի մասնաւոր մարդու կողմից զէպի մի ալ մասնաւոր մարդ: Եւ, բացի ալդ, բանից երեւացել է նույնպէս, որ պ. Սահրատեանը խղճմտօրէն կատարել է պ. Կաճկաճեանի կողմից իրեն արած չանձնարարութիւնը: Դեռ աւելին ասենք. Մշակի թղթակից պ. Մ. Ղազարեանը իւր փաստաբան (նույնպէս Մշակի աշխատակից) պ. Տիգրան Յովհաննիսեանի բերանով դատարանում չալանել է, թէ պատրաստ է Մշակ'ում տուել, որ պ. Սահրատեանին չանձնած փողերը բաժանւած են ճշտութեամբ:

Այս բոլորից չեստո՞ւ էլ թնչ վէճ կարող է լինել պ. Ղազարեանից ու պ. Սահրատեանի միջև: Կարծում ենք որ պ. Սահրատեանը անձնապէս պիտի կատարելապէս բաւարարութիւն ստացած լինէր:

Բալց ոչ! ալդ դորձը պիտի շարունակւի գատական պալատալում! Մարդիկ, որոնք խնդիրը ալնքան բաւարար կերպով պարզե-

ցին նահանգական դատարանում, պիտի չարունակեն կռուել ու վիճել։ Ո՞ւմ չնորհիւ? Կլեառ. զայի շնորհիւ։ Մշակ'ում, որի աշխատակիցն է պ. Ղազարեանի փաստաբան Տիգրան Յովհաննիսեանը, տպւեց ալի դատական գործի մասին մի փոքրիկ հաշիւ, ուր ոչ միայն չէր տըպւած պ. Ղազարեանցի խոստովանութիւնը թէ պ. Սահրատեան ճշտութեամբ բաժանած է ստացած գումարը, այլ և ալնպէս էր դուրս բերւած գործը, կարծես պ. Սահրատեանի գանգատը ինքն ըստ ինքեան դատարանը անհիմն դատած լինէր։ Ահա Մշակի խօսքերը.

«Գանգատաւորի առաջարկութեամբ, կանչւած էին մի քանի վկաներ։ Սկզբում դատարանն առաջարկեց կողմերին հաշուել, որը սակաւն տեղի չունեցաւ։ Ապա դատարանը վճռեց՝ անհետեանք թողնել պ. Սարհատեանի գանգատը»։ (Մշակ № 38, ներքին լուրեր)։

Աւ լետոյ ռեկլամի համար տեսէք ֆինալը՝—

«Պ. Ղազարեանին պաշտպանում էր երզնեալ հա.ատարմատարի օգնական Տ. Յովհաննիսեանց»։

Իբր թէ ուրեմն պ. Տ. Յովհաննիսեան դատական գործ է տարել! Իբր թէ պ. Սահրատեանի գանգատը անհիմն է եղել! Իբր թէ ուրեմն պ. Սահրատեանը դատարանի աչքում ևս մնացել է «անվստահելի անձնաւորութիւն»! Ալիպէս է, պ. Մեսրոպ Ղազարեանց?

Մենք ահա դիմում ենք ձեզ, պ. Մ. Ղազարեան, և ասում։ Մշակի մէջ ձեր մի գրութեամբ, զուցէ անգիտակցաբար, բալց և ալնպէս լուրջ հիմք էք տւել դադթականների օգտին որքան և իցէ ծառայած մի մարդու, պ. Սարհատեանին՝ բարոյական մեծ վիրաւորանք կրելու, անւանելով նորան «անվստահելի անձնաւորութիւն»։ Դուք դատարանում ձեր փաստաբանի բերանով պատրաստականութիւն էք լալտնել Մշակում խոստովանելու, որ պ. Սահրատեանը փողերը ճշգրութեամբ է բաժանել։ Բալց ձեր ալի խոստովանութիւնը, որ պ. Սահրատեանի համար ամենագլխաւորն էր, դուք չհրատարակեցիք. դուրս փոխարէն ձեր փաստաբան Տ. Յովհաննիսեանի և ձեր աշխատակցած թերթում լուս տեսաւ ձեր գործի մասին մի մուծը հաշիւ, ուր կալ միայն ծեւտկան բալց ոչ իրական ճշմարտութիւն, ճիշդ ալնպէս, ինչպէս տարիներ առաջ Մշակի աշխատակից Խ. Մալումեանն էր հուշակել իրեն նահանգական դատարանում արդարացած, լռութեան տալով դատարանում՝ նոլնպէս փաստաբանի բերանով արած՝ իւր խոստովանութիւնը։ Դա ուրեմն Մշակի շկուան է՝ դատարանների անունից ևս խաղեր խաղալ։ Արդ, դուք թէ գրաւոր, թէ բերանացի կերպով և թէ գործով տեղիք էք տւած ձեզ ճանաչելու որպէս Մուրճի համակրող։ Նիթ է իրօք ալիպէս

է և եթէ եղեւթիւնը մեզ ճիշդ են հաղորդել, ապա մենք հրապարակով պահանջում ենք որ դուք ձեր գործի մասին Մշակ'ում (№ 38) լուս տեսած հաշի առիթով ձեր դիտողութիւնն անէք, և ապացուցանէք, որ Մալումեան ու Տ. Յովհաննիսեան ձեզ համար բարոյագիտութեան ուսուցիչներ չեն: Եթէ Մուրճին համակրող մէկն էք—պէտք է նաև այդ բարոյական քաջութիւնն ունենաք: Մենք ձեզնից պահանջում ենք շիտակ մարդու պարտք կատարել—և ուրիշ ոչինչ:

ԱՂԶԱՆՑ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ Թիֆլիսում (Անդրկովկասեան աղջկանց ինստիտուտ լանուն կայսր Նիկողայ I-ի) 31-ն մալիսի տօնեց 44-րդ ընթացաւարտութիւնը: Դրոցը (որ մի տեսակ գիմնազ է) վերջին տարում ունեցաւ ծախք 113.067 ռ. 78 կոպ., մուտք՝ 110.642 ռ. 83 կ.: Ամեն մի սան պետական դանձարանին նստեց 481 ռ. 14 կոպ.: Առ 1-ն չունւ. 1898 թ. ինստիտուտում կար 247 աշակերտուհի, որոնցից 228 պանսիոներուհի, 11 երթեկ վճարողներ և 8 երթեկ ձրավարժ. վերջիններս դպրոցում ծառայողների աղջիկներ էին: Ըստ ազգութիւնների կալին ռուսներ 129, վրացուհիք 70, հաւուհիք 41, թրքուհիք 6, լեռնցի ազգութիւններից 1. Ըստ կրօնների՝ ուղղափառներ 186, հայ լուսաւորչականներ 39, կաթոլիկներ 12, լութերականներ 4, մահմեդականներ 6: Ուսումը աւարտեցին այս տարի 25 հոգի: Երաժշտութիւն սովորում էին 129 հոգի:

ՇԵՐԱՄԱՊԱՀԱՎԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ Օրդուբանում: Մուրճի թղթակիցը Ագուլիսում գրում է մեզ. «Յունիսի միջերքում Օրդուբանի բոլոր շրջակայ գիւղերի համար նշանակած է չերամապահական ցուցահանդէս, հսկողութեամբ պ. Սունդուկեանցի, որ ուղարկւած է այդտեղ Թիֆլիսի չերամապահական կայարանի կողմից: Ագուլեցիք, լսելով պ. Սունդուկեանից մի քանի բացատրութիւններ չերամապահութեան ալ և մեղաբուծութեան մասին, մտադիր են դիմել Թիֆլիսի կայարանին, որ մշտական մարդ նշանակւի այստեղի համար:

ՄՈՄԻ ԶՈՒԱՐԱՆ ԱՍՏՐԱՍԱՆԻ ԹԵՄՈՒՄ: Աստրախանի հալոց թեմակալ առաջնորդ Արիստակէս արքեպ. Սեդրակեանը հիմնում է Աստրախանի աւագ եկեղեցու մօտ, թեմի հալոց եկեղեցիների պիտուքների համար, մոմի ձուլարան, որպիսին Թիֆլիսի թեմի համար ունի Ներսիսեան դպրանոցը: Արիստակէս արքեպիսկոպոսը այս տարւոյ մարտին դիմել էր Լլմիաձեի ս. սինոդը, հարցմունքով, թէ արդեօք չէր կամենալ սինոդը պարտաւորել Ռուսաստանի ալ հալոց եկեղեցիներին, որ իրենց հարկաւոր մօմը գնեն Աստրախանում իւր հիմնելիք ձուլարանից: Սինոդը, որպէս այդ երևում է «Արարատի» պաշտօնական մասից, ոչ միայն մերժել է Աստրախանի թեմակալի այդ

խնդիրքը, ալ և վճռել է մերժել ձուլարանը հիմնելու գործը առհասարակ, չնայած որ Արիստակէս արքայակոպոսը բնաւ ս. սինոդից խնդրած չի եղել ալդ մասին թուլտուութիւն, քանի որ թեմակալը, օրէնքի համաձայն, դորա համար սինոդին դիմելու պարտաւորութիւն չունի:

«ՄԱՍԻՍ»-Ի ՆԻԷՐԸ. Կ. Պոլսի «Մասիս» լրագիրը լօգոստ ազգալին հիւանդանոցի հրատարակեց մի բացառիկ համար, որի վաճառքից գոյացաւ 16.000 դրուշ (շուրջ 1250 ուրլի):

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ. Ֆրանսիայում մալիսի 11 կատարեցին ընդհանուր ընտրութիւններ և 23 մալիս (ն. տ.) լրացուցիչ ընտրութիւններ: Առաջին օրը ընտրեցին 401 հոգի, երկրորդ անգամում (վերընտրութիւններին) 180 պատգամաւոր: Ընդհանուր թիւը=581: Ալդ թիւը բաժանում է ըստ կուսակցութիւնների ալսպէս. կառավարչական հանրապետականներ 225, հանրապետութեանը միացած նախկին միապետականներ 45, արմատականներ և արմատական-սոցիալիստներ 182, սոցիալիստներ 54, միապետականներ 49, ազգաշահականներ, հակասոցիալիստականներ և սահմանադրութիւնը վերափոխելու կուսակիցներ 26:

Այսպիսով ոչ մի կուսակցութիւն չի կազմում բացարձակ մեծամասնութիւն նոր պարլամէնտում. բաց համեմատապէս ամենից զօրեղը կառավարչական (չափաւոր կամ չառաջդիմական) հանրապետականներն են: Դորա հետեանքն էր պատգամաւորների ժողովի նոր նախագահի ընտրութիւնը. ժողովի նախագահ ընտրեց չափաւոր հանրապետական Պօլ Դեշանէլ 286 ձայնով ընդդէմ ժողովի նախկին նախագահ Հանրի Բրիստին, որ ստացաւ 277 ձայն:

ՄԵԼԻՆԻ ՀՐԱՑԱՐԱԿԱՆԸ և ԲՐԻՍՈՆԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ. Ֆրանսիական մինիստրութիւնը, նախագահութեամբ մինիստր-նախագահ Մելինի, ներկայացրեց հանրապետութեան նախագահ Ֆորլին իւր հրաժարականը 4 չուն. (16 չուն.), որ և ընդունեց: Ալդ օրը նորընտիր պարլամէնտում պալքար եղաւ ընդդիմադիր կուսակցութիւնների և մինիստրութեան միջև: Արմատականների պարագլուխ Լէօն Բուրժուա չարձակեց կառավարութեան քաղաքականութեան վրայ: Տրլուլիօն մեղադրեց Մելինին որ սա բաժանում գցեց հանրապետականների միջև: Մելինը պատասխանեց չիչեցնելով արմատականներին սոցա փորձելը՝ խանգարել ամեն մի ռեֆորմի իրագործումը: Ներկայացրեցին հերթական խնդիրներին անցնելու մի քանի բանաձևեր. Մելինը ընդունեց Ռիբօի բանաձևը, ալն է՝ «Պալատան, հաւանելով կառավարութեան բացատրութիւնները և վճռած լինելով վարել հանրապետականների միութեան վրայ հիմնած քաղաքականութիւն, անցնում է օրակար-

գին»։ Աջակողմեանները բողոքում են. լինում է խիստ գրգռմունք։ Ռիբոն ջերմագին գովում է Մեկինին և մեղադրում արմատականներին, որ սոքա խանգարեցին քեղմնաւոր միութիւնը։ Կասանեակը լանդիմանում է Մեկինին որ սա հրաժարում է աջակողմեաններին։ Մեկինը պատասխանում է որ երբէք չէր խնդրել նոցա պաշտպանութիւնը։ Բրիստը հարցնում է՝ կտրում է արդեօք Մեկինը իւր կապերը աջակողմեանների հետ, և լորդորում է ժողովին՝ ալդ քաղաքականութեան չհետեւել։ Տրուլիօն առաջարկում է չոյս դնել մինիստրութեան վրայ և անցնել օրակարգի խնդիրներին՝ հաւանութիւն տալով մինիստրութեան երկու տարալ ջաղաքականութեան։ Մեկինը հակառակում է ալդ բանաձեւին, որը քւէարկութեամբ հաւաքեց 234 ձայն ընդդէմ 271-ի։ Արմատականները պահանջում են որ Ռիբոն բանաձեւը երկուսի բաժանւի. առաջին մասը, որը հաւանութիւն է տալիս կառավարութեան բացատրութիւններին, ընդունում է 295 ձայնով ընդդէմ 273-ի. երկրորդ մասը՝ «պալատան վճռած լինելով վարել դեմոկրատական ռեֆորմների քաղաքականութիւն, հիմնւած հանրապետականների միութեան վրայ» ընդունում է 527 ձայնով ընդդէմ 5-ի։ Հանրի Ռիքարը առաջարկում է ալդ բանաձեւին աւելցնել ալս խօսքերը՝ «և լինելով միմյալն հանրապետականների մեծամասնութեան վրայ»։ Մեկինը մերժում է ալդ չաւելածը, որը սակալն ընդունում է 295 ձայնով ընդդէմ 246-ի։ Մեծ լուզմունք։ Ապա քւէարկում է Ռիբոն բանաձեւը իւր ամբողջութեամբ, որ ընդունել էր Մեկինը. չօգուտ նորա տրեց 284 ձայն, ընդդէմ՝ 272 ձայն։

Այսպիսով Մեկինը տարաւ չաղթանակ. բաց երեկոյեան լանձնեց Ֆորին մինիստրութեան հրաժարականը, որ և ընդունեց։ Պարզ էր որ ալդքան աննշան ձայների առաւելութեամբ անկարելի էր քաղաքականութիւն շարունակել։

Պորը մինիստրութիւն կազմելը լանձնեց նախ Սառլէնին, որ չաջողեց. ապա Պետրալլին, որ նոյնպէս չաջողեց։ Ապա դործը լանձնեց Հանրի Բրիստին, որը, (16 (28) չունիսի) արդէն կազմել է մինիստրութիւնը, որի մէջ են նաև Դելկասէ, Բուրժուա, Սառլէն, Կաւենեակ։ Դա կը լինի մի նշանաւոր մինիստրութիւն։

ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ։ Ներկայ չունիսին կատարեցին Գերմանիայում ռալիստադի (կալսերութեան պարլամէնտի) ընտրութիւնները։ Հետեանքները զեռ ևս որոշապէս չալտնի չեն. առաջմ չալտնի է որ սոցիալիստ կուսակցութիւնը անցեալից շատ աւելի ներկայացուցիչներ ունի։

ՖԻԼԻՊ ՔՆՈՒԻ, Անգլիայի դեսպանը Կ. Պոլսում, դեսպանի պաշտօնով փոխադրեց Շուտ։ Նորատեղը նշանակւած է Անգլիայի դեսպանը Պետերբուրգում Օ'Կոննոր։

Ֆիլիսոփայ Գեորգին Կ. Պոլսում ղեկավարելու հղաւ ամենադժուարին տարիներում, երբ Անգլիան ղեկավարմատիական կռիւ մղեց Թիւրքիայի դէմ, առանց իւր ձգտումները իրականացնել կարողանալու: Նա իւր հետ տանում է Կ. Պոլսի և բոլոր թիւրքահայերի ջերմ համակրութիւնները:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ. Միլանում, վերջին ապստամբութեան ժամանակ, սպանւել են 82 հոգի և ծանր վիրաւորւել են 63 հոգի: ԹԵՍԱԼԻԱՅԻ ԱԶԱՏԻԵԼԸ տաճկական զօրքերից կատարւեց ներկալ մալիս ամսին: Զօրքը բաղկացած էր 133.000 հոգուց (153 բատալիոն, 33 ուժաձիգ բատարէլ և 22 էսկադրոն):

ԷԴՂԵՄ-ՓԱՇԱՆ, Թոյների լաղթողը, վերադարձած է Կ. Պոլիս: Սուլթանը նորան նշանակել է գլխաւոր տեսուչ թիւրքական զործող զօրքերի, Կ. Պոլիսը իբր բնակատեղի:

ՍԵՐԲԻԱ ՆԻ ԲՈԼԳԱՐԻԱ. Ալդ երկու պետութիւնների չարաբերութիւնները ալեքան լարւած են, որ վախ կալ թէ կարող է պատերազմ առաջանալ: Հանդամանքը սա է, որ սերբիական զօրքերի գլխաւոր նշանակւած է Նախկին թագաւոր Միլանը—Սերբիայի ալդ չար հրեշտակը:

ՀԱԿԱՀՐԷԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԳԱԼԻՑԻԱՅՈՒՄ (Աւստրիա). Ալդ շարժումը ընդգրկել է շատ տասնեակ գիւղեր և կառավարութիւնը դժուարութեամբ է չաջողում կարգը վերականգնել:

ԶԻՆԱՍՏԱՆ. Պեկինում չինաց կալսը հրամայել է հիմնել համալսարան, եւրոպական ձևով: Կալսը հրաւիրել է բարձր աստիճանաւորներին նախագիծը քննելու համար:

Պատերազմի դաշտերում հապոնացիների ղէնքերից պարտութիւններ կրելուց չետո՛ւ՝ Չինաստանը դեռ նոր է գլխի ընկնում որ իւր առասպելական անշարժութիւնը միմիայն քաղքալել է չինական պետական և սոցիալական օրգանիզմը:

ՊԱԼԱՑԿՈՒ 100-ԱՄԵԱԿԸ. Ներկալ լուսիսին մի քանի օր շարունակ Չեխիայի մալրաքաղաք Պրագում հանդիսաւոր կերպով տօնեց Չեխերի 1896-ին վախճանւած նշանաւոր պատմաբան Ֆրանտիշեկ Պալացկու ծննդեան 100-ամեակը, որին հրաւիրւած էին մասնակցելու պատգամաւորներ բոլոր սլաւական երկիրներից, սոցա թւում նաև Ռուսիայից: Պալացկի՛ն գրեց «Չեխիայի պատմութիւնը» և աշխատեց սլաւական ազգերի մէջ բարոյական կապ հաստատել. նա առաջիններից կալ առաջ գնացին մլադօչէխերը: Ռուսիայից հանդէսին մասնակցում էին՝ պրոֆեսորներ Լամանսկի, Ֆլորինսկի, Բրանդտ, ապա՝ Սպասուլիչ, Վ. Վ. Կոմարով, Պրոկոֆիև, Վալցիկ և ուրիշներ:

ԳՈՏՈՐԱԾՆԵՐ—«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԴՆԱՊ» Կ. Պոլսի թերթերի մէջ «հայկական կոտորածներ» խօսքի տեղ թու է տրւած գործ ածել միայն վերջին տնտեսական տաղնայ խօսքը: Օրինակ ալսպէս. «Սակալն ցաւ է ըսել թէ վերջին տնտեսական տաղնայը թշուառութեան ենթարկած է ամենքն ալ առհասարակ, որով և խեղճ գիւղացիք ամեն գործէ զուրկ 5—10 փարալի կարօտ կը մնան»:

† ԳԼԱԴՍՏՈՆ. Տես Ժամանակակից Տեսութիւն:

† ՅՐԻԴԻԻՍ ՄԻԻԼԼԷՐ, չալտնի լեզուագէտը, պրոֆէսոր Վիեննայի համալսարանում, վախճանեց մալիս 25-ին: Նա նւիրած էր արեւելեան լեզուների ուսումնասիրութեան առհասարակ, նոցա մէջ նաև հայերէնին: Գլխաւոր գործքը եղաւ Grundriss der Sprachwissenschaft, (Լեզուագիտութեան հիմունքները), երեք հատորով, ուր ի նկատի են առնւած զրեթէ բոլոր ծանօթ լեզուները:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԹԵՐ

(Ուր թւական չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ՊՐՈՖ. ՄԱՐՐ ՀԱՎ-ՎՐԱՅԱԿԱՆ չարաբերութիւնների մասին անցեալում (Պրոֆ. Մարրի և իշխ. Ակակի Ծերեթելու բանականը): Արտատպւած «Մուրճ» ամսագրից: Թիֆլ. Տպ. Ռօտինեանցի 20 կոպ.:
- 2) ՀԷՅՆԷ, Հանրի.—Բանաստեղծութիւններ ու Բերթաւոններ: Թարգմ. Փրանսերէնից Ատոմ Շահէնի: Արտատպ. Մուրճ ամսագրից: Թիֆլ., տպ. Ռօտինեանցի. գինը 40 կոպ. (4 զրուշ. կամ 1 ֆրանկ):
- 3) ԿՈՏ ՄՈՒՐԼԻԿԱ.—Ինչ է հեքեաթը: Թարգմ. Դ. Աղալեանի: Հրատ. Թ. Հ. Հր. Ը.—Թիֆլիս, տպ. Մն. Մարտիր., 10 կոպ.:
- 4) ՍԵՆԿԵԻԻՉ, Հ.—Հետեւեք նրան: Թարգմանութիւն Յ. Աղամեանի: Թիֆլիս, տպարան Շարածէ, գինը (?):
- 5) ԴՈՏԷ, Ալֆոն.—Վերջին դաս: (Թարգմանողը?): Բաքու. տպ. Արօր. 5 կոպ.:
- 6) ՎԱԶՈՎ, Ի.—Գալիս է արդեօք: (Թարգմանողը?): Բաքու, տպ. 10) կ.
- 8) ԷՄԻՆ, Մկրտիչ.—Ներկասիրութիւններ, Հալոց լեզու, զրականութեան և պատմութեան մասին (1840—1855 թթ.) Հալկարանի մի պատկերով և կենսագրութեան նիւթերով: Հրատարակութիւն Լաղարեան ճամբարանի բարձրագոյն հաստատւած լանուն Էմինի Էտնոլոգիական ֆոնդի: Մոսկւա, տպ. Վ. Գատցուկ. 1 ռ. 50 կոպ.:
- 8) ՄԻԼԼ, Զոն Ստիւարտ.—Աղատութեան մասին: Ռուսերէն թարգմանութիւնից Թարգմանեց Ա. Կ.—Միլլի համառօտ կենսագրութիւնով: Հրատ. Մ. Գ. Ը.: Մոսկւա, տպ. Հերբէկի. 1 ռ. 20 կ.:

- 9) ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ Ա. և ՌԱՇՄԱՃԵԱՆ Տ.—Մեղուներ, Աշխատողական, ապարան Գ. Սանդուխտի, գինն է 10 կոպեկ:
- 10) ԱԽ ՏԻՔԵԱՆ, Բանանցի, Ստեփան.—Նախատակը, Հրատ. Ս. Եղիզաբանցի, Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսանց, 20 կոպ.
- 11) ՇԷՔՍՊԻՐ.—Արքայ լիբ. ողբերգութիւն չինգ արարածով, թարգմանողներէն Յովհ. Խան Մասեհան, Հրատ. Թիֆլ. Հ. Հր. Ընկեր.— Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի, գինն է 50 կոպեկ:
- 12) ЗАХАРЬЯНЪ, Т. А.—О распространенности бактерий столбняга въ почвѣ. Бактериологическое изслѣдованіе, изъ бактериологической лабораторіи при клиникѣ инфекціонныхъ болѣзней проф. С. С. Боткина. Диссертация на степень доктора медицины. С. Петербургъ, тип. М. Виленчика.

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ:

Թիֆլիս, Պր. Ստ. Զելինսկի, Ստացանք ձեր հմտալից լուծածը: Մենք այն վերապահեցինք № 7-8-ի համար:

?—Մոտա.—Ձեր «Աջ և Ձախ»-ը ստացանք վերջին ժամին, Կ'սպագրի № 6-ում:

Բարու Օր Եղիս. Սառումնան: Ձեր նամակի առիթով զրեցինք մի բացգիր Բաբի հասցէով, լուսալով որ եթէ այլ ևս Բաբու չէք՝ ձեզ կ'հասցնեն: Գրքերը ուղարկելու համար կ'սպասենք ձեր երկրորդ անդամալ պահանջին:

ՎՐԻՊԱԿՆԵՐ:

Սոյն № 5-ում, Հալնէի բանաստեղծութիւնների մէջ, «Ծովին խորը» հատուածում, ուղղել՝ ալրի (ոչ՝ հալրի): «Հարցումներ» հատուածում, մի տող պիտի լրացնել այսպէս՝ մեհնադրոշմական թագաւոր գլուխներ, փաթթոցաւոր և քառանկիւն գտակներով գլուխներ, և հազար ուրիշ և այլն:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Նախարարաց ժողովի օրագրով, որ ԹԱՆԱԽՈՐ ԿԱՅՍՐԸ ԲԱՐՁՐԱ-
ԳՈՅՆ, հաստատել է 26-ին Մարտի 1898 ամի, սահմանած է.

I. Թույլ տալ վերադառնալ Կովկասի սահմանից ճաճկատառն առանց
մաքսատան կարգերը պահպանելու, միմիայն տեղական ուտիկանութեան
մեծաւորների վկայականով, ալն տաճկահայտակ հաչ գաղթականներին,
որոնք ցանկութիւն կ'աւտնեն օգտելի այս թուլտութիւնից:

II. Իբաւունք տալ Կառավարչապետին քաղաքական Մասին Կով-
կասի. ա) մի տարալ միջոցում, սկսեալ այս ԲԱՐՁՐԱԿՈՅՆ, բարեհաճու-
թեան օրից, վերադարձնել իրան հաւատացած սահմանից բոլոր տաճ-
կահայտակ հաչ գաղթականներին, որոնք չեն չաւտնիլ ցանկութիւն
օգտելի Նախարարաց ժողովի այս սահմանադրութեան առաջին լօղւածում
չիչւած թուլտութիւնից, տալով կարօտեալներին, իւր նկատողութեամբ,
նպաստ ճանապարհի նրանց համար ժողոված նւէրներից. և բ) անչափազ
չաւտնել այս մասին ընդհանուր տեղեկութեան համար:

Այս ԲԱՐՁՐԱԿՈՅՆ հրամանը չաւտնում է ընդհանուր տեղեկութեան
համար Տիիսիսի նահանգում:

Իսկականը ստորագրել է. Նահանգապետ Թիֆլիսի Ֆ. Բրկով և վա-
ւերագրել է. Կառավարիչ ղիւանատան Դ. Տիրիւտին:

Ուղիղ է. Կառավարիչ ղիւանատան Դ. Տիրիւտին:
Համեմատեց. աւագ օգնական նորա՝ Միխայլով:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

«ՄՈՒՐՃ» 1889 թ. անկազմ	4 ռ. — 4
«ՄՈՒՐՃ» 1890 թ. անկազմ	5 » — »
«ՄՈՒՐՃ» 1891 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1892 թ. անկազմ	9 » — »
«ՄՈՒՐՃ» 1893 թ. անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՃ» 1894 թ. անկազմ	7 » — »
«ՄՈՒՐՃ» 1895 թ. անկազմ	8 » — »
«ՄՈՒՐՃ» 1896 թ. անկազմ	10 ռ. — »
«ՄՈՒՐՃ» 1897 թ. անկազմ	10 ռ. — »
ԲՈԼՈՐ 9 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ	65 » — »
» » » » կազմով 14 հատոր	80 ռ. — »

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհաճախքի համար ուղարկուած է մի-մի ռուբլի
ամեն տարւոյ համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Ա. Արաւիւսնեանցի ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ


Հին եգիպտական, փիլնիկական և ասորական գրութիւններով և
Արեւելքի հին պետութիւնների քարտէզով:

281 երես, յառաջարան եւ նիւթերի ցանկ

արագ է 800 օրինակ, փայլուն լազի վերայ

Դիւնն է ճանապարհաճախով միասին 1 ռուբլի

Պէտք է դիմել Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, Ու-
սումնարաններին անուով է 20⁰/0 զիջում:



ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ,

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 հուլիսի, կամ 30 ֆուանի
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիեւսկայա փողոց, տուն № 6: Այլ բաղադրնե-
րից՝ Тифлисѣ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“.

ԲԱՔԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Ֆրիդոն Մարդանեանի մօտ (գրա-
սենեակ Ե. և Հ. Մելիքեանների):